ԱՌԱԾԱՆԻ

Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ
1960

105

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

Институт литературы имени М. Абегяна

А. Т. ГАНАЛАНЯН

АРМЯНСКИЕ ПОСЛОВИЦЫ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР

Ереван 1960

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտ

Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

2253

ԱՌԱԾԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Երևան 1960

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի խմբագրական-հրատարակչական որհրդի որոշմամբ:

«Առածանի» խորագիրը կրող ներկա հատորը բաղկացած է ընդարձակ «Ներածությունից», ուր հանգամանորեն վերլուծված է հայ ժողովրդական առածների բովանդակությունն ու արվեստը, և «Առածների ժողովածուից», որտեղ առանձին գլուխների մեջ թեմատիկ խմբավորմամբ ի մի են հավաքված հազարավոր առած-ասացվածքներ, իրենց բազմաթիվ նմանակներով ու տարբերակներով: Հատորն ունի նաև մանրամասն առարկայական, թեմատիկ ու անվանական ուղեցույց-ցանկեր և աղբյուրների ու տեղանունների համառոտագրությունները:

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Ա. Տ. Ղանալանյանի սույն աշխատությունը, որ պարունակում է հայ ժողովրդական առածների ու ասացվածքների համահավաք ժողովածուն և հետազոտությունը, առաջին անգամ լույս ընծայվեց 1951 թ.: Գիրքը գտավ բացառիկ լավ ընդունելություն և անմիջապես սպառվեց: Ինչպես տեղական, այնպես էլ կենտրոնական մամուլում լույս տեսան բազմաթիվ գրախոսություններ, որոնց մեջ աշխատությանը ըստ արժանվույն բարձր գնահատական տրվեց:

«Առածանին» լայն ընդունելություն գտավ նաև արտասահմանում. սփյուռքահայ մի շարք պարբերականներ իրենց էջերում արտատպեցին նրանից առանձին մասեր:

Զանազան վայրերից ստացված պահանջները, մամուլում լույս տեսած համապատասխան հոդվածներն ու նամակները անհրաժեշտ դարձրին «Հայկական առածանիի» վերահրատարակությունը:

Ելնելով այս բոլորից, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտը նպատակահարմար գտավ մեծ տպաքանակով վերահրատարակել «Առածանին»:

Մ. Աբեղյանի անվան
Գրականության ինստիտուտ

«Առածանիի» ներկա հրատարակության մեջ ավելացված է առած-ասացվածքների մի ամբողջ բաժին՝ «Լրացում» վերնագրի տակ, կատարված է առածների ժողովածուի բաժինների վերադասավորում, խմբագրական մասնակի փոփոխությունների է ենթարկված հետագոտությունը։

Սույն հրատարակության առավել կարևոր նորությունը նրա մանրամասն առարկայական, թեմատիկ և անվանական ուղեցույցներն են, յուրահատուկ համաբարբառ, ուր վերծանված ու բացահայտված են բոլոր առածների այլաբանական նշանակությունները, ինչպես նաև միևնույն առածի տարբեր առումները, մի առ մի թվարկված են առած-ասացվածքների մեջ հանդես եկող մարդկային-հասարակական հատկությունները, հարաբերություններն ու հասկացողությունները, իրերն ու առարկաները, արհեստներն ու զբաղմունքները, մարդիկ, կենդանիներն ու բույսերը։ Ուղեցույցների նպատակն է հնարավորին չափ դյուրացնել ժողովածուի մեջ առկա առածների ու ասացվածքների օգտագործումը։ Նրանց դերն առանձնապես նշանակալից է գրքի «Հավելված» և «Լրացում» բաժիններում եղած առածները գտնելու համար, ուր վերջիններս, նյութի թելադրանքով, բերված են ոչ թե թեմատիկ խմբավորմամբ, ինչպես այդ արված է ժողովածուի հիմնական գլուխներում, այլ այբբենական կարգով, որը, առանց նշված ուղեցույցների, նկատելիորեն դժվարացնում է առածների ու ասացվածքների օգտագործումը։

Ա. Ղ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐ ԵՎ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ժողովրդական առածներն ու ասացվածքները կազմում են աշխատավոր ժողովրդի բանավոր ստեղծագործության կարևոր բաժիններից մեկը։ Դրանք պատկերավոր ու սեղմ ասույթներ են սոցիալական կյանքի, մարդկային բարքի և ժողովրդական կենցաղի ամենաբազմազան երևույթների վերաբերյալ։

Խոշոր է ժողովրդական առածների ու ասացվածքների քննադատական և դաստիարակչական նշանակությունը։ Առածների ու ասացվածքների միջոցով ժողովուրդը անխնայորեն ծաղկել է մարդկային-հասարակական կյանքի հոռի երևույթները՝ չարն ու վատը, և ուսուցանել է բարին ու լավը։ Դարերի ընթացքում առածներն ու ասացվածքները հանդիսացել են յուրահատուկ ավանդներ, որոնցով կյանքում առաջնորդվել են ժողովրդական լայն խավերը։

Մեծ է ժողովրդական առածների ու ասացվածքների ճանաչողական և իմացական արժեքը։ Առածները հարուստ նյութ են տալիս աշխատավոր ժողովրդի իսկական պատմությունը իմանալու համար, լայնորեն արտացոլելով ու ընդհանրացնելով նրա ողջ սոցիալ-պատմական կենսափորձը, տենչանքներն ու ակնկալությունները, բնության տարերային ուժերի և ներքին ու արտաքին, աշխարհիկ ու հոգևոր հարստահարիչների դեմ նրա մղած պայքարը, աշխարհայացքն ու հոգեբանությունը, կենցաղն ու հավատալիքները։

Ժողովրդական առածներն ու ասացվածքները աչքի են ընկնում իրենց բանաստեղծական լեզվի ու արվեստի բարձր արժանիքներով։ Քիչ խոսքով շատ բան ասելու բացառիկ ուժը, պարզությունը, կոնկրետությունը, պատկերավորությունը, բնութագրումների դիպուկությունը և գունագեղությունը նրանց բնորոշ առանձնահատկություններն են։

Առածներն ու ասացվածքները պատկանում են ժողովրդական բանահյուսության վիպական ժանրին։ Ի տարբերություն նույն

վիպական ժանրի մյուս ստեղծագործություններից, որոնց մեջ կյանքի երևույթներն ու հարաբերությունները պատկերվում են ավելի կամ նվազ ծավալուն սյուժեի միջոցով, առածների ու ասացվածքների մեջ այդ արվում է չափազանց սեղմ բանաձև-ընդհանրացումներով։ Բովանդակության, ձևի և ծավալի տեսակետից մոտ և նման լինելով միմյանց, ժողովրդական առածներն ու ասացվածքները բնույթով տարբեր են իրարից։ Մինչդեռ առածը այլաբանական ստեղծագործություն է, որի բուն միտքը արտահայտված է անուղղակի կերպով, ասացվածքը իրականությունը դրսևորում է ուղղակի ձևով։ Առածների մեջ հասարակական, կենցաղային որևէ երևույթ, հարաբերություն, բարոյական, փիլիսոփայական որևէ միտք բացահայտելու համար ժողովուրդը դիմում է բնությունից, կենդանիների և բույսերի կյանքից վերցված զուգահեռների, վերջինների օգնությամբ միջնորդավորելով իր ասելիքը։ Ժողովրդի կողմից առածների մեջ իբրև այլաբանության ատաղձ լայնորեն օգտագործված կենդանական ու բուսական սիմվոլիկան անդրադարձնում է իր մեջ հնադարյան մարդու տնտեսական, աշխատանքային և աշխարհագրական միջավայրի ազդեցությունը, բույսերի և կենդանիների բացառիկ կարևորությունը նրա կյանքում ու կենցաղում։ Այդ սիմվոլիկան իրեն արմատներով կապվում է դեռևս տոտեմական շրջանից եկող անիմիստական աշխարհայացքի հետ։ Ժամանակի ընթացքում արտադրության միջոցների զարգացման և մարդկանց տնտեսական-հասարակական պայմանների փոփոխման հետևանքով, հետզհետե թուլանում ու քայքայվում է տոտեմական շրջանի հին աշխարհըմբռնումը։ Դրա հետ միասին փոխվում են նաև այդ աշխարհըմբռնման հիման վրա ստեղծված նախկին կենդանական զրույցներն ու սրանց հետ սերտորեն կապված առածները։ Վերջիններս կորցնում են իրենց երբեմնի ուղղակի բնույթը և վեր են ածվում այլաբանական ստեղծագործությունների։ Այդ տեղի է ունենում հատկապես ֆեոդալական և կապիտալիստական հարաբերությունների տիրապետության շրջանում, երբ հասարակության ներսում գնալով ուժեղանում է սոցիալական շերտավորումը և սրվում են դասակարգային հակամարտությունները։ Կենդանական հին զրույցներն ու առածները օգտագործվում են մարդկային արատները և հասարակական կյանքում տիրող անհավասարությունն ու անարդարությունը, շահագործումն ու կողոպուտը մերկացնելու համար։

Ժողովրդական առածների նմուշներ են, օրինակ, հետևյալ այլաբանական ստեղծագործությունները. «Հավը կածի, ուրուրը կտանի», որտեղ ակնարկված է հասարակական կյանքում գոյություն ունեցող անարդարությունն ու շահագործումը։ «Մինչև հաչան շան առջևը ոսկոր չը գցես, չի սըստըվի», որով մերկացվում է անցյալի՝ փողի ու բռնության տիրապետության պայմաններում վարչական և դատական պաշտոնյաների մոտ կենցաղ դարձած կաշառակերությունը։ Ասացվածքների նմուշներ են, օրինակ, հետևյալ ուղղակի իմաստ ունեցող ստեղծագործությունները. «Օրենքը հարստի համար է դրած, պատիժը՝ աղքատի», որի մեջ ժողովուրդը արձանագրում է սեփականատիրական կարգերի տիրապետության պայմաններում օրենքի՝ ունևոր դասակարգի ձեռին շահագործման գործիք լինելու փաստը։ «Ահը վեր է, քան թե մահը», ուր շեշտված է վախի զգացման մեծ ուժը և նրա ծանր ազդեցությունը մարդու վրա։

Առածների ու ասացվածքների ճնշող մեծամասնության հիմնական աղբյուրը հասարակական կյանքն է։ Դրանք կյանքի տարբեր երևույթների, նրա բազմազան կողմերի անմիջական գեղարվեստական դրսևորում-արտահայտությունն են, ընդհանրացման յուրովի ձև ստացած։ Քիչ չեն և այնպիսի առած-ասացվածքներ, որոնց ատաղձը վերցված է ժողովրդական բանահյուսության վիպական ժանրին պատկանող այլ ստեղծագործություններից, և առաջին հերթին ու ամենից շատ՝ կենդանական զրույցներից կամ առակներից։ Բազմաթիվ առածներ ու ասացվածքներ կան, որոնք ոչ այլ ինչ են, բայց եթե կենդանական որևէ զրույցի հիմնական իմաստի խտացած արտահայտությունը, դրա եզրակացություն-վերջաբանը (բարոյախոսական խրատը), որն անջատվելով բուն զրույցից, ժողովրդի մեջ սկսում է ապրել ինքնուրույն կյանքով, իբրև առած կամ ասացվածք։ Առածների և ասացվածքների համար որոշ չափով նյութ է տվել նաև գրականությունը, որտեղից խրատական, բարոյախոսական և այլ կարգի առանձին թևավոր արտահայտություններ տարբեր ճանապարհներով անցել են ժողովրդին և համապատասխան երանգ ստացել։ Պետք է նկատել, որ ժողովրդական առած կամ ասացվածք են դարձել գրականությունից եկող մեծ մասամբ այնպիսի ասույթներ կամ թևավոր արտահայտություններ, որոնք իրենց նախնական ծագումով կամ բնույթով, ավել կամ պակաս չափով կապված են եղել բանավոր ստեղծագործության ավանդների հետ և բովանդակությամբ համահնչուն են եղել ժողովրդի աշխարհայացքին ու հոգեբանությանը։

Աշխատավոր ժողովրդի աշխատանքային կյանք ու կենցաղից

ծագող հազարավոր առածների և ասացվածքների բնորոշ օրինակներ են հետևյալ ստեղծագործությունները. «Հին դարմանը քամուն չեն տա», որ գործ են ածում, երբ ուզում են ակնարկել այն միտքը, թե կատարված, հնացած բանը նորոգելուց օգուտ չկա։ Այլաբանական այս խրատի ատաղձը հանդիսացել է երկրագործի աշխատանքային կենսափորձից հանված շատ սովորական մի եզրակացություն։ Հայտնի է, որ դարմանը քամուն են տալիս միայն կալոցին, երբ այն բոլորովին նոր է և խառն հացահատիկի հետ։ Թարմ դարմանի քամուն տալու հետևանքով ջոկվում է նրանից հատիկը. հին դարմանը երբեք քամուն չեն տալիս, որովհետև նրա մեջ սովորաբար հատիկ չի լինում։ «Դաբաղը սիրած կաշին գետնե-գետին կզարնե», որով ժողովուրդը ակնարկում է այն միտքը, թե մտերիմին ավելի խիստ են քննադատում, նրան առավել լավ տեսնելու ցանկությամբ։ Այս առածի համար նյութ է հանդիսացել կաշվի մշակման հնավանդ ձևը, երբ կաշին մազազերծ անելու և փափկացնելու նպատակով այն գետնահարվում էր կաշեգործ վարպետի (դաբաղ) կողմից։

Ժողովրդական բանահյուսության վիպական ժանրին պատկանող ստեղծագործություններից առաջ եկած առածի բնորոշ մի նմուշ է աշխատավոր ժողովրդի առողջ կենսահայեցողության արտահայտությունը հանդիսացող և նույնպիսի գործելակերպի խրատ պարունակող՝ «Առաջ կեր՝ վերջը գոհացիր» տարածված ասացվածքը, որի հիմքը հետևյալ կենդանական զրույցն է աղվեսի ու կաքավի մասին. «Աղվես զկաքավ բռնեց։ Կաքավ ըսաց.— Աղվես ի՞նչ տեսնիս։ Ըսաց.— Քե ուտիմ։ Ըսաց.— Փառք տու աստծուն, նոր զի կե։— Ինչ փառք իտու աստծուն, կաքավ բերնեն թռավ։ Աղվես դարձավ, ըսաց.— Էնու տուն ավեր ըլի, ինչ չուր կուշտ չուտի՝ փառք տա աստծուն»[1]։

Գրքից ժողովրդին անցած և առած կամ ասացվածք դարձած բանահյուսական ծագում ունեցող այսպես կոչված թևավոր խոսքերի օրինակներ են տարբեր ժողովուրդների մեջ տարածված միջնադարյան հայտնի գրական հուշարձաններից մեկի՝ ավանդական Խիկար իմաստունին վերագրված Պատմությունից սերող հետևյալ ստեղծագործությունները. «Հարուստ մարդը օձ կերավ, ասին՝ դեղ է. աղքատը կերավ, ասին՝ սոված է» (ըստ Խիկարի՝ «Մեծատանն որդին օձ կերաւ, ասէին՝ դեղ է նմա. աղքատին որդին կերաւ՝ ասեն՝ ու սովուն կերաւ»), «Իմաստունի հետ քար քաշի, հիմարի հետ փլավ մի ուտի» (ըստ նույնի՝ «Լաւ է մոտ իմաստունս քարինս կրել, քան ընդ առն անմտի և յիմարի ըմպել գինի») և այլն։

---

[1] Հովսեփյան Գ., Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից, Թիֆլիս, 1892, էջ 30։

Առածներն ու ասացվածքները ժողովրդական բանահյուսության ամենատարածված ստեղծագործություններն են։ Ո՛չ առասպելն ու հեքիաթը, ո՛չ վեպն ու երգը և ո՛չ էլ բանահյուսական որևէ այլ ստեղծագործություն այս առումով չի կարող համեմատվել առածների ու ասացվածքների հետ։ Ժողովրդական առածների ու ասացվածքների բացառիկ մասսայականության գլխավոր պատճառն այն է, որ դրանք անմիջական պատասխան են տալիս ժողովրդին հուզող բոլոր հարցերին, ուստի և գործ են ածվում ամեն առիթով, ամեն ժամանակ։ Այդպես չեն, օրինակ, առասպելն ու հեքիաթը, վեպն ու երգը, որոնք իրենց նյութով ու բովանդակությամբ ավելի սահմանափակ են և ասվում են միայն հատուկ պայմաններում (հեքիաթն ու վեպը, օրինակ, պատմվում են մեծ մասամբ ձմեռվա երկար գիշերներին, գյուղացու՝ աշխատանքից ազատ ժամանակ, երգը երգվում է հարսանիքի, ուրախության կամ աշխատանքի միջոցին և այլն)։ Կարևոր նշանակություն ունի այս հարցում նաև ժողովրդական առածների ու ասացվածքների լակոնիկ ձևը, նրանցից շատերի հանգավոր, չափական և պատկերավոր լինելու հանգամանքը, որով նրանք շատ ավելի դյուրին են մտաբերվում և ասվում։

Առածներն ու ասացվածքները ժողովրդական բանահյուսության ամենաերկարակյաց ու կենսունակ ստեղծագործություններն են։ Երբ դիցաբանական հին առասպելներն ու հեքիաթները, ավանդություններն ու վեպերը քայքայվում ու մոռացվում են այն ժամանակ, երբ մարդը տիրապետելով գիտությանն ու տեխնիկային, բնությունն ու հասարակական երևույթներն սկսում է հաղթահարել գիտակցական ու ռեալիստական ձևով, ապա առածների մի զգալի մասը գալով շատ խորը հնությունից, շարունակում է ապրել նաև նոր ժամանակներում, հաճախ վերաիմաստավորվելով և նոր բովանդակություն ստանալով, երբեմն էլ գործածվելով հին իմաստով, այնչափով, որչափով դեռ կյանքում պահպանված են լինում այդ առածների այլաբանության ատաղձի և բուն իմաստի հիմք հանդիսացող աշխարհըմբռնման, հոգեբանության ու կենցաղի տարրերը։ Դարավոր կյանք ունեցող այդպիսի ստեղծագործություններից են, օրինակ, «Երկաթը տաք-տաք կը ծեծեն» առածը, որ ասվել և աս-

վում է գործը ժամանակին կատարելու անհրաժեշտության մասին. «Պտղատու ծառի ճյուղերը կախ կլինեն» առածը, որ ասվել և ասվում է պիտանի մարդկանց համեստության մասին. «Ով աշխատի՝ նա կուտի» ասացվածքը և բազմաթիվ ուրիշները։ Գործածելով հին առածներից և ասացվածքներից առավել պիտանի ու կենսունակ ստեղծագործությունները, ժողովուրդը չի բավարարվում միայն դրանով։ Իր նոր կյանքի նորոգ. երևույթներն ու հարաբերություններն արտահայտելու համար նա ստեղծում է նաև նոր առածներ ու ասացվածքներ, վարպետորեն օգտագործելով դրա համար հին նյութը, փոխելով և մշակելով այն։ Նման տիպի նոր, մերօրյա առածների ու ասացվածքների բնորոշ նմուշներ են հետևյալ ստեղծագործությունները. «Թագավորը թախտից ընկավ, կուլակը՝ բախտից», «Ագռավի խնամին կաչաղակը կլինի, կուլակինը՝ տերտերը», «Լոդրի համար շաբաթվա օխտ օրն էլ կիրակի է», «Աշխոր ունես, լավ օր ունես», «Աշխօրն աշխատողին տուր, մինն էլ ավելի» և բազմաթիվ ուրիշները։

2. ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Հայկական առածներն ու ասացվածքները հորինվել և պահպանվել են հայ ժողովրդի գոյության ողջ ընթացքում, պատմական տարբեր էպոխաներում, նախնադարյան համայնական հասարակությունից սկսած, ընդհուպ մինչև մեր օրերը։ Սակայն, դժվար, իսկ հաճախ էլ նույնիսկ անհնարին է քիչ թե շատ կոնկրետ կերպով ցույց տալ, թե ո՛ր առածը կամ ասացվածքը ե՛րբ է ստեղծվել։ Դժվար է, որովհետև հայկական առածներն ու ասացվածքները, ինչպես և առած-ասացվածքներն ընդհանրապես, իբրև բանավոր ստեղծագործություններ, տեղեկանք չունեն իրենց հորինման ժամանակի վերաբերյալ։ Նրանց ստեղծման ժամանակի որոշման հարցը մեծապես դժվարանում է նաև նրանով, որ ըստ մեծի մասին այլաբանական հորինվածքներ են, սյուժե չունեն և արտահայտված են ծայր աստիճան սեղմ ձևի մեջ։ Առածների ստեղծման ժամանակը որոշելու համար անհրաժեշտ է ճեղքել նրանց այլաբանական կեղևը, թափանցել նրանց բովանդակության խորքը, նկատի առնել վերջինիս մեջ եղած համապատասխան ուղղակի և անուղղակի տվյալներն ու ակնարկները։

Հայկական առածների ստեղծման ժամանակը որոշելու համար ամենից ավելի հաստատուն նյութ են տալիս այն ստեղծագործու-

թյունները, որոնց մեջ մենք գտնում ենք պատմական անձանց ու գործիչների և աշխարհագրական վայրերի (քաղաքների, շրջանների) անուններ։ Ճշտելով դրանց գոյության կամ գործունեության ժամանակաշրջանը, մենք դրանով իսկ որոշում ենք տվյալ առածի կամ ասացվածքի հորինման ժամանակը։

Շատ ցայտուն օրինակ է այս տեսակետից Խորենացու Հայոց Պատմության մեջ բերված «ի մէջ գեղջկաց» ասվող առածը Շիրակի հացառատ ամբարների և շատակեր Շարայի վերաբերյալ. «Թէ քո Շարայի որկորն է, ասեն, մեր Շիրակայ ամբարքն չեն»։ Վերջինիս մեջ հիշատակված Շիրակ և Շարա անունների շնորհիվ հնարավոր է դառնում որոշել առածի հորինման մոտավոր ժամանակաշրջանը և պատմական միջավայրը։ Ակադեմիկոս Հ. Մանանդյանը իր «Հին Հայաստանի և Անդրկովկասի պատմության մի քանի պրոբլեմների մասին» հետազոտության մեջ, խոսելով մեր թվականությունից առաջ IV կամ III դարում Հայաստան արշաված սարմատական ցեղերի և այստեղ (Արագած լեռան հյուսիսակողմում) բնակություն հաստատած այդ ցեղերից մեկի sirac=շիրակների մասին, որոնց անունով և կոչվել է Շիրակի գավառը, ի միջի այլոց, հիշատակում է նաև Խորենացու բերած վերոհիշյալ առածը, իրավացիորեն տեսնելով նրա մեջ «հիշողություններ Շիրակների նախահոր Շարայի մասին», որը միաժամանակ, ըստ Հ. Մանանդյանի, «անվանադիր նախնին էր շար-մատների» (=սարմատների)։ Ակադեմիկոս Մանանդյանի կարծիքով հիշյալ առածը «միանգամայն պատմական է և համապատասխանում է շիրակների ծագման մասին օտար աղբյուրների հաղորդած տեղեկություններին»[1]։

Պատմական հիշողություններ պարունակող ժողովրդական առածի ոչ պակաս ակնառու մի նմուշ է նաև «Նալլաթ (անեծք) Սլիկին էլ, Պլիկին էլ» ասացվածքը, որ գործ են ածել Անդրկովկասի մի քանի շրջաններում ապրող, Բարձր Հայքից եկած հայերը, երբ ցանկացել են ակնարկել երկու հավասարապես վատ ու այպանելի մարդկանց մասին։ Անվանի բանասեր Գալուստ Տեր-Մկրտչյանը իր «Հայկականք» վերնագրով բանասիրական աշխատության էջ 73-ի ծանոթագրության մեջ գրում է, որ «Բարձր Հայքից եկած գաղթականների մեջ մինչև այսօր էլ պահված է «սատանա-Պուլիկ» փաղաքշական կոչումը, որ տրվում է սիրված և չարաճճի մանուկներին»

[1] Մանանդյան Հակոբ, Հին Հայաստանի և Անդրկովկասի պատմության մի քանի պրոբլեմների մասին, Երևան, 1944, էջ 31—33։

և անմիջապես ավելացնում է, որ դա հիշատակն է պավլիկյանների[1]։ Միանգամայն հավանական համարելով անվանի բանասերի այս կռահումը, մենք պավլիկյանների արձագանքն ենք տեսնում նաև քննության առարկա ասացվածքի մեջ հիշվող «Պլիկ» անվան մեջ, որ «Պուլիկի» ժողովրդական մի այլատեսակն է։ Ինչ վերաբերում է նույն ասացվածքում եղած «Սլիկ» անվանը, ապա վերջինս, ամենայն հավանականությամբ, Սիլվանոս քարոզչի անվան արձագանքն է, ենթարկված որոշ հնչյունափոխության (Սիլվան, Սլվիկ, Սլիկ), որը բյուզանդական ժամանակագիր Կեդրինոսի հաղորդման համաձայն հանդիսացել է պավլիկյանների աղանդի հիմնադիրներից մեկը, ավելի ճիշտ՝ ըստ մի ավանդության եղել է Պավլոսը, ըստ մյուսի Սիլվանոսը[2]։ Որ «Սլիկը» իրոք ժողովրդի պատկերացման մեջ հերձվածող կամ «ծուռ» մի անձնավորության հիշողություն է, հաստատում է ազգագրագետ-բանահավաք Բենսեի «Բուլանըխ կամ Հարք գավառ» վերնագրով ազգագրական գործում տպված «Սլիկ երեց» վերնագրով երգիծական պատմվածքը կամ ժողովրդական առակը, որի հերոս «ծուռ» անվանված Սլիկ երեցը մի առ մի մերկացնում է Ադամի, Նոյի, Աբրահամի, Գաբրիելի, ի վերջո նաև իրեն Քրիստոսի խաբեբայություններն ու խարդավանքները, որոնք արգելք են հանդիսանում նրան՝ կնոջ ու «ճժերի» հետ դրախտ գնալու[3]։

Ընդդիմադիր, հերձվածողական գաղափարների արտահայտություն հանդիսացող բուն ժողովրդական ստեղծագործությունների կողքին, որոնց մեջ խիստ քննադատվում են քրիստոնեական եկեղեցին ու նրա սպասավորները, հայկական առածների ու ասացվածքների մեջ հանդիպում ենք նաև քրիստոնեական բարոյախոսության և եկեղեցու վարքագծի հետ կապված հորինվածքներ։ «Նալլաթ Սլիկին էլ, Պլիկին էլ» ասացվածքը, մեր կարծիքով, այդպիսի հորինվածքներից մեկն է, պավլիկյան աղանդի ղեկավարների դեմ քրիստոնեական եկեղեցու կողմից ուղղված անեծքի ու պարսավանքի բանադրական մի բանաձև, բանահյուսական երանգ ստացած հավանորեն VII—VIII դարերում։

Նույն տիպի մի ստեղծագործություն է Հայաստանի մի շարք

---

[1] Գ. Տեր-Մկրտչյան, Հայկականք, ԺԳ—ԺԹ, Վաղարշապատ, 1903, էջ 73։

[2] Die Paulikianer im Byzantinischen Kaiserreiche und verwandte ketzerische Erscheinungen in Armenien, von Karapet Ter-Mkrttschian, Leipzig, 1893.

[3] Բենսե, Բուլանըխ կամ Հարք գավառ, 1901, Թիֆլիս, էջ 106—108։

շրջաններում գրի առնված «Ի՛նչ Ուլուլիկը, ի՛նչ Պուլուլիկը, ի՛նչ սատանեն, ի՛նչ ուր կնիկը» առածը։ Ինչպես նախորդ ասացվածքի մեջ, այստեղ էլ մենք գործ ունենք խորը հնությունից եկող մի ստեղծագործության հետ, որի մեջ նույն մակարդակի վրա են դասված՝ քրիստոնեության կողմից չարաչար դատապարտված սատանան իր կնոջով, պավլիկյան աղանդի պարագլուխ վերոհիշյալ Պավլիկոս=Պուլիկ=Պուլուլիկ=Պլիկ և «Ուլուլիկը», որի մեջ մենք տեսնում ենք հեթանոսությունը վերականգնելու փորձ կատարող IV դարի հռոմեական նշանավոր գործիչ Ուլիանոսի անվան արձագանքը, մի անձնավորություն, որը իր վերոհիշյալ գործունեության համար քրիստոնեական եկեղեցու կողմից ստացել է «Ուրացող» մականունը, և որի հիշողությունը մինչև վերջերս պահպանված է եղել հայ ժողովրդի մեջ՝ «Չար Ուլիանոս» ձևով[1]։ Ուշագրավ է, որ առածի մեջ «Պուլուլիկը» (=Պավլոս) երկրորդ տեղն է գրավում, իբրև ավելի ուշ շրջանի մի դեմք, համեմատվելով ժողովրդի մեջ առաջուց արդեն հայտնի «Ուլուլիկի» (=Ուլիանոսի) հետ, իսկ այս երկուսն էլ նույնացվում են հանրահայտ սատանայի ու իր կնոջ հետ։

Պատմական անձի հիշատակություն ունեցող ստեղծագործություն է Ղարաբաղի հայերի մեջ բավական տարածված՝ «Ամեն մարդ Հասան չի դառնալ, ամեն ծառ էլ՝ մասան (արորի թուրը)» առածը։ Մի առ մի ծանոթանալով Սյունյաց հայերի պատմական անցյալում գոյություն ունեցող Հասան անունով գործիչների կենսագրությանը, մենք գալիս ենք այն եզրակացության, որ առածում հիշատակված Հասանը պետք է եղած լինի Խաչենի մեծ իշխան Վախթանգի, Ջաքարեի ու Իվանեի քրոջ (Խորիշահ) որդին՝ քաջ զորավար, պետական գործիչ, շինարար ու դիվանագետ նշանավոր Հասան Ջալալ-Դոլան, որ ապրել ու գործել է XIII դարում։ Այդ ենթադրությունն անելու իրավունք են տալիս մեզ վերջինիս կենսագրության մի քանի տվյալները — Երուսաղեմ ուխտ գնալը, թաթարների ավերած Կետչառուի վանքը վերաշինելը, Արղուն ղանի դեմ ապստամբվելը, սրա հրամանով նահատակվելը և այլն[2], տվյալներ, որոնք իրոք կարող էին հիմք դառնալ Հասանի անձնավորության բացառիկ համբավի համար, նրա լայն ժողովրդականության և առածի նյութ դառնալուն։

---

[1] Շիրակի, Ախալցխայի, Ախալքալաքի և այլ շրջաններում, ուր ապրում են Բարձր Հայքից եկած հայերը, անհանդիստ ու չար երեխաներին «Չար Ուլիանոս» են ասում։

[2] Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Գ, Երևան, 1946, էջ 56։

Հետևաբար կարելի է ասել, որ խնդրո առարկա առածը ստեղծվել է XIII կամ XIV դարերում, երբ Սյունիքի բնակչության մեջ տակավին թարմ է եղել Հասանի անձի ու գործի հիշողությունը։

Պատմական անձի հիշատակություն ունեցող ստեղծագործություն է «Ախոռը պառկել Սուլթան Մուրադը երազը կտեսնե» առածը, գրի առնված արևմտահայերի մեջ։ Առածի այլաբանական միտքը, որով ծաղրվում են սին երևակայությամբ տարված մարդիկ, դրդում է ենթադրելու, որ Սուլթան Մուրադը եղել է պատմական ու անհայտ մի անձնավորություն, որի վարած կյանքը ժողովրդի երևակայության մեջ դարձել է մի տեսակ չափանիշ — սիմվոլ վայելքի ու ապահովության։ Ելնելով այս մեկնակետից և ուսումնասիրելով Օսմանյան պետության տարեգրությունը, ուր արձանագրված է Սուլթան Մուրադ անունով մի շարք բռնապետների կյանքն ու գործունեությունը, գալիս ենք այն հետևության, որ տվյալ առածում հիշվող Սուլթանը՝ հիշյալ բռնապետներից ժամանակագրական կարգով երրորդն է (Սուլթան Մուրադ Գ), որ ապրել է XVI դարում։ Նրա մասին պատմվում է, որ հայտնի է եղել իր վարած բացառիկ հարուստ ու ճոխ կյանքով։ Շաբաթներ, իսկ երբեմն էլ ամիսներ են տևել այն խնջույքներն ու ուրախությունները, որ կազմակերպվել է նրա պալատում այս կամ այն առիթով։ Սուլթան Մուրադ Գ-ի համբավը իբրև ճոխ կյանքով ապրող մարդու, թե՛ նրա կենդանության օրով և թե՛ հետո տարածված է եղել Օսմանյան կայսրության մեջ ապրող բոլոր ազգերի մեջ[1]։ Վերոհիշյալ հանգամանքները նկատի ունենալով կարելի է ասել, որ տվյալ առածը ստեղծվել է XVI կամ XVII դարերում, երբ Պոլսում և այլուր ապրող հայերի մեջ տակավին թարմ է եղել Սուլթան Մուրադ Գ-ի հիշողությունը։

Պատմական անձանց անուններ պարունակող ստեղծագործություններից հետո, հայկական առածների ու ասացվածքների ժամանակը որոշելու համար երկրորդ հերթին աչքի են ընկնում այն ստեղծագործությունները, որոնց մեջ մենք ուղղակի կամ անուղղակի ակնարկներ և հեռու ու մոտիկ արձագանքներ ենք գտնում սոցիալ-տնտեսական տարբեր ֆորմացիաներում գոյություն ունեցող հասարակական հարաբերությունների և վերջինիս հետ կապված կենցաղային ու իրավական երևույթների ու հասկացողությունների վերաբերյալ։ Վերծանելով հիշյալ ակնարկներն ու արձագանքները, բա-

[1] Գ. Այվազովսկի, Պատմություն Օսմանյան պետության, Վենետիկ, 1841, հատ. Ա, էջ 429—465։

ցելով ու բացահայտելով դրանց ուղղակի և այլաբանական իմաստները, մենք հնարավորություն ենք ստանում, ավել կամ պակաս ճշտությամբ, որոշելու հիշյալ կարգի առածների ու ասացվածքների ծագումը։

Այդպիսի ստեղծագործություններից է, օրինակ, «Քեռուն մալը եկյանինն է» ասացվածքը, որ գրի է առնված անցյալ դարի վերջերին Խոտրջրի հայերից, և սրա հետ ըստ էության առնչվող «Աղջիկը որ Բաղդատից էլ բերես, տղան քեռուն կը քաշի» ասացվածքը՝ գրի առնված Արարատյան դաշտի հայերից։

Իր «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» հայտնի հետազոտության մեջ Էնգելսը խոսելով քեռու և քրոջ որդու միջև պատմական հեռավոր անցյալում գոյություն ունեցող առանձնապես սերտ կապի մասին, վերջինիս արմատները տեսնում է մայրական իրավունքի մեջ։ Նա գրում է. «Քեռու և քրոջ որդու միջև այս կապի առանձնապես սերտ բնույթը, որ ծագում էր մայրական իրավունքի ժամանակներից և հանդիպում է բազմաթիվ ժողովուրդների մեջ, հույներին ծանոթ է միայն հերոսական շրջանի դիցաբանությունից»[1]։ Այս լույսի տակ կարելի է անվարան ասել, որ վերոհիշյալ երկու ասացվածքներն էլ մայրիշխանության շրջանից եկող վերապրուկներ են, երբ քեռու ու քրոջ որդու միջև եղած կապը շատ ավելի հիմնավոր ու ամուր էր, քան հոր և զավակի կապը, և երբ մորեղբայրն իր քրոջ որդուն նայում էր իբրև իր սեփական որդուն[2]։

Եթե վերևում բերված երկու ասացվածքները մայրիշխանության շրջանի իրավական նորմերի ու հայացքների վերապրուկներ են՝ հասած մինչև նոր ժամանակները, ապա Ակնի հայերից գրի առնված «Գարնան արևը տղուս ու հարսիս վրա, աշնան արևը փեսիս ու աղջկաս» ասացվածքը իր արմատներով մեզ տանում է դեպի այն շրջանի մտածողությունը, երբ երկրագործության զարգացման հետ և վերջինիս մեջ տղամարդու խաղացած դերի բարձրացումով սկսում է տիրապետող դառնալ հայրական իրավունքը (պատրիարխատ), և երբ սերնդի պահպանման և ժառանգության գործում ակնհայտ նախապատվությունը տրվում է արու զավակին։ Ասացվածքի մեջ միաժամանակ անդրադարձում է գտել խորը հնությու-

[1] Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1940, էջ 170։

[2] Նույն տեղում։

նից եկող այն պատկերացումը բնության երևույթների մասին, ըստ որի տարին բաժանվում էր երկու շրջանի՝ գարնան և աշնան, որոնցից առաջինը նշանավորվում էր բնության զարթոնքի և երկրագործության ու խաշնարածության հետ կապված աշխատանքների սկզբնավորությամբ, իսկ երկրորդը՝ բնության մահացմամբ և այդ աշխատանքների ավարտով։

Խորը հնությունից, թերևս տոտեմական շրջանի կենցաղային սովորույթներից եկող և նոր հասարակական պայմաններում վերաիմաստավորված ու այլաբանական նշանակություն ստացած մի ստեղծագործություն է «Առանց իշի գլխի հարսանիք չի լինի» հանրահայտ ու տարածված առածը։ Վերջինիս այլաբանական իմաստը և ժողովրդական հարսանեկան հանդեսի վերաբերյալ մեր ձեռքի տակ եղած ազգագրական նյութերը հիմք են տալիս ենթադրելու, որ այն կապված պիտի լինի մինչև XIX դարի վերջերը հայկական հարսանեկան հանդեսի մեջ պահպանված հնագույն սովորույթի հետ, ըստ որի հարսանիքի մասնակիցներից մի քանիսը (փեսայի կամ հարսի կողմից) հանդես են եկել զանազան կենդանիների դիմակների և մորթիների տակ կամ սրանց անունով (աղվես և այլն)։ «Իշի գլուխը», որի մասին խոսք կա առածի մեջ, ամենայն հավանականությամբ, ակնարկություն է հարսանեկան հանդեսի, բարեկենդանի և առհասարակ հին ժողովրդական տոների ու խաղերի (ղեյնոբա, ղարագյող և այլն) ժամանակ իշի դիմակով հանդես եկող գլխավոր ծաղրածու-դերակատարի, առանց որի մասնակցության չէր կարող լրիվ լինել հարսանեկան հանդեսը, ինչպես այժմ առանց ծաղրածուի՝ կրկեսը։

Ընտանիքի ներսում գոյություն ունեցող կենցաղային և իրավական փոխհարաբերությունների վերապրուկներից է «Ինչ տուն որ մեծ չլինի, մեծ քարմ տեղը կը դնեն» կամ «Տանը որ մեծ չլինի, տեղը քթուկ կը դնեն» ասացվածքը, որը մի շարք վարիանտներով տարածված է եղել Հայաստանի բազմաթիվ շրջաններում։ Ասացվածքի մեջ ընդգծված է այն կարևոր դերը, որ երբեմն ունեցել է տոհմի, իսկ հետագայում էլ գերդաստանի (=տան) ավագը կամ մեծը տոհմի կամ ընտանիքի մյուս անդամների աչքում։

Սոցիալ-տնտեսական բոլորովին այլ ֆորմացիայի հետ է կապվում «Խոփդ սուր, հանդը բաժանովի» տարածված առածը։ Ֆեոդալական կարգերի տիրապետության պայմաններում հորինված մի ստեղծագործություն է դա, երբ հողը արդեն դարձել էր մասնավոր սեփականություն, և երբ կալվածատեր ֆեոդալները, իսկ հե-

տագայում էլ գյուղական համփաները (=հարուստները) տեր էին դարձել երբեմն գյուղական համայնքին պատկանող վարելահողերի լավագույն և մեծ մասին։

Կապիտալիստական հարաբերությունների զարգացման ժամանակաշրջանի ծնունդ է «Թ՛ե փող չունես ծոցիդ, ականջ չեն դնի ծվոցիդ» ասացվածքը, գրի առնված անցյալ դարի 80-ական թվականներին Թիֆլիսի հայերից։ Սխալված չենք լինի, եթե, նկատի առնելով ասացվածքի ստեղծման միջավայրը, ավելի կոնկրետացնենք մեր միտքը և ասենք, որ այն ստեղծվել է XIX դարի 60—70-ական թվականներին, առևտրա-վաշխառուական կապիտալի ծաղկման շրջանում, երբ փողի կուլտը Անդրկովկասում առանձնապես ուժեղ չափերի էր հասել։ Այդ ասելու մեզ իրավունք է տալիս ասացվածքի մեջ ցայտուն կերպով դրսևորված կապիտալիստական հարաբերությունների խորացման հետևանքով հասարակության ներսում առաջ եկած սոցիալական շերտավորումը — փող ունեցողների ամենազոր ուժը և նրանից զրկվածների իրավազուրկ ու ծանր կացությունը։

Վերջապես, բոլորովին նոր, սոցիալիստական դարաշրջանի ծնունդ է իր բովանդակությամբ «Աշխոր ունես, լա՛վ օր ունես» ասացվածքը, որի մեջ բացահայտված է աշխօրի կոլտնտեսական գյուղացու բարեկեցության հիմք հանդիսանալու նորոգ գաղափարը։

Հայկական առածների ու ասացվածքների ստեղծման մոտավոր ժամանակը որոշելու տեսակետից կարևոր նյութ են պարունակում նաև այն ստեղծագործությունները, որոնք կապված են ժողովրդական հավատալիքների ու կրոնական ըմբռնումների հետ։ Նայած թե ի՞նչ հավատալիք կամ կրոնական ըմբռնում է անդրադարձված տվյալ առածի կամ ասացվածքի մեջ, ըստ այդմ և որոշվում է նրա ստեղծման ժամանակաշրջանը։ Այսպես, օրինակ, Հայաստանի մի շարք շրջաններում գրի առնված «Շվոտը դուրս, մարտը ներս» ասացվածքը, որ գործ է ածել հայ գյուղացին փետրվար ամսի վերջերին՝ ձմռանը ճանապարհելու և գարնանը դիմավորելու առիթով։ Վերոհիշյալ ասացվածքը կապված է Շվոտ կոչվող չար ոգիների մասին ժողովրդի մեջ գոյություն ունեցող այն նախապաշարում-հավատալիքի հետ, ըստ որի հիշյալ չար ոգիները գաղտնի մտնում են գյուղացու տունը՝ վնասում նրա պաշարեղենին և բանող ու կթան անասուններին։ Ձմեռվա վերջին, երբ պակասում է գյուղացու պաշարը, առանձնապես զգալի է լինում շվոտների հասցրած վնասը, ուստի և նա ձեռնարկում է վերջիններիս վտարմանն իր տանից,

ասելով՝ «Շվոտը դուրս, մարտը ներս»։ Ակներև է, որ ասացվածքն իր ծագումով կապված է երկրագործական-անասնապահական շրջանի անիմիզմի հետ, երբ նախնադարյան մարդը զանազան մոգական միջոցներով (բանաձևերով, ծեսերով ու արարողություններով) ենթադրում էր ներգործել բնության վրա և նրա երևույթներն ու ուժերը ծառայեցնել իրեն։

Հնագույն անիմիզմի շրջանից է սերում իր ծագումով «Չար աչքը քարը կճաքացնի» տարածված ասացվածքը։ Վերջինիս հիմքում ընկած է նախնադարյան մարդկանց պատկերացումը չար աչքի մասին, ըստ որի կարծվում էր, թե գոյություն ունեն վատ բարքի տեր հատուկ մարդիկ, որոնց նայվածքը օժտված է վնասող, ավերիչ հատկությամբ։ Ասացվածքի հին լինելը հաստատվում է նաև նրանով, որ նրա հիմքում ընկած ժողովրդական հավատալիքի մասին հիշում է Խորենացին, Արտաշեսի ժամանակակից Երվանդ թագավորի կապակցությամբ (մ. թ. I դար)։ Հենվելով ժողովրդական ավանդության վրա, նա պատմում է, որ Երվանդը հմայող չար աչք է ունեցել, որի պատճառով արքունի սպասավորների սովորությունն է եղել առավոտյան արշալույսը բացվելիս որձաքարեր բռնել Երվանդի առաջ, որի հայացքի չարությունից իբր թե դրանք պայթելիս են եղել[1]։

Հեռավոր դարերի խորքից է գալիս նաև «Կամաց քելիմ՝ կըսին կանկառ (թռչուն), շուտ-շուտ քելիմ՝ կըսին շիթառ» առածը, որ գործ է ածվում սովորաբար հասարակական կարծիքի փոփոխականությունն ակնարկելու համար։ Այդ ասելու հիմք է տալիս մեզ առածի մեջ գործածված «շիթառ» բառը, որն ամենայն հավանականությամբ Շիդար անվան աղավաղված մի ձևն է։ Իսկ Շիդարը, ոչ այլ ինչ է, բայց եթե ասորական weda (սատանա) և պարսկերեն wuda (խելացնոր) բառերի հայացված վարիանտը, որի հիշատակումը կա Ավետարանի ասորական տեքստի մեջ[2]։ Շիդարն իբրև առասպելական ժամանակների սատանայական-դիվային մի հերոս մուտք է գործել նաև հայկական հին դիցաբանության մեջ, կապվելով առասպելական հայտնի Արտավազդի անվան հետ։ Ըստ ժողովրդական մի ավանդության Շիդարը Արտավազդի որդին է։ Նրա մասին պատմում են, թե երկու շուն, մեկը սպիտակ, մյուսը սև, լիզում են անդադար Շիդարի շղթաները. տարելիցին այդ շղթաները

[1] Մ. Խորենացի, Պատմութիւն հայոց, գիրք Բ, գլուխ ԽԲ։

[2] Н. Марр, Сборники притч Вардана, 1899, стр. 245.

քարակում են մազի չափ, սակայն դարբինները գիշերը երեք անգամ մուրճերը խփում են սալին և շղթաները ամրանում են[1]։ Շիթառ=Շիդար անվան առնչությունը առասպելական շների հետ վկայում է տոտեմական շրջանից եկող շան պաշտամունքի հետ նրա ունեցած սերտ աղերսի մասին։

Հավատալիքների և կրոնի հետ կապված հնագույն առածների ու ասացվածքների հետ միասին հայկական առածների մեջ կան նաև ավելի ուշ շրջանի բազմաթիվ ստեղծագործություններ։

Այդպիսիներից մեկն է, օրինակ, «Հազարից մեկ Զատիկ, էն էլ Նավակատիկ» տարածված առածը, որ գործ են ածում, երբ ուզում են ասել, թե դժվարին գլուխ եկած բանը (երջանկություն, հաջողություն) կասեցվեց կամ խանգարվեց։ Կասկածից վեր է, որ այս առածը ստեղծված պիտի լինի քրիստոնեական շրջանում, որովհետև այն իր ուղղակի իմաստով կապված է քրիստոնեական Զատիկի և Նավակատիկի հետ։

Քրիստոնեական շրջանի և այն էլ վերջին դարերի ստեղծագործություն է Հայաստանի մի քանի շրջաններում գրի առնված «Տերտերի տղան հանդումն է թուրքացել» ասացվածքը, որ ասվում է քահանաների և նրանց ժառանգների հեշտ հավատուրացությունը ընդգծելու և ծաղրելու համար։ Մեր պնդումը հիշյալ ասացվածքի ստեղծման վերաբերյալ հաստատում է ոչ միայն նրա մեջ հիշվող «տերտեր» բառը (քրիստոնեական եկեղեցու պաշտոնյաներից մեկը), այլև ասացվածքի մեջ եղած ակնարկը տերտերի տղայի թուրքացման մասին, որով այն կապվում է XIX դարում հատկապես ուժեղացած հայերի բռնի թուրքացման Օսմանյան պետության վայրագ քաղաքականության հետ։ Այսպես և շատ ուրիշները։

Վերոհիշյալ կարգի ստեղծագործությունների հետ, որոնց հորինման ժամանակը հնարավոր է որոշել ավելի կամ պակաս ճշգրտությամբ, հայկական առածների ու ասացվածքների մեջ շատ զգալի թիվ են կազմում այն ստեղծագործությունները, որոնց հորինման ժամանակը դժվար է որոշել, թեկուզ ավել կամ պակաս ճշտությամբ։ Դրանք, նախ, այն առածներն ու ասացվածքներն են, որոնք ստեղծված լինելով պատմական այս կամ այն ժամանակաշրջանում (հաճախ շատ խորը հնում), ապրել են նաև հետագայում՝ ձևով մնալով նույնը (կամ շատ քիչ փոփոխվելով), իսկ բովանդակությամբ նոր իմաստ ու երանգ ստանալով։ Դրանք, այնուհետև, այն առածներն ու ասացվածքներն են, որոնք հետագայում էլ գործածվել են հար և

[1] Халатьянц Г., Армянский Эпос, 1396, стр. 318—320.

նման ձևով ու իմաստով, ինչ և իրենց հորինման սկզբնական շրջանում, այն չափով, որ չափով պահպանվել են նրանց հիմք հանդիսացող սոցիալական կյանքի, կենցաղի, մտածողության, հոգեբանության ու աշխարհայացքի տարրերը։ Հիշյալ կարգի առածներն ու ասացվածքները իրենց բովանդակությամբ բավական բազմազան են։ Այստեղ մենք գտնում ենք ինչպես սոցիալ-տնտեսական և իրավա-քաղաքական երևույթներին ու հարաբերություններին վերաբերվող ստեղծագործություններ, այնպես էլ ժողովրդական կենցաղին, սովորություններին, մարդկային հասարակական հատկություններին, բնավորությանն ու խառնվածքին, բարոյական և կրոնական զանազան հասկացողություններին վերաբերվող առածներ ու ասացվածքներ։

Այդ կարգի ստեղծագործությունների մի նմուշն է «Արջք օրհասականք ընդ վախճանել շնչոյն հզորագոյնս կռուին» առածը, որն օգտագործված է Եղիշեի պատմության մեջ և որի տարբերակը «Արջն իր ահու ամուր կը գոռա» ձևով առկա է XIX դարի վերջերին գրի առնված առածների մեջ։ Ոչ մի հիմք չկա պնդելու, թե բերված առածը հորինվել է անպայման Եղիշեի շրջանում։ Դրա համար շատ թույլ կռվան է Եղիշեի՝ հիշյալ առածի մեզ հայտնի առաջին գրավոր աղբյուր լինելու հանգամանքը։ Ընդհակառակը, առածի ուղղակի իմաստի (կամ ատաղձի) կենդանիների կյանքից վերցված լինելը նկատի առնելով կարելի է թերևս ենթադրել, որ այն ծագել է խորը հնում։ Ինչ վերաբերում է առածի բուն իմաստին (որ տվյալ դեպքում պետք է վճռական դեր ունենա), որը նշանակում է թե՝ մարդը օրհասի ժամանակ դրսևորում է իր ներքին բոլոր ուժերը, ապա այդ իմաստը, ինչ խոսք, կարող էր արտահայտվել տարբեր ժամանակներում։

Իսկ ե՞րբ են հորինվել դիցուք՝

1. «Մուկը մեկ փշուր ա, ամա որ ընկնի կարաս—կը մուռտառի» առածը, գրի առնված XIX դարի վերջերին, որի հնագույն մի վարիանտը օգտագործված է Ներսես Շնորհալու (XII դար) «Ողբ Եդեսիոյ» պոեմի մեջ — «Քանզի նման էք դուք մկան, որ սատակմամբ՝ պղծէ զթան» ձևով։

2. «Մինչև երեխան չլա, մերը ծիծ չի տա» առածը, որի վարիանտները գտնում ենք XIX դարի վերջերի և XX դարի սկզբների բազմաթիվ ազգագրական-բանահյուսական ժողովածուների մեջ և որը օգտագործված է Ֆրիկի (XIII դար) կողմից նրա տաղերից մեկում—«Երբ զարթնի տղայն ու լայ, գեմ ծըծեցընէ իւր մայրն ըզնա» ձևով։

3. «Ամռան պառկիմ հովեր, ձմռան՝ հատին կովեր» տարածված ասացվածքը, որի մի վարիանտը գտնում ենք Եզնիկի (V դար) «Եղծ աղանդոց» գրքի վերջում տպված «Խրատք»-ի մեջ — «Որ գարուն ի հանգստեան կայ, ձմեռն ի սովոյ և սառնամանեաց սատակի» ձևով, մի վարիանտը՝ Գրիգոր Տաթևացու (XIV դար) մոտ—«Որ յամառն շրջի ի կոնէ ի կուռն՝ ի ձմեռն շրջի ի դռնէ ի դուռն» ձևով, մի վարիանտն էլ՝ XVIII դարի մի գրչագրի մեջ «Թէ որ յամառն չի դատի, ձմեռն երեսը պատին» ձևով։

4. «Մի ձեռքով երկու ձմերուկ չեն բռնի» առածը, որ բավական տարածված է, և որի նմանակը արձանագրված է XV դարի հայ գրչագիրներից մեկի մեջ — «Միով ձեռամբ ձմերուկս ունել երկուս» ձևով։ Եվ տասնյակ ու հարյուրավոր ուրիշները։

Բերված օրինակները վկայում են, որ քննության առարկա առած-ասացվածքները հարատևել են դարերի ընթացքում, սակայն թե երբ են սկզբնապես ստեղծվել, շատ դժվար է ասել։ Դրանք կարող էին հորինված լինել և՛ Եզնիկի, Եղիշեի, Խորենացու, Շնորհալու, Ֆրիկի կամ Տաթևացու շրջանում, և՛ նրանցից շատ առաջ, ինչպես որ ապրել են շատ դարեր հետո էլ։

3. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ, ՀՈԳԵԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԻ ԵՎ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԱՌԱԾՆԵՐԻ ՄԵՋ

Հայ ժողովրդական առածների ու ասացվածքների մեջ կուլտուր-պատմական և ճանաչողական առանձնահատուկ արժեք են ներկայացնում այն առածներն ու ասացվածքները, որոնք իրենց բովանդակությամբ ու ձևով, հաճախ էլ միայն առածի ուղղակի իմաստով, արտացոլում են դարերի ընթացքում հայ ժողովրդի ապրած միջավայրը, կյանքի ուրույն պայմանները և վերջիններիս հողի վրա առաջ եկած ու կազմակերպված նրա բնավորության գծերը։ Դրանք այն ստեղծագործություններն են, որոնց նմանակները մենք չենք գտնում ուրիշ ժողովուրդների առածների ու ասացվածքների մեջ, և որոնք հանդիսանում են հայ ժողովրդի ազգային կուլտուրայի դեմոկրատական մասի բաղկացուցիչ տարրերից մեկը։

Հայ ժողովրդական առածների ու ասացվածքների մեջ այս տեսակետից առաջին հերթին աչքի են ընկնում այն ստեղծագործությունները, որոնց մեջ արտացոլված է Հայաստանի բնակչության

քաղաքական կյանքը պատմական տարբեր ժամանակաշրջաններում։ Այստեղ մենք տեսնում ենք աշխարհակալ պետությունների խաչուղիում ընկած երկրի քաղաքական անկայուն վիճակը, այդ պետությունների ռազմամոլ հորդաների պարբերական ասպատակությունները, նրանց Հայաստանում կատարած անօրինակ բռնությունները, կողոպուտն ու հարկահանությունը։ Փոխվել են ժամանակները, ժամանակների հետ փոփոխվել են և այդ պետություններն ու նրանց գլուխ կանգնած մարդիկ, սակայն անփոփոխ է մնացել նրանց քաղաքական վարքագիծը Հայաստանի նկատմամբ։ Հազկերտի տեղը գրավել է Շապուհ Վարազը, Շապուհին հաջորդել է արյունռուշտ Բուղան, Բուղայից հետո եկել է Չինգիզ-խանը, Չինգիզ-խանին փոխարինել է Լենկթեմուրը, Լենկթեմուրին՝ Շահ-Աբասը, Շահ-Աբասին՝ Աբդուլ-Համիդը իր հետնորդներով։ Դարերի ընթացքում նրանք բոլորն էլ սուր են բարձրացրել Հայաստանի ազատության ու անկախության վրա, վիրավորել ժողովրդի ազգային արժանապատվությունը, արհամարհել լեզուն ու կրոնը, ավերել ու ամայացրել նրա ծաղկուն քաղաքներն ու շեները, ոչնչացրել նրա նյութական ու հոգևոր կուլտուրայի լավագույն հուշարձանները։ Հայ աշխարհիկ և հոգևոր հարստահարիչների հետ միասին նրանք դարերի ընթացքում անխնա հարստահարել են աշխատավոր ժողովրդին, կողոպտել վերջինիս ունեցվածքը։ Առանձնապես մռայլ ու արյունոտ են Հայաստանի պատմության նորագույն շրջանի տարեգրության էջերը, որոնք պատմում են վերոհիշյալ բռնապետների նորօրյա հաջորդների՝ թուրքական ջարդարարների հայաջինջ գործունեության մասին։

Հայ ժողովրդի պատմական անցյալում ապրած քաղաքական վերոհիշյալ կացության գեղարվեստական բնորոշ ընդհանրացումներն են հանդիսանում «Ալին գնաց, Մուսան եկավ», «Շեխը գնաց, Մահմադը եկավ» առածները, որոնց ուղղակի իմաստը անդրադարձնում է օտարերկրյա նվաճողների՝ մեկը մյուսին փոխարինող և մեկը մյուսից ծանր տիրապետությունը Հայաստանում։ «Ալի», «Մուսա», «Մահմադ» հատուկ անունները և «շեխ» բառը լինելով ծագումով արաբական, գործածական են եղել նաև պարսիկների, թաթարների, մոնղոլների, թուրքերի մեջ, ուստի և այդ առածները հավասարապես տարածելի են հիշյալ ժողովուրդների ու ցեղերի բոլոր հրոսակապետերի, ոստիկանների ու կրոնավորների վրա։

Հայաստանում շատ տարածված մի ստեղծագործություն է «Մերը մանուկն ուրացավ» առածը, որը սովորաբար գործ է ածվում

հասարակական մեծ արհավիրքի, թոհ ու բոհի, խառնակության ժամանակ։ Այս առածն ամենայն հավանականությամբ ստեղծվել է այն ժամանակ, երբ Հայաստանում անխնայորեն իր արյունոտ գործն է կատարել պարսիկ զորապետների, արաբ ոստիկանների, թաթար, մոնղոլ և թուրք հրոսակների յաթաղանը, և երբ հազարավոր հայ մայրեր, ինչպես պատմական փաստաթղթերն են վկայում, ստիպված են եղել ուրանալ իրենց մանուկներին։

Նմանօրինակ մի ստեղծագործություն է նաև «Վասակի խաչիկ, ուտի տաճիկ» առածը, որն իր ուղղակի իմաստով որոշակիորեն խոսում է այլազգի զավթիչների հարստահարության մասին։ Հայտնի է, որ հայ ժողովուրդը «տաճիկ» բառով է կոչել ո՛չ միայն արաբ խալիֆաներին, որոնց հետ է կապվում այդ բառն իր սկզբնական իմաստով, այլև բոլոր մյուսներին՝ պարսիկ, թուրք, թաթար և այլ բռնապետներին, որոնք նրան պակաս տանջանքներ ու նեղություններ չեն պատճառել, քան արաբ խալիֆները։

Տանջված ու բազմաչարչար հայ ժողովրդի նախասովետական շրջանի քաղաքական ծանր վիճակի բանահյուսական պատկերավոր ընդհանրացումներն են հանդիսանում նաև «Հայու օրորոց կոտրուկ ա», «Հայի աշխարհ, վայի աշխարհ», «Հայաստան — որբաստան» ասացվածքները և բազմաթիվ ուրիշները։

Հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական կյանքի պայմաններն արտացոլող առածների ուրույն մի բաժինն են կազմում պանդխտության վերաբերյալ եղած ստեղծագործությունները։ Օտարերկրյա բռնակալների շահատակությունն ու կողոպուտը, միացած ժողովրդի վզին նստած ազգային տերերի՝ աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների ու կապիտալիստների հարստահարություններին, արյունաքամ են արել Հայաստանի աշխատավոր գյուղացիներին ու արհեստավորներին, կյանքի ապահովություն, աշխատանք ու վաստակ որոնելու համար դեպի պանդխտություն մղել նրանց հոծ մասսաները։ Քիչ ժողովուրդներ կան, որոնց համար այնքան բնորոշ լինի պանդխտությունը. որքան այն եղել է հայ ժողովրդի կյանքում։ Երկար դարերի ընթացքում այն հանդիսացել է նրա անբաժան ուղեկիցը, իր ուժեղ կնիքը դնելով նրա կյանքի ու ստեղծագործության վրա։ Ահա թե ինչու «ղարիբի» բազմաթիվ սրտառուչ երգերի հետ միասին, պանդխտության վերաբերյալ եղած ժողովրդական առածներն ու ասացվածքները ևս հանդիսանում են հայ ժողովրդի բանավոր ստեղծագործության առավել ինքնատիպ-հայկական հորին-

վածքները, ուր պատկերված է հայրենիքից տարագրված հազարավոր պանդուխտ հայերի սոցիալական ծանր ողբերգությունը։

Այդպիսի ստեղծագործությունների բնորոշ օրինակներ են.

«Եզան բեռը որ չծռվի, քարը ղարիբություն չի էթա», խորիմաստ ու ինքնատիպ առածը, որով ժողովուրդը նշում է պանդխտություն առաջացնող սոցիալական պատճառները։ Ճիշտ այնպես, ասում է նա, ինչպես որ քարը օտարություն է ընկնում այն ժամանակ միայն, երբ եզան ծռված բեռան հավասարակշռությունը պահպանելու համար այն տեղահան անելով դնում են բեռան թեթև կողմում, այդպես էլ ժողովուրդը՝ հայրենիքը, տունն ու տեղը թողած պանդխտություն է դիմում միայն այն ժամանակ, երբ խախտվում է նրա տնտեսական և սոցիալ-քաղաքական կյանքի հավասարակշռությունը։

«Ղարիբի ուշքն իր տունն ա» ասացվածքը, որով ժողովուրդը ընդգծում է օտարություն գնալու ակամա և հարկադիր լինելու հանգամանքը ղարիբի համար, ու նրա՝ հայրենիքի նկատմամբ ունեցած բուռն սերը։

«Ղարիբի հացը լեղի ա, ջուրը աղի» ասացվածքը, որի մեջ շեշտված է օտարության մեջ գտնվող պանդուխտ աշխատավորի աշխատանքի ու կյանքի դժնդակ պայմանները։

«Հոր ու մոր արինը քաղցր ա, վաթանի հողն ու ջուրը անուշ» ասացվածքը, որը գեղեցիկ համեմատությամբ բացահայտում է օտարության մեջ տառապող պանդխտի նվիրական զգացմունքները հարազատ վաթանի նկատմամբ, և նման մի շարք ուրիշները։

Ժողովրդի կյանքի պայմանների հետ միասին, հայկական առածներն ու ասացվածքները ցայտուն գծերով պատկերում են նաև նրա հոգեկան նկարագիրը, նրա ազգային բնավորության յուրահատկությունները։ Չնայած իր պատմական կյանքի քաղաքական ծանր պայմաններին, աշխատավոր ժողովրդին հատուկ առողջ լավատեսության և իր վերջնական հաղթանակի մասին ունեցած նրա վառ հավատի շնորհիվ. հայ ժողովուրդը չի ընկրկել ու հուսահատվել։ Նա միշտ ոգի ի բոին պայքարել է իր ազատության ու անկախության համար, անդադրում աշխատել ու ստեղծագործել, երբեք չկորցնելով լավագույն ապագայի հեռանկարն ու հույսը։ Այդ պայքարի ու աշխատանքի բովում էլ ահա ստեղծվել ու ձևավորվել է նրա ազգային բնավորությունը, որի բնորոշ գծերից են՝ տոկունությունը, աշխատասիրությունը, ազատասիրությունն ու մաքառման ոգին։

Հայ ժողովրդական բանահյուսությունն ընդհանրապես, և նրա գլուխգործոց «Սասունցի Դավիթ» դյուցազնական էպոսը մասնավորապես, հիանալի կերպով արտացոլել է իր մեջ հայ ժողովրդի բնավորության այդ գծերը։ Նույնը արտահայտված է նաև հայկական առածների ու ասացվածքների մեջ։ Այստեղ ևս, ինչպես և էպոսում, մենք տեսնում ենք աշխատանքային մեծ արիությամբ և ստեղծագործական ձիրքով օժտված մի ժողովրդի, որն իր այդ հատկությունների շնորհիվ բազմիցս կարողացել է վերականգնել թշնամու կողմից ավերված իր քաղաքներն ու շենները, ակոսել խոպան մնացած դաշտերը, հրաշակերտել ճարտարապետական իր հոյակապ կոթողները, զարգացրել իր գիրն ու գրականությունը, հնչեցրել իր աշխատանքի ու սիրո սքանչելի երգերը։ Բերենք երկու բնորոշ օրինակ։ Հայկական առածների ու ասացվածքների մեջ կա բավական տարածված մի ստեղծագործություն, որի մեջ բացահայտված է հայ ժողովրդի ազգային բնավորության ամենատիպական գծերից մեկը. այդ ստեղծագործությունը՝ «Հայը ընչանք չբեզարի՝ չի նստի» հայտնի ասացվածքն է, ուր խոսվում է ժողովրդի անդադրում աշխատասիրության մասին։ Նման տիպի մի ստեղծագործություն է նաև «Հայի տվեք տվեքին չես ռաստ եկել» տարածված ասացվածքը, որի մեջ բացահայտված է ժողովրդի ազգային բնավորության մի ուրիշ, ո՛չ պակաս կարևոր գիծը, նրա մաքառման կամքն ու կորովը արտաքին թշնամու դեմ, նեղության ժամանակ ինքնապաշտպանական ընդհանուր և կուռ ճակատով դուրս գալու հատկությունը, մի հատկություն, որ հաղորդել են նրան քաղաքական կյանքի այն ծանր պայմանները, որոնց մեջ նա ապրել է դարերի ընթացքում։

Հայ ժողովրդի ստեղծած հարյուրավոր առածներ ու ասացվածքներ, ուղղակի կամ անուղղակի ձևով իրենց բուն իմաստով կամ այլաբանական պատկերի ստաղձով, արտացոլում են Հայաստանի բնաշխարհը, նրա կլիմայական յուրահատուկ պայմանները։ Այստեղ մենք տեսնում ենք՝ երկրի լեռներն ու ձորերը, գետերն ու առուները, դաշտն ու արոտը, քարն ու հողը և վերջիններիս կարևոր նշանակությունը աշխատավոր ժողովրդի կյանքի ու կենցաղի համար։

Ընկած լինելով Թուրքիայի ասիական մասի և Իրանի լեռնաստանների միջև և դիրքով կապված լինելով վերջիններիս հետ, Հայկական բարձրավանդակը աչքի է ընկնում իր ուրույն աշխարհագրությամբ և բնական մի շարք կարևոր առանձնահատկություններով,

առանձնահատկություններ, որոնք զգալիորեն տարբերում են նրան իր հարևան և մյուս երկրներից։ Այդ առանձնահատկությունները հիմնականում հետևանք են հյուսիսից ու հարավից Հայկական բարձրավանդակը եզերող լեռների և վերջիններիս (Մասիս, Արագած և այլն) հրաբխային գործունեության։ Լեռներն ու սարերը և ընդհանրապես երկրի աշխարհագրական դիրքը, նրա՝ ծովի մակերևույթից բավական բարձր լինելու հանգամանքը խոշոր չափով ազդել են Հայաստանի կլիմայի վրա։ Նրանցով է մեծապես պայմանավորված եղել ժողովրդի տնտեսական գործունեությունը և բարեկեցությունը։ Հայտնի է, որ Հայկական բարձրավանդակը, և հատկապես նրա դաշտավայրերը (Արարատյան և այլն), շնորհիվ իր աշխարհագրական դիրքի, ընդհանուր առմամբ, ունի ցամաքային կլիմա, աչքի է ընկնում իր խստությամբ և զրկված է անհրաժեշտ քանակի խոնավությունից ու մթնոլորտային տեղումներից։ Հայաստանի լեռներն իրենց գագաթներին դիզված հավիտենական ձյունով նպաստել են մի կողմից սարալանջերի ալպիական բուսականության աճին, որն այնքան կարևոր էր անասնապահության զարգացման համար, մյուս կողմից՝ իրենց լանջերից բխող աղբյուրներով, վտակներով ու գետերով կենսաբեր ջրի աղբյուր են հանդիսացել դաշտային շրջանների երկրագործական կուլտուրաների համար։

Ահա թե ինչու հայ ժողովրդի ողջ մտաշխարհում, նրա հավատալիքների, բանավոր ստեղծագործության և մասնավորապես առածների ու ասացվածքների մեջ այնքան հաճախ են հիշվում լեռներն ու սարերը։

Հայաստանի լեռնային բնաշխարհն արտացոլող տարածված ստեղծագործություններից են, օրինակ, հետևյալ առածներն ու ասացվածքները, որոնք մեծ մասամբ ունեն այլաբանական իմաստ. «Ամեն փետ շերեփ չի լինի, ամեն սար՝ Մասիս», «Սարը գնացինք՝ սոսուը տարանք, դաշտը գնացինք՝ թրթուրը կերանք», «Սար պիտի փլչի, որ ձոր լցվի», «Սարի քուրք, սարի կաքավ», «Սարերուն կաքավը մարմանդն են բռներ», «Սարերու տեղակ, ձորերն են ձեն տալիս», «Սարը ինչքան բարձր լինի, մի օր ճամբան վրայով կանցնի», «Ցավը լեռներուն են տվել՝ չեն դիմացեր, առեր մարդուն են տվեր», «Սարը սարին չի հանդիպի, մարդը մարդու կը հանդիպի», «Սարսաղի ձեռից սարեկները սարը կը փախչեն» և այլն։

Առանձնապես բնորոշ են հետևյալ երկու ստեղծագործությունները, որոնք ավելի քան մյուսները կապված են Հայաստանի լեռների և երկրի օդերևութաբանական յուրահատուկ պայմանների հետ։

Այս ստեղծագործություններից առաջինը՝ «Սարը գնացինք՝ սոսուը տարանք, դաշտը գնացինք՝ թրթուրը կերանք» առածն է, որի ուղղակի իմաստը հիանալի կերպով արտացոլում է Հայաստանի համար այնքան բնորոշ ալպիական և դաշտային գոտիների միջև եղած ուժեղ հակադրությունը—սարի սոսուը (սառնամանիքը) և անձրևների պակասն ու չորային կլիման դաշտում, որի հետևանքով այստեղ, ինչպես հայտնի է, աճում ու բազմանում է գյուղատնտեսության վնասատուներից մեկը՝ թրթուրը։ Երկրորդ ստեղծագործությունը՝ «Ամեն փետ շերեփ չի լինի, ամեն սար՝ Մասիս» առածն է, որի մեջ հայկական լեռնաշխարհի երկրաբանական պատմության մեջ մեծ դեր խաղացած և ժողովրդի երևակայության վրա այնպե՛ս ուժեղ ազդած Մասիս սարի ինքնատիպ ու բուն հայկական պատկերի միջոցով ակնարկված է այն միտքը, որ՝ կան այնպիսի բարձունքներ, որոնց չի կարող հասնել սովորական մեկը։

Լեռների ու սարերի նման հայ ժողովրդական առածների ու ասացվածքների, ինչպես և առհասարակ հայկական հավատալիքների ու բանահյուսության մեջ, բազմիցս հիշատակվում են ջուրը, գետերը և առուները։ Ինչպես լեռների ու սարերի, այնպես էլ ջրի ուժեղ արձագանքը հայկական առածների մեջ անմիջականորեն կապված է երկրի յուրահատուկ աշխարհագրական դիրքի և կլիմայի հետ։ Դրանով է պայմանավորված նաև ժողովրդի տնտեսական գործունեությունն ու կենսական գոյությունը։ Տիրող ցամաքային կլիմայի և մթնոլորտային խոնավության պակասի հետևանքով, ինչպես հայտնի է, Հայաստանում երկրի պտղաբերությանը նպաստող հիմնական գործոնները հանդիսացել են ո՛չ թե անձրևները, այլ լեռներից ու սարերից իջնող գետերն ու գետակները, և մանավանդ արհեստական ոռոգման առուներն ու ջրանցքները, որոնք այնքա՛ն մեծ դեր են խաղացել Հայաստանի պայմաններում սկսած ուրարտական շրջանից մինչև մեր օրերը։ Այդ գետերն ու գետակները, ջրանցքներն ու առուներն են, որ կյանք են տվել լեռնային այրող արևի և մթնոլորտի ընդհանուր չորության ազդեցության տակ խանձված ու չորացած Հայաստանի դաշտային շրջանների և մասնավորապես Արարատյան դաշտի հողերին, դարձնելով դրանք բերրի ու բուսառատ։

Ջրի, գետերի, աղբյուրների, առուների մասին եղած տարածված ստեղծագործություններից են, օրինակ, հետևյալ հայկական առածներն ու ասացվածքները, որոնց մեծ մասն ունի այլաբանական իմաստ. «Ջուրն ակեն կը կտրեն», «Ջրի շատ գալը կտրելու

նշան է», «Ջրի շինածն էլ շատ է, քանդածն էլ», «Ջուրն իր ճամբան կգտնի», «Ամեն օր ջուրը գերան չի բերի», «Ջուր հորի՞ կը խշշա— Տեղս քարոտ է», «Մեծ գետի ճամբեն՝ մեծ կը լինի», «Աղբրները չի չորցած՝ ջրի արժեքը չի գիտցվիր», «Մեր առվումը ջուր գա, որտեղից կուզե՝ թող գա», «Մինչև առուն ջուր գա, գորտի աչքն էլ դուրս կգա», «Մի առվով որ ջուր է էկել, էլի կգա», «Առուն թմբից վերև չի բարձրանա», «Հենց արա, որ առվի ջուրը չփախցնես», «Առվի վերին դին սերմ չեն ցանի» և այլն։

Հայկական լեռնաշխարհի համար առանձնապես մեծ նշանակություն է ունեցել Արաքս գետը։ Նրա այդ նշանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նա սկիզբ առնելով Հայաստանի կենտրոնում և իր հետագա հոսանքով բավական երկար տարածություն անցնելով երկրի միջով, իր բազմաթիվ վտակների հետ միասին ոռոգել է այն։ Արաքս գետի Հայաստանի տնտեսական կյանքի համար ունեցած այդ կարևոր դերի գիտակցությունը ցայտուն կերպով դրսևորված է աշխատավոր հայ ժողովրդի ողջ մտաշխարհում և բանահյուսության մեջ։ Նույն այդ գիտակցության յուրահատուկ արտահայտությունն է նաև «Արազն էնքա՞ն է պղտիկցել, որ Ալին-Ղուլին էշով կանցնին» բուն հայկական ոքանչելի առածը։ Հիմք ունենալով Արաքսի բնական այն հատկությունը, որ նա իբրև լեռնային վտակներից գոյացած մի գետ սովորաբար գարնանը խիստ վարարում է, իսկ աշնանը ընդհակառակը սաստիկ նվազում, ժողովուրդը այլաբանորեն ակնարկում է չնչին ու անարժան մարդկանց, որոնք ընկած տեսնելով երբեմնի բարձր դիրք ունեցողներին, ոտնահարում ու արհամարհում են նրանց։ Առածի մեջ, միաժամանակ, Հայաստանի գետերի մոր նվազման պատկերի միջոցով, սիմվոլացված է երկրի պատմական ճակատագրի մեջ անցյալում տեղի ունեցած ծանր փոփոխությունը, նրա ինքնուրույնության կորուստը և օտարերկրյա բռնակալներին (Ալի-Ղուլիներին) ոտի կոխան դառնալու հանգամանքը։

Շնորհիվ իր հրաբխային շեշտված կազմության, Հայաստանի հողը աչքի է ընկնում քարհանքների իր բացառիկ հարստությամբ։ Չափազանց նշանակալից է եղել քարի դերը երկրի բնակչության կյանք ու կենցաղում։ Ժողովրդի տնտեսական գործունեությունը, նրա արտադրողական ուժերը մեծապես կապված են եղել քարի հետ։ Քարն իր բազմաթիվ ու բազմազան տեսակներով ու գույներով հանդիսացել է բնական այն նյութը, որն առատորեն օգտագործվել

է Հայաստանի բնակիչների կողմից թե՛ շինարարության մեջ և թե՛ գործիքներ ու զենքեր պատրաստելու համար։

Այստեղից էլ բնական ու հասկանալի է դառնում այն զգալի տեղը, որ գրավել է քարը հայ ժողովրդի հավատալիքների, բանավոր ստեղծագործության և մասնավորապես առածների ու ասացվածքների մեջ։

Քարի մասին եղած բազմաթիվ հայկական առածների ու ասացվածքների տարածված նմուշներից են հետևյալները. «Տաշած քարը գետնին չի մնա», «Քարն ու կիրը մեկ տեղ կը միանան», «Ամեն քարի տակ մի դարդ կա», «Իմաստունի հետ քար քաշի, հիմարի հետ փլավ մի ուտի», «Քարը հանած՝ ձենը տակը դրած», «Քարի մեջ արուն կա» և այլն։

Վերոհիշյալ ստեղծագործությունների մեջ հատկապես աչքի է զարնում «Տաշած քարը գետնին չի մնա» տարածված առածը, որն իր ուղղակի իմաստով անդրադարձնում է Հայաստանում ընդունված քարաշեն շենքերի շինարարության պայմաններում մշակված քարի մեծ պահանջը և որի մեջ ընդգծվում է քարի դերը հայ ժողովրդի կյանքում, իբրև տեղային բնույթի կարևոր շինանյութերից մեկը։

Հայ ժողովրդական առածների ու ասացվածքների մեջ լայնորեն ու բազմակողմանիորեն արտացոլված է Հայաստանի բուսական և կենդանական աշխարհը։ Հայ ժողովուրդն իր առածներում և ասացվածքներում, ինչպես և ողջ բանահյուսության ու հավատալիքների մեջ, լայն տեղ է տվել այն բույսերին, որոնք աճել են նրա բնական-աշխարհագրական պայմաններում, այն կենդանիներին, թռչուններին, սողուններին և այլն, որոնք ապրել են Հայաստանի դաշտերում, լեռներում ու ձորերում։ Հայ ժողովրդական առածների ու ասացվածքների մեջ խոսք չկա, դիցուք, արմավենու, ձիթենու, նարնջենու, կիտրոնի և արևադարձային ու բևեռային ուրիշ բույսերի, ծառերի և սրանց պտուղների, ծաղիկների, խոտերի մասին, մինչդեռ բազմիցս հիշատակվում են ծիրանի ծառն ու ծիրանը, նշենին ու նուշը, խաղողը, բարդին, ուռենին, վարդը, ռեհանը, կակաչը, դաղձը, ցորենը, գարին, գխտորը, որոնք, ինչպես հայտնի է, շատ տարածված են Հայաստանի պայմաններում։

Հայկական բարձրավանդակի բուսական աշխարհը արտացոլող բնորոշ ստեղծագործություններից են, օրինակ, հետևյալ առածներն ու ասացվածքները. «Հասած ծիրան, բաց բերան», «Ծիրա՞նն ինչ արավ, որ կորիզն ի՞նչ անի», «Ծիրանն իր ծառի տակին վեր կընկնի», «Մարտի 9-ը, խաղողի մատը կը տրաքցու ձինը», «Խաղողին

լավը բաղվանչին կուտի», «Մարդ մարդի մի բաղ կը տա, մարդ մարդի մի ճութ խաղող չի տա», «Բաղումս խաղող կա, բարև աստծու բարին կա», «Ուշ լինի, նուշ լինի», «Ամառվա փուշը՝ ձմեռվա նուշն է», «Նուշն հիշելիք ա, կշտանալիք չի», «Ուռին ու բարդին, ամեն մեկ հետ իր մաղդին», «Ուռի ծառ կերթա կուգա՝ սիրո տեր ի, բարդի ծառ կերթա կուգա՝ դարդի տեր ի», «Բարդին կռացնես՝ քեզ վրա կընկնի», «Վարդը քաղի, փուշը կրակի», «Վարդի թիով էլ լավի խաթեր չեն դիպչի», «Ռեհանը թողած յոնջա է ուտում», «Ռեհանը իշուն տվին հոտ անելու, կերավ», «Քանց պուտը կարմիր չը կա, որ ճղես սիրտը սև է» և այլն։

Առանձնապես բնորոշ են խաղողի և ծիրանի մասին եղած հայկական առածներն ու ասացվածքները, որոնք ավելի քան մյուսները կապված են Հայաստանի բնական-տնտեսական միջավայրի հետ։

Խաղողի մասին եղած վերոհիշյալ ստեղծագործությունների և մասնավորապես «Մարտի 9-ը, խաղողի մատը կը տրաքցու ձինը» ասացվածքի հայկական լինելը հաստատվում է ո՛չ միայն նրանով, որ այստեղ խոսվում է Հայաստանի համար բնորոշ ու տարածված, տակավին ուրարտական շրջանից եկող գյուղատնտեսական կուլտուրաներից մեկի մասին, այլև նրանով, որ ասացվածքի մեջ ընդգծվում է այդ կուլտուրայի սերտ կապը երկրի յուրահատուկ կլիմայով պայմանավորված տարվա տվյալ եղանակի, ամսվա և նույնիսկ օրվա հետ։

Ավելի ակնառու է ծիրանի ծառի և ծիրանի պտղի մասին եղած առածների ու ասացվածքների հայկական ծագումն ու բնույթը։ Հայտնի է, որ Հայաստանը վայելել է ծիրանի ամենալավ տեսակների հնագույն հայրենիքի համբավը։ Գոյություն ունի այն կարծիքը, ըստ որի ծիրանը Հայաստանից է անցել Եվրոպա, դրա համար էլ այն գիտական գրականության մեջ հորջորջված է Prunus armeniaca կամ ուղղակի Armeniaca անունով (Հայկական սալոր կամ Հայկական)։

Յուրահատուկ է նաև հայ ժողովրդական առածների ու ասացվածքների մեջ անդրադարձում գտած կենդանական աշխարհը։ Այստեղ շատ հազվադեպ են և կամ բոլորովին բացակայում են այնպիսի կենդանիներ, թռչուններ, սողուններ և այլն, ինչպիսիք են, դիցուք, առյուծը, վագրը, ընձուղտը, կոկորդիլոսը, սպիտակ արջը, սիրամարգը, խեցգետինը և այլն։ Մինչդեռ հաճախ, շա՛տ հաճախ հիշատակվում են՝ եզը, ոչխարը, այծը, էշը, շունը, կատուն, մուկը, գայլը, աղվեսը, արջը, հավը, արագիլը, կռունկը, ծիծեռնակը,

աղավնին, բազեն, անգղը, բուն, հոպոպը, կկուն, ագռավը, մեղուն, մրջյունը, օձը, գորտը, կրիան և այլն, որոնք այնքան սովորական են եղել Հայաստանի պայմաններում։

Հայկական բարձրավանդակի կենդանական աշխարհն արտացոլող տարածված ստեղծագործություններից են, օրինակ, հետևյալ առածներն ու ասացվածքները. «Եզը դատի, եզն ուտի՝ աշխարհ կավերի», «Սև եզը՝ սև տարուն», «Կովու գորա մողիկ կեղնի», «Կովը սատկավ, խաբը վերցավ», «Ձին կխաղա, ձիավորը կը գովեն, Թուրը կը կտրե՝ ձեռքը կը գովեն», «Ձին որ ջրի միջին ա, շվշվացնելդ զուր ա», «Ոչխարի դմակը իրեն բեռ չէ», «Ոչխարի սուրում շուռ եկավ, կաղերը առաջ ընկան», «Էծը էծի համար լավ է, քան մի սուրու ոչխարը», «Ինչ որ էծն արավ Թիրիմին, Թիրիմն էլ արավ էծին», «Իշուն բանջար խաշե, չկերավ, գլխին քաշե», «Իշի զատիկը յոնջի հետ է դուրս գալիս», «Շունը տանտիրոջ արբնեկն ի», «Շունը սպանողին քաշ տալ կտան», «Կատվի փախսը մինչև մարագն է», «Կատվի խաղը՝ մկան մահ ա», «Մկան համար կատվից մեծ գազան չկա», «Գելն ինչ գիտե՝ ջորին թանգ ա», «Գելի անունն է դուրս եկել, աղվեսը աշխարհ քանդեց», «Աղվեսի վկան իր պոչն է», «Արջը մեշից խռովել ա, մեշեն խաբար չունի», «Արջը գելի փայ էլավ, աշխարհը խաբար էլավ», «Հավը տանը կենա՝ կուտն ուտի», «Շահեն բազի տեղ՝ ագռավն է նստել», «Լագլագի ումբրը լախլախով անց կը կենա», «Մարտի 9-ին լագլագը վեր բնին», «Օձի գերեզմանը լագլագի փորն ա», «Օձը արևից կը հարբի», «Օձը ամեն տեղ ծուռ ման կուգա, բնի առաջը կշիտկվի», «Մի ծաղկից օձը թույն է շինում, մեղուն՝ մեղր» և այլն։

Առանձնապես բնորոշ են օձի և արագիլի (լագլագի) մասին եղած հայկական առածներն ու ասացվածքները, որոնք ավելի քան մյուսները կապված են Հայաստանի բնական-տնտեսական միջավայրի հետ, իրենց բազմաթիվ անդրադարձումներն ունենալով ժողովրդական կենցաղի, հավատալիքների և բանահյուսության մեջ։

Ապրելով Հայաստանի լեռների, ձորերի և արևակեզ դաշտերի մեջ, օձերը սերտորեն կապվել են այդ վայրերի բնակչության համար կենսական նշանակություն ունեցող ջրի և ոռոգման հետ, ժողովրդի պատկերացումների ու հավատալիքների մեջ դառնալով ջրի հովանավոր էակներ ու պաշտամունքի առարկաներ։ Գեղամա լեռներում և Արագածի վրա հայտնաբերված քարե հսկայական վիշապ-ձկները, ջրային օձի կերպարանքով, այդ պաշտամունքի հուշարձաններն են։ Նույն պաշտամունքի հետ է կապվել նաև Հայաս-

տանի որոշ գավառներում պահպանված այն սովորույթը, ըստ որի երաշտ ժամանակ օձը այրել են և մոխիրը շաղ տվել չորս կողմը, որպեսզի անձրև գա, կամ աղբյուրների վրա քանդակել են օձի պատկերը, իբրև ջրի հովանավորի և այլն։

Նմանօրինակ տնտեսական հիմքեր ունի Հայաստանում նաև արագիլ-լագլագի տարածված լինելու հանգամանքը և նրա մասին եղած բազմաթիվ առած-ասացվածքները, ավանդությունները ու հավատալիքները։ Հայտնի է, որ Հայաստանում ձմեռը բավական երկար է տևում, և ժողովուրդը սրտատրոփ ու անհամբեր սպասում է գարնան գալուն (որը հակառակ ձմռանը՝ շատ կարճատև է լինում), իր երկրագործական աշխատանքները սկսելու համար։ Ահա թե ինչու հայ գյուղացին մեծ սիրով է վերաբերվել գարնանային թռչուններին, իր կարճատև այդ հյուրերին՝ կռունկին, սարյակներին, ծիծեռնակին, և ամենից շատ գարնան առաջին ավետաբեր արագիլին, որը նրա խորը հավատով շատ մեծ դեր ունի իր տնտեսական հաջողության ու բարեկեցության գործում, և որին նա ամեն տարի մարտի 9-ին հանդիսավոր կերպով դիմավորել է։ «Մարտի 9-ին լագլագը վեր բնին» հայտնի ասացվածքը, արագիլների տաք երկրներից Հայաստան ժամանելու՝ ժողովրդի համար նվիրական դարձած այդ ժամկետի, բանահյուսական արձագանք-բանաձևն է։

Հայ ժողովրդի քաղաքական կյանքը, բնավորությունը և միջավայրը արտացոլող առածներից ու ասացվածքներից շատերը աչքի են ընկնում կենցաղային, սոցիալական և փիլիսոփայական ընդհանրացումների ճշմարտացիությամբ ու խորությամբ և ունեն կուլտուր-պատմական և ճանաչողական մեծ արժեք։ Հայկական հարուստ ու հին բանահյուսության առավել ինքնատիպ ստեղծագործությունների հետ միասին, դրանք հանդիսանում են այն ավանդը, որ հայ ժողովուրդը մտցնում է համաշխարհային կուլտուրայի գանձարանը։

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՓՈԽԱՌՅԱԼ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐՈՒՄ

Հայ ժողովրդական առածների ու ասացվածքների մեջ թե՛ քանակով և թե՛ ըստ էության կարևոր տեղ են գրավում այսպես կոչված ընդհանուր կամ միջազգային ստեղծագործությունները։ Դրանք այն բազմաթիվ առածներն ու ասացվածքներն են, որոնց վարիանտները մենք գտնում ենք Հայաստանից աշխարհագրորեն հեռու և մոտիկ, հայերի հետ էթնիկապես աղերսակից կամ տարբեր ժողո-

վուրդների աշխատավորական խավերի բանահյուսության մեջ, սկսած մերձավոր կովկասյան և փոքրասիական ժողովուրդներից, մինչև հեռավոր Չինաստանի ու Հնդկաստանի բնակիչները։ Հայ ժողովրդական առածների ու ասացվածքների՝ ուրիշ ազգերի համանման ստեղծագործությունների հետ ունեցած ընդհանրությունները արտահայտված են գլխավորապես նրանց մոտիվների ու թեմաների նույնությամբ, իսկ հաճախ էլ նաև արտահայտչական միջոցների նմանությամբ։ Իրենց բովանդակությամբ քննության առարկա ստեղծագործությունները չափազանց բազմազան են։ Դրանք վերաբերվում են հասարակական կյանքի այլևայլ երևույթներին մարդու պայքարին ու համառ ջանքերին՝ բնության տարերային ուժերի հաղթահարման, կենդանիների ընտելացման ուղղությամբ, մերկացնում են սոցիալական վերնախավերի կողմից աշխատավոր ժողովրդի շահագործումն ու հարստահարությունը, պատկերում են մարդու աշխատանքային-արտադրական առօրյան, բացահայտում են նրա բնախոսությունն ու հոգևոր աշխարհը, կենցաղը, հավատալիքներն ու աշխարհըմբռնումը, բնութագրում են նրա անձնական ու հասարակական հատկությունները, բնավորությունն ու խառնըվածքը։

Հայ ժողովրդական առածների ու ասացվածքների հետ ընդհանրություն ունեցող ստեղծագործությունների մենք հանդիպում ենք Սովետական Միության մեջ մտնող ժողովուրդների՝ ռուսների, ուկրաինացիների, վրացիների, ադրբեջանցիների, ուզբեկների, տաջիկների և մյուս ժողովուրդների առածների ու ասացվածքների մեջ։ Այսպես, օրինակ, «Մինչև ամպը չգոռա, աստված-աստված չեն ասի» առածը, որ վերաբերում է դանդաղկոտ ու անհոգ բնավորություն ունեցողներին, որոնք ուշացումով են որևէ բան ձեռնարկում, ունեն նաև ռուսները — «Կայծակը մինչև չխփի, մուժիկը երեսը չի խաչակնքի» ձևով։ «Ձիանք նալեցին, կրիեքն էլ ոտները վերուցին» առածը, ուր ծաղրվում են իրենցից շատ բարձր կանգնածների օրինակին հետևելու ձգտող հավակնոտ մարդիկ, ուրիշ ժողովուրդների հետ ունեն նաև ուկրաինացիները — «Ձիուն պայտում են, իսկ գորտը ոտն է պարզում» ձևով։ «Խեղդվողը ձեռքը փրփուրին էլ կը գցի» առածը, ուր բացահայտված է մարդկային հատկություններից մեկը՝ նեղության կամ վտանգի ժամին ամենաթույլ բաներին իսկ ապավինելը, ուրիշ ժողովուրդների հետ ունեն նաև վրացիները — «Խեղդվողը ձեռքը մամուռին է գցում» ձևով։ «Կատուն տանը չի, մկները շուրջպար կը

բռնեն» առածը, որ շեշտում է ենթակաների ու թույլերի ազատությունն ու սանձարձակությունը, որ նրանք ձեռք են բերում տիրոջ կամ ուժեղի բացակայության դեպքում, ուրիշ ժողովուրդների հետ ունեն նաև ադրբեջանցիք — «Ուր կատու չկա, մկները տոն են տոնում» ձևով։ «Ոտներդ վերմակիդ համեմատ երկարացրու» առածը, որը խրատում է մարդկանց ճանաչելու իրենց կարողության և ուժի չափն ու սահմանը, ուրիշ ժողովուրդների հետ, ունեն-նաև ուզբեկները — «Ոտներդ սավանիցդ դուրս մի մեկնի» ձևով։ «Ջուրը չտեսած չեն բոբիկանա» առածը, որը խրատում է մարդկանց՝ վաղաժամ ձեռնարկության չդիմելու, ուրիշ ժողովուրդների հետ ունեն նաև տաջիկները — «Երբ որ ջուրը կտեսնես, այն ժամանակ կոշիկներդ հանի» ձևով։ Այսպես և շատ ուրիշները։

Հայ ժողովրդական առածների ու ասացվածքների հետ ընդհանրություն ունեցող ստեղծագործություններ քիչ չկան և չինացիների, լեհերի, բուլղարացիների առածների ու ասացվածքների մեջ։ Այսպես, օրինակ. «Թրի կտրածը կլավանա, լեզվի կծածը չի լավանա» առածը՝ բարոյական հարվածի անբուժելիության մասին, ուրիշ շատ ժողովուրդների հետ ունեն նաև չինացիք—«Սրի հարվածից բուժվելը հնարավոր է, բայց լեզվի հարվածից՝ ոչ» ձևով։ «Աշխատողը անոթի չի մնա» հայկական ասացվածքը, որը մի խրախույս է՝ չծուլանալու և ջանադիր աշխատելու, ուրիշ ժողովուրդների հետ ունեն նաև լեհերը — «Ով աշխատում է, նա քաղցած չի մեռնի» ձևով։ «Մեղր ծախողը մատը կլպստի» առածը, որի միտքն այն է, թե՝ բարիք բաժանողը ինքն էլ օգտվում է այդ բարիքից, ուրիշ ժողովուրդների հետ ունեն նաև բուլղարացիները — «Մեղրը ում մոտ որ է, նա էլ լիզում է մատները» ձևով և այլն։

Հայ ժողովրդական առածների ու ասացվածքների հետ ընդհանրություն ունեցող ստեղծագործություններ ունեն նաև հույները, արաբները, հնդիկները, ֆրանսիացիք, իտալացիք և շատ ուրիշ ժողովուրդներ։ Այսպես, օրինակ, «Շատ ապրողը բան չի իմանա, շատ ման եկողը կիմանա» առածը, ըստ որի ճանաչողության աղբյուրը ո՛չ թե երկարակեցությունն է, այլ մեծ կենսափորձը, ուրիշ ժողովուրդների հետ ունեն նաև հույները — «Ով շատ է ման եկել, նա շատ բան է տեսել» ձևով։ «Ասա ընկերդ ով է, ես կասեմ դու ով ես» առածը, որի մեջ ընդգծվում է մեկին ճանաչելու գործում նրա միջավայրի ուսումնասիրության կարևորությունը, ուրիշ ժողովուրդների հետ ունեն նաև արաբները — «Ուզում ես իմանալ ինչպիսին է մարդը, իմացիր նրա ընկերներին» ձևով։ «Մեկի տունն էր վառվում,

մյուսն ասաց՝ սպասիր ձեռներս տաքացնեմ» առածը, այլոց վիճակին անհաղորդ նեղ անձնամոլների մասին, ուրիշ ժողովուրդների հետ ունեն նաև հնդիկները — «Մեկի տունն է վառվում, մյուսը տաքանում է» ձևով։ «Երկաթը տաք տաք կը ծեծեն» առածը, որի այլաբանական միտքն այն է, թե գործը ժամանակին պետք է կատարել, ի թիվս շատ այլ ազգերի, ունեն նաև ֆրանսիացիք — «Կռի՛ր երկաթը, քանի դեռ տաք է» ձևով։ «Մեկ կա՝ հազար արժե, հազար կա՝ մեկ մի չարժե» ասացվածքը՝ պիտանի և անպետք մարդկանց մասին, ուրիշ շատ ժողովուրդների հետ ունեն նաև իտալացիք — «Մի մարդը կարող է հարյուրին արժել, իսկ հարյուրը կարող է չարժել մեկին» ձևով։ Այսպես և շատ ուրիշները։

Հիշյալ կարգի նմանություններն ու ընդհանրությունները, ինչպես առհասարակ տարբեր ժողովուրդների կուլտուրայի ու հոգևոր ստեղծագործության մեջ եղած նմանությունները հիմնականում բացատրվում են այդ ժողովուրդների աշխատավորական խավերի կյանքի ընդհանուր պայմաններով կամ այդ պայմանների մեջ եղած ընդհանրություններով, նրանց անցած պատմական զարգացման համանման ճանապարհով, հասարակական-տնտեսական ֆորմացիաների նմանությամբ և վերջիններիս վրա խարսխված նրանց կենսափորձի, աշխարհըմբռնման, կենցաղի ու հոգեբանության ընդհանրություններով։ «Ամենատարբեր ու հեռավոր ժողովուրդների մոտ,— գրում է այդ առթիվ Պ. Լաֆարգը,— մենք գտնում ենք նման երգեր, զրույցներ ու սովորույթներ։ Գիտնականները ենթադրում են, որ դրանք կամ մի ժողովրդից մյուսին են անցել, կամ էլ կազմում էին նրանց հոգևոր հարստության մի մասը, որին նրանք տեր էին համատեղ կերպով մինչև իրենց բաժանումը։ Քարե դարի վայրենիները Եվրոպայում իրենց դանակներին, կացիններին և մյուս քարե գործիքներին տալիս էին հար և նման ձև, ինչ և Ավստրալիայի բնակիչները։ Անհնարին է կարծել, թե այդ զուգադիպությունը հիմնված լինի տրադիցիայի կամ փոխառության վրա։ Հում նյութի նույնությունն է, որ մարդուն թե՛ այնտեղ և թե՛ այստեղ հանգեցրել է նույնակերպ մշակման։ Ճիշտ այդպես էլ միևնույն երևույթներից ստացված իրենց տպավորությունները մարդիկ արտահայտում են նման երգերի, զրույցների ու սովորությունների մեջ»[1]։

Առանձնապես բնորոշ են այս տեսակետից վերևում բերված ստեղծագործություններից «Աշխատողը անոթի չի մնա», «Երկաթը

[1] П. Лафарг, Очерки по истории культуры, 1926, стр. 51—54.

տաք տաք կը ծեծեն» և «Շատ ապրողը բան չի իմանա, շատ ման եկողը կիմանա» առած-ասացվածքներն իրենց այլազգի տարբերակներով, որոնց նման կենսափորձից ծագած լինելու հանգամանքը ինքնին ակնբախ է։

Ըստինքյան հասկանալի ու բնական պետք է համարել այն երևույթը, որ հիշյալ կարգի ընդհանրություններն ավելի շատ ու առավել ակնհայտ են աշխարհագրորեն իրար մոտ և ընդհանուր ծագում ունեցող կամ իրենց ծագման մեջ էթնիկական ընդհանուր տարրեր պարունակող ցեղերի ու ժողովուրդների բանահյուսության մեջ, որովհետև այդ ընդհանրությունների հիմքը հանդիսացող սոցիալական, տնտեսական, բնական և այլ պայմանների նմանությունները այստեղ ավելի ակնհայտ են, քան իրարից աշխարհագրորեն հեռու և էթնիկապես տարբեր ցեղերի ու ժողովուրդների բանահյուսության մեջ։

Հայկական առածների ու ասացվածքների համեմատական ուսումնասիրությունը վերոհիշյալ երկու կարգի առածների ու ասացվածքների հետ հաստատում է նշված հանգամանքը։ Այսպես, օրինակ, մեր կողմից համեմատված 500 վրացական առածներից[1] 83-ը իրենց նմանակներն ունեն հայկական առածների մեջ, որ անում է 16,2 տոկոս, իսկ 500 անգլիական առածներից[2] հայկական առածների մեջ իրենց նմանակներն ունեն միայն 30-ը, որ անում է 6 տոկոս։ Մոտավորապես նույն հարաբերությունը գոյություն ունի նաև մյուս «մոտիկ» ու «հեռու» ժողովուրդների առածների ու ասացվածքների մեջ։

Ինչպես հայ, այնպես էլ մյուս բոլոր ժողովուրդների բանահյուսության մեջ առկա այսպես կոչված միջազգային ստեղծագործությունները, իրենց բնույթով ընդհանուր լինելով, ըստ էության ազգային կամ տեղական են։

Հայ ժողովրդական առածների ու ասացվածքների ուրույն (քանակով ոչ մեծ) բաժինն են կազմում նաև այսպես կոչված փոխառյալ ստեղծագործությունները։ Դրանք այն առածներն ու ասացվածքներն են, որոնք սերվում են հայերի հետ երկարատև հարևանության և քաղաքական, տնտեսական ու կուլտուր-կենցաղային շփման մեջ գտնված մի քանի ժողովուրդների բանավոր ստեղծա-

[1] მეტრეველი, ქართული ანდაზები, თბილისი, 1941 წ.

[2] 500 Английских пословиц и поговорок, под редакцией И. Х. Дворецкого, Москва, 1945.

գործությունից, և առաջին հերթին կովկասյան և փոքրասիական ժողովուրդների բանահյուսությունից։ «Փոխառյալ» ստեղծագործությունները հայկական առածների ու ասացվածքների մեջ իրենց բովանդակությամբ բավական բազմազան են։ Դրանց մեջ կարելի է հանդիպել սոցիալական և կենցաղային մոտիվների, մարդկային հատկություններին և բարոյական հասկացողություններին վերաբերող ստեղծագործությունների և այլն, և այլն, որոնք բոլորն էլ, երբեմն ավելի, երբեմն պակաս որոշակիությամբ, կրում են իրենց վրա այն ժողովրդի ապրած միջավայրի, կյանքի, կենցաղի, լեզվի և հավատալիքների կնիքը, որից փոխ են առնված։

Հայ ժողովրդական առածների ու ասացվածքների մեջ առկա փոխառյալ ստեղծագործությունները հիմնականում սերվում են հիշյալ ժողովուրդների բանահյուսությունից։ Նման ստեղծագործությունների բնորոշ նմուշներ են, օրինակ. «Քեֆը քոնն է, քյանդը՝ քյոխվինը», «Բիր ըլի ու փիր ըլի» և «Հասան քաչալ, քաչալ Հասան» առածները։ Դրանք հայացված վարիանտներն են ադրբեջանական համապատասխան տարածված առածների («Քեֆ սանն դըր, քյանդ՝ քյոխվանըն», «Բիր օլսուն, փիր օլսուն», «Հա՛ Հասան քյաչալ, հա քյաչալ Հասան»)։ Վերոհիշյալը հաստատում է, նախ և առաջ, այն հանգամանքը, որ բերված երեք առածներն էլ գրի են առնված այնպիսի վայրերում (Ղարաբաղ, Զանգեզուր և այլն), որոնք ունեն հայ-ադրբեջանական համատեղ ապրող բնակչություն և կամ սահմանակից են Ադրբեջանին, և ապա նաև այն, որ այդ առածների մեջ առկա «քյանդ» (գյուղ), «բիր» (մեկ), «փիր» (լավ, ազնիվ) բառերը հայերենի մեջ առանձին չեն գործածվում և գալիս են ադրբեջաներենից։

Նմանօրինակ ստեղծագործություններ են և՛ «Ճիրվելութինը հերթով կուլի», «Մամի ուդիարը վուրթուն կը հասնի» և «Թավաթ Ամիրան էիր, հիմի Շամիրան դառար» առած-ասացվածքները։ Դրանք երեքն էլ հայացված վարիանտներն են վրացական համապատասխան առած-ասացվածքների («Ճիրվելոբա ռիգիթ իքնեբա», «Մամիս ուդիարի շվիլսա դաեմառթեբա», «Թավադ Ամիրանի իղավի, էխլա գախտի Շամիրանի»)։ Այդ է ապացուցում, առաջին հերթին, տվյալ առած-ասացվածքների մեջ առկա՝ «Ճիրվելութին» (կռվարարություն), «մամա» (հայր), «ուդիար» (անիրավություն), «թավաթ» (սկզբից) բառերը և «Ամիրան» հատուկ անունը, որոնք հայերենում առանձին չեն գործածվում և ապա նաև այն, որ երեք առած-ասացվածքներն էլ գրի են առնված վրացիների հետ երկար ժամանակ հա-

մատեղ կյանք ու կենցաղով ապրած բնիկ Թիֆլիսահայերի բերանից։

Փոխառյալ ստեղծագործությունների ցայտուն նմուշներ են՝ «Տուլա գնացողը սամավարը հետը չի տանի» և «Մեր փողոցումն էլ տոն կը լինի» առածները։ Վերջիններս ռուսական հանրահայտ առածների («В Тулу с самоваром не ездят», «Будет и на нашей улице праздник») թարգմանություն-փոխադրություններ են հայերենի։

«Տուլա գնացողը սամավարը հետը չի տանի» առածի ռուսական ծագումը հաստատվում է ո՛չ միայն նրանով, որ այն Ռուսաստանում շատ տարածված է, իսկ մեզ մոտ հանդիպում է մի երկու քաղաքային վայրերում (Լենինական, Երևան) միայն, այլև նրանով, որ Տուլա տեղանունը և «սամավար» իրը կապված են ռուսական միջավայրի հետ։ Ինչպես հայտնի է, «սամավարի» կուլտուրան վերջին շրջանում Ռուսաստանից հայերին անցած կուլտուրաներից մեկն է, իսկ Տուլան էլ՝ ռուսական այն քաղաքն է, որը հռչակված է եղել իր «սամավարներով»։

«Մեր փողոցումն էլ տոն կը լինի» առածի ռուսական ծագումը ևս հաստատվում է, նախ և առաջ, նրանով, որ այն ռուսների մոտ չափազանց տարածված և հին մի ստեղծագործություն է, մինչդեռ հայերի մեջ այն բոլորովին նոր է և համեմատաբար քիչ է տարածված, և ապա նաև նրանով, որ առածի մեջ ակնարկված «փողոցի տոնը» արձագանքն է ռուս ժողովրդի հնագույն (տակավին հեթանոսական շրջանից եկող) կենցաղային-ծիսական սովորույթներից մեկի, երբ տարվա որոշ եղանակներին ու օրերին մարդիկ խմբերով դուրս էին գալիս՝ որոշյալ փողոցում տոնելու բնության այս կամ այն երևույթի հետ կապված երկրագործական, թովչական բնույթի տվյալ տոնը։

Փոխառյալ ստեղծագործություն է՝ «Լավ գառը վեր քոզին ուր նշանց կտա» առածը, որը քրդական համապատասխան շատ տարածված առածի («Բարխե չէ ժը բարքոզե չէ») հայացված վարիանտն է։ Դրա ապացույցներն են. առածի ուղղակի իմաստի կապը խաշնարած ժողովրդի կենցաղի հետ, նրա մեջ գործածված «քոզ» բառը, որ քրդերեն է և նշանակում է գառնանոց, և առածի՝ Հայաստանի քրդաշատ վայրերում (Բուլանըխ, Խնուս) գրի առնված լինելու հանգամանքը։

Փոխառյալ ստեղծագործություններ են՝ «Յոթ դերվիշ մեկ կարպետի տակ սթար են, յոթ թագավոր վեր յոթ աշխարհի չեն սթրվի» և «Աոյուծը առյուծ է, էգ լինի՝ թե որձ» առածները, որոնք իրանական համապատասխան հայտնի առածների («Դահ դավրիշ դար բլիմի բխուսբանդ, դու փադիշահ դար աքլիմի նաքունջանդ», «Շերշերա, չը ժընա չը մերա») թարգմանություն-փոխադրություններն են։ Վերջիններիս ծագումը՝ մատնում են նրանց մեջ հիշատակվող «դերվիշն» ու «առյուծը», որոնք երկուսն էլ կապված են Իրանի կենդանական աշխարհի ու կենցաղի հետ։ Այսպես և շատ ուրիշները։

Վերոհիշյալ և նման տիպի մյուս բոլոր ստեղծագործությունները, որոնց մենք հանդիպում ենք հայկական առածների ու ասացվածքների մեջ, բնույթով փոխառություններ լինելով, միաժամանակ ունեն նաև ինքնուրույն, տեղական նշանակություն։ Եվ դա միանգամայն հասկանալի է, որովհետև փոխառության կամ ազդեցության փաստն ինքնին վկայում է ազդողի ու ազդվողի կյանքի ու կենսահայեցողության մեջ եղած ընդհանրության մասին, և ապա, որ նույնպես կարևոր է, փոխառությունն էլ որպես այդպիսին, ինչպես հայտնի է, ժամանակի ընթացքում ենթարկվում է վերափոխման, մշակման և տեղայնացման։

5. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1

Հայ ժողովրդական առածներն ու ասացվածքները ճշմարտացիորեն արտացոլում են պատմական տարբեր դարաշրջաններում Հայաստանում գոյություն ունեցող տարբեր տնտեսական կարգերը՝ նրանց զարգացման տարբեր էտապներում և վերջիններիս հիմքի վրա խարսխված հասարակության սոցիալ-քաղաքական, իրավական, կենցաղային հարաբերություններն ու հաստատությունները, բարոյական, փիլիսոփայական, էսթետիկական ու կրոնական հայացքներն ու հասկացողությունները։ Լինելով օբյեկտիվ իրականության ռեալիստական արտացոլումներ, ժողովրդական առածներն ու ասացվածքները մեզ տալիս են Հայաստանի աշխատավոր բնակչության՝ գյուղացիների, արհեստավորների ու բանվորների կյանքի պատկերը, հասարակական կենցաղը, սովորույթներն ու հայացքները։

Ինչպես մյուս երկրներում, այնպես էլ Հայաստանում, երկար դարերի ընթացքում իշխել է ֆեոդալական տնտեսակարգը արտադրական իր ուրույն եղանակով, սոցիալ-քաղաքական համապատասխան կառուցվածքով և իրավական նորմերով։ Ֆեոդալիզմի տիրապետության ողջ շրջանում (II դար նախքան մեր թվականու-

թյունը մինչև XIX դարը) երկրի նյութական բարիքների հիմնական արտադրողը՝ գյուղացիական մասսան, նրա հետ նաև արհեստավորներն ու քաղաքային աշխատավորությունը գտնվել են ընչազուրկ և իրավազուրկ վիճակում, անխնա կերպով հարստահարվելով պետական իշխանության, կալվածատերերի և հոգևորականության կողմից, որոնց ձեռքին են եղել արտադրության միջոցները։ Պատմական տարբեր դարաշրջաններում փոխվել են ֆեոդալական շահագործման եղանակները. աշխատավճար ռենտային (կոռ) փոխարինել է մթերայինը (բահրա), վերջինիս հաջորդել է դրամական ռենտան. երբեմն էլ կողք-կողքի գոյություն են ունեցել թե՛ մեկը և թե՛ մյուսը։

Մանավանդ XV դարից, երբ Հայաստանը մասնատվում է Պարսկաստանի ու Օսմանյան Թուրքիայի միջև, երկրում հայկական ֆեոդալիզմին հիմնականում փոխարինում է այսպես կոչված մուսուլմանականը, որը հայտնի է շահագործման իր առավել վայրագ ձևերով։ Աշխատավոր ժողովուրդը սկսում է դաժանորեն կողոպտվել պարսիկ ու թուրք խաների ու բեկերի կողմից։ Բնորոշ է այս տեսակետից հետևյալ «առասպելը», որ բերում է XVII դարի հեղինակ Զաքարիա Քանաքեռցին իր «Պատմագրության» մեջ։ Խոսելով Շահ-Աբասի ժամանակ Հայաստանի աշխատավոր բնակչությունից գանձվող ծանր հարկերի (կոռի) մասին, նա գրում է. «...Կին յղի գոլով՝ այր նորա տանէին կոռ, և ոչ թողուին գնալ ի տուն իւր. և կինն ծնանէր որդի և զարգանայր, և առաքէին զնա կոռն, զի հայրն երթիցէ ի տուն»,— և անմիջապես ավելացնում՝ «Զայս առասպելս վասն բազմութեան կոռին ասացին»[1]։

Այս դրությունը, երբեմն ավել, երբեմն պակաս չափով, Արևելյան Հայաստանում շարունակվում է մինչև XIX դարի առաջին տասնամյակները (մինչև նրա միացումը Ռուսաստանին), իսկ Արևմտյան Հայաստանում տևում է մինչև XX դարի սկզբները (մինչև Սուլթանական Թուրքիայի կողմից կազմակերպված արևմտահայերի մի զգալի մասի արյունոտ ջարդերն ու բնաջնջումը և մյուս մասի տարագրությունն ու գաղթը Կովկաս և աշխարհի զանազան ծայրերը)։

XIX դարի սկզբներին Արևելյան Հայաստանը ազատագրվում է պարսկական բռնությունից և միացվում է Ռուսաստանին։ Այդ պատմական իրադարձությունը խոշոր նշանակություն է ունենում

[1] Զաքարիա Սարկաւագի Պատմագրութիւն, հատ. Ա, էջ 46։

հայ ժողովրդի համար։ Նրա պատմական ճակատագիրը դրանով կապվում է ռուս ժողովրդի հետ։

1861 թվականի ռեֆորմից հետո, չնայած ճորտատիրության մնացորդներին, Ռուսաստանում սկսեց արագ կերպով զարգանալ կապիտալիզմը՝ իր հետ բերելով սոցիալ-տնտեսական և դասակարգային նոր փոխհարաբերություններ և շահագործման նոր ձևեր։ Մի երկու տասնամյակ անց այն մուտք է գործում նաև Կովկաս, հեղաշրջելով դարերի ընթացքում այստեղ հարատևող ֆեոդալական տնտեսակարգը։ Այդ առթիվ Լենինը գրում է. «Ռուսական կապիտալիզմը Կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական ինքնամփոփվածության մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, իր գործարանների համար շուկա էր ստեղծում: Հետռեֆորմյան ժամանակաշրջանի սկզբին նոր բնակավորված կամ լեռնականներով բնակավորված երկիրը, որոնք համաշխարհային տնտեսությունից և նույնիսկ պատմությունից դուրս էին կանգնած, դառնում էր նավթարդյունաբերողների, գինու առևտուր անողների, ցորենի և ծխախոտի ֆաբրիկանտների երկիր...»[1]։

Փոխվում է անդրկովկասյան գյուղի, այդ թվում նաև արևելահայ գյուղի տնտեսական կյանքի և դասակարգային հարաբերությունների պատկերը։ Հայ գյուղացու տնտեսությունը ապրանքային բնույթ ստանալով՝ սերտորեն կապվում է շուկայի հետ, խորանում է դասակարգային շերտավորումը, ցայտուն են դառնում շահագործող դասակարգի՝ նոր առաջ եկող բուրժուազիայի և գյուղի ու քաղաքի ընչազուրկ մասսայի միջև եղած սոցիալական հակասությունները։ Վերահաս սովի վտանգը ստիպում է գյուղացուն գյուղից քաղաք փախչելու։ Դարավերջին և XX դարի սկզբներին՝ արդյունաբերական կապիտալիզմի զարգացման հետևանքով, գնալով ավելի են սրվում դասակարգային վերոհիշյալ հակասությունները և աշխատավորության դրությունն է՛լ ավելի է վատթարանում։

Այսպիսին է եղել ահա ընդհանուր գծերով հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական վիճակը մինչև սովետական կարգերի հաստատումը, որը և իր հարազատ անդրադարձումն է գտել նրա բանահյուսության մեջ ընդհանրապես և առածների ու ասացվածքների մեջ մասնավորապես։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3-րդ, հրատ. 4-րդ, Երևան, 1947, էջ 771։

Առածների ու ասացվածքների մեջ ժողովուրդը պատկերել է երկար դարերի ընթացքում, սեփական ու այլազգի բազմաթիվ աշխարհիկ ու հոգևոր հարստահարիչներից՝ կալվածատեր կապիտալիստներից իր կրած տառապանքները։ Ցայտուն պատկերներով նա ընդգծել է հասարակական կյանքում գոյություն ունեցող ընչքային ու սոցիալական բևեռացումը, բազմիցս անդրադարձել աշխարհում գոյություն ունեցող անարդարացի կարգերին, երբ երկրի ողջ հարստությունը՝ հողն ու փողը պատկանում է փոքրամասնությանը, իսկ բնակչության մեծամասնությունը զրկված է ամեն ինչից. «Տեղ կա ծով է, տեղ կա սով է», «Որը ունի Նախչվան, որը չունի խեղդվելու չվան», «Մեկին փութ-փութ, մեկին պուտ-պուտ» և այլն։

Ժողովուրդը նշում է, որ տիրող դասակարգերը օգտվելով սեփական արտոնյալ վիճակից, իրենք չեն աշխատում, այլ ստիպում են, որ իրենց համար ուրիշներն աշխատեն և իրենք վայելում են նրանց աշխատանքի արդյունքը. «Աղքատի դատածը հարուստի որսն է», «Եզը դատի, ձին ուտի», «Ո՞վ կաշխատի, ո՞վ կուտի» և այլն։

Ժողովրդի խորը համոզմամբ «իմ ու քունն» է (իմա՝ արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը), որ մի բուռ հարուստներին հնարավորություն է տալիս շահագործելու հազարավոր աշխատավորների, և առհասարակ ավերիչ դեր է խաղում մարդկանց կյանքում. «Իմ ու քուն տուն է քանդում»։

Հայ ժողովրդական առածների ու ասացվածքների սոցիալական բովանդակության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աշխատավոր հայ ժողովուրդը դարերի ընթացքում ճնշվել ու հարստահարվել է ո՛չ միայն օտարերկրյա բազմաթիվ կեղեքիչներից, այլև իր ազգային տերերից։ Վերևում բերված ստեղծագործությունների և շատ նմանների հետ միասին, այս տեսակետից առանձնապես բնորոշ է «Հայը թակի Վարդանին, Թուրքը թակի Վարդանին» տարածված ասացվածքը, որի մեջ ակնարկվում է հայ աշխատավորության վզին ծանրացած երկակի լծի մասին։

Հայաստանի սոցիալական կյանքի մասնավոր սեփականատիրական շրջանի երևույթներն արտահայտող ընդհանուր բնույթի ստեղծագործությունների հետ միասին, հայկական առածների ու ասացվածքների մեջ մենք գտնում ենք նաև այդ կյանքի դասակարգային, տնտեսական և հասարակական կոնկրետ պատմական հարաբերություններն ու հաստատություններն ակնարկող ստեղծագործություններ։ Այդպիսիների մի նմուշ է օրինակ. «Գերին որ գին անի,

իր տիրուն կը հասնի» ասացվածքը, որի մեջ անդրադարձում է գտել ստրկական աշխատանքի գոյությունը Հայաստանում։ Ինչպես հայտնի է, Հայաստանում վերջինս թեև չի հանդիսացել ամբողջ արտադրության հիմքը, ինչպես անտիկ Հունաստանում և Հռոմում, բայց և այնպես նկատելի տեղ է գրավել արտադրության մեջ, հանդիսանալով տիրապետող ֆեոդալական դասակարգի շահագործման միջոցներից մեկը, ճորտական աշխատանքի շահագործման զուգընթաց։ Ավելի ուշ, Հայաստանում ֆեոդալիզմի աստիճանական քայքայման և առևտրա-վաշխառուական կապիտալի զարգացման զուգընթաց ստրկությունը կորցնում է իր նախկին նշանակությունն իբրև արտադրական գործիք և ստրուկը դառնում է առ ու ծախի առարկա, որ արտահանվում է Արևելքի ու Արևմուտքի համաշխարհային շուկաները։ Ստրկավաճառության համար հարուստ աղբյուր են ծառայում այս շրջանում անվերջ պատերազմներն ու գերեվարությունը։ Վերոհիշյալ ժողովրդական ասացվածքի մեջ ահա արտացոլված է ստրուկի՝ իր տիրոջ համար փոխանակային արժեք լինելու այդ գաղափարը («Գերին որ գին անի՝ իր տիրուն կը հասնի»)[1]։

Նմանօրինակ մի ստեղծագործություն է նաև «Կոռվորը ձմեռը թոփ կենին» առածը, ուր արձագանք է գտել ֆեոդալական տնտեսակարգին հատուկ շահագործման հիմնական ձևերից մեկը՝ աշխատավճար ռենտան, որի ժամանակ գյուղացին պարտավոր էր մենակ կամ իր լծկան տավարի հետ հարկադիր ձրի աշխատանք կատարել պետության և կալվածատիրոջ հողի վրա։ Հայտնի է, որ Հայաստանում կոռը իբրև շահագործման հիմնական ձև գերիշխել է մինչև VIII դարը, սակայն այն շարունակել է իր գոյությունը նաև հետագայում ընդհուպ մինչև XX դարը, փողային ռենտայի տիրապետության պայմաններում։ Կոռվորներին վերաբերող վերոհիշյալ առածը հայկական իրականության մեջ, հատկապես պարսկա-թուրքական ֆեոդալիզմի տիրապետության պայմաններում ուժեղ կերպով արտահայտված կոռային հարկադիր աշխատանքի արտահայտությունն է, որի մեջ ակնարկված է գարնանային երկրագործական աշխատանքների համար նախատեսված կոռվորների վաղօրոք նախապատրաստման ընդունված սովորույթը։

Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում անցյալում գոյություն ունեցող պատմական կոնկրետ հարաբերությունների ու

---

[1] Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հատոր I, Երևան, 1939, էջ 272—313։

հաստատությունների արտահայտությունն է նաև «Մեզի էրկուս-էրկուս, ուստենուն (վարպետներին) տասերկուս» ասացվածքը, որի մեջ արձագանք է գտել համքարական կազմակերպությունների ներսում վարպետների ու աշակերտների միջև գոյություն ունեցող սոցիալական անհավասարությունը և այդ հողի վրա հարստահարվող աշակերտների մեջ ծայր առած դժգոհությունն ու բողոքը, մի երևույթ, որը ինչպես մյուս երկրներում, այնպես էլ Հայաստանում սկսվում է դեռևս միջին դարերում, առևտրական կապիտալի ազդեցությամբ և հետագայում գնալով ավելի է խորանում։

Նույն տիպի մի ստեղծագործություն է և «Բազարում ապրանքի հետ հոգի էլ են ծախում» ասացվածքը, որն իր ծագումով անշուշտ կապված է բուրժուական կարգերի հետ և ստեղծվել է հավանորեն այդ կարգերի հաստատման առաջին շրջանում։ Ասացվածքի մեջ արտացոլված է այն դիմադարձը, որ առաջացրել են հասարակական նոր հարաբերությունները մինչ այդ նահապետական բնափակ տընտեսությամբ ապրող մարդկանց հոգեբանության մեջ, որոնց համար սկզբնական շրջանում շատ խորթ պետք է թվային հին բարքերն ու բարոյական նորմերը, գլխիվայր փոխող այդ նոր հարաբերությունները։

Իր առածների և ասացվածքների մեջ հայ ժողովուրդը բազմիցս անդրադառնում է անցյալում տիրող պետական-քաղաքական իշխանություններին, իրավական և վարչական հաստատություններին, վերջիններիս գլուխ կանգնած ղեկավարներին և նրանց ստորադրյալներին։ Նա անողոք կերպով մերկացնում ու քննադատում է բոլորի դասակարգային, շահագործողական էությունը, բացահայտում է նրանց միջև գոյություն ունեցող ընդհանրությունը, արտահայտում է այն ակնհայտ անվստահությունը, ներքին խորը արհամարհանքն ու բուռն ատելությունը, որ գոյություն ունեն աշխատավոր մասսայի մեջ նրանց նկատմամբ։ Այսպես, օրինակ, ըստ հայ ժողովրդի՝ թագավորի՝ աշխատավորության հետ ունեցած հարաբերության շարժառիթը հարստահարելու ձգտումն է. «Ուղտին ասին՝ թագավորը քեզ կանչել ա, աչքդ լի՛ս։ Ասաց՝ յա Շարուր բրնձի պիտի ըրկի, յա Կողբ աղի»։

Ընչազուրկ մարդիկ դժգոհ են թագավորից, որովհետև վերջինս հակառակ իր անմիջական պարտականության՝ պաշտպանելու հպատակների անձն ու գույքը, թույլ է տալիս ուժեղներին կողոպտելու թույլերին. «Գել պառվու էծ կերավ, պառավ թագավորին անիծեց»։

Գյուղի կառավարիչ տանուտերը աչքի է ընկնում իր բացարձակ կամայականությամբ, գյուղական աշխատավորության շահերը ոտնահարելու և ամեն ինչ բռնության ուժով իրեն կողմը թեքելու հատկությամբ. «Տանուտերի հետ հաշվի նստողը պարտքով վեր կկենա»։

Գյուղական աշխատավորությանը անխնայորեն հարստահարող ու տանջող տեղական մեծ ու փոքր պաշտոնյաների մեջ գոյություն ունի ներքին, դասակարգային համերաշխություն. «Տանտիրոջ վկան գզիրն է»։

Օրենքը մասնավոր սեփականատիրական կարգերում կոչված է պաշտպանելու տիրող դասակարգի շահերը և ոտնահարելու աշխատավոր ժողովրդի իրավունքները. «Օրենքը հարստի համար է դրած, պատիժը՝ աղքատի»։

Նույնն են անում այդ կարգերում նաև դատարաններն ու դատավորները, որոնց բնորոշ գիծը կաշառակերությունն է. «Կաշառքը դատավորի աչքը կքոռացնի»։

Աշխատավոր հայ ժողովուրդը շատ լավ գիտակցել է տիրող կարգերը փոխելու համար՝ նրանց դեմ պայքարելու անհրաժեշտությունը։ «Աղվեսը մարագում ճուտ է հանել, մեր թաղու հզությունից է» առածը նրա այդ գիտակցության այլաբանական ցայտուն արտահայտությունն է։ Այդ գիտակցությունը ժողովրդին շատ անգամներ մղել է թոթափելու իր ուսերից աշխարհիկ ու հոգևոր հարստահարիչների շահագործման ծանր լուծը։ Նա բազմիցս ապստամբել է իր տերերի դեմ, արյունահեղ մարտերի մեջ մտել նրանց հետ, սակայն ստրկության շղթաները մնացել են անձեռնմխելի։ Մի շահագործողին փոխարինել է մյուսը, իսկ շահագործումը մնացել է։ «Ով ռես, իմ հալն էս» առածը ժողովրդի սոցիալական հիշյալ վիճակի բանահյուսական բնորոշ ընդհանրացումն է։ Չնայած իր այդ վիճակին, ժողովուրդը չի կորցրել փրկության հույսը և հեռու է եղել հոռետեսությունից։ Վստահ կոլեկտիվի հզոր ուժին նա անդադար պայքարի կոչ է արել։ «Մեջք-մեջքի որ տանք, սար կը շուռ տանք», «Գեղ կանգնի, գերան կկոտրի» առածները նրա այդ համոզման հիանալի դրսևորումներն են։ Նույն այդ համոզման արտահայտությունն է նաև «Կապրի զրկվողը, չի ապրի զրկողը» ասացվածքը, որի մեջ ժողովուրդը իր դատավճիռն է կարդում շահագործող դասակարգերի մռայլ ապագայի վերաբերմամբ, միաժամանակ նշելով աշխատավորության սպասող լավ օրերի մասին։

2

Հայկական առածների ու ասացվածքների մեջ լայն կերպով արտահայտված են ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքի հիմքի վրա առաջ եկած, ձևավորված ու երկար դարերի ընթացքում գոյություն պահպանած կենցաղային հարաբերություններն ու հասկացությունները։ Առածների միջոցով մենք բազմակողմանի պատկերացում ենք ստանում Հայաստանում գոյություն ունեցող կենցաղային սովորությունների, ծիսական կարգերի, արյունակցական-ազգակցական ու ընտանեկան հարաբերությունների և սրանց հետ անմիջորեն առնչվող երևույթների մասին։ Իր առածների ու ասացվածքների մեջ ժողովուրդը տվել է ծնողի ու զավակի, եղբոր ու քրոջ, ամուսնու ու կնոջ, հարսի ու սկեսրոջ, քենու և տալոջ բնութագիրը, բացահայտել է նրանց միջև եղած փոխհարաբերությունը, խոսել է ընտանիքի ու օջախի, հյուրի ու հյուրասիրության, օժիտի ու վարձանքի և բազմաթիվ ուրիշ կենցաղային երևույթների մասին։

Ժողովրդական առածների ու ասացվածքների մեջ դրսևորված հայացքները կենցաղային վերոհիշյալ երևույթների մասին կրում են իրենց վրա տոհմատիրական-համայնական, ֆեոդալական և կապիտալիստական ֆորմացիաներում իշխող տնտեսական և հասարակական հարաբերությունների կնիքը։ Այդ հայացքներն ու հասկացությունները ընդհանուր առմամբ ունեն բավական կայուն բնույթ, որը հետևանք է դրանց սոցիալ-տնտեսական հիմքերի համեմատաբար դանդաղ փոփոխության (արտադրության գործիքների և ընդհանրապես գիտության ու տեխնիկայի ցածր մակարդակի պայմաններում)։ Քիչ դեր չի խաղացել այստեղ նաև կենցաղային սովորություններին ու հայացքներին հատուկ պահպանողականությունը։ Հայտնի է, որ նույնիսկ այն դեպքերում, երբ կյանքում արդեն դադարել են գոյություն ունենալ դրանց տնտեսական և սոցիալական հիմքերը, նոր հայացքները հաճախ դժվարությամբ են կարողացել մոռացության տալ հինը, և միայն երկարատև ու համառ պայքարից հետո հաղթանակ տանել նրա նկատմամբ։ Հաճախ էլ ժողովրդական կյանքում համատեղությամբ, կողք-կողքի և միաժամանակ ապրել են հեռավոր դարերի խորքից եկող հին և համեմատաբար ուշ շրջանում առաջ եկած նոր սովորույթներն ու հասկացությունները։ Մեր ձեռքի տակ եղած կենցաղային թեմատիկա ունեցող հարյուրավոր առածներն ու ասացվածքները, որոնք իբրև կենդանի և կենսունակ ստեղծագործություններ գրի են առնված մեծ մասամբ

XIX դարի վերջերին և XX դարի առաջին երկու տասնամյակներում, հաստատում են վերևում ասվածը։

Մի շարք օրինակներով գաղափար տանք կենցաղային բնույթի առածների ու ասացվածքների բովանդակության մասին։ Հայ ժողովրդի հայացքով՝ ոչինչ չի կարող հավասարվել ծնող մոր և նրա խոսքի դյութական մեծ զորությանը, անգամ վարդապետի անեծքը, որն ըստ ժողովրդական սնահավատքի աչքի է ընկնում իր ներգործման որոշակի ուժով. «Մոր մեկ օրհնանքը օխտը վարդապետի անեծք կը քանդի»։ Այս առածի մեջ անուղղակի կերպով արտահայտված է նաև այն գերազանցությունը, որ տալիս է ժողովուրդը աշխարհիկ գործոնին կրոնականի համեմատությամբ։

Մորից հետո երկրորդ կարևոր տեղը գրավում է հայրը։ Առանց ծնող հոր զավակների վիճակը անմխիթար է։ Նրանց համար կենսականորեն անհրաժեշտ է հոր խնամքն ու հովանավորությունը. «Մալը գնա տերը հետը, որդին գնա հերը հետը»։

Ծնողներն ընդհանրապես՝ թե՛ մայրը և թե՛ հայրը անփոխարինելի ու անկրկնելի են։ Ամեն բան հնարավոր է ձեռք բերել, բացի հորից ու մորից. «Աշխարհում ամեն բան կճարվի, սավայի (բացի) հերն ու մերը»։

Ծնողի համար ամենամեծ հարստությունը նրա զավակներն են։ Ոչ մի ուրիշ հարստություն չի կարող համեմատվել նրանց հետ. «Ընկել է փողատերը, կանգնել է տղատերը»։ Այս ասացվածքի մեջ ցայտուն կերպով արտացոլված է ժողովրդի կարծիքը մարդու ամենամեծ հարստությունը լինելու մասին, մի կարծիք, որը տրամագծորեն հակադիր է կապիտալիստական կարգերի ծնունդ այն մտայնությանը, ըստ որի փողը ամեն ինչ է։

Մոր խնամքն ու երախտիքը զավակների նկատմամբ անսահման է։ Զավակները բոլոր դեպքերում պարտական են նրան՝ անձնազոհ հոգատարության համար. «Որդին բռնումը ձվածեղ էլ որ անի, էլի մոր ամակի տակից չի դուրս գա»։

Հարազատների համար հավասարապես սիրելի ու թանկ են թե՛ աղջիկը և թե՛ տղան։ Երկուսի նկատմամբ էլ նրանք ունեն անաչառ ու հավասար վերաբերմունք. «Ասլանին էգ ու որձ չկա, ջիկրին՝ լաճ ու աղջիկ»։

Ծնողներից առավել ուշադրության առարկան մայրն է. բոլորը հետաքրքրվում են նրա որպիսությամբ, հաճախ նույնիսկ մոռացության տալով հոր գոյությունը. «Եկողը մորս հալն է հարցնում, հորս

հալը հարցնող չկա» կամ «Հորս անունը տվող չկա, քոմմա էլ մորս են հարցնում»։

Ըստ պրոֆ. Խ. Սամուելյանի այս երկու առածների մեջ պահպանվել են նախնի մայրիշխանության մնացորդները։ «Վերոհիշյալ առածների ծագման մոմենտը,— գրում է նա այդ առթիվ,— համարելու է այն փոխանցիկ շրջանը, երբ մայրիշխանությանը հաջորդում է հայրիշխանությունը, ուստի մոր և հոր նշանակությունները ծնողական-ընտանեկան տեսակետից տակավին մրցման ու պայքարի մեջ են»[1]։

Քննության առարկա երկու առածներն էլ գալով հեռավոր դարերի խորքից, իրենց գոյությունը շարունակել են մինչև մեր օրերը, ստանալով նոր, այլաբանական իմաստ։ Երկուսն էլ գործ են ածվում այն դեպքում, երբ ուզում են ակնարկել միակողմանի և շահադիտական հետաքրքրությունը մեկի վիճակով։

Քրոջ համար եղբայրն ավելի թանկ է, քան եղբոր համար քույրը։ Իր սիրով ու հետաքրքրությամբ վերջինս անհամեմատ ավելի ակտիվ է, քան առաջինը. «Քիրն ասեց՝ աղպեր ունեմ, աղպերն ասեց՝ քիր չունեմ»։ Բացատրել այս երևույթը լոկ քրոջ իբրև կնոջ առավել զգացմունքայնությամբ՝ թվում է թե միակողմանի կլինի։ Այստեղ պետք է տեսնել նաև հասարակական-սոցիալական գործոնների անդրադարձումը, թերևս և մայրիշխանության շրջանի որոշ արձագանքներ։

Աղջկա գնահատականի չափանիշը, նախ և առաջ և գլխավորապես, նրա աշխատունակությունն է, և ապա նաև նրա մայրական հատկությունը. «Աղջիկը օրնին (=հասկաքաղ) տակ գովելու է», «Աղջիկը օրոցքի տակ գովելու է»։ Մայրիշխանության քայքայումից և հայրիշխանության հաստատումից հետո, ինչպես և հետագա շրջանում, կինը կորցնելով հանդերձ տնտեսական կյանքում ունեցած իր նախկին ղեկավար դերը, դարձյալ դիտվել է իբրև կարևոր աշխատող ձեռք։ Զարգացող տնտեսության պայմաններում առաջնակարգ նշանակություն էր ստանում կնոջ դերը նաև իբրև սերունդը շարունակողի։ Վերոհիշյալ երկու առածներն էլ ծագած լինելով հետմայրիշխանության շրջանում, շարունակել են իրենց գոյությունը նաև հետագայում, այն չափով, որչափով կյանքում հարատևել են դրանց ծնող սոցիալ-տնտեսական հիմքերը։

[1] Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հատ. Ա, Երևան, 1931, էջ 257։

կնոջ (հարսի) անձնական սեփականությունը, որը կազմվում է նշանադրության ու պսակի ժամանակ նրան մատուցված ընծաներից ու դրամից, չի կարող խառնվել ամուսնու ընտանեկան գույքին և օգտագործվել այդ ընտանիքի անդամների կողմից. «Կնկա բերած փողը մայա (դրամագլուխ) չի դառնա»։ Ըստ նույն պրոֆ. Խ. Սամուելյանի «Այստեղ պարզորոշ արտահայտվում է այն սկզբունքը, որ տիրում է մատրիարխատի շրջանում։ Կանանց գույքը, մորական սեփականության իրավունքը տրամագծորեն բաժանվում էր այր մարդկանց սեփականությունից, երբ առնական ու կանացի տնտեսական գործունեությունները իրարից միանգամայն ազատ ու անկախ էին»[1]։

Հայկական առածների ու ասացվածքների մեջ արտացոլված են նաև կենցաղային բազմաթիվ ուրիշ հարաբերություններ ու հասկացողություններ։ Օրինակ, ամուսնու և կնոջ վերաբերյալ. «Մարդի շվաք, վարդի շվաք», «Կնիկդ ինչ դեղեն, դուն էլ էն տեղեն», «Տղամարդ որ կա՝ դրսի պատ է, կնիկը՝ ներսի պատ»։ Հարսի, փեսայի և սկեսրոջ մասին. «Հարսը դառա, ղուլ դառա», «Անտեր մանկիկ, անկիսուր հարսնիկ», «Փեսի շվաք, փշի շվաք», «Փեսա ու քենի, քյաբաբ ու գինի»։ Հյուրի ու հյուրասիրության վերաբերյալ. «Ղոնաղը որ կա՝ տանտիրոջ վարդն ա», «Առաջ հաց, ետև հարց»։ Օջախի և տան մեծի մասին. «Օջախ չեղնի սուճախ», «Խոսքը՝ մեծին, ջուրը՝ պզտկին»։ Բաժինքի ու ղալանի (գլխագին) վերաբերյալ. «Աղջիկն օրեկան, բաժինքը տարեկան», «Աղջկա ղալան ուր պապուն կը հասնի» և այլն։

Իր կենցաղային բնույթի առածների ու ասացվածքների մեջ ժողովուրդը հիմնականում արտահայտել է առողջ ու առաջավոր հայացքներ։

3

Հայ ժողովրդական առածների ու ասացվածքների մեջ ուշադրավ տեղ են գրավում մարդու անձնական ու հասարակական հատկություններին, նրա բնավորությանն ու խառնվածքին նվիրված ստեղծագործությունները։ Իրենց բովանդակության ու բնույթի համեմատ վերջիններս բաժանվում են երկու հիմնական խմբի։

Առաջին խումբը կազմում են այն առածներն ու ասացվածք-

[1] Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հատ. Ա, էջ 265—266։

ները, որոնց մեջ ժողովուրդը խոսում է մարդու դրական հատկությունների մասին։ Նա այստեղ ուղղակի կամ անուղղակի ձևով կոչ է անում հետևելու այդ հատկությունները կրողների լավ օրինակին։ Իրենց ծագումով տվյալ խմբի մեջ մտնող առածներն ու ասացվածքները կապված են աշխատավորական մասսաների հետ և արտացոլում են նրանց դասակարգային, քաղաքական, բարոյական ըմբռնումները, ճաշակն ու հոգեբանությունը, նրանց տենչանքներն ու ակնկալությունները։ Այսպես օրինակ. նպատակ ունենալով վեր հանելու ոչ անձնամոլ, մարդասեր, շնորհալի և նման հատկություններով օժտված մարդու արժանիքները, ժողովուրդը ասում է. «Մեկ կա հազար արժե, հազար կա մեկ չարժե»։

Հասարակության համար պիտանի ու օգտակար և միաժամանակ իր առավելություններով չշլացող, համեստ ու պարզ մարդուն բնութագրելու համար նա ասում է. «Պտղատու ծառը գլուխը կախ կը գցի»։

Ժողովուրդը խորհուրդ է տալիս գործ ունենալ միայն խելոք, բանիմաց և խոհուն մարդկանց հետ, ու հեռու մնալ անխելքներից. «Խելոքի հետ քար կրի, հիմարի հետ փլավ մի ուտի»։

Նա կոչ է անում հետևելու ուրիշներից ակնկալություն չհայցող, սեփական աշխատանքով ապրող, ջանադիր ու գործունյա, արդար ու ազնիվ, խաբեությամբ չզբաղվող, ուրիշի վաստակը չկողոպտող, ճշմարտասեր ու ճշմարտախոս մարդկանց օրինակին. «Բանուկ ձեռքը չի մուրալ», «Հալալը որ մազ ըլնի՝ չի կտրվի, հարամը որ գերան ըլնի՝ կկոտրվի», «Շիտակ ճամբով քալող չդադրի» և այլն։

Քննության առարկա առածների ու ասացվածքների երկրորդ խումբը կազմում են այն ստեղծագործությունները, որոնց մեջ խոսվում է մարդու բացասական հատկությունների մասին։ Ժողովուրդը հիշյալ ստեղծագործություններով պարսավանքի խոսք է ասում այդ հատկությունները կրող մարդկանց հասցեին։ Այստեղ մենք տեսնում ենք մասնավոր սեփականատիրական կարգերի ծնունդ հանդիսացող մարդկային այնպիսի գծեր, ինչպիսիք են եսամոլությունը, ձրիակերությունը, ագահությունը, շահամոլությունը, կեղծավորությունը և այլն։ Ժողովուրդը ճշմարտացիորեն արտացոլել է իր շրջապատի իրականությունը, շահագործման ու ճնշման վրա հիմնված անցյալի մռայլ կարգերը, որոնք դարերի ընթացքում մարդու միջից աստիճանաբար դուրս են վանել մարդկայինն ու լավը, փոխարինելով այն հակամարդկայինով ու վատով։ «Հին հասարակությունը,— ասել է Լենինը այդ առթիվ,— հիմնված էր այն սկզբունքով.

որ կամ դու ես կողոպտում ուրիշին, կամ ուրիշն է կողոպտում քեզ, կամ դու ես աշխատում ուրիշի համար, կամ ուրիշը՝ քեզ համար, դու կամ ճորտատեր ես, կամ ճորտ ես։ Եվ հասկանալի է, որ այս հասարակության մեջ դաստիարակված մարդիկ, կարելի է ասել, մոր կաթի հետ ընկալում են այն հոգեբանությունը, սովորությունը, հասկացողությունը, թե՝ կամ ճորտատեր, կամ ճորտ...»[1]։ Լենինի բնութագրած այդ հասարակությունն է ահա, որ դարերի ընթացքում մշակել է մարդու բնավորությունը, որը «Ոչ այլ ինչ է, բայց եթե փոքրամասնության կողմից կազմակերպված հարյուրամյակների ճնշումով սնուցված ունակությունների, սովորույթների, նախապաշարումների և սնոտիապաշտությունների մի շարք»[2]։

Սակայն ժողովրդի ռեալիզմը, ինչպես բոլոր մյուս դեպքերում, այստեղ էլ կրավորական, հայեցողական չէ։ Զգալի տեղ հատկացնելով իր առածների ու ասացվածքների մեջ մարդու բացասական հատկություններին նա օբյեկտիվորեն մերկացրել է դրանք ծնող հասարակական միջավայրը՝ անցյալի մասնավոր սեփականատիրական կարգերը։ Դրա հետ միասին նա հետապնդել է դաստիարակչական նպատակներ՝ քննադատության ու մերկացման միջոցով վերացնելու մարդու միջից նրա էգոիստական վատ գծերը։ Այսպես օրինակ. խոսելով ուրիշի ծանր վիճակի մեջ չմտնող և միայն իր նեղ անձնական շահով տարված մարդու մասին, ժողովուրդն ասում է. «Մեկի աչքն է դուրս եկել, մեկելն ասում է՝ տուր տանեմ կատվիս»։

Բնութագրելու համար աշխարհի բոլոր բարիքներին տեր դառնալու անհագուրդ մարմաջով բռնված անկուշտ ու ագահ մարդկանց, նա ասում է. «Տանձն ինձի, խնձորն ինձի, սերկևիլն էլ սիրտս կուզի»։

Ժողովուրդը դիպուկ և ուժեղ պատկերներով ու համեմատություններով, դառն հեգնանքով խարազանում է քրտինք չթափող, հեշտ վաստակի ետևից ընկած ձրիակերության սովոր, ծույլ, դատարկապորտ ու անգործունյա, նեղ եսամոլ ու շահամոլ, առանց որևէ դավանանքի, խարդախ ու սրիկա, երկերեսանի ու կեղծավոր մարդկանց։ Այդպիսիների մասին նա ասում է. «Սատկած էշ ման կուգա, որ նալերը քաշի», «Բան դրին փախավ, հաց դրին հասավ», «Որ ես դրախտումը չեմ, թող իշվանք էնտեղ թավալ տան», «Աչ

---

[1] В. И. Ленин, Сочинения, том 31, 1950, стр. 269.

[2] М. Горький, Публицистические статьи, 1933, стр. 264.

ձեռքը՝ բերնին, ձախը՝ դմակին», «Ագռավի ծերտը աբասու տեղ անց կըկացնի», «Մոր մանածը ծախող է», «Վեզուն մեղը, սիրտը լեղի», «Երեսանց հայելի, տակևանց ածելի» և այլն։

Նման ձևով ժողովուրդը առածների ու ասացվածքների մեջ իր ակտիվ վերաբերմունքն է արտահայտում նաև մարդու անհնական ու հասարակական բոլոր մյուս դրական ու բացասական հատկությունների նկատմամբ, հետապնդելով ուսուցողական և քննադատական նպատակներ։

4

Հայկական առածների ու ասացվածքների մեջ զգալի տեղ են գրավում կենսափիլիսոփայության, բարոյականության ու գեղեցկի վերաբերյալ ստեղծագործությունները։ Ինչպես ժողովրդական բանահյուսության մյուս բոլոր հորինվածքների, այնպես էլ վերջիններիս հիմքը կազմում է աշխատավոր մասսաների տարերային-մատերիալիստական աշխարհհայացքը։ Բնության, հասարակական կյանքի, մարդու պրակտիկ գործունեությանը վերաբերող բոլոր հարցերում ժողովրդի ելակետը հանդիսանում են նյութական պայմանները։ Հակառակ կրոնական-իդեալիստական աշխարհհայացքի, որը հաստատում է աստծու բացարձակ իշխանությունը բնության վրա և դրանով իսկ նպատակադրյալ կերպով շեղում մարդու հայացքը իրական երևույթներից ու գործողություններից, ժողովուրդը իր ուշադրությունը սևեռում է հիշյալ երևույթների ու գործողությունների վրա և իր եզրակացությունները բխեցնում է ռեալ իրականությունից։ Կյանքի ու մահվան, աշխատանքի ու սիրո, միջավայրի ու ժառանգականության և բազմաթիվ այլ հարցերում նա հիմնականում կիրառում է աշխարհաճանաչողության այդ առողջ ու առաջավոր սկզբունքը, որն իր ծագումով սերտորեն կապված է նրա հասարակական-դասակարգային կեցության հետ։

Հակառակ աշխարհի անցավորության և ունայնության մասին քրիստոնեական եկեղեցու քարոզած հայտնի գաղափարներին, որոնց հիմքում ընկած է հոգու անմահության իդեալիստական-միստիկական տեսակետը, ժողովուրդը առածների մեջ առաջ է քաշում իրական կյանքի առաջնության բուն մատերիալիստական հայացքը։

Բնորոշ է այս առումով «Բերողը կհաղթե գրողին» սքանչելի առածը, ուր բերող (իմա՝ ծնող) մոր և գրողի (իմա՝ հոգեառի) սիմվոլիկ կերպարների միջոցով ակնարկվում է կյանքի՝ մահվան հանդեպ տարած հաղթանակի մասին։

Հակառակ իր հիմքում խորապես հետադեմ ու սխալ այն հայացքի, ըստ որի հանցագործությունը, ինչպես նաև հասարակական շատ այլ չարիքներ իրենց արմատներն ունեն մարդու բնախոսության մեջ, ուստի և անհնարին է դրանք վերացնել, ժողովուրդը հավատարիմ իր հասարակական առողջ բնազդին՝ այդ բոլորը կապում է միջավայրի, սոցիալական պայմանների հետ, միանգամայն հնարավոր համարելով դրանց վերացումը։ Նա ասում է. «Մեղավոր (հանցավոր) մեր չէ բերե (մայրը չի ծնել), դրկցոց (հարևանների) մոտեն իուսե (սովորել)»։

Առաջադիմական ու ճշմարտացի է ժողովրդի մոտեցումը նաև մարդու արժանիքների գնահատության գործում։ Նրան միանգամայն խորթ է մասնավոր սեփականատիրական կարգերում՝ անհատին նրա ունեցվածքով գնահատելու ընդունված կարգը։ Ժողովրդի կարծիքով մարդու արժանիքների չափանիշը ոչ թե հարստությունն է, այլ նրա հասարակական, բարոյական ու հոգեկան հատկանիշները։ «Ջուլի (ցնցոտի) տակ էլ մարդ կլինի»,— ասում է նա այդ առթիվ, պատկերավոր կերպով բացահայտելով իր միտքը։

Չնայած տիրող դասակարգերի և հատկապես եկեղեցու համառ ջանքերին՝ դարերի ընթացքում մասսաների մեջ պասսիվության ու հնազանդության հայացքներ պատվաստելու, ժողովուրդը հիմնականում հարազատ է մնացել արտադրող ու ստեղծագործող դասակարգին հատուկ մաքառման ու պայքարի, ակտիվության ու գործի իր փիլիսոփայությանը։ Նա շարունակ այն միտքն է քարոզել, որ բնության ուժերը սեփական շահերին ծառայեցնելու, առաջադրված նպատակներին հասնելու համար մարդը չպետք է սպասի ձեռքերը ծալած և ոչ էլ հայցի վիզը ծռած։ Գործունեության ու պայքարի իր այդ հայացքները ժողովուրդը դրսևորել է «Ծառն ինքն իրան քեզ ցախ չի տա», «Ծիտ (վիզ) ծռելով մուրազի չեն հասնի» և նման տիպի մի շարք այլ առածների ու ասացվածքների միջոցով։

Իմաստուն ու խորն է ժողովրդի սիրո փիլիսոփայությունը։ «Սեր չիրիշկա հաշ ու տաճիկ, չիգյար չիշկա լաճ ու աղջիկ»,— ասում է նա, ընդգծելով սիրո զգացման մեծությունն ու վեհությունը՝ նեղ ազգային, կրոնական և նման կարգի զգացմունքների ու ըմբռնումների համեմատությամբ։

Իմաստուն ու խորն են ժողովրդի հայացքները աշխատանքի ու խաղաղության մասին։ Ժողովուրդը չափազանց բարձր է գնահատում թե՛ աշխատանքը և թե՛ խաղաղությունը, որովհետև և՛ մեկը, և՛ մյուսը նրա կյանքի իմաստը, նպատակն են։ Ապրելով բացառապես

իր արդար վաստակի արդյունքով և միաժամանակ լինելով աշխարհի բոլոր նյութական ու հոգևոր բարիքների միակ ստեղծողը, ժողովուրդը չէր կարող այլ կարծիք ունենալ աշխատանքի մասին։ Իսկ արդար և ստեղծարար աշխատանքի գլխավոր նախապայմաններից մեկը, ինչպես հայտնի է, միշտ եղել է խաղաղությունը, որի մշտական և ամենաջերմ ջատագովն է հանդիսացել աշխատավոր ժողովուրդը միշտ և ամենուր։ Աշխատանքի ու խաղաղության հասարակական վերոհիշյալ կարևոր դերն ընդգծող բնորոշ ստեղծագործություններից են, օրինակ. «Ձեռքը բան, ոտքը գերեզման» տարածված առածը, որտեղ տրված է անդադրում աշխատանքի խելացի ու գործարար խրատը, «Աշխատանքը լեռներ կհավրե» ասացվածքը, որով ակնարկվում է աշխատանքի ամենակարող և ստեղծարար մեծ զորությունը, «Հացի կտրածը թուրը չի կտրե» սիմվոլիկ առածը, ուր հացի և թրի հարաբերության միջոցով ժողովուրդը հաստատում է համերաշխության ու խաղաղության բացարձակ գերազանցությունը բռնության ու պատերազմի նկատմամբ։ Այսպես և շատ ուրիշներ։

Ժողովրդի կենսափիլիսոփայությունը, չնայած այն հանգամանքին, որ մշակվել է անցյալի ծանր պայմաններում, շնորհիվ իր առողջ մատերիալիստական արմատների, իր հիմքում լավատեսական է։ Իր առածների ու ասացվածքների մեջ ժողովուրդը տարբեր երանգներով շարունակ այն միտքն է արծարծում, որ անհաջողությունը, չարիքը հարատև չեն, և որ վաղ թե ուշ հաղթանակելու են բարին ու լավը։ Բնորոշ են այս տեսակետից՝ «Քառասուն տարի «ախ՜» չըլլար» և «Չէ եղեր գիշեր, որ չէ լուսցեր» պատկերավոր ու խորիմաստ առածները, որոնց մեջ հիանալիորեն ցոլանում է աշխատավորության՝ իր ապագայի ու վերջնական հաղթանակի մասին ունեցած վառ հավատը։

Առածներն ու ասացվածքները բացահայտում են ժողովրդի կողմից մարդկային վարքագծի այս կամ այն արտահայտությանը տրվող բացասական կամ դրական գնահատականները, լավի ու վատի, չարի ու բարու, մեղավորի ու անմեղի մասին նրա հայտնած կարծիքները։ Այդ կարծիքները բխում են աշխատավոր մասսաների բարոյախոսական ընդհանուր սկզբունքներից և համերաշխ ու համահնչուն են վերջիններիս։ Հայտնի է, որ բարոյախոսությունը իբրև վերնաշենքային երևույթ պայմանավորված է հասարակական կոնկրետ հարաբերություններով և ունի որոշակիորեն արտահայտված պատմական բնույթ։ Նրա վրա անմիջական ներգործություն ունեն տվյալ ժամանակաշրջանի իրավական, կենցաղային, կրոնա-

կան և այլ հայացքները, որոնք իրենց հերթին պայմանավորված են նույն այդ ժամանակաշրջանի տնտեսակարգով։ Թշնամական, իրարամերժ դասակարգերի բաժանված հասարակության մեջ չի եղել և չէր կարող լինել մեկ միասնական բարոյախոսություն։ Բարոյական այնպիսի ընդհանուր հասկացություններ, ինչպիսիք են օրինակ. «չարն ու բարին», «լավն ու վատը», «արդարն ու մեղավորը» և այլն, որոնք գոյություն են ունեցել երկար դարերի ընթացքում, յուրաքանչյուր պատմական դարաշրջանում և յուրաքանչյուր դասակարգային միջավայրում ստացել են սոցիալական համապատասխան երանգ ու բովանդակություն։ Մինչդեռ տիրապետող և շահագործող դասակարգերի բարոյախոսությունը արդարացնում ու պաշտպանում է այդ դասակարգերի իշխանությունն ու շահերը, ժողովրդի բարոյախոսությունը արտահայտում է ճնշված ու հարստահարված դասակարգերի բողոքն ու զայրույթը տիրող դասակարգերի դեմ, պաշտպանում է աշխատավոր մասսաների շահերը, արտացոլում է նրանց ձգտումներն ու ակնկալությունները։ Այսպես, օրինակ, հակառակ քրիստոնեական «Մի կալ հակառակ չարին» հայտնի սկզբունքին, ուր չարին չհակառակելու պասսիվության ու հնազանդության քարոզով փորձ է արվում կասեցնելու մասսաների բողոքն ու ցասումը տիրող կարգերի դեմ, ժողովուրդն իր առածների մեջ կոչ է անում հեռու մնալ չարիքից, ակնարկելով համապատասխան պատժի մասին։ Նա ասում է. «Շնության գնացողը շնաթակ կուտի», «Արին թափողը արնով էլ կերթա»։ Վերջին առածի մեջ ցայտուն կերպով դրսևորված է մի կողմից ժողովրդի խաղաղասիրական բնավորությունը, արյուն թափողների դեմ բուռն ատելությունը, մյուս կողմից՝ նրա հաստատ կամքը ոչնչացնելու այդ արյուն թափողներին։

Ժողովրդական բարոյախոսության համար չափազանց բնորոշ է փոխադարձության և փոխօգնության սկզբունքը, որն իր արմատներով կապվում է աշխատավոր մասսաների կյանքի հնից եկող համայնական-կոլեկտիվիստական տնտեսաձևի, կենցաղի և վերջիններիս վրա խարսխված նրանց համապատասխան հակումների ու հասկացողությունների հետ և տրամագծորեն հակադրվում է շահագործող դասակարգերի կողմից ստեղծված իրենց հիմքում անհատապաշտական և էգոիստական բարոյական սկզբունքներին։ Վերոհիշյալ սկզբունքի ցայտուն արտահայտություններից մեկն է «Աշխարքս փոխ հաց է» տարածված առածը, որի մեջ ժողովուրդը այն

միտքն է արտահայտում, թե աշխարհը հիմնված է մարդկանց փոխադարձ օգնության վրա։

Դասակարգային-սոցիալական որոշակի բնույթ ունեցող նմանօրինակ բարոյական մի սկզբունք է նաև անարդար ու հեշտ վաստակի անկայունության ու վաղանցուկ լինելու մասին ժողովրդի ունեցած հայացքը, որն իր արտահայտությունն է գտել «Քամու բերածը քամին կտանի», «Սելավի բերածը սելավը կտանի» և մի քանի ուրիշ առածների մեջ։ Այստեղ այն միտքն է ակնարկված, թե՝ ուրիշի հաշվին շահագործումով ու կողոպուտով ձեռք բերված հարստությունը մնայուն չի կարող լինել։

Ժողովրդի հայացքով գեղեցկի զգացումը որևէ առարկայի կամ էակի նկատմամբ, տարբեր լինելով վերջիններիս մասին նրա ունեցած գործնական կարծիքից կամ նյութական հետաքրքրությունից, միաժամանակ հակադիր չէ դրան։ Նրա աչքում տվյալ առարկայի կամ էակի գեղագիտական արժեքը մեծանում է այդ առարկայի կամ էակի ունեցած սոցիալական արժեքի համեմատ։ Գեղեցիկ է այն, ինչ պիտանի է, և տգեղ է այն, ինչ անպետք է մարդու համար։ Այստեղից էլ ահա բխում է ժողովրդի հայացքը գեղեցկի ու լավի նույնության և գեղեցկի հասկացողության հարաբերական լինելու վերաբերյալ։

Բնության և հասարակական կյանքի երևույթների գնահատման գործում ժողովրդի համար էական նշանակություն ունի գեղեցկության հարցը։ «Տան կատուն էլ լավ է, որ սիրուն ըլնի»,— ասում է նա, ընդգծելով գեղեցկության կարևորությունը ո՛չ միայն մեծ, այլև ամենափոքր բաներում անգամ։ Շեշտելու համար գեղեցկության էական դերը հատկապես մարդկանց գնահատման համար, ժողովուրդը եզրակացնում է՝ «Օքմինը չեր աչքին պիտի դուր գա, իժում սրտին»։

Ընդունելով արտաքին գեղեցկության կարևորությունը, սակայն, ժողովուրդը հեռու է այն գերագնահատելուց։ Նրա մոտ արտաքին գեղեցկությունը սերտորեն կապված է ներքինի հետ։ Միայն արտաքին գեղեցկությունը շատ քիչ է տվյալ առարկան կամ էակը գեղեցիկ համարելու համար։ «Սիրունի երեսին փլավ չեն ուտի»,— ասում է ժողովուրդը մերժելով անբովանդակ գեղեցկությունը։

Արտաքին գեղեցկության ժամանակավոր և վաղանցուկ լինելը և ներքին գեղեցկության մնայունությունն ու տևականությունը շեշտելու համար, նա ազդարարում է. «Դեմքի գեղեցկությունը տանեբաղնիս, անվան գեղեցկությունը՝ Վանեն-Բիթլիս»։

Բնորոշ են նաև այն առածներն ու ասացվածքները, որոնց մեջ բացահայտված է գեղեցկության հարաբերական լինելը։ Դրանց ցայտուն նմուշներից մեկն է «Սրտի սիրածը սիրուն կլինի» հայտնի ասացվածքը, որի մեջ ժողովուրդը պարզ ու որոշակի կերպով այն միտքն է արտահայտում, որ բացարձակ գեղեցկություն գոյություն չունի, և գեղեցկի չափանիշը մարդու՝ տվյալ առարկայի կամ էակի նկատմամբ ունեցած վերաբերմունքն է։

5

Հայ ժողովրդական առածների ու ասացվածքների համեմատաբար փոքր և ուրույն մի բաժին են կազմում հավատալիքներին ու կրոնին վերաբերող ստեղծագործությունները։ Վերջիններս, ինչպես և իրավական, կենցաղային, փիլիսոփայական և այլ բնույթի առածներն ու ասացվածքները անդրադարձնում են իրենց մեջ հին Հայաստանի տնտեսական կարգը։ Դրանք հիմնականում արդյունք ու արտահայտություն են տոհմատիրական-նահապետական և ֆեոդալական ֆորմացիաների տիրապետության պայմաններում աշխատավոր մարդու ընդհանուր գոյավիճակի, մասսաների հետամնաց ու ճնշված կացության։ Հնադարյան չութ ու արորի և փայտե գութանի երկրագործությունը, որի հետ կապված է եղել հայ գյուղացու աշխատանքային կյանքը, արտադրության այն պրիմիտիվ գործիքները (բահն ու բրիչը), որոնցով նա հայթայթել է իր գոյության պահպանման համար անհրաժեշտ կենսական միջոցները, ստրկական կապի մեջ են դրել նրան շրջապատի բնությունից, ենթակա դարձրել վերջինիս կույր ու տարերային ուժերին։ Չկարողանալով ծառայեցնել այդ ուժերն իր արտադրական նպատակներին և աշխատանքային գործողություններին, չկարողանալով կազմակերպված պայքար մղել բնության արհավիրքների ու պատահարների դեմ, անընդունակ ըմբռնելու դրանց առաջացման բուն պատճառները՝ մարդը աստվածացրել է բնությունն իր ուժերով, մարմնավորել այն զանազան չար ու բարի էակների մեջ։

Հայկական առածների ու ասացվածքների մեջ արտացոլված հավատալիքներն ու կրոնական ըմբռնումները նույնպիսի հիմքեր ունեն, ինչպես և հավատալիքներն ու կրոնը ընդհանրապես։ Վերջիններս ըստ Էնգելսի ոչ այլ ինչ են, բայց եթե՝ «ֆանտաստիկ անդրադարձումը մարդկանց գլուխների մեջ այն արտաքին ուժերի,

որոնք իշխում են նրանց վրա առօրյա կյանքում, անդրադարձում, որի մեջ երկրային ուժերը գերբնական ուժերի ձև են ընդունում»[1]։

Հայ ժողովրդական առածների ու ասացվածքների մեջ անդրադարձված է, նախ և առաջ, հոգու պաշտամունքը, որի հետ սերտորեն կապված է նախնադարյան անիմիզմը՝ բնության երևույթների ու առարկաների շնչավորումը, նրանց աստվածացումը։ Նույն այդ առածների մեջ, այնուհետև, կարևոր տեղ ունի ցեղի կամ տոհմի նախնիների պաշտամունքը, այսպես կոչված տոտեմիզմը, երբ մարդիկ բնության որևէ երևույթի կամ կենդանու մեջ տեղափոխված էին համարում իրենց նախնու հոգին և ըստ այդմ սկսում էին պաշտել նրան։ Տոտեմների պաշտամունքի արտահայտությունն է եղել կենդանու կերպարանք ունեցող չար ու բարի ոգիների (սատանա, դև և այլն), էակների պաշտամունքը։

Դարերի խորքից եկող նախնական բնույթի այս և բազմաթիվ ուրիշ հավատալիքների, սնոտիապաշտությունների ու նախապաշարումների հետ միասին, որոնց առանձին տարրերն ու վերապրուկները պահպանվել ու հարատևել են մինչև XIX դարը, հայկական առածների ու ասացվածքների մեջ զգալի տեղ ունեն նաև ավելի ուշ շրջանի և առավել զարգացած կրոնական ըմբռնումները. միաստվածության գաղափարը իր տարբեր արտահայտություններով, հանդերձյալ կյանքի հավատքը, քրիստոնեական կրոնի մի քանի դոգմաները։

Ըստ վերոհիշյալ հավատալիքների ու կրոնական ըմբռնումների՝

Շուն ու կատու սպանելը մեծ մեղք է, մուկը պիղծ է, իսկ ագռավը չարագուշակ. «Շունը սպանողին քաշ տալ կտան», «Կատու սպանողին թողություն չեղնի», «Մուկը մեկ փշուր ա, ամա որ ընկնի կարաս՝ կը մուռտառի»», «Ագռավի տեսած սերմը չի կանաչի»։

Սատանան այծի կերպարանք ունի և ազգակից է նրան, դևը կրակից վախենում է. «Էծ տեսած, սատանա տեսած», «Էծը սատանի սանահերն ա», «Դևը կրակից փախ է», «Դևը դարբնոց չի էրթա»։

Երազում տեսածը կատարվում է, երազով կանխակռահվում է լինելիքը։ Փորձանքն անպակաս է մարդու գլխից. «Երազ կա՝ օրն ա կատարվում, երազ կա՝ տարին», «Երազն առաջնախոս ա», «Օրը կ'էրթա, ավուր շառը չի էրթա»։

Մարդու հաջողության ու անհաջողության տնօրենը նրա բախտն է կամ ճակատագիրը. «Բախտ ունեցար՝ լեռ քարի վրա էլ գնաս, կը կանաչի», «Անբախտ մարդը ծովերն էլ երթա՝ կը ցամաքի», «Լավ ա մի փութ բախտը, քանց մի կարաս իմաստությունը», «Ճակատի գրվածը չի ջնջվի»։

[1] Маркс—Энгельс, Сочинения, т. XIV, 1931, стр. 322.

Հոգին գերադաս է մարմնից։ Հավատ ունեցողը երկար է ապրում. «Հոգին քաղցր է քան մարմինը», «Հավատ ունիս, շատ կապրիս»։

Այս աշխարհը անցավոր է ու փոփոխական։ Մարդ պետք է երկնչի վատ արարքներից, որովհետև հանդերձյալ կյանքում նրանից հաշիվ են պահանջելու դրա համար. «Աշխարքը Սողոմոն իմաստունին էլ չի մնացել», «Աշխարքի մալը աշխարհը կը մնա», «Դատաստան կա գալու, պատասխան կա տալու»։

Չպետք է խնայել աղքատներին ողորմություն, որովհետև աստված հատուցում է դրա դիմաց. «Ողորմություն տուր, որ աստված էլ քեզ ողորմա», «Ողորմողին աստված կը ողորմա»։

Հավատալիքներն ու կրոնը ծագած լինելով մասսաների հետամնացության ու ճնշվածության հողի վրա, դարերի ընթացքում օգտագործվել են տիրող դասակարգերի կողմից նույն այդ մասսաների գիտակցությունը բթացնելու և նրանց անխնա կերպով հարըստահարելու համար։

Չափազանց բնորոշ է այն հանգամանքը, որ աշխատավոր ժողովուրդը հետամնացության հետևանքով ստիպված լինելով հավատալ զանազան չար ու բարի ոգիներին, սատանաներին ու հրեշտակներին, բախտին ու ճակատագրին, աստծուն ու սրբերին,— միաժամանակ անխնա կերպով ու չարաչար մերկացրել, քննադատել ու ծաղրել է կրոնի պաշտոնական սպասավորներին երկրի վրա, հոգևոր դասի մեծ ու փոքր ներկայացուցիչներին, որոնք ապրել են նրա հետ կողք-կողքի և գործել նրա աչքի առաջ։ Աշխատավոր մասսաները իրենց դարավոր կենսափորձով տեսել են, թե ինչ դեր են խաղացել եկեղեցին, կրոնն ու կրոնավորները ժողովրդի հարստահարման, ճնշման ու ստրկացման գործում։ Նրանք տեսել ու զգացել են իրենց մեջքի վրա, թե ինչպես քրիստոնեական եկեղեցին, հանձին իր սպասավորների, միշտ գնացել է տիրող շահագործող դասակարգերի հետ, ընդդեմ ժողովրդի, թե ինչպես այդ եկեղեցին հնազանդության և հպատակության իր քարոզներով աշխատել է թմրեցնել ու զինաթափ անել ժողովրդին, կասեցնել նրա բուռն ատելությունն ու պայքարը ճնշողների դեմ։ Ահա թե ինչու նրանք՝ աշխատավոր մասսաները, ծառս են եղել ոչ միայն աշխարհիկ հարստա-

հարիչների՝ զանազան կալվածատերերի, իշխանների, պետության ու նրա պաշտոնյաների, վաշխառու-առևտրականների, կապիտալիստների և բազմաթիվ այլ «ցեցերի» դեմ, այլև նույն թափով ու ատելությամբ դուրս են եկել վերջիններիս դաշնակից զանազան հոգևոր պորտաբույծների, եկեղեցու սպասավորների՝ վարդապետների և մյուսների դեմ։ Աշխատավոր ժողովրդի պայքարը կրոնի և կրոնավորների դեմ, եկեղեցական ծեսերի ու արարողությունների ժխտումը, որն այնքան ցայտուն կերպով արտահայտված է աղանդավորների գաղափարախոսության մեջ տակավին վաղ միջնադարում, իր ուժեղ արձագանքն է գտել հայ ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրի ստեղծագործությունների (առակ, էպոս, երգ և այլն) մեջ և մասնավորապես առածներում ու ասացվածքներում։

Հայկական առածների ու ասացվածքների մեջ մերկացված է հոգևորականության սոցիալական էությունը, որպես անաշխատ և շահագործող մի դասակարգի։ Այստեղ երևան են գալիս եկեղեցին, վանքը և նրա պաշտոնյաները (վարդապետ, քահանա և այլն), որոնք աշխարհիկ հարստահարիչների նման ապրում են գյուղի ու քաղաքի աշխատավորության հաշվին, առանց տքնելու, ձրիակերությամբ, կողոպուտով ու կաշառքով։ Բնութագրելու համար հոգևորականների այդ հատկությունը, հայ ժողովուրդն, օրինակ, ասում է՝ «Եղ Վանից, ալյուր Մահմատանից, ի՞նչ կերթա վարդապետից», «Տերտերի ասմունքը միշտ է ուզմունքը», «Տերտերուն պես «տուրն» են սորվեր», «Տերտերն առնելուն ղոչաղ ա, տալուն՝ նաչաղ» և այլն։

Իրենց դասակարգային էությամբ մոտ ու համերաշխ լինելով աշխարհիկ հարստահարիչներին, հոգևորականները հանդես են եկել նրանց հետ սերտ դաշնակցության ու համագործակցության մեջ։ Այդ մասին են վկայում «Քհանի (քահանա) վրա լույս է իջեր, ո՞վ է տեսեր — գիրը» առածը, որի մի տարբերակն է «Տանտիրոջ վրա լույս վեր եկավ, ո՞վ տեսավ՝ գիրը» տարածված առածը։

Եկեղեցու պաշտոնյաների էությունը հայկական առածների ու ասացվածքների մեջ բացահայտվում է նաև նրանց շահասիրության, ագահության ու որկրամոլության մասին խոսող բազմաթիվ ստեղծագործություններով։ Հայ ժողովուրդն ասում է. «Սար ու ձոր, տերտերի փոր», «Տերտերի կաշին թմբուկի վրա են անցուցեր, քանի զարկեր են՝ «տուր-տուր» է ասեր», «Տերտերի փորը վայ-վայի պնակ է, ինչ որ դնես՝ կերթա», «Տերտերին աչքը քնար շիներ են, քանի զարկեր են՝ անոթի եմ, բերեք ուտեմ, անոթի եմ՝ բերեք ուտեմ,

ձայն կուտա եղեր»։ Քահանայի բացառիկ որկրամոլությունը ժողովրդի աչքում դարձել է մի տեսակ չափանիշ։ Այդ է պատճառն ահա, որ երբ ուզում են ակնարկել մեկի անկշտությունը, ասում են. «Ինչ որ երեցն ուտե՝ ուրիշի տուն» կամ «Թեկուզ իրիցի բերանը գցած, թեկուզ՝ գիլի»։

Իր առածների ու ասացվածքների մեջ հայ ժողովուրդը եկեղեցու պաշտոնյաների մեծամասնության ձրիակերության, շահասիրության, ագահության, որկրամոլության հետ սուր կերպով քննադատում ու ծաղրում է նաև նրանց ծայրաստիճան բթամտությունը և անբարոյականությունը, որով առանձնապես աչքի են ընկել գյուղական քահանաները։ Այդ առթիվ նա ասում է. «Ժամատուն քանի ջոջ էլնի, տերտերը իր գիտցածը կը կարդա», «Թե մարդ չդառնա, տերտեր խոմ կը դառնա», «Տերտեր արա, գեղը գցի, թե որ չապրի, գետը գցի», «Ծառա եմ կարգիդ, չեմ հավնիր վարքիդ» և այլն։

Ժողովրդական առածների ու ասացվածքների մեջ մենք գտնում ենք նաև ոչ սակավ թվով բուն աթեիստական ստեղծագործություններ՝ ուղղված կրոնի, սրբերի և հատկապես աստծու դեմ։ Դրանց մեջ արտացոլված է աշխատավորական մասսաների տարերային մատերիալիստական աշխարհհայացքը և անարդարության դեմ ծառացող նրանց բողոքող ոգին։ Մասնավոր սեփականատիրական կարգերի տիրապետության պայմաններում, շահագործող դասակարգերի ճնշման անմիջական ազդեցությամբ աստծու հասկացողությունը ժողովրդի ըմբռնման մեջ ժամանակի ընթացքում մոտեցել ու միահյուսվել է թագավորի, կալվածատիրոջ, աղայի և նմանների մասին նրա ունեցած պատկերացումների հետ, վերածվելով «երկնային թագավորի», «երկնային կալվածատիրոջ» կամ «երկնային աղայի» հասկացողության։ Վերջինս շատ ցայտուն դրսևորված է «Վերն աստված, վարը թագավորը», «Վերն իրիշկեմ աստվածն ի, ցածը՝ ամիրեն» հայտնի ասացվածքների մեջ։

Աշխատավոր ժողովուրդը դարերի ընթացքում տեսնելով սատծուն ուղղված իր դիմում-աղոթքների անհետևանք մնալը և անձամբ իսկ համոզվելով, որ աստված ո՛չ միայն չի օգնում զրկվածներին ու հալածվածներին, այլև դարձել է շահագործման ու հարստահարման գործիք ուժեղների ու զրկողների ձեռքին, իրերի բնական տրամաբանությամբ կանգնել է աթեիզմի ճանապարհին, իր երկրայութjունն ու թերահավատությունն արտահայտել սատծու նկատմամբ։ Նա բացահայտել է քրիստոնեական կրոնի կողմից սատծուն վե-

բացված արդար և իրավ դատավորի համբավի կեղծ լինելը, կյանքից վերցրած կոնկրետ օրինակներով ապացուցելով բոլորովին հակառակը. «Ա՞խ, աստված, վա՞խ աստված, որին կուտաս սելով փետ, որին չես տա ցախ, աստված»։ Ցույց է տվել թույլերի ու կարիքավորների նկատմամբ աստծու ունեցած անբարյացակամ վերաբերմունքը. «Որբը ըսաց՝ ես կը խնդամ, աստված ըսաց՝ հըպը ես ու՞րտեղ եմ»։ Արձանագրել է աստծու՝ հարուստների պաշտպան լինելու հանգամանքը. «Աստված հարստի դհիցն ա», որի համար և բնականաբար, հարուստները միշտ մեծարել են նրան. «Աստծու գովքը միշտ հարուստն է էրե»։ Թունոտ ու սուր հեգնանքով մերկացրել է այն խաբուսիկ օգնությունը, որ աստված իբր թե ցույց է տալիս աղքատներին. «Աստված աղքատը խնդացնել ուզենա նե, էշը կորցնե, նորեն գտնել կուտա»։ Դառնացած ու հիասթափված աստծուց և կորցնելով հավատը նրա նկատմամբ, ժողովուրդը ասում է. «Անաստված տեղը կաց, անարխա (անօգնական) տեղը մի մնա»։

Նման վերաբերմունք ու կարծիք է հայտնել հայ ժողովուրդը նաև սրբերի, եկեղեցու և խաչի մասին։ Վերջիններիս նկատմամբ ժողովրդի հասկացողությունները հիմնված են եղել այն պատկերացման վրա, որ նա ունեցել է թագավորի և նրա պաշտոնյաների հարաբերության մասին։ Ինչպես որ թագավորն ուներ իր նախարարներն ու ստորադրյալները, այնպես էլ ժողովրդի կարծիքով, աստված է ունեցել։ Աստծուն, ինչպես և թագավորին նա հաճախ դիմել է ոչ թե ուղղակի ձևով, այլ եկեղեցու, խաչի և սրբերի միջնորդությամբ։ Ժողովուրդը ստիպված է եղել թագավորի ստորադրյալների նման սիրաշահել նաև վերջիններիս։ Հետևյալ ժողովրդական առածներն ու ասացվածքները ցայտուն կերպով բացահայտում են խաչի, եկեղեցու, սրբերի նմանօրինակ բնույթը. «Ո՛չ խաչին խունկ խոստացիր, ո՛չ էլ երեխին՝ բլիթ», «Եկեղեցուն չանք մոմ չտաս, քու մուրազը չի տա», «Ո՛չ սուրբին մատաղ խոստացիր, ո՛չ էլ երեխին՝ բլիթ»։

Այսպես ահա, աշխատավոր ժողովուրդը իր առածների ու ասացվածքների մեջ դիպուկ ու սուր խոսքերով, կենդանի ու գունեղ պատկերներով և առողջ հումորով մերկացրել է աստծու և սրբերի անունից հանդես եկող հոգևոր պորտաբույծների ու հարստահարիչների դասակարգային-շահագործողական էությունը, միաժամանակ իր դժգոհության ու բողոքի վճռական ձայնը բարձրացրել իրեն՝ երկնային տիրոջ դեմ։

6

Իրենց ճնշող մեծամասնությամբ լինելով գյուղացիական ստեղծագործություններ, հայկական առածներն ու ասացվածքները ճշմարտացիորեն արտացոլում են գյուղացիական մասսայի հասարակական բնույթն ու էությունը, Լենինի խոսքերով ասած՝ «բողոքն ու հուսահատությունը», գյուղացիության «եռացող ատելությունը, հասունացած ձգտումը դեպի լավը, անցյալից փրկվելու ցանկությունը» և երազականությունը[1]։ Հայկական առածների ու ասացվածքների բովանդակության մեջ առկա հակասությունները հիմնականում արտացոլումն են այն հակասական պայմանների, սոցիալական ազդեցությունների, որոնք որոշում էին գյուղացիության տարբեր դասերի ու շերտերի հոգեբանությունը։

Իրարամերժ հայացքներով ու հասկացողություններով առանձնապես հարուստ են հավատալիքներին ու կրոնին վերաբերող ժողովրդական առածներն ու ասացվածքները։ Աշխատավորական մասսաների տարերային մատերիալիստական աշխարհհայացքի արդյունք, բուն աթեիստական ստեղծագործությունների կողքին այստեղ կարելի է գտնել նաև դարերի ընթացքում քրիստոնեական եկեղեցու քարոզած պատգամների ոգով ու ոճով և նրանց անմիջական ազդեցությամբ հորինված ստեղծագործություններ։ Այսպես, օրինակ.

«Աստված ողորմածը, խեղճ մարդը մոգոնած է» ասացվածքին, ուր դրսևորված է ժողովրդի թերահավատությունը աստծու ողորմածության մասին իրեն իսկ կողմից հորինված առասպելի նկատմամբ, հակադրվում է «Աստված մեկ է, ողորմությունը՝ հազար» ասացվածքը՝ ստեղծված քրիստոնեական կրոնի ոգով՝ հարստահարվածներին մխիթարելու և նրանց մեջ սոցիալական անհավասարության վրա խարսխված կարգերի դեմ առաջ եկող բողոքն ու ընդվզումը մեղմելու համար։ «Աստված հարստի դհիցն ա» ասացվածքին, ուր արտահայտված է ընչազուրկ մասսայի ռեալիստական կարծիքը աստծու (իմա՝ կրոնի)՝ շահագործողների պաշտպան լինելու վերաբերյալ, հակադրվում է «Քյասիբի (աղքատի) տերն աստված է» ասացվածքը՝ պատվաստված ժողովրդի մեջ եկեղեցու կողմից՝ նրան հնազանդության ու խաղաղության մեջ պահելու նպատակով։ «Ճակատի գրվածը չի ջնջվի» ասացվածքին, որը կրում է

[1] Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հատ. 15, Երևան, 1950, էջ 250։

իր մեջ հին հավատալիքներից եկող ճակատագրի անխափանության, ֆատալիստական գաղափարը և վերջինից բխող պասիվության հոգեբանությունը, հակադրում է. «Գնա ծովն ընկի, ճակտիս գիրն էս է սա» ասացվածքը, որով ժողովուրդը հավատարիմ իր կենսասիրական առողջ հայացքներին, քարոզում է սեփական կյանքը լավ տնօրինելու համար ակտիվ ու պայքարող լինել կյանքում: «Հոգին առավել է, քան մարմինը» տիպիկ կրոնական ծագումի ասացվածքին, որի մեջ շեշտվում է հոգու առաջնության քրիստոնեական-իդեալիստական դրույթը, հակադրվում է «Առաջ կե՛ր, վերջը գոհացիր» ասացվածքը, որի մեջ հակառակ առաջինի ընդունված է մարմնի առաջնության բուն ժողովրդական մատերիալիստական հայեցակետը: «Ամեն հալալ մարդ արքայությունից բաժին ունի» ասացվածքին, որը ոչ այլ ինչ է, բայց եթե ընչազուրկ և տառապող մասսաներին երկնային պարգևի հույսով կերակրող կրոնական բազմաթիվ պատգամներից մեկը, հակադրվում է՝ «Էստի ճիլոբ (խսիր) տու, էնդի խալիչա տամ» ասացվածքը, որը հիանալի կերպով բացահայտում է նույն այդ մասսաների վերաբերմունքը իրական և հանդերձյալ կյանքի նկատմամբ:

Իրար բացասող և հակադիր հայացքների ու հասկացողությունների ցայտուն նմուշներ կան կնոջ դերն ու դեմքը բնութագրող հայկական առածների մեջ: Կնոջը մեծարող, նրա անձնական, հոգեկան և հասարակական արժանիքները վեր հանող բազմաթիվ ստեղծագործությունների հետ, այստեղ մենք գտնում ենք ոչ քիչ թվով առածներ ու ասացվածքներ, որոնց մեջ թերագնահատված ու վարկաբեկված է կնոջ նկարագիրը:

Առաջին կարգի առած-ասացվածքների բնորոշ օրինակներ են. «Կնիկը որ կա՝ մարդու կյանքն ա» ասացվածքը, որի մեջ ընդգծված է կնոջ դրական դերը տղամարդու կյանքում: «Առյուծը առյուծ է՝ էգ լինի թե որձ» սքանչելի առածը, որտեղ տղամարդն ու կինը դիտվում են իբրև հավասարներ: «Հա՛ անկնիկ տունը, հա՛ ջրտած ջաղացը», որի մեջ պատկերավոր համեմատությամբ տրված է կնոջ անփոխարինելի դերը ընտանիքի կենսական գոյության և բարգավաճման գործում: Եվ բազմաթիվ նմաններ:

Երկրորդ կարգի առած-ասացվածքների նմուշներից են. «Կնկա մազերը երկար է, խելքը կարճ» ասացվածքը, ուր խոսվում է կնոջ մտավոր ցածր կարողությունների մասին: «Ո՛չ կնկան էհթիպար (վստահություն) կա, ո՛չ ձիուն» ասացվածքը, ուր ակնարկվում է կնոջ անհավատարիմ լինելու մասին: «Կնկա ֆել (խարդավանք), չի

տանի սել» ասացվածքը, ուր խոսվում է կնոջ բազում խարդավանքների մասին և այլն:

Կնոջ դրական հատկությունները շեշտող առածներն ու ասացվածքները իսկական ժողովրդական ստեղծագործություններ են, հորինված աշխատավորական խավերի միջավայրում և արտացոլում են այդ խավերի ներկայացուցիչների ճշմարտացի ու առողջ հայացքները: Նրանց մի մասը գալիս է շատ խորը հնությունից, կրելով իր վրա մայրիշխանության տիրապետության և հայրիշխանության սկզբնական շրջանի ըմբռնումների կնիքը, ըմբռնումներ, որոնք բխում էին կնոջ այդ շրջանում հասարակական կյանքում ունեցած կարևոր դերից և համահնչուն էին այդ դերին:

Կնոջ մասին բացասական կարծիք արտահայտող առածներն ու ասացվածքները ֆեոդալական և բուրժուական կարգերի տիրապետության պայմաններում, տիրող դասակարգերի և հատկապես եկեղեցու ու կրոնի քարոզած գաղափարների ազդեցությամբ առաջ եկած հորինվածքներ են: Հայտնի է, որ կնոջ իրավազրկումն ու ճնշումը պատմականորեն սկսվում է մայրիշխանության վերացմամբ և հայրիշխանության հաստատումով, որը գնալով հետզհետե ավելի է խորանում արդեն դասակարգայնորեն ձևավորված հասարակության պայմաններում: Հասարակական զարգացման մեջ կատարված պատմական վերոհիշյալ շրջադարձի մասին Էնգելսը գրում է. «Մայրական իրավունքի տապալումը կանացի սեռի համաշխարհային–պատմական պարտությունն էր: Տղամարդն իր ձեռքն առավ նաև տան ղեկավարությունը, և կինը նվաստացվեց, ստրկացվեց, դարձավ լոկ նրա ցանկությունների ստրկուհին և երեխա ծնելու գործիքը: Կնոջ այդ ստրկացված վիճակը, որ բացահայտ կերպով երևան է գալիս հատկապես հույների հերոսական շրջանի և ավելի ևս դասական շրջանի ժամանակ, հետզհետե գեղազարդվել է ու կեղծիքով սքողվել, տեղ-տեղ նաև ավելի մեղմ ձև ընդունել, բայց ամենևին չի վերացել»[1]:

Դասակարգային հասարակության գոյության ողջ ընթացքում կինը եղել է այդ հասարակության ոչ լիիրավ անդամի վիճակում, թե՛ քաղաքական և թե՛ ընչքային ու անձնական հարաբերությունների ոլորտում: Նա միշտ գտնվել է հոր, ամուսնու կամ որդու իշխանության տակ: Կնոջ այդ վիճակը իր ցայտուն ձևակերպումն է

[1] Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1940, էջ 69—70:

գտնել մի շարք այսպես կոչված «բարձր» կրոնների մեջ։ Սրբագործե-
լով կնոջ անազատ վիճակը և ելնելով իր քարոզած ասկետականու-
թյունից, եկեղեցին նրան համարել է բանականությունից ու հոգուց
զուրկ, ստորագույն, չափազանց մեղսալի, պիղծ ու ապականված մի
արարած, որը շատ ցածր է կանգնած տղամարդուց և բնությունից
դատապարտված է մշտապես նրան ենթակա լինելու։

Ահա թե որտեղից են գալիս առածների ու ասացվածքների մեջ
առկա կնոջ անձնական և հասարակական դեմքն ու դերը նվաստաց-
նող ստեղծագործությունները։

Հակասական հայացքների բնորոշ օրինակներ են տալիս մեզ
նաև ճշմարտին ու ճշմարտախոսությանը վերաբերող հայկական
առածներն ու ասացվածքները։ Ճշմարտությունն ու ճշմարիտ խոս-
քը, որի ջատագովն ու ջերմ պաշտպանն է եղել միշտ աշխատավոր
ժողովուրդը և որը հանդիսացել է նրա դավանած բարոյական կարե-
վոր սկզբունքներից մեկը, ինչպես հայտնի է, միշտ ու ամենուր հա-
լածված են եղել տիրող դասակարգերի և նրանց շահերի արտահայ-
տիչ հանդիսացող քաղաքական և իրավական հաստատությունների՝
դատարանների, դատավորների, ոստիկանության կողմից։ Աշխա-
տավոր մասսաներին հարստահարելու, նրանց արդար վաստակի
արդյունքը կողոպտելու նպատակով տիրող աշխարհիկ և հոգևոր
դասակարգերի ներկայացուցիչները բազմաթիվ այլ միջոցների հետ
լայնորեն կիրառել են նաև կեղծիքն ու սուտը, հետապնդելով ու չա-
րաչար պատժելով արդար գործի և ճշմարիտ խոսքի ներկայացու-
ցիչներին, իրենց այդ վարքագծի համար հովանավորություն ու
պաշտպանություն գտնելով իշխանությունների կողմից։

Հայկական առածների ու ասացվածքների մեջ ժողովուրդը
բազմաթիվ ձևերով ընդգծում է ճշմարիտ գործի և ճշմարիտ խոսքի
առավելությունները, արտահայտում իր անվերապահ դրական վե-
րաբերմունքը թե՛ մեկի և թե՛ մյուսի նկատմամբ։ Նա ասում է. «Հա-
զար սուտ մի օղորդ (ճշմարիտ) չաժե», «Շիտակ ճամբով քալող
չդադրի», «Շիտակ պատը չի բլչի», «Սուտ նստինք, շիտակ խոսինք»,
«Հազար խփին, մե դրուստ ասիլ տան»։

Ժողովուրդը միաժամանակ արձանագրում է շիտակ ու ճշմար-
տախոս մարդկանց հալածական ու ծանր վիճակը մասնավոր սե-
փականատիրական կարգերում, բռնի ուժի և փողի տիրապետու-
թյան պայմաններում։ Նա ասում է. «Դուզ խոսողի գլուխը ծակ ա»,
«Ճշմարիտ խոսողի տակին մի Արաբստանի ձի պիտի», «Դրուստ
խոսողի ձին դռանը պիտի, ոտն էլ ուզանգումը», «Շիտակ ասողը

տեր չունի», «Շիտակ մարդը տեղ չունի», «Շիտակ խոսքը հանաքով
կասեն»։

Հակասական հայացքների ու հասկացողությունների արձա-
գանքներ կարելի է գտնել գիր ու գրականության վերաբերյալ եղած
ժողովրդական առածների և ասացվածքների մեջ։ Գիրն ու գրակա-
նությունը և ընդհանրապես ուսումն ու լուսավորությունը մեծարող,
դրանք հասարակության կենսական ապահովության ու առաջադի-
մության կարևոր գործոններ համարող ստեղծագործությունների
շարքում այստեղ հանդիպում են այնպիսի հատ ու կենտ առածներ
ու ասացվածքներ, որոնց մեջ գիրն ու գրագետները արժանանում
են բացասական վերաբերմունքի, դիտվում են իբրև մեծ չարիքներ
հասարակության համար։ Այսպես օրինակ. «Սև գիրը կարմիր օրեր
կբերի» բնորոշ ու գեղեցիկ ասացվածքին, որի մեջ շեշտված է լու-
սավորության ստեղծարար դրական նշանակությունը, հակադրվում
է «Ղալամին խերն էլ շատ է, շառն էլ» ասացվածքը, որի մեջ խոս-
վում է այն մասին, որ գիրը (իմա՝ լուսավորությունը) մեծ դրական
դերի հետ խաղում է նաև մեծ բացասական դեր։ «Կարդալը ոսկի
բիլազուկ է, էցկուկ մարդու ձեռ» ասացվածքին, ուր ակնարկված է
այն մեծ նշանակությունը, որ ունի ուսումը մարդու կենսական ապա-
գան ապահովելու իմաստով, հակադրվում են այն առածներն ու
ասացվածքները, որոնց մեջ ուսման և ուսումնական մարդկանց մա-
սին մենք գտնում ենք տրամագծորեն հակառակ կարծիքներ։

Գիր ու գրականության մասին եղած և՛ դրական, և՛ բացասա-
կան առածների ու ասացվածքների հեղինակը ինքը ժողովուրդն է։
Դրական առած-ասացվածքների հիմքում ընկած է նրա առողջ ու
առաջավոր հայացքը ուսման և լուսավորության առաջադիմական
դերի մասին։ Բացասական առածները արդյունք են այն ռեակցիա-
յի, որ առաջ են բերել նրա մեջ տիրող դասակարգերը՝ հանձին զա-
նազան պետական աստիճանավորների, հայ և այլազգի հոգևորա-
կանների, դատավորների ու գրագիրների, գրի ու գրականության
դեմ, գործադրելով այն աշխատավոր մասսաների հարստահարման,
կեղեքման ու ճնշման համար։

Հակասական և իրարամերժ հար նման մոտիվներ կան նաև
սոցիալ-տնտեսական, իրավա-քաղաքական և կենցաղային հարա-
բերություններին ու հասկացողություններին, մարդու հասարակա-
կան հատկություններին, բնավորության ու խառնվածքին, ժողո-
վրդի բարոյախոսական և գեղագիտական ըմբռնումներին վերաբե-
րող առածների ու ասացվածքների մեջ։

Մասսաների հետամնացությունը, նախապաշարվածությունը, հեռավոր անցյալի հավատալիքներով ու կենցաղի վերապրուկներով կաշկանդված լինելը, նրանց աշխարհայացքի մեջ առկա պատմական սահմանափակությունը, ինչպես նաև շահագործող դասերի ու դասակարգերի հայացքների ու հոգեբանության ազդեցության որոշ հետքերը, որոնք երևան են գալիս հայկական առածների ու ասացվածքների մի մասի մեջ, արդյունք են ստրկական ու ճորտական աշխատանքի այն ծանր պայմանների և իրավազուրկ վիճակի, որի մեջ ապրել են աշխատավորական մասսաները Հայաստանում երկար դարերի ընթացքում։ Հիշյալ կարգի ստեղծագործությունները որևէ չափով չեն նվազեցնում և չեն էլ կարող նվազեցնել հայ ժողովրդական առածների հիմնական մասի արժեքն ու արժանիքները։ Դրանք նախ քանակապես քիչ են բուն աշխատավորական-ժողովրդական առածներից ու ասացվածքներից, և ապա, որ նույնքան կարևոր է, խստորեն քննադատված, հերքված ու հաղթահարված են իր իսկ ժողովրդի կողմից, իբրև նրա հոգուն անհարազատ ու եկամուտ հորինվածքներ, իբրև նրա թույլ կողմեր։

Այդպես է ժողովրդական բանահյուսությունն ընդհանրապես։ «Շատ կարևոր է մատնանշել,— գրում է այս առնչությամբ Մ. Գորկին,— որ ֆոլկլորին կատարելապես խորթ է հոռետեսությունը, չնայած այն փաստին, որ ֆոլկլորը ստեղծողները ծանր կյանք են վարել, և նրանց տանջալից ստրկական աշխատանքը իմաստազուրկ են դարձրել շահագործողները, իսկ անձնական կյանքը եղել է իրավազուրկ ու անպաշտպան։ Սակայն, չնայած այդ բոլորին, կոլեկտիվին հատուկ է եղել անմահության գիտակցությունը, և այն համոզմունքը, թե ինքը կհաղթանակի իրեն թշնամի բոլոր ուժերին։

... Իսկ եթե երբեմն ֆոլկլորում հնչել են անհուսալիության ու տարակուսանքի նոտաներ՝ երկրային գոյության իմաստի նկատմամբ,—այդ նոտաներն ակնհայտորեն ներշնչվել են քրիստոնեական եկեղեցու երկուհազար տարվա հոռետեսության քարոզով, և պորտաբույծ մանր բուրժուազիայի տգիտության սկեպտիցիզմով, մանր բուրժուազիա, որը գոյություն է պահպանում կապիտալի կռանի և աշխատավոր ժողովրդի սալի միջև»[1]։

[1] *Մ. Գորկի, Գրական-հրապարակախոսական հոդվածներ, Երևան, 1949, էջ 284։*

6. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐԻ ԵՎ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ ՈՒ ԱՐՎԵՍՏԸ

Հայկական առածների ու ասացվածքների լեզուն, ինչպես և հայ ժողովրդական բանահյուսության լեզուն ընդհանրապես, հիմնականում, այն բազմաթիվ ու բազմազան բարբառների ու ենթաբարբառների ընդհանրություններն են, որով խոսել են հայ ժողովրդի լայն մասսաները երկար դարերի ընթացքում։ Դա ամենից շատ Արարատյան դաշտավայրի (Երևան, Էջմիածին, Աշտարակ, Օշական...) բնակիչների կենդանի խոսակցական բարբառն է, ապա նաև Արևմտյան Հայաստանի (Մուշ, Ալաշկերտ, Սասուն, Վան, Մոկս...) և մի շարք ուրիշ վայրերում ապրող հայերի բարբառները։

Ինչպես ժողովրդական բանահյուսության մյուս ժանրերի, այնպես էլ առածների ու ասացվածքների լեզուն այն կարևոր ատաղձն է, որով ժողովուրդը կատարել է սոցիալական, փիլիսոփայական և կենցաղային խոր ընդհանրացումներ, որով նա իր ընդհանրացումներին հաղորդել է ներգործոն մեծ ուժ և տվել գեղարվեստական-արտահայտչական համապատասխան կերպավորում։

Ժողովրդական առածների ու ասացվածքների լեզվի բանաստեղծական մեծ արտահայտչականությունը ըստ արժանվույն գնահատված է գեղարվեստական խոսքի խոշորագույն վարպետների կողմից։ Առանձնապես ուսանելի են այս տեսակետից ռուս մեծ գրողների, մասնավորապես Պուշկինի և Գորկու խոսքերը։ Ռուսական լեզվի ուժին, ճկունությանը, դիպուկությանն ու երանգներին տիրապետելու և այն գեղարվեստական գրականության մեջ օգտագործելու համար Պուշկինը բազմիցս հիշեցրել է՝ ժողովրդական հեքիաթներին, երգերին և մասնավորապես առածներին ու ասացվածքներին դիմելու անհրաժեշտության մասին, որտեղ ռուս լեզուն, նրա կարծիքով, հիանալի դրսևորել է իր բոլոր լավագույն հատկությունները։ «Հինավուրց երգերի, հեքիաթների, առածների ուսումնասիրությունը անհրաժեշտ է ռուս լեզվի հատկությունների կատարյալ իմացության համար»,— գրել է նա մի առիթով։ Պուշկինի հիացմունքն է առաջացրել ժողովրդական առածների արտահայտչական մեծ ուժը. «Ի՜նչ ոսկի են ռուսական առածները»։ «...Ի՜նչ հարստություն, որպիսի բանականություն, ի՜նչ իմաստ կա մեր ամեն մի ասացվածքի մեջ»,— ասել է նա ուրիշ առիթներով[1]։

[1] Пушкин и фольклор. См. Н. П. Андреев, русский фольклор, Москва-Ленинград, 1938, стр. 30—32.

Շատ տասնամյակներ հետո, արձագանքելով Պուշկինին, Գորկին ասել է. «Լեզուն ժողովուրդն է ստեղծում... Առաջինը, որ շատ լավ հասկացավ այդ բանը, Պուշկինն էր. նա էլ առաջինը ցույց տվեց, թե ինչպես պետք է օգտվել ժողովրդի բանավոր. նյութից, ինչպես պետք է մշակել այն»։ Անդրադառնալով մասնավորապես ժողովրդական առածների ու ասացվածքների լեզվին, Գորկին առանձնապես շեշտում է նրանց սեղմությունն ու պատկերավորությունը։ Նա գրում է. «Առածներն ու ասացվածքները ժողովրդական մասսայի մտածողությունն արտահայտում են առանձնապես ուսանելի լիակատարությամբ... նրանք հիանալի կերպով սովորեցնում են խոսքի խնայողության, խոսքի սեղմության և պատկերավորության...»։ Եվ ապա՝ «... Գրողի համար խիստ անհրաժեշտ է ծանոթանալ այն նյութի հետ, որը նրան կսովորեցնի սեղմել խոսքերը այնպես, ինչպես մատները սեղմում են բռունցքի մեջ...»[1]։

Հար և նման ձևով են արտահայտվել ժողովրդական բանահյուսության լեզվի, այդ թվում նաև առածների ու ասացվածքների լեզվի մասին նաև հայ մեծ գրողները՝ Աբովյանն ու Նալբանդյանը, Րաֆֆին ու Սունդուկյանը, Թումանյանն ու Իսահակյանը... որոնք միաժամանակ իրենց ստեղծագործությունների մեջ վարպետորեն օգտագործել են ժողովրդական առածներն ու ասացվածքները, ձգտել են ընդօրինակել նրանց լեզվի սեղմությունն ու պատկերավորությունը։ Բնորոշ են այս տեսակետից Թումանյանի հետևյալ մտքերը.

«Ժողովրդական լեզվի ընտիր բառերը, սեղմ ու սերտ, պատկերավոր ոճերը, պարզ ու շքեղ ձևերը, էսօր արդեն ամենաթանգ զարդերն են համարվում հայ գրողի երկերի մեջ»։

«Մեր լեզվի ու գրականության առողջ զարգացման համար՝ պետք է մշտական տեղ հատկացնել հայրենի երկրի ժողովրդական բանավոր գրականությանը, նրա ամեն տեսակ ավանդություններին, հեքիաթներին, առակներին, առածներին...»[2]։

Օրինակներով ցույց տանք հայկական առածների ու ասացվածքների բանաստեղծական լեզվի ու արվեստի գլխավոր առանձնահատկություններն ու առավելությունները։

Ժողովրդական առածների ու ասացվածքների լեզուն ու արվեստը օրգանապես կապված է նրանց բովանդակության հետ և կոչված է ծառայելու այդ բովանդակության առավել հաջող դրսևորման գործին։ Առածների ու ասացվածքների մեջ ժողովուրդը կատարելով կեն-

[1] Մ. Գորկի, Գրական-հրապարակախոսական հոդվածներ, էջ 150, 152։

[2] Թումանյանը քննադատ, Երևան, 1936, էջ 140—141, 388, 395։

սական, սոցիալական և փիլիսոփայական ճշմարտացի ընդհանրացումներ՝ մարդկային-հասարակական կյանքի տարբեր ու բազմազան երևույթների նկատմամբ, այդ ընդհանրացումներն արտահայտելու համար ձգտել է գտնել և գտել է արտահայտչական-բանաստեղծական համապատասխան ու համարժեք միջոցներ։ Մաքսիմ Գորկու այն միտքը, ըստ որի առածները «օրինակելիորեն ձևավորում (կամ կաղապարում) են աշխատավոր ժողովրդի սոցիալ-պատմական ամբողջ կենսափորձը»[1], տալիս է նրանց ո՛չ միայն ճանաչողական, այլև գեղարվեստական արժանիքների սեղմ ու սպառիչ գնահատականը։ Մեծ գրողն ու մտածողը, ժողովրդական ստեղծագործության քաջահմուտ գնահատողը այստեղ միանգամայն իրավացի կերպով խոսում է աշխատավոր ժողովրդի սոցիալ-պատմական կենսափորձի ո՛չ թե սովորական դրսևորման մասին առածների մեջ, այլ հատկապես ընդգծում է այդ փորձի «օրինակելի ձևավորման» հանգամանքը, նկատի ունենալով անշուշտ նրանց արտահայտչական-բանաստեղծական հատկությունները, նրանց՝ իրենց բովանդակության համապատասխան բարձր արվեստը։

Արդ, որո՞նք են ընդհանրապես առածների և մասնավորապես հայ ժողովրդական առածների ու ասացվածքների գեղարվեստական լեզվի ու արվեստի հատկությունները։

Դա, նախ և առաջ, նրանց զարմանալի հակիրճ ու ներգործող, պարզ ու ճշմարտացի խոսքն է, քիչ բառերով շատ բան ասելու կարողությունը։ Ընդունված ճշմարտություն է, որ ամենամեծ իմաստությունը խոսքի պարզության ու հակիրճության մեջ է։ Այդ մասին մենք ունենք աշխարհի մեծ գրողների ու մտածողների կարծիքը։ Այդ մասին մենք ունենք աշխարհի մեծագույն փիլիսոփայի և բանաստեղծի՝ ժողովրդի կարծիքը։ «Համառոտությունը հանճարի ոգին է»,— ասում է Շեքսպիրը։ «Համառոտությունը տաղանդի քույրն է»,— ասում է ռուս նշանավոր գրող, խոսքի վարպետ Չեխովը։ «Լավը կրկնակի լավ է, երբ այն համառոտ է», — ասում է ռուսական առածը։ «Թոկի երկարն է լավ, խոսքի կարճը»,— ձայնակցում է նրան հայկական առածը։ Հար և նման մտքեր ենք մենք գտնում նաև մյուս ժողովուրդների մոտ։ Առածներն ու ասացվածքները պարզ ու հակիրճ խոսքի առավելությունները դրսևորող լավագույն ու պերճախոս օրինակներ են։ Մեկ կամ երկու նախադասությամբ, երբեմն էլ միայն երկու-երեք բառով ժողովուրդը նրանց մեջ կարողանում է

[1] Մ. Գորկի, Գրական-հրապարակախոսական հոդվածներ, էջ 152։

խտացնել ու արտահայտել մեծ ու խոր մտքեր ու զգացումներ։ «Առածները և երգերը միշտ համառոտ են, իսկ նրանց մեջ գրքերով մեկ խելք ու զգացմունք է դրված»[1]։ Ժողովրդական առածների ու ասացվածքների արտահայտչական վերոհիշյալ հատկությունը հետևանք է այն բանի, որ ժողովուրդը սովորաբար ընտրում ու գործ է ածում այնպիսի բառեր, որոնց մեջ խտացված ձևով արտահայտված են սոցիալական, կենցաղային ու փիլիսոփայական, բարոյական ու էսթետիկական ամբողջ հասկացություններ, այնպիսի բառեր, որոնց մեջ դարերի ընթացքում բյուրեղացել են բնության և մարդկային-հասարակական կյանքի բազմազան ու բարդ երևույթները։

Այսպես օրինակ, արտահայտելու համար այն միտքը թե՝ ծերության հասակում ֆիզիկական ուժերի սպառման ու ջլատման հետևանքով մարդն ընկնում է ծանր և կաշկանդված վիճակի մեջ, ժողովուրդն ասում է «Ծերություն–գերություն»*։ Ոչ պատահական ձևով գործածված մի հատիկ «գերություն» բառն այստեղ լի ու լի տալիս է ծեր մարդու վիճակի բնութագիրը, որովհետև այն հիշեցնում է գերու համար այնքան բնորոշ նմանօրինակ կացությունը։ Բացահայտելու համար շրջապատի հանդեպ ունենալիք իր վարքագծի կապակցությամբ երկվության մեջ գտնվող մարդու հոգեվիճակը, ժողովուրդն ասում է.* «Ասեմ՝ բոց կըլի, չասեմ՝ խոց կըլի»*։ Նպատակադրյալ կերպով ընտրված «բոց» և «խոց» բառերը ժողովրդական լեզվի մեջ ունեցած իրենց տրադիցիոն առումներով (բոց=կրակ, մեծ գրգիռ, աղմուկ և այլն։ խոց=անբուժելի վիշտ, ծանր հոգս և այլն) այստեղ հնարավորություն են ընձեռում արտահայտելու մի միտք, որի համար ուրիշ դեպքում անհրաժեշտ կլիներ գործածել տասնյակ բառեր։ Խոսելով սոցիալական կյանքում անցյալում գոյություն ունեցող անհավասարության մասին և ընդգծելով տարբեր դասակարգերի միջև առաջ եկած ընչքային ծայրահեղ բևեռացումը, ժողովուրդն ասում է.* «Որին ավար, որին խավար»*։ Նախորդ առածների նման այստեղ էլ խոսքի հակիրճության հիմնական գաղտնիքը բառերի հատուկ ընտրության մեջ է, «Ավար» բառի միջոցով, որ նշանակում է կողոպտված հարստություն, ուրիշի ունեցվածքի բռնագրավում, ժողովուրդը ակնարկում է իշխող դասակարգերի ձեռքին շահագործման ճանապարհով կուտակված մեծ հարստությունը, իսկ «խավար» բառի միջոցով, որն իր անուղղակի առումով նշանակում է ծանր,*

[1] М. Горький. Материалы и исследования, том I, 1933, стр. 114.

անհրապույր, դժվարին վիճակ (խավար օր, խավար կյանք, խավար բախտ) նա արտահայտում է շահագործվող դասակարգերի ընչազրկության հետ կապված ծանր դրությունը։ Կրթված մարդու բարձր արժանիքները գնահատելու, նրա առավելությունը անկիրթ ու անուսի նկատմամբ ընդգծելու, և ընդհանրապես լուսավորության ու կրթության նկատմամբ իր դրական վերաբերմունքը բացահայտելու համար, ժողովուրդն ասում է. «Ով կարդա, նա մարդ ա»*։ Չափազանց անպաճույճ և խիստ լակոնիկ այս առածի մեջ, ժողովրդին ըստ ամենայնի հաջողվել է դրսևորել վերոհիշյալ բոլոր մտքերը, որովհետև առածի հիմքում ընկած «կարդալ» և «մարդ» բառերը նրա ըմբռնմամբ սովորական բառեր չեն, այլ մեծ ու լայն հասկացություններ, յուրաքանչյուրը մի մի աշխարհ։ «Կարդալ» ըստ ժողովրդի հասկացողության նշանակում է՝ ուսում ստանալ, դաստիարակվել, լուսավորվել, զարգանալ, առաջադիմել մտավորապես և հոգով բարձրանալ։ «Մարդ» ըստ նույն հասկացողության նշանակում է՝ կրթված, դաստիարակված, լուսավորված, խելոք, ազնիվ, բարոյական և այլն։*

Հակիրճ և ներգործուն, պարզ ու ճշմարտացի խոսքի ոչ պակաս ցայտուն նմուշներ են նաև հետևյալ առածներն ու ասացվածքները և բազմաթիվ ուրիշները, որոնք ստեղծված են հար և նման սկզբունքով. «Անցուկ — մոռցուկ», «Առաջ հաց, հետո հարց», «Ձեռքը բան, ոտքը գերեզման», «Մեկին ծով, մեկին սով», «Ինձի նեղ, քեզի տեղ», «Աղեկ կին՝ չունի գին» և այլն, և այլն։

Պարզության և քիչ խոսքով շատ բան ասելու իրենց հիմնական հատկության հետ միասին և վերջինիս հավասար ժողովրդական առածներն ու ասացվածքներն աչքի են ընկնում նաև իրենց պատկերավորությամբ, տեսանելիությամբ, բնութագրումների իրենց դիպուկությամբ ու գունեղությամբ։ Վարպետորեն կիրառելով բանաստեղծական պատկերավոր խոսքի բազմազան ու հարուստ միջոցները (անձնավորում, մետաֆոր, սիմվոլ, մետոնիմ, սինեգդոխ, ալեգորիա, էպիտետ) ժողովուրդը դրանով իսկ կրկնապատկում է առածների ու ասացվածքների էմոցիոնալ ներգործման ուժը, ընդգծում և ավելի ցայտուն է դարձնում նրանց բովանդակությունը։ Բնությունից, կենդանական աշխարհից վերցված օրինակների, համեմատությունների, նմանությունների, փոխաբերությունների, զուգադրությունների, հակադրությունների միջոցով նա բացահայտում ու գնահատում է մարդկային, հասարակական կյանքի երևույթները, սոցիալ-դասակարգային, տնտեսական ու քաղաքական, կենցաղա-

յին ու իրավական հարաբերությունները, տալիս վերջիններիս ռեա-
լիստական ու ճշմարտացի բնութագիրն ու գնահատականը։ Այնպես
օրինակ. արտահայտելու համար այն միտքը, թե՝ ուժեղի (մեծի)
մոտ թույլը (փոքրը) պետք է համեստ գտնվի, ճանաչի իր չափը և
հավակնություն չունենա իրեն ցուցադրելու, ժողովուրդն ասում է.
«Կրակի առաջ չախմախին չեն տա»։ Կրակի ու չախմախի զուգոր-
դումը այստեղ օգտագործված է ուժեղի (մեծի) և թույլի (փոքրի)
հարաբերությունը առավել ցայտուն դարձնելու և առաջինի բացա-
հայտ գերազանցությունը ընդգծելու համար։ Ինչպես որ չախմախի
վաղանցիկ ու թույլ կայծն աննշան է կրակի բոցի առաջ, այդպես էլ
թույլը (փոքրը) անզոր է ուժեղի (մեծի) հանդեպ։ Սեփականատիրա-
կան հասարակարգի պայմաններում շահագործող և ունևոր դասա-
կարգի ներկայացուցիչների արտոնյալ դիրքն ու հասարակական
ձայնեղությունը և աշխատավոր, ընչազուրկ դասակարգի ներկայա-
ցուցիչների իրավազուրկ, ձայնազուրկ և ճնշված վիճակը բնութա-
գրելու համար, ժողովուրդն ասում է. «Շենի (հարուստի) խոսքը
զանգակ է, խեղճի խոսքը բամբակ է»։ «Զանգակն» ու «բամբակը»
իբրև ձայնական հնչեղության և անշշուկության հակադրություն-սիմ-
վոլներ ստեղծում են մի գեղեցիկ մետաֆոր, որի հիմքում ընկած
նմանության զուգորդման միջոցով բացահայտվում է հարուստի
և աղքատի ունեցած իրավունքների միջև եղած մեծ տարբերությու-
նը։ Առևտրա-վաշխառուական կապիտալի տիրապետության պայ-
մաններում այնքան տարածված տոկոսով փող պարտք տալու սո-
վորույթի՝ աշխատավորական խավերի համար ունեցած կործանա-
բար նշանակությունը ակնարկելու համար ժողովուրդը ասում է.
«Պարտքը լու կու դառնա՝ տուն կեհա, ուղտ կու դառնա՝ չի դուրս
գա»։ Իբրև արտահայտչական միջոց օգտագործելով անձնավորումը,
ժողովուրդն այստեղ ավելի քան ցայտուն կերպով ցուցադրում է
պարտապանի ծանր կացությունը՝ պարտքի նախնական գումարը հեշ-
տությամբ տուն մտնող լվի նմանեցնելով, իսկ նրա տոկոսների կու-
տակումով մեծապես աճած հետագա գումարը և դրա վճարման
դժվարությունը բացահայտելով տան դռնից դուրս չեկող ուղտի
պատկերով։ Ի հակակշիռ անարդար վաստակով ապրողների, որոնց
եկամուտը ենթակա է ուժեղ մակընթացության ու տեղատվության,
արհեստավորի ապրուստի միջոցների չափավոր, բայց և միաժամա-
նակ տևական ու մնայուն լինելը հաստատելու համար, ժողովուրդն
ասում է. «Արհեստը որ կա՝ կաթ-կաթ աղբյուր է, որ վարարի ո՛չ,
պակասիլ էլ չի»։ Աղբյուրը, անձրևը և հոսող ջուրն առհասարակ ժո-

ղովրդի հայացքով ինչքան շատ են վարարում, այնքան շուտ են
սպառվում, և ընդհակառակը, ինչքան չափավոր են գալիս, այնքան
ավելի տևական են լինում։ Ելնելով ահա այս ըմբռնումից և նպա-
տակ ունենալով իր միտքն ավելի ցայտուն ու պատկերավոր դարձ-
նել, ժողովուրդը տվյալ առածի մեջ արհեստը հաջող կերպով նմա-
նեցրել է կաթ-կաթ հոսող աղբյուրի։ Բանաստեղծական պատկերա-
վորման բազմազան միջոցներով ստեղծված ժողովրդական առած-
ների ու ասացվածքների առավել կամ պակաս հաջող օրինակներ
են նաև հետևյալները (և հազարավոր ուրիշները). «Ստի ոտները
կարճ են», «Պտղատու ծառին քար քցող շատ կը լինի», «Մեկ թել
քաշես հազար կարկատան կը թափի», «Թոնդիրը ածես շորահոտ չի
գա», «Արեգակը աղքատի կարպետն ա», «Մանչպարի դոշակը սև հո-
ղըն ա, բարձը՝ չոր քա՛րը», «Ցավը կգա վազե-վազ, դուրս կը գնա
նազե-նազ», «Աշխարքը սանդուխք է, որը բարձրանում է, որը՝ իջ-
նում», «Ինքը չկա թիզ ու կես, արարմունքը՝ գազ ու կես», «Սև ու
դեղին, ով որ տեսնի՝ պատռի լեղին», «Մազ քաշես ճրագուն կթա-
փի», «Աղջիկը որ կա՝ անկտրել ձմերուկ ա», «Հալալը որ մազ ընի՝
չի կտրվի, հարամը որ գերան ընի՝ կկոտրվի», «Ականջովը մեկ թան
չարժե», «Երկու ոտքով կամին չի կրնա կայնիլ», «Փեսա ու քենի,
բյարաբ ու գինի», «Փեշակն որ կա՝ ոսկի բիլազուկ է», «Աղքատու-
թյունը երկաթե շապիկ է» և այլն։

Հայկական առածների մեջ զգալի կիրառում գտած արտա-
հայտչական միջոցներից մեկն էլ երկխոսությունն է կամ դիալոգը։
Իր կենսափիլիսոփայական ընդհանրացումները ժողովուրդը առած-
ների մեջ բավական հաճախ տալիս է ոչ թե սովորական խոսքով,
այլ՝ երկխոսության կամ դիալոգի միջոցով։ Այս կամ այն միտքն
արտահայտելու համար, նա այդպիսի դեպքերում փոխանակ ըն-
դունված ձևով շարադրելու կամ ասելու իր խոսքը, այն բացահայ-
տում է մարդկանց կամ կենդանիների միջև ստեղծված խոսակցու-
թյան, կամ այսպես կոչված հարց ու պատասխանի ձևով, որով և
նրա ասելիքը դառնում է ավելի ցայտուն, կենդանի և ընդգծված,
առավել ազդեցիկ ու տպավորիչ։

Օրինակ, շատ ասելիք ունեցող, բայց որոշ պայմաններով կաշ-
կանդված մարդու վիճակը բացահայտելու համար ժողովուրդն
ասում է. «Ձկանը հարցրին՝ ծովից ի՞նչ խաբար. ասաց՝ խաբար
շատ ունիմ, համա բերանս ջրով լիքն է»։

Հարազատների (յուրայինների) թերությունը չնկատող և նրան-

ցով շլացած մարդկանց համար, ժողովուրդն ասում է. «Ագռավին հարցրին՝ ղշերի մեջ ո՞րն է սիրունը. ասավ՝ իմ ճուտը»։

Դիալոգով կառուցված նմանօրինակ ստեղծագործություններ են նաև հետևյալ առածները և բազմաթիվ ուրիշները. «Ձուկը ձկանը ասավ՝ դենը պառկի. ասավ՝ ո՞րտեղ պառկեմ, երկուս էլ մի թավումն ենք տապակվում»։ «Ծտին հարցրին՝ ոտներդ ինչի՞ բարակ է (կարմիր է). ասաց՝ ցրտից է։— Ես քեզ ամառն էլ տեսա»։ «Ուղտին հարցրին՝ ինչի՞ ա վիզդ ծուռ. ասաց՝ ի՞նչս ա դուզ, որ վիզս դուզ ըլնի»։ «Քամին ասաց դարման անողին՝ դուռդ բաց, դարման անեմ. դարման անողն ասաց՝ ո՛չ քու բերածը կուզեմ, ո՛չ էլ տարածը» և այլն։

Ժողովրդական առածների ու ասացվածքների բանաստեղծական պատկերավորման ուրույն մի միջոցն է երգիծական խոսքը։ Այն ծագում է ժողովրդի կենդանի խոսակցական լեզվի ու ոճի հարուստ շտեմարանից, օրգանապես կապված է վերջինիս հետ և աչքի է ընկնում իր գունեղ պատկերավորությամբ և դիպուկ սրությամբ։ Իր առածների ու ասացվածքների մեջ ժողովուրդը մեծ վարպետությամբ օգտագործում է ծիծաղ հարուցող խոսքի տարբեր ու բազմազան ձևերը, ամեն անգամ ելնելով տվյալ առածի բովանդակության մեջ արտահայտած իր նպատակադրումից։ Ինչպես ընդհանրապես ժողովրդական ստեղծագործության, այնպես էլ առածների ու ասացվածքների մեջ կիրառված երգիծանքը մեղմ ու բարեկամական է, երբ վերաբերում է աշխատավորության ներկայացուցիչներին, նրանց անձնական-մարդկային, կենցաղային թուլություններին ու թերություններին, և սուր ու խայթող, երբ վերաբերում է ժողովրդի թշնամիներին, մարդկանց հակահասարակական հատկություններին, կյանքի հոռի կողմերին ու երևույթներին։ Բնորոշ են այս տեսակետից հետևյալ առածներն ու ասացվածքները, որոնց մեջ մենք գտնում ենք թե՛ բարեմիտ հումորի և թե՛ դառն հեգնանքի բավական ցայտուն օրինակներ, ստեղծված երգիծական խոսքի այս կամ այն հնարի օգտագործումով։ Ժողովուրդն ասում է. «Դդումի կճրակուրն էլի ուտվում ա, դդում գլուխն ի՞նչացու ա» (բթամտի մասին), «Մի սել սիսեռ ունենա՝ աստծուն Աստատուր կասի» (հեշտությամբ անբարտավանացողի մասին), «Ջամուշը (ցեխ) պառկե՝ խալիպա (կաղապար) տես» (գոռոզ-մեծամտի վերաբերյալ), «Ջեկան, չուզեցին — մարս ա չտվեց» (տանը մնացած աղջկա համար), «Քյասիբն օր հավ կերավ, յա՛ հավն է հիվանդ, յա՛ քյասիբը» (աղքատի ծանր վիճակի մասին), «Աստված աղքատը խնդացնել ուզե

նե, էշը կկորցնե, վերջն ալ գտնել կուտա» (աստծու՝ աղքատների կեղծ բարեկամ լինելու մասին), «Օխտը վարդապետ մի աղջիկ կընքեցին, անունը դրին Կիրակոս» (հոգևորականների ապաշնորհության ու տգիտության մասին), «Տերտերի կաշին թե՞քուկին են քաշել, քանի զարկել են՝ տուր-տուր է ասել» (հոգևորականների ծայրահեղ ընչաքաղցության մասին) և այլն։

Ունկնդիրների վրա ավելի ուժեղ էմոցիոնալ ներգործություն ունենալու, նրանց լսողության ու հիշողության մեջ իր արտահայտած մտքերն ու գաղափարները առավել հաջող տպավորելու նպատակով, ժողովուրդը առածների ու ասացվածքների մեջ իբրև արտահայտչական միջոց լայնորեն օգտագործում է չափական և ներդաշնակ խոսքը։

Հենվելով կենդանի խոսակցական լեզվի շարահյուսական կառուցվածքի վրա, նա իր առածներին տալիս է կոմպոզիցիոն յուրահատուկ ձև, բաժանելով դրանք մեծ մասամբ երկու, հաճախ երեք, իսկ երբեմն էլ ավելի անդամների — մասերի, որոնցից յուրաքանչյուրը իրենից ներկայացնում է տրամաբանական շեշտով բաժանված մի ամբողջական հատված։ Կենդանի խոսքի անդամաբաժանման կամ մասնատման այս միջոցի գլխավոր նպատակն է՝ առավել հստակություն հաղորդել առածի կամ ասացվածքի հիմքում ընկած մտքին։ Երկանդամ, եռանդամ և բազմանդամ առածների օրինակներ են հետևյալ ստեղծագործությունները. «Բանող խոփը փայլուն կլինի», «Տանտիրոջ վկան պզիրն ա», «Առ ու տուրն ախպեր են, ընչանք չտաս, չես առնիլ», «Հարուստը օձ կերավ, ասին դեղ է, աղքատը կերավ, ասին սոված է» և այլն։

Ժողովրդական առածների ու ասացվածքների մեջ նկատելի է նաև ռիթմական որոշ չափ, որն առաջ է գալիս կենդանի խոսքի ռիթմից։ Տարբեր առածների ու ասացվածքների մեջ, նայած նրանց թեմային ու բովանդակությանը, մենք հանդիպում ենք ռիթմական տարբեր ոտքերի։ Առածների ռիթմական չափը նպաստում է նրանց վերոհիշյալ անդամավոր կառուցվածքի պահպանմանը, միաժամանակ ընդգծելով ու բացահայտելով նրանց բովանդակությունը։ Ռիթմական տարբեր չափերով հորինված առած-ասացվածքների նմուշներ են հետևյալները. «Հացը հացարարին տուր, մինն էլ ավելին», «Հացի կտրածը թուրը չի կտրի», «Ձվի գողը ձիու գող կդառնա», «Արջի աչքը մերու տանձին է», «Կատվի մուկ բռնելը իր փորի համար է», «Մինչև սելը չշրջվի, ճամփեն չի դրստվի», «Էվի համար

կարպետը չեն վառի», «Ջրին չհասած, չեն բոբիկանա», «Կրակի վրա եղ չեն ածի» և այլն։

Իբրև արտահայտչական ներգործոն միջոց ժողովրդական առածների ու ասացվածքների մեջ չափազանց նշանակալից դեր է խաղում հնչյունանմանությունը։ Այստեղ մենք ամենից առաջ հանդիպում ենք ձայնավոր ու բաղաձայն հնչյունների նմանությամբ ստեղծված ռիթմական միավորների, հանգերի, որոնք ավելի որոշակի են դարձնում առածների կոմպոզիցիոն կառուցվածքը, ընդգծելով ու շեշտելով նրա մեջ առկա ուրույն անդամաբաժանումը։ Այդպիսի հանգեր ունեցող առած-ասացվածքների բնորոշ նմուշներ են հետևյալները.

«Ամառվա փուշը, ձմեռվա նուշը», «Ով կխաղա, նա կկաղա», «Հոգը քաշողին, լաթը մաշողին», «Արտը խախուտ, մահանան կարկուտ», «Լավ է գեշ, քան թե էշ», «Հերը հարևան, մերը բարեկամ», «Հացը հորեն, որդին փորեն», «Սոխ ու հաց, սիրտը բաց», «Շունը հիշե, փետը քաշե», «Գնացի մեշեն, սորվա փեշեն», «Կատվիկ չորանա, մկնիկ զորանա», «Մարտի վեց՝ ձյուն վեր ձյան ցեց, մարտի Ջ-ին՝ լագլագ վեր բնին», «Գուքա տարին, հետը բարին», «Պոլ է փարեն՝ կսաղցու յարեն», «Տվեց ոսկին, բերեց խոսքին» և այլն։

Տողամիջի և տողավերջի հիշյալ տիպի հանգերի հետ ժողովրդական առածների ու ասացվածքների մեջ հանդիպում են նաև այսպես կոչված ներքին հանգեր, որոնք հնչյունանմանությամբ կապում են իրար ո՛չ միայն միևնույն առածի տարբեր մասերը կամ անդամները, այլև առանձին բառերը։ Այդ հնչյունանմանությունը ստացվում է թե՛ ձայնավորների և թե՛ բաղաձայնների կրկնությամբ, հաճախ էլ ձայնավոր և բաղաձայն հնչյունների համատեղ գործածումով։ Այսօրինակ հանգավորման վրա կառուցված ստեղծագործությունների նմուշներ են հետևյալ առածներն ու ասացվածքները. «Եկեր պատեր, ճարն է հատեր», «Մնջիկ-մնջիկ, սև էրնջիկ», «Անտեր մնաս դու բողազ, ինչ կը տենա՜ս կը դողաս», «Մինչև Հարոն եկավ հավար, հավ կերավ գձավար», «Թոնիրը հով, վրինը բով, տասներկու հոգի, մի ստերջ կով», «Մինչև հունիս, ունիս նը՝ ունիս, չունիս նը՝ չունիս», «Փեսի շվաք՝ փշի շվաք», «Մարդի շվաք՝ վարդի շվաք» և այլն։

Լոկ հնչյուններով կապակցվող ու ներդաշնակվող բառերի ու հանգերի հետ մեկտեղ ժողովրդական առածների ու ասացվածքների մեջ հանդիպում են նաև և՛ հնչյուններով, և՛ նշանակությամբ (իմաստով) կապակցվող ու ներդաշնակվող բառեր և հանգեր։ Հնչյունական

ներդաշնակության այս ձևը, բնականորեն, շատ ավելի ազդեցիկ է ու տպավորիչ, որովհետև նրա մեջ միասնաբար հանդես եկող հնչյունն ու միտքը անհամեմատ ավելի ուժեղ է ներգործում, քան միայն հընչյունը։ Այսպես օրինակ. մերկացնելու համար հոգևորականների ծայր աստիճան ագահությունն ու որկրամոլությունը, ժողովուրդն ասում է. «Սար ու ձոր, տերտերի փոր»։ «Ձոր» և «փոր» բառերն այստեղ կապակցվում են ո՛չ միայն նրանց մեջ առկա ող հնչյունակապակցությունների նույնությամբ, այլև իմաստային նմանությամբ — քահանայի փորը ժողովրդի հայացքով նույնպիսի մի խոռոչ է, ինչպես և սովորական ձորը, որը դժվարությամբ է լցվում։ Բացահայտելու համար գողի հոգեբանության մի կարևոր մոմենտը, նրա՝ իրեն վիճակից բխող կասկածավորությունն ու մտավախությունը, ժողովուրդն ասում է. «Գող, սիրտը դող»։ «Գող» և «դող» բառերը այստեղ իրար հետ կապակցվում են ոչ միայն ող հնչյունակապակցությունների նույնությամբ, այլև իմաստային նմանությամբ — գողի դողացող սիրտ ունենալու հանգամանքով։ Շեշտելու համար այն միտքը, թե՝ մեծ ընտանիքի գոյությունը կապված է մեծ հոգսերի հետ, ժողովուրդն ասում է. «Մեծ տուն, մեծ ցավի բուն»։ «Տուն» և «բուն» բառերը այստեղ իրար հետ կապակցվում են թե՛ ուն հնչյունակապակցությունների նմանությամբ և թե՛ իմաստային նմանությամբ — տունը իբրև մարդու, իսկ բունը իբրև կենդանիների բնակարան։ Նույն տիպի ստեղծագործություններ են նաև՝ «Մանիշակ, գարնան չիչակ» (ծաղիկ), «Մալին տեր, որդուն ճեր», «Ուտելով բանջար, եղանք անճար» առածներն ու ասացվածքները և շատ ուրիշ նմանները։

Ինչպես ժողովրդական բանահյուսության մյուս բոլոր ժանրերի, այնպես էլ առածների ու ասացվածքների լավագույն նմուշները իրենց բանաստեղծական պատկերավորման և չափական ու ներդաշնակ խոսքի հատկություններով դեղարվեստական ստեղծագործության բովանդակության ու ձևի միասնության հիանալի օրինակներ են։ Խորն է ժողովրդական առածների ու ասացվածքների բովանդակությունը, չնայած այն դրսևորված է այլաբանական ակնարկով։ Քիչ են ժողովրդական առածների ու ասացվածքների բառերը, բայց դրանք դիպուկ են ու հնչեղ։

ՆԵՐԿԱ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

1. ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐԻ ԴՐԱՌՈՒՄՆ ԱՆՑՅԱԼՈՒՄ

Ժողովրդական առածներն ու ասացվածքները ընդհանրապես կարևոր տեղ են գրավում տարբեր ազգերի բանավոր ստեղծագործության մեջ։

Հայ ժողովուրդը առանձնապես սիրել և լայնորեն զարգացրել է բանավոր ստեղծագործության տվյալ բաժինը, որը նա կոչել է սովորաբար «խոսք», «առակ», «առած», «ասացվածք» կամ «ասած» և «մասալ» անուններով։ «Մեծանանց (կամ մեծունանց) խոսք է», «պապս խոսքմ՝ ուներ», «առակն անխոտելի է», «առակախոս մարդ», «առակած խոսք», «առակավոր մասալ» կամ ուղղակի՝ «մասալ», ահա այն սովորական արտահայտությունները, որ գործ է ածել հայ ժողովուրդը հիշյալ ստեղծագործությունների մասին խոսելիս։ «Առակն» ու «առածը» ժողովրդի մեջ ունեցել է նույն կիրառումը և տարբերվել է «ասացվածք» ու «խոսք» հոմանիշներից։ Առաջինների տակ հասկացվել են այլաբանական (ալեգորիկ), իսկ վերջինների տակ ուղղակի իմաստ ունեցող ստեղծագործությունները։ «Առակ» անունն են կրել մեզանում նաև կենդանական զրույցները, որոնք առած-առակների նման այլաբանական ստեղծագործություններ են։

Բնորոշ է այն հայացքը, որ ունեցել է հայ ժողովուրդը առածի և ասացվածքի մասին։ Ըստ նրա դրանք մեծ կենսափորձ ունեցող և հասարակության մեջ հարգ ու պատիվ վայելող մարդկանց կողմից հորինված ստեղծագործություններ են՝ «մեծունանց» կամ «մեծաբանց» խոսք։ Առածներն ու ասացվածքները ժողովրդի կարծիքով գալիս են դարերի խորքից («վաղի առակ»), ստուգված ու ճշտված են շատ սերունդների փորձով, ուստի և չեն կարող սխալ լինել կամ ժխտականանալ. «մեծանանց խոսքը գետին չի ընկնի», «մեծորեն խոսք սուտ չեղնի»։ Ժողովրդի վերաբերմունքը առած-առակների նկատմամբ որոշակի ու սեղմ արտահայտված է «Առակն անխոտելի

է» տարածված ասացվածքի մեջ, որ նշանակում է, թե առակն անհերքելի է, ճշմարիտ է, հարգելի է, այն չի կարելի խոտել — արհամարհել, առակում ասվածը պետք է կատարվի։ Առածների ու ասացվածքների դաստիարակչական-խրատական մեծ նշանակության և նրանց ճշմարտացի ու խորը բովանդակության հետ միասին, հայ ժողովուրդը բարձր է գնահատել նաև վերջիններիս լակոնիկ ու դիպուկ ձևը, ելնելով իր այն սկզբունքից, ըստ որի՝ «Թոկի երկարն է լավ, խոսքի կարճը»։

Առածներն ու ասացվածքները հայ ժողովրդական բանահյուսության ամենահին և հարուստ ժանրերից մեկն են։ Նրանց խորը հնությունից գալու մասին են վկայում այն ստեղծագործությունները, որոնց մեջ պահպանված են բազմաթիվ մոտիվներ նախնադարյան, տոհմային-համայնական հասարակության կյանք ու կենցաղի, հավատալիքների ու աշխարհայացքի վերաբերյալ, իսկ դրանց (առածների) հարստության պերճախոս ապացույցը հանդիսանում են այն հազարավոր առած-ասացվածքներն իրենց բազմաթիվ վարիանտներով, որոնք դարերի ընթացքում ստեղծվել ու գործածվել են ժողովրդի կողմից։ Բնորոշ է այս տեսակետից հայ ժողովրդի մեծ լուսավորիչներից մեկի ու նրա բանավոր ստեղծագործության բարեկամի՝ Խ. Աբովյանի հետևյալ խոսքերը. «Առակ, մասալա, սուր խոսքեր՝ որ ուզենաս հո էն հետին ռամիկ մարդը՝ մեկի տեղակ հազարը կասի»[1]։

Ինչպես բանահյուսական այլ ստեղծագործությունների, այնպես էլ առած-ասացվածքների գնահատման և գրառման երևույթը մեզանում կապված է 50—60-ական թվականների ազգային լուսավորական-դեմոկրատական շարժման հետ և անմիջական շարունակությունն ու արձագանքն է հանդիսանում Խաչատուր Աբովյանի այդ ուղղությամբ հիմնադրած մեծ գործի և ռուսական բանահյուսական-ազգագրական գրականության բարերար ազդեցության։ 50—60-ական թվականներից է, որ հայ գրականության մեջ գնալով ուժեղանում ու խորանում է ժողովրդական բանահյուսության առողջ հոսանքը. պարբերաբար սկսում են գրի առնվել և հրատարակվել այդ բանահյուսության նմուշները։ Նույն այդ թվականներին է, որ Նալբանդյանը իր նշանավոր «Կրիտիկայում» գրականության զարգացման և նրա ժողովրդայնության կարևոր ազդակներից մեկը համարում է ժողովրդական բա-

[1] Խ. Աբովյան, Ընտիր եր՛կեր, հատ. Ա, Երևան, 1939, էջ 170։

նահյուսության օգտագործումը, դրվատիքի խոսք ասելով այդ ուղղությամբ աչքի ընկած հայ հեղինակների հասցեին։ Անդրադառնալով մասնավորապես Պռոշյանի «Սոս և Վարդիթեր» վեպում տեղ գտած առածներին ու ասացվածքներին, Նալբանդյանը մեծ գոհունակությամբ գրում է. «Արգո հեղինակը հետևելով պ. Աբովյանի ուղղության իր բովանդակ գործի մեջ միշտ աչքի առջև ունեցել է գործ դնել ազգային առածներ, ասացվածներ։ Մենք լիասիրտ շնորհակալություն ենք հայտնում մեր հեղինակին»[1]։

Հայկական առածների առաջին բուն ժողովրդական շարքը (թվով 102 հատ) լույս է տեսել 1859 թ. Թիֆլիսում հրատարակվող «Մեղու Հայաստանի» թերթի էջերում։ Առածներին կցված իր նախաբան խոսքի մեջ, որ կրում է «Ազգային աշխարհորեն առածից (մասալեքի) վրա» վերնագիրը, բանահավաքը (Գրիգոր Տեր-Հարությունյան Կիրակոսյանց Այգեհատցի) համառոտակի նշում է այն նպատակն ու շարժառիթները, որ դրդել են նրա տվյալ ձեռնարկությանը։ Նա գրում է. «Մենք շատ մոտիկ օրինակ ունեինք ռուսաց լեզուն ու ուսումնականները, թե ինչքան խնամք են տանում ժողովրդական լեզվի վրա, ու ինչ հոգացողությամբ հավաքում են զանազան գավառների քերականական ձևերն ու ոճերը, ժողովրդի առածներն ու երևակայած դյուցաբանությունները, ալքերին կամ ուրիշ ներգործող երևույթներին վերաբերյալ։ Այժմ այս բանովս պարապում են Ռուսաստանումը երևելի գիտնական Սնեգիրովը, Աֆանասևը, Բուսլաևը, Դալը, իսկ ռուսաց գիտությանց ճեմարանը այնքան հարգում է գավառական լեզուները, մինչև նորերումս հրատարակեց գավառական լեզվաց բառարան։ Հասկանալով՝ թե ինչքան հարկավոր է մեր պատմության համար հավաքել սրա նման բաներն, ես իմ կողմանե հետևեցա ժողվել Լոռվա գավառումը լսած առածները, որ շատ կարելի է ուրիշ տեղերումն էլ գործ են ածում. շատ լավ կլիներ, որ մյուս հավաքողներն էլ ցույց տային հրատարակելիս՝ թե ո՞րտեղ են լսել. իմ միտքս էլ այն էր, որ ուրիշներն էլ իրենց գիտեցածն գրեն ու չթողուն կորչի էսպես բանը, որից երևում է ազգի բուն լեզուն ու բնավորությունը»[2]։

Գրիգոր Տեր-Հարությունյանին հետևում են նաև ուրիշները։ Թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ պարբերական մամուլի էջերում ու առանձին ժողովածուների մեջ սկսում են տպագրվել Հայաստանի

[1] Մ. Նալբանդյան, Երկեր, հատ. 3-րդ, Երևան, 1940, էջ 183։

[2] «Մեղու Հայաստանի», 1859, № 52, էջ 413—414։

զանազան գավառների ժողովրդական առածներն ու ասացվածքները[1]։

Ժողովրդական առածների ու ասացվածքների գրառման ուղղությամբ ավելի բեղմնավոր աշխատանք է կատարվում 1880—1900-ական թվականներին և հետո։ Մի շրջան էր դա, երբ մեզանում ո՛չ միայն չէր թուլացել 50—60-ական թվականներին ժողովրդի և նրա ստեղծագործության նկատմամբ սկսված հետաքրքրությունը, այլ գնալով ավելի էր ուժեղացել։ Եթե 50—60-ական թվականներին այդ երևույթը կապվում էր հիմնականում ազգային-լուսավորական շարժման հետ, ապա 1880—1900-ական թվականներին այն դառնում է կապիտալիզմի զարգացման հետևանքով թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ իրականության մեջ առաջ եկած հասարակական նոր հարաբերությունների (գյուղում ու քաղաքում առաջ եկած սոցիալական ուժեղ շերտավորման) և կյանքում հետզհետե իր դիրքերն ամրապնդող ժողովրդական-դեմոկրատական հոսանքի մտավոր ու գրական շարժման արտահայտությունը։ 70—80-ական թվականներից է, որ հայ գրականության մեջ սկսվում և 90—900-ական թվականներին տիրապետող է դառնում ռեալիստական ուղղությունը. լավագույն գրողների ստեղծագործության նյութն են դառնում ժողովրդի կյանքն ու պայքարը, նրա հույզերն ու մտորումները։ Նույն այդ թվականներին է, որ մեկը մյուսի ետևից հրապարակ են գալիս ժողովրդի կենցաղի, սովորությունների, բարբառի, բանավոր ստեղծագործության նյութերով հետաքրքրվող մարդիկ, դրանք գրի առնող բանահավաքների (Գ. Սրվանձտյան, Տ. Նավասարդյան, Ս. Հայկունի և այլն) մի ամբողջ խումբ։

Վերջիններիս ջանքերով է ահա, որ ժողովրդական բանահյուսության շատ ուրիշ ստեղծագործությունների հետ գրի են առնվում ու հրատարակվում են նաև առածներ ու ասացվածքներ[2]։

2. ՆԵՐԿԱ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ներկա գործը իրենից ներկայացնում է հայ ժողովրդական առածների ու ասացվածքների համահավաք ընդարձակ մի ժողովածու։ Մեր նպատակն է եղել ի մի հավաքել և սիստեմավորել բանա-

[1] Տե՛ս «Համառոտագրություններ աղբյուրների»։

[2] Տե՛ս նույն տեղում։

հյուսական տվյալ ժանրի ուղղությամբ հայ ժողովրդի ստեղծած հարուստ ժառանգությունը, նկատի ունենալով դրա կարևորությունը ո՛չ միայն կուլտուրայի պատմաբանի համար՝ իբրև աշխատավոր ժողովրդի սոցիալական կյանքի ուսումնասիրման արժեքավոր մի սկզբնաղբյուր, այլև գրողի և լրագրողի, թարգմանչի ու փոխադրողի, ագիտատորի ու զեկուցողի համար՝ իբրև հարուստ մի շտեմարան կենսափիլիսոփայական խորիմաստ ընդհանրացումների, բանավոր ու կենդանի խոսքի պատկերավոր, դիպուկ ու սուր արտահայտությունների։

Առաջադիր նպատակն իրականացնելու համար դիմել ենք գրավոր և բանավոր, տպագիր ու անտիպ այն բոլոր աղբյուրներին, որտեղից հնարավոր է եղել քաղել համապատասխան նյութեր։ Այս կերպ մեզ հաջողվել է հավաքել շուրջ 40.000 առած և ասացվածք (հաշված նաև միևնույն ստեղծագործության տարբերակները), որի մոտավորապես կեսը անտիպ։

Մեր օգտագործած աղբյուրներն ըստ իրենց բնույթի հետևյալներն են.

1. Բանահյուսական-ազգագրական տպագիր և ձեռագիր ժողովածուներ։

2. Ազգագրական, գրական և այլ կարգի պարբերականներ (օրաթերթ, շաբաթաթերթ, ամսագիր, տարեգիր)։

3. Հայ գրողների (Աբովյան, Պռոշյան, Աղայան, Սունդուկյան, Ծուղուրյան, Շահնազարյան, Ագայան, Ադելյան, Ջավախեցի և այլն) երկերը։

4. Առօրյա խոսակցական լեզվի մեջ գործածված առածների ու ասացվածքների գրառում։

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ բոլոր բանահավաքները, հեղինակները չեն, որ հարազատությամբ հավաքել ու տպել են բուն ժողովրդական առածներ ու ասացվածքներ, այլ որ նրանց մեջ եղել են և այնպիսիք, որոնք «ժողովրդական», «ռամկական» կամ «ազգային» անվան տակ տպել են աշխատավոր ժողովրդի ստեղծագործության հետ ոչ մի կապ չունեցող և նրա ոգուն միանգամայն խորթ նյութեր, օգտագործված աղբյուրների նկատմամբ ցուցաբերել ենք քննադատական մոտեցում և ժողովածուից դուրս ենք թողել.

1. Բանահավաքի կամ հրատարակչի կողմից անգիտակցաբար կամ միտումնավոր կերպով աղճատված առած-ասացվածքները։

2. Գրական ճանապարհով թարգմանված կամ փոխադրված օտար և ոչ ժողովրդական նյութերը։

3. Սովորական ոճերը, դարձվածքները, պատկերավոր արտահայտությունները, հանելուկները, ժողովրդական երգի կամ կենդանական զրույցի առանձին բեկորները և նմանները, որոնք թյուրիմացաբար դրված են եղել առածների ու ասացվածքների շարքում։

Այսպես օրինակ, Սիմոն Ճուղարտյանի 1881 թվականին Վիեննայում հրատարակած «Առածք ազգայինք» վերնագրով գրքույկից զտել ենք հետևյալ կարգի հարյուրավոր այսպես կոչված առած-ասացվածքներ, իբրև ոչ ժողովրդական, շինծու և աղճատված նյութեր. «Ձեռքը բացողը պատրաստ պիտի լինի մերժումն ալ լսելու», «Հայրենյաց քարինքը ավելի տաք են, քան Բաբելոնի փոները»։

Գ. Տիգրանյանի 1892 թ. Ռոստովում հրատարակած «Առածք, ասացվածք և զրույցք հայոց Նոր Նախիջևանի» վերնագրով ժողովածուից, մի քանի տասնյակ այլ նյութերի հետ, հանել ենք նաև «Հող բռնիս՝ ոսկի դառնա», «Քունդ անուշ, երազդ բարի» և մի քանի նմանները, որոնք առածներ կամ ասացվածքներ չեն, այլ սովորական օրհնանքներ, ոճեր ու դարձվածքներ։

Գևորգ Բարխուդարյանի 1898 թ. Թիֆլիսում հրատարակած «Բարոյական առածներ» ժողովածուից բազմաթիվ այլ նյութերի հետ, մի կողմ ենք թողել նաև հետևյալները. «Ազնիվ մարդը վախում է անազնվությունից, անազնիվն անում է ամեն ինչ», «Ակամայից արած աշխատությունը ո՛չ հոգու ա և ո՛չ մարմնու», «Մարդ կա բնավորությամբ կեղծ ա, մարդ կա ազգի ցեց ա», որոնք ոչ լեզվով, ո՛չ արվեստով և ո՛չ էլ բովանդակությամբ ոչինչ ընդհանուր չունեն ժողովրդական առածների հետ։

Տրդատ Պալյանի 1900 թ հրատարակած «Ժողովրդական առածներ և զանազան ասացվածք» վերնագրով գրքույկից զտել ենք հետևյալ կարգի բազմաթիվ նյութեր, իբրև թարգմանածո, հնարովի և աղճատված բաներ. «Երկու նավապետ ունեցող մեկ նավակը շուտով կերթա ծովուն տակը» (բառացի թարգմանություն է տաճկերենից), «Գարնան տաքը կանաչին հոգևարքն է», «Սար ու ձոր փիս տերտերի փոր» (բանահավաքը խմբագրել է ժողովրդական հայտնի առածը ավելացնելով «փիս» բառը)։

Նույն կերպ ենք վարվել նաև մեր օգտագործած բոլոր մյուս գրավոր ու բանավոր, տպված ու անտիպ աղբյուրների նկատմամբ, ընտրելով նրանցից բուն ժողովրդական առածներն ու ասացվածքները։

3. ԱՌԱԾՆԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Առածների դասավորման ընդունված եղանակը սովորաբար հանդիսացել է այբբենական մեթոդը։ Այս եղանակով են կազմված եղել անցյալում տարբեր ժողովուրդների առածների ժողովածուների մեծ մասը։ Հիշյալ եղանակը վերին աստիճանի պարզ և հեշտ իրագործելի է։ Առաջնորդվելով նրանով կարելի է ամենակարճ ժամկետում և առանց որևէ դժվարության պատրաստել առածների ընդարձակագույն ժողովածուներ։ Հեշտ և պարզ լինելով սակայն, տվյալ եղանակը, որը բառարաններ կազմելու միակ նպատակահարմար և ընդունված ձևն է, այս դեպքում ըստ ամենայնի խոցելի է։

Այբբենական եղանակի ամենամեծ թերությունն այն է, որ այն պարզ կերպով չի բացահայտում ժողովրդական առածների ու ասացվածքների սոցիալական բովանդակությունը, աշխատավոր ժողովրդի կյանքն ու պայքարը, ինչպես նաև մյուս դասերի ու դասակարգերի հոգեբանությունն ու աշխարհայացքը։ Այնպիսի կարևոր առածներ, ինչպիսիք են, դիցուք, սոցիալական շերտավորման, մասնավոր սեփականության, շահագործման վերաբերյալ առածները, այբբենական ժողովածուի մեջ իրարից բաժան-բաժան լինելով ցրվում և կորչում են հարյուրավոր և հազարավոր այլ կարգի առածների ու ասացվածքների ընդհանուր հոսանքի մեջ։

Նույնը վերաբերում է առածների բովանդակության ընդհանրապես։ Առանց համապատասխան իմաստային-թեմատիկ խմբավորումների, վերնագրերի ու ենթավերնագրերի, չվերծանված, չբացահայտված վիճակում, իրար տակ դասավորվում են միևնույն տառով սկսվող այնպիսի ստեղծագործություններ, որոնք թե՛ իմաստով և թե՛ առհասարակ, բոլորովին տարբեր են իրարից, և, ընդհակառակը, իրարից արհեստական կերպով հեռացվում են այնպիսի առածներ, որոնք սկզբնատառով տարբեր լինելով, իմաստով հար և նման են իրար։ Այս պատճառով չափազանց դժվարանում է ժողովածուի մեջ ամփոփված նյութի օգտագործումը, որով և, հասկանալիորեն, մեծապես իջնում է ժողովածուի նշանակությունը։ Եթե նախապես չգիտես ուզածդ իմաստի առածի սկզբնատառը, ապա ստիպված պետք է լինես հիտախուզելու այլաբանության հաճախ բավական թանձր կեղևի տակ ծածկված հազարավոր ու տարբեր իմաստների մի կատարյալ խառնուրդ ներկայացնող ողջ ժողովա-

ծուն։ Այս կերպ կարելի է օգտվել նաև առանց դասավորման որևէ սկզբունքի կազմված առածների ժողովածուներից, որպիսիք նույնպես գոյություն են ունեցել։ Այսպես օրինակ, «Հարուստի սուտը կանցնի, աղքատի ղորթը չի անցնի» մերկացնող ու սուր ասացվածքը, այբբենական ժողովածուի մեջ մենք գտնում ենք «Հարսը հաց թխեց, տանտիկինը պարծեցավ», «Հարիսան բոլ, եղը վրան գյոլ» և նման կարգի այլ ստեղծագործությունների շարքում։ «Շատ գտողին շալե շապիկ, քիչ գտողին՝ շարե շապիկ» դասակարգային բողոքի զգալի շեշտ ունեցող առածը այբբենական ժողովածուի մեջ դրված է՝ «Շատը գնաց, քիչը մնաց», «Շափ-շափ կուտեն, շաբթով կաշեն» և նման կարգի այլ առածների շարքում։ «Խալխը որ կա, քնած առյուծ է, որ զարթնավ էլ չքնի» ժողովրդի պոտենցիալ ուժի մասին ակնարկող, քաղաքական մեծ ընդհանրացումի առածը այբբենական ժողովածուի մեջ դրված է «Խալիչեն մաշավ, խավը վերացավ», «Խաշամանը իմն է, խաշն ուրիշինը» և նման կարգի այլ առածների շարքում։

«Բ» տառի բաժնում «Բանն ով անի, ես ու դուն, հացն ով ուտի, ես ու դուն» առածի տակ, որ նշանակում է թե՝ վայելելու համար պետք է աշխատել և ուրիշի վրա հույս չդնել, զետեղված է «Բարեկամի հետ կեր ու խում արա, առ ու տուր մի անի» առածը, որ նշանակում է թե՝ առևտուրը խաբեություն է, ուստի մտերիմի հետ պետք է խուսափել առևտուր անելուց. իսկ այս վերջինի տակ դըրված է «Բարկացող մարդը շուտ կպառավի» ասացվածքը, որն իր բովանդակությամբ (դյուրագրգռությունը վնասակար է առողջության համար) ոչ մի առնչություն չունի նախորդ, բովանդակությամբ նույնպես տարամերժ երկու առածների հետ։ Այսպես և բոլոր մյուս տառերի բաժիններում։

Այբբենական եղանակի երկրորդ ո՛չ պակաս մեծ արատն այն է, որ միևնույն առածի տարբեր վարիանտները, տարբեր տառերով սկսվելու պատճառով ցրվում են ժողովածուի տարբեր մասերում, որով և դժվարանում է նրանց զարգացումն ու կրած փոփոխությունները դիտելը։

Այսպես օրինակ, այբբենական ժողովածուի մեջ երկու տարբեր տեղերում, տարբեր տառերի տակ են դրված՝ «Տերտեր արա գեղը գցի, թե ապրեց ոչ՝ գետը գցի» և «Աղքատին գեղը քցա, թե չապրի՝ գետը քցա» առածները, որոնցից առաջինը հակակրոնական բնույթի բուն ժողովրդական մի ստեղծագործություն է, իսկ երկրորդը՝ նրա

վերախմաստավորված վարիանտը, առաջ եկած սոցիալական վերնախավի միջավայրում։

Վարիանտների դիմապրկման երևույթի բնութագրման համար ավելի ցայտուն են այն առածները, որոնց տարբերությունը արտահայտված է գերազանցորեն ձևական և լեզվական-բարբառային հանգամանքներով։ Այսպես օրինակ. «Բարատու ծառը գլուխը կախ կը գցի», «Պտղատու ծառի ճյուղերը քաշ կը լինեն», «Լիքը սմբուլը գլուխը կախ կանի» առածները, չնայած այն հանգամանքին, որ ունեն հար և նման իմաստ (պիտանի մարդիկ համեստ են լինում) այբբենական ժողովածուի մեջ դրվում են 3 տարբեր տեղերում՝ «Բ», «Պ» և «Լ» տառերի տակ։

Կամ՝ «Խելոքը մինչև կմտածե, խելարը տղին կպսակե», «Ընչանք խելոքը միտք կանի, գիժը տղին հարսանիք կանի», «Ջուր խելացին փսայվի, ծռու լաճեր կխասնեն», «Հարի խելացին բոբկացավ, ծուռ գետ անցավ» առածները ունենալով միևնույն իմաստը (համարձակ-խիզախները կյանքում հաղթող են լինում) այբբենական ժողովածուի մեջ դրվում են 4 տարբեր տեղերում — «Խ», «Ը», «Ջ» և «Հ» տառերի տակ և այլն։

Այբբենական մեթոդի նման, ընդունելի չի կարող լինել նաև այսպես կոչված անվանական կամ առարկայական մեթոդը, երբ առածներն ու ասացվածքները ժողովածուի մեջ դասավորվում են ըստ առանձին առարկաների կամ հասկացությունների (մարդ, աշխարհ, ժամանակ, բնություն, խելք, խիղճ, խոսք և այլն)։ Այս մեթոդը ընդունված և առանձնապես տարածված է եղել Արևմտյան Եվրոպայի մի քանի երկրներում (Անգլիա, Գերմանիա)։ Այբբենական եղանակի նման առարկայական-անվանական մեթոդի հիմնական արատը նյութի դասավորման ժամանակ սոցիալական մոտեցման բացակայությունն է, ապա նաև միևնույն թեմային վերաբերող առածների ցրումը տարբեր տեղերում, տարբեր անունների տակ (խելոք — իմաստուն — գիտուն, ժողովուրդ — խալխ — ռայաթ — համայնք և այլն)։

Հրաժարվելով թե՛ այբբենական և թե՛ առարկայական եղանակներից, ներկա ժողովածուի մեջ ժողովրդական առածներն ու ասացվածքները դասակարգել ենք ըստ նրանց հիմնական իմաստի և սոցիալական բովանդակության։ Դասակարգման այս ձևը, հիմնականում, մշակված է մեր կողմից։ Ճիշտ է, դրա առանձին փորձեր եղել են և անցյալում, մասնավորապես ռուսական գրականության մեջ

(հայտնի են այս տեսակետից Դալի[1] և Իլյուստրովի[2] ժողովածուները), սակայն դրանք թե՛ մեթոդական և թե՛ մանավանդ մեթոդոլոգիական տեսակետից ունեցել են լուրջ թերություններ։ Դալը, օրինակ, առածները դասակարգել է բարոյական կամ հոգեբանական կարգի թեմաներով, ստեղծելով չափազանց պայմանական և սուբյեկտիվ բաժանումներ։ Իլյուստրովը առածների դասակարգման ժամանակ ելել է հիմնականում իրավական սկզբունքներից, տեղավորելով դրանք պետական, ընտանեկան, քրեական իրավունքի և նման տիպի մի քանի այլ բաժանումների մեջ։ Նրանք միաժամանակ թույլ են տվել այնպիսի աչքի ընկնող սխալներ ու թերություններ, ինչպիսիք են.

1. Առածների բովանդակության շատ հաճախ անհամապատասխանությունը այն բաժնի վերնագրին, որի տակ նրանք դրված են, և տարբեր բաժինների միջև ներքին կապի բացակայությունը։

2. Միևնույն առածի կամ ասացվածքի բազմաթիվ կրկնությունները ժողովածուի տարբեր տեղերում։

3. Ժողովրդական առածների ու ասացվածքների ե՞րբ և ո՞րտեղ գրի առնված և տպագրված լինելու մասին համապատասխան տեղեկանքի բացակայությունը, որը մեծապես իջեցնում է ժողովածուի գիտական արժեքը։

4. Ժողովրդական առածների ու ասացվածքների հետ համատեղ այնպիսի ստեղծագործությունների մատուցումը, ինչպիսիք են՝ հանելուկները, շուտասելուկները, սովորական դարձվածքները, որոնք և՛ ձևով, և՛ բովանդակությամբ տարբեր են առածներից ու ասացվածքներից և այլն։

Հակառակ Դալի և Իլյուստրովի, որոնք առածների դասավորման ժամանակ մեկնակետ են ունեցել բարոյական-հոգեբանական և իրավական սկզբունքները, մենք առաջնորդվել ենք ժողովրդական առածների ու ասացվածքների սոցիալական բովանդակությամբ և դասավորումը կատարել ըստ այդմ, միաժամանակ խուսափելով նրանց թույլ տված հիշյալ կարգի թերություններից։

Առածները, լինելով այլաբանական բնույթի ստեղծագործություններ հաճախ բավական դժվար վերծանելի են։ Նրանց բուն միտքը՝ սոցիալական, փիլիսոփայական որևէ ընդհանրացում արտահայտ-

[1] Даль В., Пословицы русского народа, М., 1861.

[2] Иллюстров И., Жизнь русского народа в его пословицах и поговорках, М., 1915.

վում է անուղղակի կերպով, բնությունից, կենդանական աշխարհից վերցրված այս կամ այն առարկայի, երևույթի միջնորդավորմամբ։ Առածի իսկական իմաստը հասկանալու համար՝ անհրաժեշտ է մտովին ճեղքել նրա այլաբանական կեղևը և թափանցել բովանդակության խորքը։ Առածներն այս առումով հիշեցնում են ժողովրդական հանելուկներին։ Առածների դժվար վերծանելիության հանգամանքը նկատի ունենալով է, որ XVIII դարի հայտնի մատերիալիստ-փիլիսոփա Հելվեցիուսը դրանք համեմատել է մճճված կծիկի հետ։ Նա գրել է. «Առածները... կարելի է համեմատել մճճված կծիկի հետ. եթե դուք գտնեք մի ծայրը, ապա կարող եք ետ կծկել նրանցից ողջ էթիկան ու պոլիտիկան. այդպիսի մի աշխատանքի համար անհրաժեշտ են իհարկե խիստ ճարտար ձեռներ»[1]։

4. ԱՌԱԾՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿ ԽՄԲԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԱՐԻԱՆՏՆԵՐԸ

Ինչպես հայտնի է, ժողովրդական առածները իրենց բովանդակությամբ չափազանց բազմազան են. չկա կենսական որևէ երևույթ, որն իր անդրադարձումը գտած չլինի նրանց մեջ։ Այստեղից էլ ահա ծագում է առածների իմաստաբանական խմբավորման դժվարությունը, մի գործ՝ որի հաջողությունից խոշոր չափով կախված է ժողովրդական առածների ինչպես պրակտիկ օգտագործման, այնպես էլ գիտական ուսումնասիրության համար պիտանի դառնալու հանգամանքը։ Վերծանված բոլոր առածները պետք էր կարողանալ դասավորել ըստ բովանդակության, իրար կողքի բերել նույն և մերձ իմաստ ունեցող առածները, ստեղծել առանձին բաժիններ, յուրաքանչյուր բաժնի մեջ տարբեր թեմատիկ ենթաբաժիններ, թե՛ մեկին և թե՛ մյուսին տալով համապատասխան ընդհանրացնող վերնագրեր։ Միաժամանակ անհրաժեշտ էր այնպես անել, որպեսզի ժողովածուն շատ չմասնատվեր մանր բաժինների, ու էլ՝ նյութի հարուստ ու բազմազան բովանդակությունը կորչեր չափից ավելի մեծ և սխեմատիկ խմբավորումների մեջ, որով մեծապես կդժվարանար նրա օգտագործման հարցը։ Ելնելով նման մեկնակետից, մենք ներկա ժողովածուն պայմանական կերպով բաժանել ենք թվով վեց մեծ բաժինների և շուրջ 150 ենթաբաժինների։

Հատուկ մտահոգության առարկա է եղել մեզ համար նաև վարիանտների մատուցման հարցը։ Ամենահեշտն այն կլիներ, եթե՝

[1] Гельвеций К. А., Об уме, М., Огиз, 1938, стр. 308.

այբբենական կարգով կամ առանց դրան իրար տակ դրվեին միևնույն առածի բոլոր տարբերակները, համապատասխան համառոտ ծանոթություններով յուրաքանչյուրի աղբյուրի և գրառման վայրի մասին։ Սակայն այս կերպ վարվելով մենք մեծապես բազմապատկած կլինեինք ժողովածուի էջերի թիվը և միաժամանակ տեղիք կտայինք շատ կրկնությունների, քանի որ վարիանտներից շատերը փաստորեն ոչ այլ ինչ են, բայց եթե միևնույն առածի հարասումը տարբեր վայրերում, բարբառային աննշան տարբերություններով։ Այդ ակնհայտ թերություններից ժողովածուն զերծ պահելու և միաժամանակ վարիանտների բովանդակության ու արվեստի բոլոր քիչ թե շատ ուշագրավ երանգները ներկայացնելու համար, կիրառել ենք հետևյալ եղանակը.

1. Միևնույն առածի բազմաթիվ վարիանտներից ընտրելով ամենակատարյալը (բովանդակության ու արվեստի, տարածված լինելու, ինչպես նաև համաժողովրդական, ազգային լեզվին ավելի մոտ լինելու իմաստով) տվել ենք այն ընդգծված ձևով իբրև հիմնական վարիանտ։

2. Վերջինիս տակ առանց ընդգծման դրել ենք նրանից քիչ թե շատ զգալի տարբերություն ունեցող մյուս վարիանտները, իբրև երկրորդական վարիանտներ։

3. Յուրաքանչյուր հիմնական կամ երկրորդական վարիանտի տակ համառոտությամբ նշել ենք նրանց աղբյուրը և գրառման վայրը, իսկ այս վերջինների կողքին դրել հիմնական և երկրորդական վարիանտներից բարբառային աննշան տարբերություն ունեցող մյուս առածների և ասացվածքների աղբյուրների ու գրառման վայրի համառոտագրությունները։ Այս կերպ մեզ հաջողվել է մեծապես կրճատել ժողովածուի ծավալը, վարիանտները մատուցել նրանց բովանդակության, արվեստի, տարածված լինելու, լեզվի արժանիքների համեմատ, խուսափելով ավելորդ ծանրաբեռնվածությունից, միաժամանակ արձանագրել չտրված բոլոր նյութերի հասցեն։

Օրինակ, հարստահարված, ընչազուրկ աշխատավոր մասսաների սոցիալական բողոքի ակնհայտ շեշտ պարունակող «Աշխարհ արոտ, մենք մեջը կարոտ» և «Աշխարքը ծով, մեզ համար սով» առածների մեջ հայտնի 11 վարիանտներից ժողովածուի մեջ օգտագործված են միայն 4-ը, ըստ որում՝ 1-ը տրված է առաջին տեղում, ընդգծված ձևով, իբրև հիմնական վարիանտ, 3-ը՝ 2-րդ տեղում, առանց ընդգծման, իբրև երկրորդական վարիանտներ, իսկ

մնացած 7-ի միայն աղբյուրներն են նշված համապատասխան ծանոթությունների մեջ, իբրև վերևում տրված 4 տարբերակների կրկնակներ՝ լեզվական-բարբառային աննշան տարբերություններով։

«Ամեն բանի վերջն է գովելի» տարածված ասացվածքի մեզ հայտնի 8 վարիանտներից, որոնց բոլորի միտքն այն է, թե ամեն ինչ գնահատելի է իր վերջնական արդյունքով, ժողովածուի մեջ օգտագործված է միայն 3-ը, ըստ որում 1-ը տրված է առաջին տեղում, ընդգծված ձևով, իբրև հիմնական, երկուսը՝ երկրորդ տեղում առանց ընդգծման, իբրև երկրորդական վարիանտներ, իսկ 5-ի համար նշված են միայն աղբյուրները համապատասխան ծանոթությունների մեջ իբրև վերևում տրված երեք վարիանտների կրկնակներ բարբառային աննշան տարբերություններով։

Այսպես և բոլոր մյուս վարիանտներ ունեցող առածների ժամանակ։

Այսպիսով, առածների դասավորման մեր մշակած եղանակը, որը և՛ ըստ էության, և՛ ըստ կառուցվածքի հիմնովին տարբերվում է իմաստա-բովանդակային սխեմի եղած հին փորձերից, ունի հետևյալ առավելությունները։ Այն հնարավորություն է տալիս.

1. Թափանցելու ժողովրդական առածների այլաբանական կեղևի տակ թաքնված բովանդակության մեջ, տեսնելու նրանց դասակարգային-սոցիալական էությունը։

2. Վերահասու լինելու վարիանտների մեջ առկա բովանդակության ու ձևի նշանակալից երանգներին ու տարբերություններին, բացահայտելու նրանց ծագումը, զարգացումն ու կրած փոփոխությունները, տեսնելու թե ինչպես միևնույն առածը կամ ասացվածքը պատմական տարբեր ժամանակաշրջաններում, դասակարգային տարբեր միջավայրում ստանում են նոր երանգավորում, երբեմն էլ բոլորովին նոր բովանդակություն ու ձև։

3. Հեշտությամբ գտնելու ժողովածուի մեջ այս կամ այն հարցին վերաբերող փնտրված իմաստի առածը կամ ասացվածքը։

Այս է հիմնական գծերով ներկա ժողովածուի վրա կատարված աշխատանքի ընդհանուր պատկերը։

Պետք է ավելացնել նաև, որ ժողովածուի մեջ կան որոշ կարգի թերություններ, որոնք լավ գիտակցելով հանդերձ, մենք չենք կարողացել վերացնել, որովհետև դրանք բխել են նյութի բնույթից։ Բնորոշ է այս տեսակետից, օրինակ, մի հանգամանք։ Հիանալի իմանալով, որ առածների դասակարգման ամենաճիշտ ձևը այն կլիներ, եթե մենք դրանք խմբավորեինք ո՛չ միայն ըստ հիմնական իմաստի

կամ բովանդակության, այլև ըստ նրանց ծագման ժամանակաշրջանի, պատմական էպոխաների ու ֆորմացիաների, այնուամենայնիվ կիրառել ենք միայն առաջին ձևը։ Այսպես ենք վարվել, որովհետև առածները և ընդհանրապես ժողովրդական բանահյուսությունը, իբրև բանավոր ստեղծագործություններ, ծագած լինելով այս կամ այն էպոխայում, հարատևել են և հետագայում ենթարկվել զգալի փոփոխությունների, կրելով տարբեր էպոխաների ու ֆորմացիաների կնիքը։ Պակաս բնորոշ չէ նաև մի ուրիշ հանգամանք։ Հայտնի է, որ առածների առանձնահատկություններից մեկը նրանց մի զգալի մասի բազմանշանակ լինելն է։ Այստեղից էլ ակնհայտ է, որ առածների դասավորման մեր կիրառած ձևը (ըստ բովանդակության կամ իմաստի) թույլ է տալիս կատարման մեջ զգալի բազմազանություն։ Այս կամ այն առածին տված մեկնաբանության նեղության կամ լայնության, մասնավորության կամ ընդհանրության համեմատ, կարելի է այն տեղաշարժել մի բաժնից կամ ենթաբաժնից մյուսը, և դարձյալ պնդել, թե տվյալ առածը իր տեղում չէ։ Արել ենք այն, ինչ ներել են մեր ուժերը։

Անհրաժեշտ է հիշատակել նաև այն փաստը, որ բավական թվով առածներ ու ասացվածքներ տեղադրված են ո՛չ միայն ժողովածուի համապատասխան թեմատիկ խմբերի մեջ, ըստ իմաստի ու բովանդակության, այլ այբբենական կարգով տրված են որոշ բաժինների վերջում՝ «Հավելված» վերնագրի տակ։ Այդօրինակ մեծ կամ փոքր «Հավելվածներ» ունեն ժողովածուի՝ «Մարդկային — հասարակական հատկություններ, բնավորություն և խառնվածք», «Բարոյական հասկացություններ, կենսափորձից հանված եզրակացություններ և խրատներ», «Մարդկային զգացումներ, ճաշակ, սեռ, տարիք» վերնագրով բաժինները։ Ինչպես նախորդ երկու դեպքերում, այս անգամ էլ հանցանքը մերը չէր։ Դրա հիմնական պատճառն այն էր, որ նման և զուգահեռ իմաստի ու բովանդակության առածների ու ասացվածքների հետ, որոնք կարելի եղավ ի մի բերել առանձին թեմատիկ խմբերի մեջ, գտնվեցին նաև իմաստով ու բովանդակությամբ եզակի այնպիսի առածներ ու ասացվածքներ, որոնց նկատմամբ հնարավոր չէր կիրառել թեմատիկ խմբավորման սկզբունքը։ Ահա թե որտեղից առաջ եկավ «Հավելվածների» անհրաժեշտությունը։

5. «ԼՐԱՑՈՒՄ» ԲԱԺՆԻ ՄԱՍԻՆ

Ինչպես ժողովրդական բանահյուսության մյուս բոլոր ստեղծագործությունների, այնպես էլ առածների ու ասացվածքների պաշարը ժողովրդի մեջ անսպառ է։ Ինչքան էլ շատ հայտնաբերված ու հավաքված լինեն դրանք, երբեք չի կարելի ասել, թե այլևս հնարավոր չէ նոր նյութեր գտնել։ Հիշյալ հանգամանքն էր ահա, որ մեզ թելադրեց «Առածանի»-ի հրատարակումից հետո չհրաժարվել նոր առածներ ու ասացվածքներ որոնելու մտքից և շարունակել աշխատանքը տվյալ ուղղությամբ։ Այդ աշխատանքի արդյունքն են սույն հրատարակության «Լրացում» բաժնում զետեղված շուրջ 600 առած-ասացվածքները, որոնք հավաքված են 1951—1960 թթ. ընթացքում։ Դրանք հիմնականում նոր նյութեր են, մասամբ էլ եղածների նոր տարբերակներ կամ զուգահեռներ։ Տարիների ընթացքում մեզ հաջողվեց մեր շրջապատում լսել ու գրի առնել բավական թվով նոր առածներ ու ասացվածքներ։ Մեր ժողովածուն զգալիորեն հարըստացավ համալրվելով նաև համապատասխան հիմնարկների արխիվային ֆոնդերը վերջին տարիներս մուտք գործած առած-ասացվածքների մի քանի նոր ձեռագիր հավաքածոների հաշվին։

250 առած-ասացվածք՝ Ախալցխայի, Շիրակի, Կարնո, Երևանի, Լոռու, Սիսիանի, Ղարաբաղի, Վան-Վասպուրականի և մի երկու այլ բարբառներով, վերցրել ենք մեր ձեռագիր ժողովածուից։

200 առած-ասացվածք վերցրել ենք Գորիս քաղաքի բնակիչ Վ. Բադիրյանի ձեռագիր ժողովածուից, որը պարունակում է նույն Գորիս քաղաքի և շրջակա՝ Տեղ, Կոռնիձոր, Արավուս, Շինուհայր, Խնձորեսկ ու այլ գյուղերի առածներն ու ասացվածքները (ձեռագիրը պահվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանի ժողովրդական բանահյուսության արխիվի «Անհատ բանահավաքների ձեռագրեր» բաժնում)։

50 առած-ասացվածք՝ Շուլավերի բարբառով, վերցրել ենք ուսուցիչ-բանահավաք Ս. Քամալյանի ազգագրական և բանահյուսական նյութերի անտիպ ժողովածուից (ձեռագիրը գտնվում է Երևանի պետական Մատենադարանի արխիվային բաժնում, Սեն. Տեր-Հակոբյանի ֆոնդ, թղթապանակ նո. 72, վավերագիր նո 1 գ.)։

50 առած-ասացվածք վերցրել ենք Ա. Մարտիրոսյանի ձեռագիր ժողովածուից, որը պարունակում է նրա մոր՝ Լենինական քաղաքի բնակչուհի Նուշիկ Մարտիրոսյանի առած-ասացվածքները՝ Շիրակի և Մանազկերտի բարբառներով։

20 առած-ասացվածք՝ Ղարաբաղի բարբառով, վերցրել ենք Մ. Գրիգորյանի բանահյուսական նյութերի անտիպ ժողովածուից (ձեռագիրը գտնվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության ու արվեստի թանգարանի ժողովրդական բանահյուսության արխիվում, Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

«Առածանի»-ի ներկա հրատարակությամբ ևս օրակարգից չի հանվում ժողովրդի մեջ եղած և տակավին գրի չառնված ու չհրատարակված թե՛ հին և թե՛ նոր ստեղծված ու ստեղծվող առածների ու ասացվածքների հայտնաբերման ու գրառման խնդիրը։ Մեր հնարավորությունների չափով մենք այսուհետև էլ պետք է աշխատենք այդ ուղղությամբ։ Միաժամանակ, կոչ ենք անում «Առածանի»-ի ընթերցողներին և բոլոր նրանց, ովքեր գիտեն և առիթ կունենան լսելու սույն ժողովածուից դուրս մնացած նոր առածներ ու ասացվածքներ, չզլանան գրի առնելու մեր ժողովրդի բազմադարյան բանահյուսության այդ թանկագին գոհարները։

Իբրև վերջաբան այստեղ ուզում ենք կրկնել ռուս նշանավոր բանահավաք և բանագետ Վլադիմիր Դալի հետևյալ խոսքը, որ նա գրել է ժամանակին ռուսական առածների իր պատրաստած մեծ ժողովածուի առնչությամբ. «Թեպետ և սա երկասիրություն չէ, բայց ջանք չափազանց շատ պահանջվեց, առավել շատ, քան հարկավոր կլիներ որևէ երկասիրության համար»։

ԱՌԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ա.

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽԱՌՆՎԱԾՔ

ՊԻՏԱՆԻ ԵՎ ԱՐԺԱՆԱՎՈՐ: ՀԱՄԵՍՏ ԵՎ ԽՈՀԵՄ

Մեկ կա՝ հազար աժե, հազար կա՝ մեկ չաժե:
ԺԱԲ 109 Ախց/ՀԱ 210 Ակն/ԲԱ 25 Ղրբ/ԹՄԿ 123 Թֆլ/Մ 1885, 450 ՂլԹ/ՀԺՀ VII, 111 Վն/Բ 1899, 651 Խն/ՈԻՁ 140 ՁԹ/ԹՄԿ 137 Թֆլ

Մինը կա տասն աժի, տասը կա մին չաժի։
ԳԱ 20 Վդպ

Մարդ կա հազար արժե, հազար կա՝ մեկ չարժե։
ՆՆ 510 Շրկ/ԱՆ 22 Նխջ/ՀԺՀ VII, 100 Խրմ/Բ 1898, 316 Քղ/ԱՀԱ 10 Գլո

Մարդ կա՝ մարդ ա, մարդ կա՝ զարդ ա:
ԲԱ 29 Ղրբ

Լավութենին լավութուն՝ ամեն մարդու բանն ա, վատութենին լավութուն՝ մարդ մարդու բանըն ա:
ՀԺՀ VII, 81 Աստ

Ածան հավը կըրկչան կըլնի:
ԺԵԱ 209 Վդպ/ՓՇԱ 90 Շրկ/ԱՀ VI, 74 Բլն/ԱՀ XII, 95 Ալշ/ՀԱ 204 Ակն/ԱՇԳ 72 Արր/Բ 1898, 315 Քղ/ԵՀԳ 95 Եվդ/Բ 1900, 219 Կպր

Ձու ածող հավը կչկըչան կըլնի։
ԺԵԱ 224 Վդպ/ՎՄ I, 131 Վն/ԺԵՂ 233 Լո/ԿՇ 5 Ղրբ/ՀԱՎ 1887, 175 Խսջ/ԹՄԿ 129 Թֆլ

Աժան հավը կոկռան կ'ըլլի։
ԱՀ IX, 180 Գլո/Բ 1898, 133 Կրն/Բ 1899, 651 Խն/ՀԱՎ 1890, 163 Տրպ/ԺԱԲ 88 Ախց/Բ 1898, 745

Կրկըչան հավը ձու ածող կ'ինի։
ԲԱ 24 Ղրբ/Բ 1899, 425 Կն

Բարատու (պտղատու) ծառը գըլուխը կախ կը զցի:
ԳԱ 12 Վդպ/ԹՄԿ 81 Թֆլ

Ծառը քանի բար շատ ունենա, գլուխը կախ կը քցի։
ՓՇԱ 108 Շրկ/ԹՄԿ 116 Թֆլ/ՄՀԹ 1859, 114 Լո

Պտղատու ծառին ճղները քաշ են լինում։
Սխ 26 Զգդ

Լիքը ամբուլը (հասկ) գլուխը կախ կանի։
ԱՇ 31 Աշտ

Բարատու ծառին քար քցող շատ կըլի:
ԱՀ XI, 112 Բրն

Մեյվի (պտուղի) ծառին քար քցող շատ կեղնի։
ՀՏՎ 19 Շրկ

Կարմիր խնձորին քար քշտող շատ կըլլա։
Բ 1899, 479 Կն

Կաթնատուր կովի պտկին չեն թքի:
ԱԾ 37 Աշտ

Կաթ տվող կովի պտուկը չեն կտրի:
ՄԹ 21 Ծրկ/ԱՀ XIII, 85 Ալ2

Ինչքան որ գիտուն ըլնես, չիմացածդ մի անգետից հարցրու:
ԱԾ 29 Աշտ/ԺԵԱ 225 Վղպ

Մարդը ինչքան խելքով էղնի՝ թըղ ծուռն (խենթ) *խոսք հարցու:*
ԱՀ XIII, 86 Ալ2

Վարը նստի, որ վերևը քեզ տեղ տան:
ՄԹ 43 Ծրկ/ՎՍ II, 147 Վն/ԱՀ IX, 191 Գլս

Պստիկից սկսե, որ մենծին հասնես:
ՓԾԱ 122 Ծրկ/ԹՄԿ 149 Թֆլ

Քչեմեն կցե՛ (սկսիր)*, վուր շատին հասնիս:*
ԹՄԿ 167 Թֆլ/ՓԾԱ 126 Ծրկ

Քիչն ղարուլ արա (համաձայնվիր)*, վուր աստուծ շատ տա:*
ԹՄԿ 166 Թֆլ

Իշից բռնացրա, որ ձիուն հասնես:
ԱԾ 30 Աշտ/ՓԾԱ 106 Ծրկ

Քըզանա մեծին մհար *(համար)* պահած տեղում նստես ոչ:
ԲԱ 42 Ղրբ

Շատ գիտես, քիչ խոսա:
ԺԵԱ 225 Վղպ/ԱԾ 52 Աշտ/ԹՄԿ 144 Թֆլ/ԿԾ 5 Ղրբ/ԺԱԲ 98 Ալեց

Խաբարը (խոսք) *բերնիդ մեջ էփի, նոր ասա:*
ՎՍ I, 128 Վն

Շատ տեսնում իս, քիչ ասա:
ԹՄԿ 146 Թֆլ

Քիչ խոսա, շատ լսի:
ԳԱ 63 Վղպ/ԹՄԿ 166 Թֆլ/ԱՀ IX, 191 Գլս/ԼՄ 1880, 59 Բլն/ԺԵԱ 184 Մ2/ԹՄԿ 167 Թֆլ

Էրկու լսե՛, մեկ խոսի:
ԹՄԿ 94 Թֆլ/ԱՀ IX, 183 Գլս

Մեկ խոսե, տաս լսե:
ԼՄ 1880, 39 Բլն

Շատ կեր, քիչ խոսա:
ԳԱ 64 Վղպ

Շատ բան շինե՛, քիչ խոսի՛:
ԹՄԿ 145 Թֆլ

Երկու անկան, մեկ բերան, իմացի՛ր ասածիդ սըրան *(հերթ)*:
ԱՆ 22 Նխջ

Առաջ միտք արա, հետո գործ սկսի:
ԳԱ 57 Վղպ/ՓԾԱ 94 Ծրկ/ԱՆ 20 Նխջ

Առաջ միտք արա, հետո խոսք ասա:
ԱԾ 6 Աշտ/ԹՄԿ 66 Թֆլ/ԹՄԿ 82 Թֆլ

Տասը չափի, մեկ կտրի:
ԳԱ 15 Վղպ/ՓԾԱ 124 Ծրկ/ԹՄԿ 160 Թֆլ/ԱՆ 56 Նխջ/ԿԾ 7 Ղրբ/ԱՀ VI, 99 Բլն/ԺԵԱ 184 Մ2/ՀԺՀ VII, 111 Վն/Բ 1898, 461 Ղրդ

Օխտը չափի, մին կտրի:
ԲԱ 43 Ղրբ/ԵԱ 112 Խոյ/ԱՀ IX, 187 Գլս

Հազար չափե, մեկ մը կտրե:
ԱՀ IX, 186 Գլս/ԹՄԿ 123 Թֆլ

Ծանդր նստի, որ լիդր *(ծանրութեան չափ)* գաս:
ԺԵԱ 222 Վղպ/Բ 1899, 479 Կն/Բ

1898, 377 Դրք/Մ 1885, 450 Ղլթ/Բ 1899, 499 Բ 1900, 428 Մրզ/ԺԵԱ 182 Մ2/ԼՄ 1880, 27 Բլն/ԳՎ 137 Վն/ԱՀ XI, 114 Բրչ/ՆՆ 501 Ծրկ/ԺԵԱ 248 Հղկ/ՀԱ 208 Ակն/ԺԵԱ 283 Ալ2/ԱՀ IX, 185

Ծանդր տեղդ մի թեթևացնի:
ԺԵԱ 222 Վղպ/ԱԾ 36 Աշտ/ԺԵԱ 235 Լռ/ԿԾ 3 Ղրբ/ԺԵԱ 231 ՀԹ

Հազար խոսքին մեկ խոսք, հազար ննղուն մեկ քար:
ԼՄ 1880, 33 Բլն

Ծանդր քարը իր տեղումը կը մնա:
ԺԵԱ 222 Վղպ

Մտնելուց առաջ միտք արա, թե ինչպես դուրս գաս:
Բ 1898, 461 Ղրդ

ԶԳՈՒՇԱՎՈՐ ԵՎ ՀԵՌԱՏԵՍ

Շան հետ ընկերացիր, փետը ձեռիցդ մի գցի:
ԺԵԱ 225 Վղպ/ՄՀ 21 Լռ/ԿԾ 5 Ղրբ/ԱՀ VI, 94 Բլն/ՎՍ I, 133 Վն/Բ 1899, 696 Թվր

Շան հետ ախպերացի, փետը ձեռիցդ մի՛ վեր գցի:
ԳԺԲ 54 Աշտ/ՓԾԱ 118 Ծրկ/ԺԵԱ 236 Լռ/ՍԽ 33 Զգզ/ԲԱ 32 Ղրբ/ԺԵԱ 197 Տրպ

Գիլի հետ ընկերացի, դագանակդ ձեռիցդ մի գցի:
ԱԾ 13 Աշտ

Կծողի քամակին կանգնի, քացի տվողի՝ առաջին:
ԱԾ 36 Աշտ/ՓԾԱ 110 Ծրկ

Ձիու առջևից անցիր, շան ետևից:
ՓԾԱ 113 Ծրկ/ԱԾ 44 Աշտ

Ոտդ փակին *(ցուպ)* պահե, որ վար չընկնիս:
ՄԹ 43 Ծրկ

Երկու աչքիդ մեկին մի՛ հավատալ:
ԱՆ 41 Նխջ

Ի՞նչ բան ունիմ կամուրջումը, որ փաթաթին յափնջումը:
ՀԺՀ VII, 104 Ղրբ

Ո՛չ սատանին կը տեսնիմ, ո՛չ երեսը կը թքնեմ:
ԼՄ 1880, 46 Բլն

Ասեղի ծակից Հնդըստան սեյր կանեն *(դիտել)*:
ՀԱ 204 Ակն/ԱԾԳ 72 Արբ/Բ 1898, 315 Քղ/ՀԱՎ 1892, 183 Տրպ/Բ 1899, 411 Կն

Ուղտը մոտիկ ա արածում, համա հեռու ա տեսնում:
ԱԾ 54 Աշտ/ՀԺՀ VII, 79 Աստ

Մինչև քառասուն ընկուզ մեկտեղ չը տեսնի, քար չի նետեր:
ՀԱ 250 Ակն

ՃՇՄԱՐՏԱԽՈՍ ԵՎ ՃՇՄԱՐՏԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Դուզ *(ուղիղ)* խոսողի գլուխը ծակ ա:
ՎԱ 10 Վղպ/ԱՆ 43 Նխջ/ՀԺՀ VII, 100 Ղրմ/ԱՀ IX, 189 Գլս/ԱԷ 1894, 264 Ալ2/ԱՀ VI, 95 Բլն/ԺԵԱ 184 Մ2/ԺԵԱ 230 ՀԹ/ՀԳ 1895, Մ 1235 Ղլթ

Դուզ խոսողի գտակը ծակ կըլնի։
ԺԵԱ 210 Վղպ/ԹՄԿ 89 Թֆլ/ԱԺԲ 87 Քնք/ՓԾԱ 100 Ծրկ/ԿԾ 2 Ղրր/Սխ 27 Ձգզ/ԱՆ 43 Նխջ/Բ 1898, 378 Դրք/ՎՍ II, 137 Վն

Ղորդ (ճշմարիտ) *զուրցողի գլուխը կոտրշով* (պոզ) *է։*
Բ 1899, 479 Կն

Ճիշտ խոսողի ձին պտի թամքած ըլնի:
ԳԱ 22 Վղպ/Սխ 27 Ձգզ/ԹՄԿ 89 Թֆլ/ԲԱ 28 Ղրր/ԱՆ 43 Նխջ

Դրուստ խոսողի ձին թամքած պտի ըլնի, որ փախչի։
ՓԾԱ 100 Ծրկ/Բ 1899, 479 Կն/ՎՍ II, 137 Վն

Ծիտակ ասողին ձին տակնպետք ա։
ԵԱ 116 Խտջ

Օղորթ (ճշմարիտ) *խոսողի ձին դուռն է։*
ԺԵԱ 184 Մշ

Ճշմարիտ խոսողի տակին մի Արաբստանի ձի պիտի։
ՊԺԲ 52 Աշտ

Դրուստ խոսողի ձին դռանը պիտի, վուռն էլ ուզանգումը (ասպանդակ):
ԹՄԿ 89 Թֆլ

Ծիտակ ասողը տեր չունի:
ԵԱ 100 Խտջ

Ղորդ զուրցողը տեղ չունենար:
Բ 1898, 479 Կն/ԵՀԳ 111 Եվդ/ՀԱՎ 1890, 164 Տրպ

Ծիտակ բսողը դո՞ւն մնացիր:
Բ 1898, 378 Դրք

Ծիտակ զուրցող քե՞զ են գրեր։
ԱՀ IX, 189 Պլս

Ամեն բան դրուստ չի ասվի:
ԹՄԿ 75 Թֆլ/ԱՀ IX, 180 Պլս

Ծիտակ խոսքը ճանաքով կասեն:
ՊԺԲ 54 Աշտ/ԺԵԱ 225 Վղպ/ՓԾԱ 119 Ծրկ/ԿԾ 2 Ղրր

Ծուռ նստինք, շիտակ խոսինք:
ՆՆ 502 Ծրկ/ՍԲ 439 Բլ/ԺԵԱ 182 Մշ/ԱՀ IX, 185 Պլս/ՀԱ 208 Ակն/ԵԱ 104 Խտջ/Բ 1900, 579 ԿՄ

Ծիտակ պատը չփլչիր:
ԱՀԱ 12 Պլս

Ծիտակ ճամբով քալող չը դադրի:
ԼՄ 1880, 45 Բլն

Ծիտակ ճամփի մաճ եկողը ճայելումն ալ կ'երևա:
ՄՀԹ 1859, 414 Լո

Ծիտակ մարդը ծուռ բան չսիրեր, ծուռին ալ շիտակ չըսեր:
ՀԱՎ 1892, 383 Տրպ

Ճյուղին պատիժ չը կա:
ՀԺՀ VII, 107 Ղրր

Հազար խփին, մե դրուստ ասիլ տան:
ԹՄԿ 122 Թֆլ

Հազար սուտ մեկ ղորդ չ'աժեր:
Մ 1885, 450 Ղլթ

ԵՐԱԽՏԱԳԵՏ ԵՎ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ: ՍԵՓԱԿԱՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԳՆԱՀԱՏՈՂ

Ինչ աղբրից մարդ ջուր խմի, էն աղբրին քար չի քցի:
ԺԵԱ 221 Վղպ/ԺԵԱ 174 Խստ/ՊՎ 139 Վն

Մարդ պետք չէ մոռանա զէն աղբուր, որ ջուր խմեր է։
Բ 1898, 302 Խն

Հավն որ ճավ ա, որ ջուր խմա, աստված կիշկա:
ԱՀ VII—VIII, 496 Ալշ/ԱՀ VI, 88 Բլն/ՊՎ 136 Վն/ՀՏՎ 15 Ծրկ/ԹՄԿ 123 Թֆլ/Բ 1898, 316 Քղ/Բ 1898, 377 Դրք/Մ 1885, 450 Ղլթ/ԺԵԱ 231 Հթ/ՊՀԿ 1655 Եվր/Բ 1900, 579 ԿՄ/ՈԻՋ 139 Ջթ/Բ 1899, 479 Կն/Բ 1899, 806 Հզր

Հավը ջուր ա խմում, վերև ա մտիկ անում։
ԺԵԱ 223 Վղպ/ԺԱԲ 88 Ախց/ՀԱ 209 Ակն

Հավը ջուր կը խմե, աստուն փառք կու տա։
ԵՀԳ 107 Եվդ/ՀԱՎ 1891, 300 Տրպ

Շունը կերած տեղը ճաչե կու:
ՀԱՎ 1892, 183 Տրպ

Շունը ինչ տեղ հաց կուտա, էնտեղ կը հաչա։
ԵԱ 110 Խտջ/ՎՍ I, 134 Վն

Շունը տիրոջ կը ճանչնա:
ԱՆ 30 Նխջ/ԹՄԿ 145 Թֆլ/ՀԱՎ 1893, 359 Տրպ

Շունն էլ իր տիրուչը վրա չի հաչի:
ԹՄԿ 147 Թֆլ

Ամա կտարի (*երախտավոր*) ամակը (*երախտիք*) չեն մոռանա:
ՄԹ 1 Ծրկ

Թող ասեն գեշ ա, թող չասեն էշ ա:
ԺԵԱ 221 Վղպ/Բ 1898, 133 Կրն/ԱՂ 16 Սսն

Թող չսեն թե էշ է, թող ըսեն թե՝ գեշ է։
ԺԱԲ 94 Ախց/Բ 1898, 378 Դրք/ՀԱՎ 1890, 163 Տրպ/Բ 1898, 315 Քղ/ԱՀ VII—VIII, 501 Ալշ/ԵԱ 103 Խտջ

Լավ է գեշ ասեն, քան թե էշ։
ՓԾԱ 106 Ծրկ/Ս 215 Սլմ

ՃԱՐՊԻԿ ԵՎ ՀՆԱՐԱԳԵՏ: ԻՐԵՆ ԳՈՐԾՆ ԻՄԱՑՈՂ

Սատանից օխտն օր առաջ է ծնվել:
ՆՆ 525 Ծրկ/ԺԱԲ 102 Ախց

Սատանի ճետի կրունկն է:
ՆՆ 525 Ծրկ/Բ 1900, 599 ԿՄ/ԱՂ 5 Սսն

Սատանի էտի պոչն է։
ԺԱԲ 102 Ախց

Սատանին շապիկ կու հագցնե:
ՀԱ 263 Ակն

Սատանին չարող (տրեխ) *կը հագցնե։*
Բ 1900, 599 ԿՄ

Սատանին չարուխ կը կարե։
ԼՄ 1880, 53 Բլն

Սատանենն գետնի տակին սխտոր ուտի, կիմանա:
ԱՇ 59 Աշտ/ԹՄԿ 88 Թֆլ

Սատանեն գետնի տակը կերակուր եփելիս, աղ գցողը ես եմ:
ՓՇԱ 122 Շրկ

Ցոթ ծով մե թել մանածով կը ներկի:
ԺԵԱ 211 Վղպ/ԱՇ 55 Աշտ

Երկու մեռլի կշտով անց կենա, մինը պտի թոցնի:
ԱՇ 22 Աշտ

Էրկու եզան արանքեն, զող (շերտ) *մի կաշի կը հանե:*
ԺԵԱ 248 Հղկ

Իշի առառուկը *(վայրի բանջար)* մանիշակի տեղ ա անց կացնըմ:
ԱՇ 29 Աշտ

Իր շիպ՝ շաքարի տեղ կը ծախե:
ԼՄ 1880, 23 Բլն

Քո ցերեկվա ման էկածը, ես գիշերն եմ ման եկել:
ՊԺԲ 58 Աշտ/ԺԵԱ 243 Օշկ/ԺԵԱ 251 Հղկ

Մտնիլ լողանալն էլ գիտե, էլլել դողալն էլ:
ԺԱԲ 96 Ախց/ՆՆ 514 Շրկ/ԱԱՊ 1855, 164 Պլս/ՀԺՀ VII, *99 Խրմ/ԱՆ 20 Նխջ*

Ճարպիկ գողը՝ տան տիրոջն է գող բռնում:
ՓՇԱ 114 Շրկ/ԼՄ 1880, 37 Բլն/ԱՇ 55 Աշտ/Բ 1898, 333 Դրբ

Գող կը բռնի տան տեր, որ տանտեր չը բռնի գող:
ՇԿ 7 Շտխ/ՎՍ I, *124 Վն*

Ինչ քար վերցնես՝ տակեն դուս կու գա:
ԺԱԲ 111 Ախց/Բ 1899, 479 Կն/ԵՀԳ 103 Եվդ/Բ 1898, 302 Խն/ՀԱՎ 1892, 183 Տրպ

Ամեն թալաքեմեն *(թակարդ)* դուս էկած է:
ԹՄԿ 78 Թֆլ/ԹՄԿ 78 Թֆլ

Գտալըմ մածուն առեր՝ աշխար կը մակըրթե:
ԺԱԲ 110 Ախց

Թիզ ու կես, գետնի բզեզ:
ՆՆ 496 Շրկ

Ղազարը գիտե իրեն բազարը *(սակարկություն):*
Բ 1898, 200 Կրն/ՓՇԱ 114 Շրկ/ՄՀ 21 Լռ/ԹՄԿ 131 Թֆլ/ԼՄ 1880, 37 Բլն

Ղուկասը գիտե իր ղիասը (չափ, հաշիվ):
ԳԱ 32 Վղպ/ՓՇԱ 114 Շրկ/ԱՀ VI. *91 Բլն/ԱՀ* VII—VIII, *472 Ալշ/Բ 1898, 315 Քղ/Բ 1899, 806 Հզր*

Էլիաս՝ գիտե իր կիասը:
ՎՍ I, *125 Վն*

Նազին գիդի իրա սազին:
ՄՀ 22 Լռ

Գիկոն գիտա՝ ճախիրը դոր *(ուր)* կը քշա:
ՎԱ 9 Վղպ

Ծուկոն գիտի նախիրը դվորը պտի քշի:
ԱՇ 46 Աշտ

Մինաս գինա նախիր դվորը կը քշա:
ԺԵԱ 214 Վղպ

Հախիջանը դիտի թե իրան ակը դվո՛րը թոլ կանի (գլորել)*:*
ԺԵԱ 235 Լռ

Նամ *(խոնավ)* տեղ պառկող չէ:
ԱՂ 27 Ախց

ԽԵԼՈՔ (ԽԵԼՈՔՈՒԹՅՈՒՆ) ԵՎ ԻՄԱՍՏՈՒՆ: ԱՆԽԵԼՔ (ԱՆԽԵԼՔՈՒԹՅՈՒՆ) ԵՎ ՀԻՄԱՐ

Գիտունի հետ քար քաշի, անգետի հետ փլավ մի ուտի:
ԺԵԱ 219 Վղպ/Մ 1885, 423 Ղլթ

Լավ է գիտունի հետ քար քաշես, քան անգետի հետ փլավ ուտես:
ԺԱԲ 83 Ախց/ԺԵԱ 241 Օշկ

Իմաստունի հետ քար քաշե, հիմարի հետ փլավ մի՛ ուտի:
ՓՇԱ 105 Շրկ/ՎՍ II, *140 Վն*

Խելոք մարդու հետ քար կրելը լավ է, քանց գժի հետ փլավ ուտելը:
ԹՄԿ 113 Թֆլ

Խելոքին հետ քար կրե, խենթին հետ հաց մ'ուտեր:
Բ 1900, 579 ԿՄ/ԿԱՎ 1893, 358 Տրպ

Խելոքի հետ քար կրե, խևին հետ սառակ (փող) *մի՛ բաժնե:*
ՀԺՀ VII, *99 Խրմ*

Լավ է գիտունին գերի, քան անգետին սիրելի:
ԺԱԲ 83 Ախց/ ՓՇԱ 98 Շրկ/ԱՀ VII—VIII, *460 Ալշ/ՎՍ* II, *137 Վն/ՊՎ 135 Վն*

Գիտուն մարդի լացացնիլը լավ ա, քանց անգետի ծիծաղացնիլը:
ԱՇ 14 Աշտ/ԺԵԱ 241 Օշկ

Գիտուն մեղավորը լավ ա, քանց թե անգետ արդարը:
ԱՇ 15 Աշտ/ԺԱԲ 89 Ախց/ԱՀԱ 7 Պլս

Իմաստուն մեղավորը լավ ա, քան թե արդար հիմարը:
ԱՀ XI, *113 Բրչ/ՀԱ 207 Ակն/ԵԱ 112 Խոջ*

Յա *(կամ)* գժի հետ խոսել ես, յա գարի հաց կերել ես:
ԱՀ XI, *114 Բրչ/ՓՇԱ 109 Շրկ*

Յա գժի հետ խոսալը, յա քարթու (հին) *հաց* (կորեկ հաց) *կրծիլը:*
ԱՇ 51 Աշտ

Սարսաղ *(հիմար)* գլխի ձեռից ոտները հավար *(օգնության կանչ)* կը կանչեն:
ԱՇ 60 Աշտ/ԱՆ 46 Նխջ/ԺԵԱ 199 Տրպ

Հիմարը տալիս է, խելոքն էլ առնում:
ՓՇԱ 117 Շրկ/ԱՇ 7 Աշտ

Խելքից թեթևը ոտից եզին *(արագ)* կըլի:
ԱՀ XI, *114 Բրչ/ԱՇ 34 Աշտ/ԺԵԱ 235 Լռ/ՓՇԱ 107 Շրկ/ԺԵԱ 251 Հղկ*

Խելքե թեթև, ոտքե չուստ (արագաշարժ):
ՓՇԱ 107 Շրկ/ԺԵԱ 251 Հղկ

Հիմարի ձեռքից բուն անապատ է փախել:
ՓՇԱ 117 Շրկ/ԼՄ 1880, 43 Բլն

Խելոքը բան անե, գիժը մտիկ անե:
ԹՄԿ 113 Թֆլ/ԹՄԿ 84 Թֆլ

Ծռուն թքեցին երես, ասաց՝ օրհնյալ է աստված, անձրև կուգա:
ՇԿ 13 Շտխ/ԺԵԱ 195 Տրպ

Գծին բանի դի, հետը գնա:
ԹՄԿ 84 Թֆլ/ԺԵԱ 244 Ակն

Խելին բանի դիր, նա քեզի ավելի մեծ բանի կը դնե:
ԱՆ 63 Նխջ

Գիժն ու հարբածը մեկ է:
ԹՄԿ 86 Թֆլ/ԱՀ IX, *185 Պլս*

Խելոքին կոտոշ *(պոզեր)* չի բուսնի:
ԺԱԲ 110 Ախց/Բ 1899, 479 Կն/Մ 1885, 350 Ղլթ

Խելքը տարիքին մեջ չէ, գլխուն մեջ է:
ԱՆ 58 Նխջ/ՓԾԱ 107 Ծրկ/ԱՀ XI, *114 Բրչ*

Խելքը մեծ ու պստիկ չհարցու:
ԱՀ VI, *86 Բլն/ԺԵԱ 222 Վղպ/ՁԲ 60 Ձհմ*

Մարդուն քաշածը իր խելքեն է:
ԳԱ 19 Վղպ/ԱՀ IX, *187 Պլս*

Ինչ գա վեր մարդուն, իր խելքեն է:
Բ 1898, 378 Դրք/ԹՄԿ 103 Թֆլ/Մ 1885, 424 Ղլթ

Խելք պետք է, որ երթա շռե, գա պառկի:
ԱՀ IX, *184 Պլս/ՀԱՎ 1893, 353 Տրպ/ԳԹ 122 Սլմ*

Մի խելքը ամառ-ձմեռ ի՞նչ կանի:
ԺԵԱ 295 Վղպ/ՓԾԱ 91 Ծրկ/ԺԵԱ 233 Լո/ԹՄԿ 73 Թֆլ/ԿԾ 1 Ղրբ/ՎՍ I, *121 Վն/ԱԲ* II, *15 Ագլ*

Մի խելքը տարին բոլոր ի՞նչ անի:
ԱԾ 37 Աշտ

Ներսին ու դրսին՝ մեկ խելքը ի՞նչ պտի էնե:
ԺԵԱ 179 Բլն

Խելք խելքի վրա տարբերություն ունի:
ԹՄԿ 115 Թֆլ/ԺԵԱ 192 Արծ

Լավ ա աչքով քոռ ինի *(լինի)* մարդ, ինչ մտքով:
ԲԱ 20 Ղրբ

Խենթինն ուտեն, խելոքինը պահեն:
ՀԱ 208 Ակն

Խելոքին բեռը խենթին շալակը:
Բ 1899, 652 Խն

Խոշ *(լավ)* խաբարը խելացնուն մեկ, ծռուն քառսունը մեկ:
ՎՍ II, *142 Վն*

Անխելքի չվանով *(պարան)* հոր մի մտնի:
ԺԵԱ 181 Մ2

Խենթը քուն, բախտն արթուն:
ՀԱ 236 Ակն

Խելքին ձեռքը եսիր *(գերի)* է:
Բ 1900, 579 ԿՄ

Լաց ըլելուն գժի տերն է:
ԹՄԿ 111 Թֆլ

Խենթը տաք փարա *(դրամ)* քցեց ծակը, քառսուն ավալ հանեց:
Մ 1886, 45 Տրպ

Խենթին բաղարջը մեծ կըլլա:
ՀԱՎ 1893, 358 Տրպ

Ծռուն դատավոր չե՛ն ենե:
ՎՍ , 129 Վն

Գժեն դրուստ ջո՞ւղաբ *(խոսք)*:
ՀԺՀ VII, *78 Աստ*

Խևին գլուխը շուտ չի՛ ներմկնալ:
ԱՆ 42 Նխջ

Գժի վեգը ալչի կը կանգնի:
Աշ 13 Աշտ

Ծուռը ծռավ, պոչը թռավ:
ՎՍ II, *142 Վն*

Ծռու տունը բառնման ըղտուն:
ՎՍ II, *142 Վն*

Ծուռ ծանաչացավ, գեղը զատացավ *(հեռանալ)*:
ՎՍ II, *142 Վն*

Ծռու յա՛ լացը կուգա, յա՛ խնդալը:
ԼՄ 1880, 28 Բլն

Գժի մե հուշտն *(խրատնեցնել)* է պակաս:
ԹՄԿ 84 Թֆլ

Գժի թրի ջուխտ *(զույգ)* բերանն էլ կը կտրի:
ԱԾ 13 Աշտ

Բանը խելքով կ'երթա առաջ:
ԼՄ 1880, 11 Բլն

Խելքը լավ է, քանց դովլաթը *(հարստություն)*:
ԹՄԿ 114 Թֆլ

Մորուքը խելքի հետ չի՛ մեծնալ:
ԱՆ 43 Նխջ

Աստված որ ուզում ա մեկի տունը քանդե, առաջ խելքն ա առնում:
ԳԱ 1 Վղպ

Ո՛չ խելունքներու հեռանաս, ոչ էլ պլերին *(խենթ)* մոտանաս:
ԲԱ 33 Ղրբ

Վերնատունը դատարկ է[1]:
Բ 1898, 346 Քղ/ՆՆ 528 Ծրկ

Վերի հարկը պարապ է:
ԱԾԳ 75 Արբ

Վերնատունը մարդ չկա:
Բ 1900, 350 Կոբ/ԺԵԱ 285 Ալշ/Բ 1900, 350

Տախտակը պակաս ա:
ԺԵԱ 285 Ալշ/ԱՆ 74 Նխջ

Կուտը պոլոզ է:
ՀՏՎ 13 Ծրկ/ԱՀԱ 8 Պլս

Ակոն տանը չի:
ԱԾ 9 Աշտ/ՆՆ 514 Ծրկ

Իծանը *(այծերը)* սարն են գնացել:
Աշ 31 Աշտ/ԼՄ 1880, 9 Բլն

Իծանը թուփ են էլել (հավաքվել):
ԱԾ 31 Աշտ

Նուկին պակաս է:
Բ 1899, 480 Կն/Բ 1899, 555 Քղ

Գոտակը մենծ, տակը դարտակ:
ԱԾ 14 Աշտ

Գլուխը հաստ, ծուծը բարակ:
ՀԺՀ VII, *78 Աստ*

Ճապիկը կարճ է:
ԺԵԱ 285 Ալշ/Բ 1898, 345 Քղ

Ցայլեն սարին *(հով)* է:
ՀՏՎ 20 Ծրկ

ԱԶՆԻՎ (ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ) ԵՎ ԱՆԱԶՆԻՎ (ԱՆԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ)

Հալալ զադեն *(ազնիվ որդի)* կը շինի, հարամ զադեն *(փուչ զավակ)* կը քանդի:
ԱԾ 43 Աշտ/ԺԵԱ 289 Խլթ

Հալալը *(արդար)* որ մազ դառնա չի կտրվի, հարամը *(խարդախ)*, որ գերան դառնա՝ կը կոտրվի:
ՎԱ 25 Վղպ/ԺԵԱ 242 Օշկ/ԹՄԿ Թֆլ/ԲԱ 25 Ղրբ

[1] *Այս և հաջորդ 12 ասացվածքները ունեն նույն իմաստը և նշանակում են՝ խենթ կամ պակասամիտ:*

Հալալ մազը չի կտրվի, հարամ գերանը կը կոտրվի:
ՓՇԱ 110 Շրկ

Աստված հալալին կը տա:
ԳԱ 57 Վղպ/ԱՇ 2 Աշտ/ՀԱՎ 1891, 301 Տրպ

Աստված հալալին կուտա, հարամին կը տանի:
ՎՍ II, 135, Վն

Հալալին աստված կուտա, հարամին սատանեն:
ՎՍ II, 144 Վն

Հալալ մարդու հացը չի կտրվի:
ԺԵԱ 231 Հթ

Հարամ ուտողի մինն երկու չի լինի:
ԱՇ 40 Աշտ

Հարամի վրան լյառ է, տակը մազ:
ԺԵԱ 249 Հղկ

Հարամն օր կշտանա, մուկը ծակեն դուրս կուգա:
ՆՆ 505 Շրկ

Հալալ մալը գելը չի տանի:
ԳԱ 59 Վղպ/ՓՇԱ 110 Շրկ/ՎՍ II, 144 Վն

Հալալ ապրանքը գելը չի ուտի:
ԹՄԿ 125 Թփլ/Բ 1898, 460 Ղրղ

Հալալ ապրանքը կորչիլ չի:
ԲԱ 25 Ղրբ

Հարամը կուգա, հալալն էլ կը տանի:
ՓՇԱ 111 Շրկ/ԱՇ 42 Աշտ/ԱՀ XI, 114 Բրչ/ԱՀ IX, 186 Պլս/ԱՆ 11 Նխջ/ԺԵԱ 178 Բլն/ՎՍ I, 128 Վն/ՇԿ 12 Շտխ

Հարամը կը մտնե, հալալը կելլե:
ԱՆ 11 Նխջ

Հարամը բինա (*հիմք*) չի բռնե:
ՄԹ 22 Շրկ

Հարամ փողին բինա չիլլի:
ԳԱ 19 Վղպ

Հարամ վաստակը պոռան (*մրրիկ*) կը տանի:
ԱՆ 33 Նխջ

Հարամ փարան (*փող*) բինա չի բռնե:
ՀԱՎ 1892, 382 Տրպ

Մին հարամ թիքան (*պատառ*)՝ հազար հալալ թիքա կը կորցընե:
ՀԺՀ VII, 105 Ղրբ

Դառը քրտինքի բերած կապեկը ուղտի պոչ է, չի երկարիլ:
ՊԺԲ 46 Աշտ

ՀԱՎԱԿՆՈՏ, ԻՆՔՆԱՀԱՎԱՆ, ՊԱՐԾԵՆԿՈՏ, ՄԵԾԱԽՈՍ ԵՎ ՄԵԾԱՄԻՏ

Հավ չելած՝ թառ ա թռնըմ:
ԺԵԱ 213 Վղպ/ԱՇ 17 Աշտ/ՊՎ 113 Վն/ՇԿ 7 Շտխ/ԺԵԱ 183 Մշ/Ս 214 Սլմ

Թև չի հանել, թառն ա թռչըմ:
ԱՇ 27 Աշտ

Հավ չեղի, հավկիթ կածա:
ԱՀ VI, 90 Բլն

Հավ դեռ նոր ա էղե, ղազու (սազ) *հավկիթ կածա:*
ԺԵԱ 170 Ալշ

Ք... չեղած՝ աթար (*ցան*) կըլլի:
ԱՂ 18 Ախց/ԺԵԱ 216 Վղպ

Մուկը չեղած, դդում կը ծակե:
Բ 1898, 200 Կրն

Մուկ չեղած պատ կը ծակե:
Բ 1898, 345 Քղ

Իր գլուխը չի կարում կապի, ուզըմ ա հարսանիքին հարսի գլուխը կապի:
ԱՇ 30 Աշտ/ԹՄԿ 105 Թփլ/ՓՇԱ 106 Շրկ/ԼՄ 1880, 24 Բլն/ԺԵԱ 206 Տվկ/ԺԱԲ 101 Ախց

Խորոզ (*աքլոր*) չեղած՝ կը կանչե:
Բ 1899, 805 Հզր

Կատու չեղած մուկ կը բռնե:
Բ 1899, 478 Կն

Նոր է ոտքի ելեր ռեյվանի (*արագընթաց ձիու քայլք*) քալել կուզե:
Բ 1898 473 Քղ

Ինծանից էլե, ինձ լող ա սորվացնում:
ԱՀ IX, 190 Պլս

Մոր մեկ օրհնենքը՝ օխտը վարդապետի անեծք կը քանդե:
ԱՆ 49 Նխջ

Մերը մած *(շոյել)* ի տվե, աստված բած *(հասակ)* ի տվե:
ՎՍ II, 146 Վն

Մալը *(տավար)* գնա՝ տերը ճետը, որդին գնա՝ ճերը ճետը:
ԺԵԱ 224 Վգպ/ԺԵԱ 242 Օշկ/ՓԾԱ 114 Ծրկ/ԲԱ 10 Ղրբ/ԱՀ XI, 116 Բրչ

Օցը գնաց՝ ճուտը էգնեն, վուրթին գնաց՝ հերը էգնեն:
ԹՄԿ 172 Թֆլ

Մալին տեր, որդուն ճեր:
ԺԵԱ 224 Վգպ/ԱԾ 48 Աշտ/ՓԾԱ 114 Ծրկ/ԼԱ 9 Ալշ/ԱՀ VI, 92 Բլն/ՀԺՀ VII, 110 Վն

Տանը տեր, որդուն հեր:
ՆՆ 530 Ծրկ

Շանը տեր, որդուն հեր:
ԺԵԱ 239 Կլպ

Տղեն որ լավ ըլնի, իրա ճոր տունը կը շինի:
ԺԵԱ 243 Օշկ

Աղեկ տղեն ուր պապուն աղբեր է:
ԱՀ VI, 45 Բլն

Տղեն որ կա, իրան հոր օճախի սունն է:
ՄԹ 44 Ծրկ

Տան մեծը տղեն ա:
ԱԾ 43 Աշտ

Հոր անըմը *(անուն)* աղջկան կը ծախի:
ԱԾ 43 Աշտ/ԼՄ 1880, 33 Բլն/ՓԾԱ 113 Ծրկ

Մոր անունը՝ աղջկան օժիտ:
ՊՀԿ 1667 Զմխ

Տղեն տղա պտի ըլնի, որ ճոր մտից փուշ հանի:
ԱԾ 64 Աշտ/ՓԾԱ 124 Ծրկ

Հոր փեշակը տղին կնիկ ա:
ԺԵԱ 223

Հոր փեշակը տղի համար պսակովի կնիկ ա:
ԱԾ 41 Աշտ

Մինչև ճերը դժոխք չերթա, տըղեն արքայություն չի գտնի:
ՓԾԱ 117 Ծրկ/ԱԾ 25 Աշտ

Էրնակ են տղին, որ ճերը դժոխք կերթա:
ՓԾԱ 103 Ծրկ/ՀԺՀ VII, 109 Վն

Հերը դժոխք, տղեն դրախտ։
ՆՆ 506 Շրկ

Վատ հոր պատիժը, փուչ *(անպիտան)* տղեն ա:
ԳԱ 20 Վղպ/ՓՇԱ 125 Շրկ/ԹՄԿ 165 Թֆլ

Տղեն հորը կը քաշի:
ԳԱ 1 Վղպ

Տղան յա հօրը կ'ելլէ, յա մօրը, յա խաչկնքահօրը։
ՀԱՎ 1892, 183 Տրպ

Յա հարը, յա մարը, յա ծուռ ու մուռ կնքահարը։
ԱՀ IX, 182 Գլս/ԺԱԲ 98 Ախց

Էրեխեն օխտը դամարից (երակ) *մինը կնքավորին կը գցի։*
ԱՀ XI, 113 Բրչ

Տղեն ուր խերն ի, տղեն ուր մերն ի, տղեն քյաչալ (ճաղատ) *ուր խորոխպերն ի։*
ՎՍ I, 137 Վն

Տղեն օր հորն ու մորը չքաշե— գողըծուն կեղնի:
ՄԹ 44 Շրկ/ԼՄ 1880, 55 Բլն

Ըմմեն մարդ էլ յուր հոր տղան ի:
ԺԵԱ 230 Հբ

Որդին հորը կէլլե, աղջիկը՝ մորը:
ԱՆ 42 Նխջ/ՀԱՎ 1891, 301 Տրպ/ՁԲ 59 Զհմ/ԱՀ VI, 74 Բլն/ԱԱ 6 Գլս

Տղեն քեռուն կը քաշե, աղջիկը՝ հորքուրին:
ՀՏՎ 28 Շրկ/ԺԵԱ 244 Ակն

Տղան ի քեռին կէզնի, աղջիկն ի պապ։
ԼՄ 1880, 55 Բլն

Հոր ձենն ասված թեզ *(շուտ)* կը լսի:
ԱԺԲ 88 Քնք

Հոր անեծք կը բռնա:
ԺԵԱ 192 Արծ

Հասկացող որդին հոր աջու աչքն է:
ԳԺԲ 51 Աշտ

Տղեն բեգովլաթ *(անպիտան)* ընի՝ ի'նչ անի հոր մալը, տղեն դովլաթավոր *(ձեռնհաս)* ընի՝ ի'նչ անի հոր մալը:
ՀԺՀ VII, 87 Աստ

Մարդը մարդով, որդին հորով:
ԲԱ 29 Ղրր

Հոր փուղիրը վուրթու համացեց է:
ԹՄԿ 123 Թֆլ

ՀԱՐԱԶԱՏ, ԽՈՐԹ, ՈՐԲ

Ասլանին *(առյուծ)* էգ, որձ չը կա, ջիգրին *(հարազատ)*՝ լաճ *(տղա)* ու աղջիկ:
ՎՍ I, 122 Վն/ՀՏՎ 27 Շրկ

Ո՞ր մատդ կտրես, որ ցավ չը գա:
ՎԱ 38 Վղպ/ՀԱ 256 Ակն/Ս 215 Սլմ

Հինգ մատիցդ որ մեկը կտրես, արուն դուս գուքա։
ՁԲ 61 Զհմ/ԱՀ VI, 89 Բլն

Ո՞ր մատդ կտրեն, որ չը ցավի։
ՓՇԱ 120 Շրկ/ԳԺԲ 51 Աշտ/ԱՆ 55 Նխջ/ԱՀ IX, 189 Գլս

Ջիգյարին ջոմարտություն *(առատաձեռնություն)* չի ըլնի:
ՓՇԱ 122 Շրկ/ԱՀ XX, 109 Ալշ/ԱՇ 58 Աշտ

Դուշմնիդ *(թշնամի)* դուռն ընչի՞ ես կայնե—ջիգրիս խաթեր:
ՀՏՎ 5 Շրկ

Դուշմնիս դռնովն անցա, ջիգրիս խաթրի համար։
ՎՍ II, 137 Վն

Արինը ջուր չի դառնա:
ԺԵԱ 218 Վղպ ԱՇ 8 Աշտ/ԺԵԱ 176 Բլն/ԺԵԱ 168, Ալշ/ՀԱ 205 Ակն

Սուր ի սուր խառնվի, արունը ջուր չը դառնա։
ԱՀ XVIII, 35 Ալշ

Իրանի *(յուրային)* միսը կուտեն, ոսկոռը դեն չեն գցի:
ԱՇ 27 Աշտ/ԹՄԿ 104 Թֆլ/ՄՀ 23 Լո/ՀԺՀ VII, 108

Ղունգը *(եղունկ)* մսիցը պոկել չիլնի:
ԳԱ 12 Վղպ/ԱՆ 34 Նխջ/ՀԱ 211 Ակն/ՈԻՋ 142

Ղնգի ու մսի արանքը չեն մըտնի:
ԱՇ 45 Աշտ/ՄԹ 27 Շրկ

Մարդ իր ղունգը չի բաց անի, միջին թքի:
ՎԱ 30 Վղպ/ԱՇ 45 Աշտ

Ջիգար կա մեր տունը, իմա՞լ *(ինչպե՞ս)* տանի մեր քունը:
ՆՆ 524 Շրկ

Ջիգար կա հրե, ջիգար կա ջրե, ջիգար կա՝ խիստ պարկիկ *(բարկ)* կրակ է:
ՎՍ II, 149 Վն

Մարդի աչքը հանողը իր միսնարինը կըլնի:
ԱՇ 49 Աշտ

Արընտերդ ըլլա, արունեդ ըլլա:
ԱԱ 26 Գլս

Խորթը կը հանի մարդու մորթը:
ԳՎ 137 Վն/ՀԺՀ VII, 81 Աստ

Խորթ մոր եփած կերակուրը անհամ ա:
ԱՇ 34 Աշտ

Խորթ մոր թխած բաղարջ շոր (աղի) *կելնի։*
ՎՍ II, 142 Վն

Խորթ մոր գլուխ ջոջ կելնի:
ՇԿ 12 Շտխ

Խորթ մարը բեռմ' օսկի են արեր, էշն են դրեր, կենե *(դարձյալ)* առնող չէ գնեվեր:
Բ 1900, 579 ԿՄ

Խորթ ու փորթ:
ԳԱ 65 Վղպ

Որբն որ բախտ ունենար, դալը մորեն կուտեր:
ԺԱԲ 81 Ախց/ՇԿ 1 Շտխ

Հեթունն (որբ) *օր խնդա, դալը մորեն կուտե։*
ՀՏՎ 20 Շրկ

Որբը ըսաց. «Ես կը խնդամ». ասված ըսաց. «Հըպը ես ո՞ւրտեղ եմ»:
ԺԱԲ 82 Ախց/ԵԱ 111 Խտջ/ԹՄԿ 158 Թֆլ

Որբը գնաց գողութան, լուսնիակը ամպի տակեն դուրս ելավ:
ԺԱՔ 81 Ախց/ՀՏՎ 20 Շրկ/ԱՀԱ 12 Գլս/ԺԵԱ 245 Ակն

Որբը գողության գնաց, լուսընկան իրիկվընեն ելավ:
Բ 1898, 346 Քղ

Որբին հաց տվող չը կա, խրատ տվող շա՜տ:
ԼՄ 1880, 46 Բլն/ԵՀԳ 112 Եվդ/ԱՀ IX, *192 Գլս/ՓՇԱ 100 Շրկ/ԳՎ 135 Վն/ԱՆ 84 Նխջ/ՎԱ 11 Վղպ/ՀԱՎ 1892, 24 Տրպ*

Վուրփին ումիկ (հույս) *տվող շատ կա, բլիթ տվող՝ քիչ:*
ԹՄԿ 156 Թփլ

Որ էրմու ծառ ծաղկեր, է՞ր կը ծաղկաթփեր:
ԱՀ XVII, *52 Ալշ/Մե 1 Մկ*

Հարի էթում խնդանա, հորով-մորով կը պառի:
ԱՀ XX, *108 Ալշ*

Եթիմը ո՞ր տանե խնդացեր է, որ հիմա պիտի խնդա:
ՀԱՎ 1892, 382 Տրպ

Որբի պահողն աստված է:
ՆՆ 529 Շրկ/ԹՄԿ 157 Թփլ/ԱՀ VI, *80 Բլն/ՋԲ 62 Ջնմ*

Ամեկուն հեր, աստված եթըմու տեր:
ԱՀ VI, *75 Բլն*

Որբին ո՛չ ծեծի, ո՛չ ուշունց (*հիշոց*) տու, հացը ձեռիցն առ, նամբա տու:
ԱՇ 61 Աշտ/ԳԱ 56 Վղպ/ՀԺՀ VII, *79 Աստ*

Որբ զառը թե մեծցնես, բերանդ կը եղոտի, որբ աղին թե պահպանես, բերանդ կը վառի:
ՓՇԱ 120 Շրկ/ԱՇ 20 Աշտ

Պահե էթումը, օր քակե քու տունը:
ԺԵԱ 197 Տրպ/ԷԱ 15 Կրն/ԹՄԿ 72 Թփլ

Եթըմին եղար պահապան, քեզ կանե թափառական:
ԺԵԱ 200 Տրպ

Հորե եթումը եթում չէ, մորե եթումն է եթում:
ՆՆ 507 Շրկ/ԱՆ 19 Նխջ

Որբի օրոցքը կոտրված է:
ԺԱՔ 92 Ախց

Եթումը գլխուն ջուր դրավ, սարերը վռազավ ձուն դրավ:
ԱԳ 19 Շրկ

Որբին հարցուցեր են՝ ինչո՞ւ կուլաս: Ըսեր է. —Ո՞ւր են իմ հարս ու մարս:
ԱԱ 132

Եթիմ աղին ով որ ըլլա ծեծե կու:
ՀԱՎ 1892, 382 Տրպ

Եթըմի էրեսը պինդ կըլնի:
ԱՇ 19 Աշտ

Վուրփին մե բլիթ, են էլ ծակ:
ԹՄԿ 156 Թփլ

Հալխին քապիկ (*փող*), որբին շապիկ:
ԱՆ 11 Նխջ

Որբ տղան իր պորտը ինքը կը կտրե:
ԱԱ 132

ՔՈՒՅՐ ԵՎ ԵՂԲԱՅՐ

Տղեն ձեռ կընկնի, ախպերը ձեռ չի ընկնիլ:
ՀԺՀ VII, *87 Աստ*

Կին ստարեն, տղան իրմեն, աղբեր չը գտնվի:
ԼՄ 1880, 31 Բլն

Ախպեր ախպոր ախպուրն է, որ ծառվընա՝ պաղ ջուրն է:
ԳԹ 121 Սլմ/ԱԱ 4 Գլս

Ախպերը ախպոր միս կուտի, ոսկրները դեն չի քցի:
ԳԱ 16 Վղպ/ԹՄԿ 73 Թփլ/ԱՀ IX, *180 Գլս/ԱԲ* II, *13 Ագլ*

Աղբերն աղբուր միսը ծամից-ծամից, չը կուլ էրիտ (*տվեց*):
ԹՄԿ 65 Թփլ

Ախպերը ախպոր վատը կուզի, մահը՝ ոչ:
Մխ 29 Ձգզ/ԱԲ II, *13 Ագլ*

Ախպերն ախպոր բորը չի ուզի, որ ինքն էլ չընկնի:
ԺԵԱ 217 Վղպ/ԱՇ 9 Աշտ

Աղբերն աղբորն ըսավ, հալա նեստպ (*հաշիվ*) տեսնենք, էլի աչքիս լույսն ես:
ՓՇԱ 90 Շրկ/ԹՄԿ 69 Թփլ

Աղբրուտենի վախտ՝ աղբոր պես, բազարի (*սակարկության*) վախտ՝ էլու (*օտար*) պես:
Մ 1886, 789 Բլն

Երկու աղբեր մեկ գերեզման չեն հավքի:
ՆՆ 494 Շրկ/ԷԱ 8 Ալշ

Պաղտատի (*ընտիր կտոր*) նման շալ, աղբոր պես կռնակ չը գտնվի:
ԼՄ 1880, 51 Բլն

Ախպերն ախփնոց, էրկու ձեռն ծոց:
ՎՄ I, *121 Վն*

Արընտերս ըլլա՝ աղբարս ըլլա:
ԱԱ 26 Գլս

Աղբարը պարուն է, իր տիրուն (*կնոջ*) է:
ՀԱ 204 Ակն

Աղբերն աղբուրը վուր քոմագ անե (*օգնել*), սարը սարին կու դնին:
ԹՄԿ 75 Թփլ

Քիրն առեց՝ աղբեր ունեմ, աղբերն առեց՝ քիր չունեմ:
ԺԵԱ 216 Վղպ/ԳԺԲ 58 Աշտ/ՆՆ 536 Շրկ/ԹՄԿ 167 Թփլ/ԱՆ 22 Նխջ/ԱՀ IX, *191 Գլս/Բ 1900, 618 ԿՄ*

Ախպերն առաց՝ ձիկ քոր չը կա, քորն էրդված (երդվել) *ախպոր արեն:*
ՎՄ I, *121 Վն/ԹՄԿ 67 Թփլ*

Ախպորը պահած քուրը մեռնի, որդուն պահած մարը մեռնի:
ԺԱՔ 107 Ախց

Այխպոր պահած քիրը մեռնի, տեքոր պահած՝ հարսը, փեսի պահած՝ զանքաչը:
ԱՇ 1 Աշտ/ՆՆ 479 Շրկ

Ախպոր տղա՝ ջան տղա, քվոր տղա՝ շան տղա:
ԳԱ 7 Վղպ/ԱՇ 2 Աշտ/ՆՆ 479 Շրկ/ԹՄԿ 67 Թֆլ ԱՀ IX, *180 Գլս/ՀԱ 204 Ակն/*ԱՀ VII—VIII, *487 Ալշ*

Քուր ու քուր, ո՛չ ախպեր ու քուր:
ԱՀ VII—VIII, *505 Ալշ*

Քիրը գնաց քվորանց, հենց իմացավ գնաց հորանց:
ԱՀ XI, *117 Բրչ*

Քուրը մեռնի աղբուր համա, աղբերը մեռնի ուրիշի համա:
ԹՄԿ 166 Թֆլ

ՄԱՐԴ ՈՒ ԿԻՆ: ԱՄՈՒՍՆԱՑԱԾ ԵՎ ԱՅՐԻ

Մարդի շվաք, վարդի շվաք:
ՎԱ 32 Վղպ/ԱՇ 48 Աշտ

Մի փետե մարդը լավ ա, քանց օխտը պողվատի տղեն:
ԱՀ XI, *115 Բրչ*

Մի քոռ մարդը լավ ա, քանց օխտը տեքրը:
ԱՀ XI, *115 Բրչ*

Փթած մարդը լավ է, քանց բեզըրգան վուրթին:
ԹՄԿ 125 Թֆլ

Ախպերը օրական, մարդը հավիտենական:
ՀԺՀ VII, *93 Վղպ*

Ախպերն ընկա, ըխպըհարն *(աղբանոց)* ընկա. մարդն ընկա՝ վարդն ընկա:
ՔՎ 1 Բրդ

Քամակդ արա տղիդ, հաց կե. երեսդ արա մարդիդ, հաց կե:
ԺԵԱ 216 Վղպ/ԺԵԱ 187 Վն

Իրիկ, իրիկ՝ խուգու տնիկ, չամիչ պիրի լցեմ տյուրիկ *(տոպրակ)*:
ՎՍ I, *127 Վն*

Էրիկը սով տարին, հալավը *(շոր)* ցուրտ ամսին:
ԵԱ 111 Խոչ

Տունը խաց, մարդն խալավ:
ՎՍ I, *137 Վն*

Էրկան հացը մեյտան *(հրապարակ)* է, որդուն հացը զընտան է:
ԱՆ 24 Նխջ

Աղեկ կին, չունի գին:
ԺԱ I, *14 ՀԱՎ 1890, 164 Տրպ*

Կնիկդ որ լավ ըլնի, մի էրա հարսանիք, տանդ ամեն օր հարսանիք ա ու հարսանիք. թե կնիկդ փիս ըլնի, մի էրա մեռլատուն, տունդ ամեն օր մեռլատուն ա ու մեռլատուն:
ԳԱ 26 Վղպ/ՀԺՀ VII, *88 Ալշ/ԷԱ 7 Կրն/ԺԵԱ 190 Վն/ԼՄ 1880, 19 Բլն*

Կնիկմարդ կա՝ տուն կը շինե, կնիկմարդ կա՝ տուն կը քանդե:
ԱՆ 25 Նխջ/ԲԱ 24 Ղրբ/ՆՆ 497 Շրկ

Լավ կնիկը տուն ու տիղ է, վատ կնիկը՝ ցավ:
ԹՄԿ 111 Թֆլ

Ամեն կնիկ չի պըտըտիր պարխանան *(պարսպեղ)*, որը չորթան կը շինե, որը թարխանան *(ճաշ)*:
ԱԱ 8 Գշպ

Հո անկնիկ տունը, հո ջրտած ջաղացը:
ԱՇ 39 Աշտ

Ջարկող, թափող կնիկ ու ջաղացք մեկ է. թե ջաղացք կը կշտանա, են էլ կը կշտանա:
ԺԵԱ 177 Բլն

Շեն կենա մեր տնիկ, անուշ կենա մեր կնիկ:
ԺԵԱ 171 Ալշ/ԺԵԱ 190

Տուն թող կնիկ էլնի, թող գեշ էլնի:
ՎՍ II, *151 Վն/ՇԿ 13 Շտխ*

Մեռնի քու կնիկ, ավիրի քու տնիկ:
ԱՀ VII—VIII, *498 Ալշ/Բ 1898, 378 Դրբ*

Ամեն կնիկ կնիկ էղնի, պատեր հըմեն պլիկ *(մետաղե դրամ)* կեղնի:
ԱՀ VI, *77 Բլն*

Ամեն կնիկ կնիկ ըլլի, օխլամուրն (խմոր բացելու փայտ) *ալ էրիկ կուլլի:*
ԺԵԱ 244 Ակն/ԱԱ 8 Գլս

Հըմեն կնիկ որ կնիկ էլնի, ցախավել խաթուն կէլնի:
ՎՍ II, *144 Վն*

Կնիկդ ծեծելու տեղ՝ ֆեսըդ ծեծե, դիր գլուխդ:
ՀԱՎ 1892, 382 Տրպ/ԱՆ 67 Նխջ

Մարթ ու կնգա գուրծը իրգընքումն է շինվում:
ԹՄԿ 134 Թֆլ/ԹՄԿ 76 Թֆլ

Կնիկդ ութիանցի, դու էլ ընդիանցի:
ԱՇ 38 Աշտ

Կնիկդ ինչ գեղեն, դուն էլ էն տեղեն:
ԺԵԱ 291 Տրպ/ԼՄ 1880, 31 Բլն

Իրիկ կնիկ մեկ կողմանեն:
ԱՀ XII, *103 Ալշ/ԼՄ 1880, 21 Բլն*

Մարդը սել *(հեղեղ)* է, կնիկը գյոլ *(լիճ)* է:
ԺԱԲ 105 Ախց/ԱՀԱ 6 Գլս

Մարդ որ կա գետ ի, կնիկ ինոր դեմ բանդ ի (արգելոց):
ՎՍ I, *131 Վն*

Մարդն աղբուր է՝ ծըլծլալեն կը բերի, կնիկը լամբար (արգելոց) *ա, պտի դեմ տա ու պահի:*
ԱՇ 47 Աշտ

Մարթը գուս, դադումը *(վառտակ)* տուն:
ԹՄԿ 139 Թֆլ/ՎՍ I, *131 Վն*

Իրիկ կնիկ կռվեցան, տխմար գիտցավ՝ բաժնվեցան:
ՎԱ II, 141 Վն/ԱՀ VII—VIII, 492 Ալշ

Էրիկ կնիկ կռվան, աշխարհ գիտցավ բաժնվան:
Բ 1898, 301 Խն

Մարդ ու կնիկ կռվեցին, կառուն թոնիրը պցեցին:
ԳԱ 4 Վղպ

Գեշ կնիկ նազ կենա, զինա *(կարծել)* իրիկ նազ *(սիրել)* կենա:
ԱՀ VII—VIII, 489 Ալշ/ԼՄ 1880, 14 Բլն

Ո՛չ կնիկ ունիմ կծան, ո՛չ ձեր ծեծան:
ԱԾ 62 Աշտ/ԺԵԱ 189 Վն

Փառով ու մարխով ալ կնիկ կը խնդացունեն:
ԵԱ 121 Խտջ/ԳԹ 118 Ալմ

Հետին կնիկը կարկտան է:
ԷԱ 9 Ալշ/Բ 1898, 472 Քղ

Իտին կնիկը կարկտան, իտին իրիկ մատխան:
ՎԱ II, 141 Վն

Առջին կնիկ տան կնիկ, հետին կնիկ՝ իրկան կնիկ:
ԺԵԱ 192 Արճ

Առաջի կնգա պաղն անուշ:
ԺԵԱ 218 Վղպ/ԱԾ 4 Աշտ

Կնիկ՝ կը շինը տնիկ:
ԱԴ 1 Սսն

Կնիկը էրկանը կեսն է:
ԱՀԱ 8 Գլս

Խամ ճագին՝ խաս վայլեցնու *(շնորհքով կինը)*:
ԱՆ 35 Նխջ

Համարոտ *(մաքրասեր)* կնիկ-մարդը էրկան վրայեն կիմացվի:
ԱՆ 43 Նխջ

Կնկա ղումաշ ճալավը էրկան օնախը կը մարե:
ԱՆ 55 Նխջ

Անզավակ կինը բարեկամ չէ էրկանը:
ԱՆ 45 Նխջ

Ով չի ծեծել իր կնկանը, նա վա՜յ կը տա իր ծնկանը:
ԱՀ XI, 116 Բրչ

Սիրուն կընկա ծոցը պառկի, գեշ կնկա ձեռի ճացը կե:
ԺԵԱ 215 Վղպ

Էրիկը մեռնողուն կնիկը կառնեն:
Բ 1898, 478 Կն

Կնիկն օր մարդուն խաբել ուզեն, տեղը տալտա *(հովանի)* կենեն:
ՆՆ 503 Շրկ

Կնիկը թանկ ի ուր գլխավորով, տղեն ուր խեր ու մերով:
ՎԱ II, 143 Վն

Էրիկ-կնկա կռիվը մինչև անկողին է:
ԱԴ 17 Սրս

Մարդ ու կին, չարդուկին:
ԱՀ VI, 92 Բլն

Ազապն *(չամուսնացած)* ազապին ճախ *(արժանի)* է, ազապն օրհնությունն ընճախ է *(անարժան)*:
ՓԾԱ 90 Շրկ/ԱԾ 5 Աշտ

Լա էրին *(այրին)*, լա որբերին, օխտը իրկա տե՛րն էլ լաց ըլլի:
ԺԵԱ 239 Կլպ/ԱՀ VII—VIII, 466 Ալշ/ԼՄ 1880, 24 Բլն/ԼՄ 1880, 19 Բլն

Մեմ կարգվողը փոշման էղիլ է, մեմը չը կարգվողը:
ԱՆ 50 Նխջ

Ազապ տղի աչքին ֆարտա *(վարագույր)* կա:
ՀՏԿ 1 Շրկ

Որբերու փեշն էլ իրան տն ա:
ԱՀ XI, 116 Բրչ

ԱԶԳԱԿԱՆՆԵՐ

Աղջկա գեշը չը տեսանք, ճարսի՝ լավը:
ՄԹ 2 Շրկ/ԺԱԲ 101 Ախց

Քողն էրեսին, էրնեկ փեսին:
ԱԾ 65 Աշտ/ԺԵԱ 172 Ալշ

Քողքն էրեսին, էրնե՛կ փեսին. քողք վերուցին, սև դա փեսին:
ԱՀ VII—VIII, 505 Ալշ

Ջըմչմակեր *(քչակեր)* ճարսը չելած տարին կերևա:
ԱԾ 56 Աշտ/ԱՀ XI, 116 Բրչ

Մարդի կշտին ճարսին չեն տսի օշմաղ *(բերան կապելու ջոր)* կարճ ա:
ԱԾ 46 Աշտ

Էրկան քող հարսին, մի ասի լաշմաղդ կարճ է:
ՓԾԱ 103 Շրկ

Հարսի ձեռն ու մերը դռան տակին ա թաղած:
ՎԱ 25 Վղպ/ԱԷ 1894, 263 Ալշ

Փնթի հարսի հերն ու մերը դռան տակին են թաղած:
ԱԾ 41 Աշտ

Հարսի սուզը սեղանն է:
ՀԱ 209 Ակն

Հարսը դառա՝ ղուլ *(ստրուկ)* դառա, թագի-թուլի չուլ *(լաթ)* դառա:
ԱՀ XI, 114 Բրչ

Ամեն մարդ քուն, կենեն *(չահել)* ճարսը զարթուն:
ԱՆ 17 Նխջ

Մեմը նոր տունին, մեմալ նոր ճարսին, ամեն օր մեմեկ բան կը պակսին:
ԱՆ 26 Նխջ

Խարս վեր ձիուն վի՞ր *(ում)* կըռմաթ *(հասանելիք)*:
ՎԱ II, 141 Վն

Հարսը ձգես իր կամքին, կամ դավուլչին կառնեն, կամ զուռնաչին:
ԺԵԱ 202 Տրպ

Մի հարսնանի տունը՝ շեն, երկուսն էլավ՝ կիսաշեն, իրեքը-չորսը՝ թող, փախի մեշեն *(անտառ)*:

ԱՇ 49 Աշտ

Հարսի փեշն իրան դուշման ա:

ԱՇ 41 Աշտ

Զոջ *(ավագ)* խարսին խարսնքուր, պզտիկ խարսին է՞լ խարսնքուր:

ՎՍ II, *145 Վն*

Գեշ օրն ինձի, գեշ հարսը քեզի:

ԵԱ 102 Խոջ

Տանը ուղտ կուտին, հարսին ու աղջկան չի հասնի:

ԹՄԿ 162 Թֆլ

Մլաշ *(նուրբ)* բուրդը՝ հարսը գըզե, աղջիկը մանե. սարթ *(կոշտ)* բուրդը՝ աղջիկը գըզե, հարսը մանե:

ԺԱԲ 101 Ախց

Գիժ աղջիկը խելոք հարս կինի, գիժ հարսը՝ խելոք կին:

ՄԹ 5 Շրկ

Աղջիկ դառար՝ լավ դառար, հարսը դառար՝ ցավ դառար:

ԱՀ XI, *112 Բրչ* .

Հարսին հերանց տուն ասա, ոտ բոբիկ էլ կերթա:

ԺԵԱ 223 Վղպ

Հորանց տունը դաշտ ու մեյդան *(հրապարակ)*, մարթանց տունը խուռը *(խոր)* զնդան:

ԹՄԿ 122 Թֆլ

Փեսի շվաք, փշի շվաք:

ԳԱ 24 Վղպ/ՓՇԱ 125 Շրկ/ԺԱԲ 108 Ախց/ԱՆ 27 Նխջ/Բ 1898, 809 Քղ/ԹՄԿ 172 Թֆլ

Փշի հով, փեսի հով—մեկ է:

ԺԵԱ 180 Բլն

Փշի հով, չէ փեսի քով:

ԱԴ 2 Սսն

Փեսի շուքըն փշին, փշին աղեկ ի քանց փեսին:

ՇԿ 11 Շտխ/ԱՀ VII—VIII, *504 Ալշ/ԵԱ 106 Խոջ*

Տան փեսա—շան փեսա:

ԹՄԿ 161 Թֆլ/ԱՆ 65 Նխջ/Բ 1900, 618 ԿՄ

Փեսա՛, ուշ էկե՝ անուշ էկե:

ԺԱԲ 112 Ախց/Բ 1898, 200 Կրն/ԱՀ IX, *191 Գլս*

Նա՛ *(ոչ)* անփեսեն անանիք *(տնական)*, նա՛ գետատար մուլքն հայրենիք:

ԵԱ 106 Խոջ

Գիշերը քուն, ցորեկն արթուն, փեսաները սիրելի են մարդուն:

ՀԱՎ 1891, 300 Տրպ

Կոտրի քյասեն *(կավե թաս)*, ապրի փեսեն:

ՎՍ I, *130 Վն*

Գրողը մտավ տունը, բոլորը փեսին երեսն աշեցին *(նայել)*:

ԷԱ 3 Կրն

Դուշմանս փեսի աքով *(հույսով)* չը մնա:

ԱՇ 18 Աշտ

Փեսի փիսն էրեսին ա:

ԺԵԱ 229 Վղպ

Ավեր *(անիրավ)* փեսեն աներանց ունեցածը իրանը գիդե:

ԹՄԿ 74 Թֆլ

Հարսը մերանցը, փեսան աներանցը:

Մ 1885, 423 Խրբ

Գիժ հարսը հերանց, գիժ փեսեն աներանց:

ՀԺՀ VII, *78 Աստ*

Թամբալ (ծույլ) *հարսը հա հերանց, թամբալ փեսեն՝ աներանց:*

ԱՇ 26 Աշտ

Անխամ (անհամ) *խարսն ի խերանց, անխամ փեսեն աներանց:*

ՎՍ I, *122 Վն/ՇԿ 8 Շտխ/ԹՄԿ 77 Թֆլ*

Նոր փեսեն անուշ կըլնի, նոր հարսը՝ սիրովի:

ՄԹ 33 Շրկ

Հարսն ու փեսին՝ լիսը փուշ ա, մութն անուշ ա:

ԱՇ 41 Աշտ

Հարսը մերոց, կիսուր ծածկոց:

ԱՀ VII—VIII, *495 Ալշ*

Հարսին թե լիզո՛ւ չունի, կեսրոջն էլ իման *(հայտ)*:

ՎԱ 26 Վղպ/ԱՇ 41 Աշտ

Կեսրար չունեմ, որ ախեմ *(վախեմ)*, կիսուր չունեմ, որ վախեմ, ոտքերս թոնիր կը կախեմ:

ՇԿ 10 Շտխ/ԵԱ 120 Խոջ/ԱՀ IX, *186 Գլս/ՀԱՎ 1892, 183 Տրպ/ԳԹ 118 Սլմ*

Անմեր մանկիկ, անկիսուր հարսնիկ:

ԱՀ VII—VIII, *488 Ալշ/ՎՍ* II, *134 Վն*

Կիսրոջ խաբար վեր խփան, նըլխըթրաց ինգյավ թան:

ՎՍ I, *130 Վն*

Կիսրոջ խաբարն ի պնդուկ, ծալենք, դնենք սնդուկ:

ՎՍ I, *130 Վն*

Հերանց տունը շեն ըլնի, կեր ու կործ, քամրալը ըլնի կեսրանց տունը՝ կեր ու լվա:

ԺԵԱ 295 Վղպ/ԺԵԱ 187 Վն/ԺԱԲ 102 Ախց ԱՀ XII, *97 Ալշ*

Սկեսրոջ ուժը հարսին հերիք է:

ԹՄԿ 152 Թֆլ

Կեսերոջ մեկ ականջը խուլ, մե աչքը քոռ պիտի լինի:

ՆՆ 503 Շրկ

Հարս ու կեսուր կռվեցին, մարդը մնաց քարի արանքին:

ԱՇ 39 Աշտ

Հարսը կեսրոջ ղուլն *(ստրուկ)* է:

ՆՆ 505 Շրկ

Խավը թռավ մսուր, խարս քաշեց կիսուր:

ՎՍ II, *141 Վն*

Տունը տանը կը քաշի, հարսը կեսրը:
ՁԲ 62 Զհմ

Կեսուրն հարսին որ չուզի, ալուր մաղելուս էլ կասի՝ խի՞ ես ետևդ պըտըտում:
ԱՇ 36 Աշտ

Զանքաշի սիրած փեսեն, անոր գրողը կըլնի:
ԱՇ 21 Աշտ

Զոնքչի սիրած փեսին, աները կատե:
ՓՇԱ 102 Շրկ/ԱՀ XI, *113 Բրչ*

Զոնքանչն որ սիրե, բրդուջը կը պահե:
ՆՆ 491 Շրկ

Փեսեկս տուն եկավ, երեսս գուն եկավ:
ԵՀԳ 115 Եվդ

Փեսեն զոնքչի սիրեկանն է:
ԹՄԿ 165 Թֆլ

Զոնքաչը փեսի սիրեկանն է։
ԹՄԿ 98 Թֆլ

Զոնքանչն ու փեսեն, վա՜յ չթթվի քասեն:
ԱՀ VI, *81 Բլն*

Աներ ու փեսեն, վա՜յ չթթվի քասեն։
ԱՀ VII—VIII, *457 Ալշ*

Փեսա ու քենի՝ քյապապ ու գինի:
ԺԱԲ 103 Ախց/Բ 1898, 200 Կրն

Քենու սիրած փեսեն անուշ կեղնի:
ՄԹ 46 Շրկ

Մարդը սրտովը չելավ, տեքորը չեն հանանչի:
ԱՇ 48 Աշտ

Տեգեր պահած հարսը մեռնի, ախպոր պահած քուրը:
ՆՆ 531 Շրկ

Մի հայելին լավ ա, քան օխտը տեքրակինը:
ԱՀ XI, *115 Բրչ/ԺԵԱ 213 Վղպ*

Երկու ներ մեկ տունի մեջ, ամեն օր կազ ու կռիվ:
ԺԱ II, *114*

Ները ներոջը դարտակ օրան է օրեր:
ԱՏ 1927, 144

Ները որ տուն մտնի՝ նիրոջը գետին կը դնե:
ԺԱԲ 96 Ախց

Տալի շուշտակը *(գլխաշոր)* ներթովն ընգավ, հարսի սիրտը պատռեց:
ԺԵԱ 228 Վղպ/ԱՇ 63 Աշտ

Ինչ չես ուզի քրոջդ, կը կամենաս տալոջդ:
ԳԹ 123 Ալմ/ՎԱ II, *139 Վն*

Տնքալուս ինձ կը կանչեն, տըռներգալուս՝ տալներիս:
ԱՇ 64 Աշտ

Օխտը քենակալ մի համփով գնում էն, ասեցին. — Մի մարթ էլ չը կա որ հետը խոսանք:
ԺԵԱ 229 Վղպ/ԱՇ 53 Աշտ/ՆՆ 518 Շրկ/ԹՄԿ 172 Թֆլ/ԼՄ 1880, 20 Բլն/ԱՀ XI, *17 Բրչ*

Օխտը պահանաղ *(քենակալ)* ընտեր են, կենա մարդ չը կա որ խոսինք, կըսեն:
ԺԱԲ 105 Ախց

Քավորը փոխիլ, մեռոնը կոխիլ *(արհամարհել)*:
ԱՇ 65 Աշտ/ԺԵԱ 192 Արծ

Կնքահար ըլալը թանգ է, անուն դնելը բան չէ:
ԱՆ 22 Նխջ

Ամեն զաքան ալ զաքա է, սանամոր զաքան քրքշան է *(փխրուն)*:
ԼՄ 1880, 6 Բլն

Խնամուն յա *(կամ)* բեռ մը փարա, յա բեռ մը սուտ:
ՀԺՀ VII, *90 Ալշ/ԺԵԱ 178 Բլն*

Խնամու սուտ՝ սել մի չը քաշե:
ԺԵԱ 178 Բլն

Խնամու նազը տանիլ չի ըլիլ:
ԺԵԱ 235 Լռ

Խնամու նավը ծանդըր կըլնի:
ԱՇ 33 Աշտ

Խնամի ուշ էկե, անուշ էկե:
ՀԱՎ 1892, 382 Տրպ

Քեռուն մալը *(գույք)* եկյանինն ա:
ԵԱ 111 Խոյ

Հորքրոջմեն կուգա հոր հոտիկ, մորքրոջմեն կուգա մոր հոտիկ:
ՀԱ 209 Ակն

Աղբուր տղին պարնութին *(իշխանություն)* ավին, առաջ իր մամիդին *(հորաքույր)* իշի վրա նստեցրուց:
ԹՄԿ 65 Թֆլ

Հավ թեռով կը թռչի, իսան՝ արխայով *(ազգական)*:
Բ 1899, 642 Խոյ

ԸՆՏԱՆԻՔ-ՕՋԱԽ: ՀԱՐԳԱՆՔ ՄԵԾԻ

Մեծ տուն, մեծ ցավի բուն:
ԱՇ 49 Աշտ/ՓՇԱ 115 Շրկ/ԱՀ XI, *115 Բրչ/ԹՄԿ 137 Թֆլ*

Կեղ գեղի վրա կըլնի, տուն տան վրա չի ըլնի:
ՓՇԱ 97 Շրկ/Բ 1898, 137 Կրն/ԱՆ 62 Նխջ/ՀԱՎ 1891, 300 Տրպ/ԵՀԳ 99 Եվդ/Բ 1900, 564 ԿՄ/ԵԱ 108 Խոյ

Օջախ չեղնի պուհախ:
ԱՀ VI, *100 Բլն/ԱՀ* VII—VIII, *486 Ալշ*

Իմ տանս ծառան եմ, ուրիշին աղան եմ:
ՓՇԱ 105 Շրկ/ԱՇ 30 Աշտ/ԹՄԿ 104 Թֆլ/ԼՄ 1880, 55 Բլն

Մարդը իր տանը հեմ *(և)* աղան է, հեմ խզմեթքյարը *(ծառա)*:
ԵՀԳ 108 Եվդ/ՀԱՎ 1891, 301 Տրպ

Տան տղամարդը իր տան մշակն է:
ԹՄԿ 162 Թֆլ

Վայ են կալի տիրոջ, որ առաջի կամը կով ա լծած:
ԺԵԱ 236 Լո/ԷԱ 3 Ալշ

Կամդ կով լծեցիր, իմացի բանդ բուրդ ա:
ԱԾ 37 Աշտ

Օղլուշաղատիրուչը *(ընտանիքի տեր)* աստուծ իր ռուզղը *(օրական պարէն)* կու ճացնե:
ԹՄԿ 172 Թֆլ

Ինչ զուզե էլը տա, տանտիրուչ աղը շատ կենա:
ԹՄԿ 106 Թֆլ

Աստուծ մահ տա, բաժան-բաժնութին չը տա:
ԹՄԿ 76 Թֆլ

Բաժան-բաժնութինը տուն է քանդում:
ԹՄԿ 82 Թֆլ

Բաժան ճաց մարդու փոր չը մըտա:
ԺԵԱ 176 Բլն

Ինչ տուն որ մեծ չըլնի, մեծ քար տեղը կը դնեն:
ԺԵԱ 294 Վղպ/ՀՏՎ 28 Ծրկ/ԺԵԱ, 183 Մշ/ԱՀ XII, *103 Ալշ/ԼՄ 1880, 47 Բլն/Մ 1885, 423 Ղլթ*

Մեծ չունեցողը մեծ քարի մը տանըշմիշ *(ձգտել)* կ'ըլլա:
Բ 1899, 438 Կն

Թե տունը մեծ ունի՝ մեծին պաշտե, թե մեծըմ չունի՝ մեծ քար ըմ դիր, անոր մեծի տեղ պաշտե:
ԺԱԲ 107 Ախց

Տանը որ մի մենծ չըլնի, տեղը քոթուկ կը դնեն:
ԱԾ 63 Աշտ/ԺԵԱ 242 Օշկ

Մեծ չունիս, մեծ քարին հարցուր:
Բ 1898, 333 Դրք

Մեծ չունիս, մեծ փեթակին հարցուր:
ԱՀԱ 10 Պլս

Ան մարդն ուր մեծ չունի, թող էրթա մեծ կարասն հարցնե:
ՀԱ 204 Ակն

Տան մենձի մե աչքը քոռ պտի էղնի, մե անկանն էլ՝ խուլ:
ՀՏՎ 28 Ծրկ/ԱԾ 49 Աշտ/ԹՄԿ 137 Թֆլ/ԱՀ IX, *188 Պլս*

Մեծի ասած, պստիկի լսած:
ԳԱ 9 Վղպ/ՓԾԱ 115 Ծրկ/Բ 1898 200 Կրն/ԿԾ 5 Ղրբ/ԹՄԿ 134 Թֆլ/ՎՍ I, *132 Վն/Բ 1898, 460 Ղրդ/ԼՄ 1880, 41 Բլն/ԱՀ* VII—VIII, *498 Ալշ/ՀԳ 1895, 1235 Ղլթ/ԺԵԱ 231 ՀԲ/ԱՀ* VI, *97 Բլն/ԺԵԱ 201 Տրպ*

Խոսքը մեծին, ջուրը պուճուրին:
ԳԱ 9 Վղպ/ԺԱԲ 80 Ախց/ՓԾԱ 108 Ծրկ/ԹՄԿ 114 Թֆլ/ԲԱ 36 Ղրբ/ԱՆ 6 Նխջ/ԱՀ XI, *116 Բրչ/ԼՄ 1880, 27 Բլն/ԱՀ* VII—VIII, *493 Ալշ/ՎՍ* II, *142 Վն/Բ 1899, 651 Խն/ՀԱ 208 Ակն/ԵՀԳ 105 Եվդ/Բ 1900, 579 ԿՄ/Բ 1898, 377 Դրք/Մ 1885, 450 Ղլթ/Բ 1898, 809 Քղ*

Խոսք ջոջին (մեծ), *բան պզտիկին:*
ԱՀ VI, *86 Բլն*

Գինին մինձինն է, ջուրը՝ պստըկինը:
ԹՄԿ 86 Թֆլ

Մեծի խոսքին ականջ չանողը սոված կը մեռնի:
ԳԱ 25 Վղպ/ԹՄԿ 138 Թֆլ

Մեծին խոսքը չը մտողը (լսողը), *գըողին դուռը կտրե կու:*
ՀԱՎ 1891, 116 Տրպ

Մենծին չը լսող ջահելի ոտը հա քարին կը գա:
ԱԾ 47 Աշտ/ԺԵԱ 243 Օշկ/ՄԹ 36 Ծրկ

Պզտիկն օր մեծին մտիկ չէնա, յա (կամ) *գլուխը քարին կը զարնա, յա ոտքը:*
ԵԱ 121 Խոյ

Մենծի խոսքը լսողի ոտքը քարի չի գա:
ՓԾԱ 115 Ծրկ

Ան որ անկաճ չէնա մեծին, կ'ընկընա մութ հնեծին (անձրևաջուր):
ԱՀ VII—VIII, *476 Ալշ/Բ 1899, 651 Խն/Բ 1899, 805 Հգր*

Մեծ չը ճանչցողը՝ աստված ալ չը ճանչնա:
ԼՄ 1880, 39 Բլն/ԲԱ 29 Ղրբ

Մինձ մարթը մինձ խիլք կունենա:
ԹՄԿ 138 Թֆլ

Մինձը մինձ փուր *(համբերութլուն)* պիտի ունենա:
ԹՄԿ 134 Թֆլ

Աստված մենծի պակասություն չը տա:
ՓԾԱ 95 Ծրկ

Աստված մենծի շվաքը մարդի գլխից անպակաս անե:
ՓԾԱ 95 Ծրկ

Վենձի *(մեծ)* խոսքը թե լավի էլ ոչ, գեղնին մնալ չի:
ԱՀ IX, *116 Բրչ*

Խոսկը մինձին չին ճիգ դարձնի:
ԹՄԿ 114 Թֆլ

Խոսելիս մեծին խոսքը կտրիլ չեն:
ԲԱ 22 Ղրբ

Քանի պստիկ էի՝ մինձեմեն էի վախենում, իփոր մինձացա՝ պստկեմեն:
ԹՄԿ 166 Թֆլ

Պզտիկին լեզուն կարճ կըլլա:
ԱՀ IX, *189 Պլս*

Մեծը մեծով, պզտիկը պզտըկով:
ԺԱԲ 107 Ախց

Մին ըշխարքում մին իրիգնակ *(արև)* կինի *(կլինի)*, մին տանը՝ մին մեծ:
ԲԱ 30 Ղրբ

Տանը՝ սունը կը պահե:
ՓԾԱ 124 Ծրկ

Մարդ շուն ըլնի, տան պուճուր չըլնի:
ՀԺՀ VII, *96 Վղպ/ԹՄԿ 112 Թֆլ*

Տան մեծ էղածեդ, դռան շուն էղիր:
ԱՆ 52 Նխջ

ՀՅՈՒՐ ԵՎ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հացի կտրածը թուրը չի կտրի:
ԳԱ 15 Վդպ/ՓՇԱ 112 Շրկ/ԲԱ 26 Ղրբ

Թրով չը կտրածը հացով կու կտրվի:
ԹՄԿ 100 Թփլ

Թուրը մեկ կը կտրե, հացը երկու:
Բ 1898, 603 Մփզ

Լեզուն մեկ կը խոսա, հացն երկուս:
ԱՀ VI, *85 Բլն*

Ղոնաղն *(հյուր)* աստծունն ա:
ՊԺԲ 52 Աշտ ԹՄԿ 130 Թփլ/ՀՏՎ 17 Շրկ

Սոխ ու հաց, սիրտդ բաց:
ԳԱ 11 Վդպ/ՓՇԱ 123 Շրկ/ԺԱԲ 83 Ախց/ԹՄԿ 152 Թփլ ՄՀԹ 1859, 414 Լո/Սխ 34 Չգզ/ՀԱՎ 1890, 289 Տրպ/ԱՂ 5 Սսն

Աղ ու հաց, սիրտը բաց:
ԱԺԲ 85 Քնք/ՊԺԲ 43 Աշտ/ԺԱԲ 83 Ախց/ԱԱ 6 Պլս/ԱՀ VI, *75 Բլն/ՇԿ 11 Շտխ/ՁԲ 59 Ձհմ*

Ջուր ու հաց, սիրտը բաց:
ԱՆ 10 Նխջ

Պանիր ու հաց, սիրտը բաց:
ԹՄԿ 149 Թփլ

Գարի հաց, պարզ երես:
ԺԱԲ 83 Ախց

Ղոնաղը տան տիրոջ վարդն ա:
ԳԱ 60 Վդպ/ԱՇ 45 Աշտ/ՓՇԱ 114 Շրկ

Ղոնաղը տան տիրոջ վարդ ու մանուշակն է:
ՄԹ 27 Շրկ

Ղոնաղը տանտիրոջ էշն ա, որտեղ ուզի կը կապի:
ԱՇ 45 Աշտ/ԱԱ 100 Երվ/ԹՄԿ 150 Թփլ

Ղոնաղի խաթրու կատվին հափսա *(փիշտ)* չին տսի:
ԹՄԿ 130 Թփլ

Ղոնաղի խաթրու (սիրուն) *շանը թաթա* (սպառնալիք) *չին տսի:*
ԹՄԿ 130 Թփլ

Ղոնաղը տան տիրոջ խացին չի ըշկա *(նայել)*, երկու ունքի մեշտեղին կիշկա:
ԳԹ 113 Սլմ/ԲԱ 28 Ղրբ

Ղոնաղն եկավ, ղոնաղը գնաց, տեղը դարդակ չմնաց:
ԳԱ 59 Վդպ/ՓՇԱ 112 Շրկ/ԺԵԱ 202 Տրպ

Իրան ոտով եկած ղոնաղը՝ պատիվ չի ունենալ:
ՓՇԱ 106 Շրկ/ԹՄԿ 103 Թփլ/ՎՍ I[1], *141 Վն*

Ինքն իրան եկած ղոնաղի պատիվը պակաս կըլնի:
ԱՇ 30 Աշտ

Անհրավիրել հյուրը փուշի վրա կը նստի:
ԱՏ 1909, 233/ԱԲՋ 4

Ղոնաղը ղոնաղին չէր սիրըմ, տանտերը չխտին էլ *(զուլգ)*:
ԱՇ 45 Աշտ/ՀԺՀ VI[1], *83 Աստ/ՀՏՎ 17 Շրկ/ՀԺՀ* VII, *105 Ղրբ/ԼՄ 1880, 32 Բլն/Բ 1898, 302 Խն/ԺԵԱ 202 Տրպ/ՈՒՋ 140 Ջթ*

Էն տունը քանդվի, որ ղոնաղ չի գա, էն ղոնաղն էլ մեռնի, որ իրիկունը չի գա, առավոտն էթա:
ԱՇ 21 Աշտ

Կենա հուրը *(հյուր)*, կու մնա մուրը:
ԹՄԿ 129 Թփլ

Ղոնաղը որ համփերի, տանտերը հաց կը բերի:
ԱՇ 45 Աշտ

Հյուր պատվողն ու անպատվողը տան տիկինն ա:
ԲԱ 26 Ղրբ

Աղ ու հացին դրուստ չը մտիկ տվողի աչկիրը կու քոռանա:
ԹՄԿ 75 Թփլ

Մե փուր հացը օչովին չի քանդի:
ԹՄԿ 134 Թփլ

Աղ ու հացը քարն էլ կու իմանա:
ԹՄԿ 74 Թփլ

Բարեկամդ շատ արա, ղոնաղխանեդ *(հյուրասենյակ)* մին արա:
ԱՇ 11 Աշտ

Կոտիկ-կոտիկ եղ ունիմ, ամեն մարդու տեղ ունիմ:
ԱՇԳ 74 Արբ

Առաջ հաց, հետո հարց:
ԲՀ 403 Կրն

Տուն իմ տուն չէ, տուն դուռ բացողինն է:
ԱՂ 4 Մշ

ԲԱԺԻՆՔ, ԳԼԽԱԳԻՆ: ՓՈԽ

Աղջիկն օրեկան, բաժինքը տարեկան:
ՀԺՀ VII, *76 Աստ/ԹՄԿ 65 Թփլ/ԺԱԲ 115, Ախց/ՆՆ 480 Շրկ/ԱՀ* VII—VIII, *488 Ալշ/ԵԱ 105 Խտջ*

Կնկա բերած փողը մայա *(դրամագլուխ)* չի դառնա:
ԱՇ 38 Աշտ/ՓՇԱ 110 Շրկ/ԹՄԿ 119 Թփլ

Կնկա բերած փողը՝ հալալ մայա չի դառնա:
ՄԹ 22 Շրկ

Կնգա բերած փուղը՝ փուղութին չի անի:
ԹՄԿ 118 Թփլ

Կնգա բաժնքով մարթ չիս դառնա:
ԹՄԿ 118 Թփլ

Կնգա բերած փողը դռան զանգակ ա, անց ու դարձ անելիս՝ ճկատիդ կը դիպչի:
ԱՀ XI, *114 Բրչ/ՓՇԱ 110 Շրկ/ԹՄԿ 119 Թփլ*

Կնկա բերած մալը ղափուլուղի *(հնաձև դուռ)* կոն է, մարդու կը դիպչի:
ՆՆ 503 Շրկ

Բաժինքը մաշ, հարսը ղումաշ *(ընտիր կերպաս)*:
ՀԺՀ VII, *94 Վղպ*

Ճեհեզով *(բաժինք)* հարսը կերիլ է նե՛մ *(և)* իրեն բերածը, նեմ երկան դատածը:
ԱՆ 84 Նխջ

Աղջկա ղալան *(գլխագին)* մամուն *(հայր)* կը հասնի:
ԺԵԱ 181 Մշ

Փոխը *(փոխարինություն)* յոր տուն ա պահե:
ԳԱ 25 Վղպ/ՊԺԲ 57 Աշտ/ԹՄԿ 164 Թֆլ

Տաք հաց, փոխ հաց:
Ա 1899, 499 Տրտ/ԱԱ 153 Պշպ

Հաց հացին փոխ է:
ԱՀ VI, *90 Բլն*

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ ԵՎ ԲԱՄԲԱՍԱՆՔ

Բերնե-բերան, հազար բերան:
ԳԱ 10 Վղպ/ՀՏՎ 3 Շրկ/ԹՄԿ 82 Թֆլ/ԱՀ VII—VIII, *489 Ալշ*

Լեզվե-լեզու, հազար լեզու:
ԼՄ 1880, 25 Բլն

Բերնե-բերան՝ կելնի գերան:
ՀԺՀ VII, *111 Վն/Բ 1899, 650 Խն/Բ 1898, 445, Դրք/ԱՄ 1886, 74 Սրս/Բ 1899, 805 Հղր*

Բերնե-բերան՝ կ'ըլլա երկան գերան:
ՀԱՎ 1891, 116 Տրպ

Բերնե-բերան՝ կելնի սուն ու գերան:
ՎՍ I, *123 Վն*

Բերնե-բերան — ասեղը գերան:
Բ 1898, 809 Քղ

Էլի բերան, ջվալի բերան:
ԱՇ 21 Աշտ/ՎՍ II, *139 Վն/ՆՆ 520 Շրկ*

Աշխարքի բերան, ջվալի բերան:
ԱԺԲ 85 Քնք/ՀԺՀ VII, *77 Աստ*

Ամեն բերան տոպրակ չի, որ կարես:
ԱՇ 4 Աշտ/ԺԵԱ 282 Ալշ/ԺԵԱ 198 Տրպ

Իրիք օրվա վրեն իրիքը գիդե, իրիք օրվա եդնեն՝ աշխարքը գիդե *(համբավ)*:
ԹՄԿ 106 Թֆլ

Ընչանք մի բան չըլնի, երկու չեն ասի:
ՀԺՀ VII, *94 Վղպ*

Խապար *(համբավ)* կուզա, խապար կը խանի դուս:
ԱԷ 1895, 123 Վն

Եգին *(արագ)* ման գամ, կասեն՝ ծուռ ա, յավաշ *(կամաց)* ման գամ՝ կասեն քոռ ա:
ԱՇ 20 Աշտ/ՓՇԱ 119 Շրկ

Եգին կեթամ՝ գիժ կասեն, կամաց կեթամ՝ շաշ (միամիտ) *կասեն:*
ԱՇ 18 Աշտ

Եգին կեթամ՝ հուշտիկ (թեթևամիտ) *եմ, յավաշ* (կամաց) *կեթամ՝ բշտիկ* (անկյալ) *եմ:*
ԱՇ 19 Աշտ

Զուստ (շտապ) *կերթամ՝ կըսեն խելառ է, կամաց կերթամ՝ կըսեն սամա* (թմրած) *է:*
ԺԱԲ 115 Ախց

Հուշիկ (հանդարտ) *քելիմ, կըսին՝ թուլ ա, շուշուտ քելիմ, կըսին՝ ծուռ ա:*
ԺԵԱ 170 Ալշ

Շտապով գնամ՝ գիժ կօսին, կամաց գնամ՝ էշ կօսին:
ԹՄԿ 146 Թֆլ/ՄԹ 31 Շրկ

Կամաց քալիս՝ քաղցած է կասին, շուտ քալիս՝ կատղած է կասին:
ԱՆ 25 Նխջ

Կամաց երթամ՝ գալված (տարտամ) *կասին, շուշուտ երթամ՝ խեռալ կասին, խաղաղ երթամ՝ ոչինչ չասին:*
ԵԱ 107 Խոջ

Հուշիկ քելիմ կըսին՝ կամկառ (հանդարտ), *շուշուտ քելիմ, կըսին՝ շիթառ* (խելացնոր):
ԱԷ 1894, 263 Ալշ

Ամենուն քով էշուն պոչը չը կտրվիր, որը՝ «կարճ է» կըսե, որն՝ «երկան»:
ԱՀ IX, *180 Պլս/ՀԱ 207 Ակն/ԹՄԿ 105 Թֆլ*

Էլին քովը կովուդ պոչը մի կտրեր. կամ՝ կարճ կըսեն, կամ՝ երկայն:
ԲՀ 404 Կրն

Զավար լցեր մեջ սանդին, կը ծեծա:
ԱԷ 1894, 264 Ալշ/ԱՇ 44 Աշտ

Բուրդ դնում են, բամբակ զզում:
ԱՇ 10 Աշտ/ԹՄԿ 82 Թֆլ

Սոխը քանի կեղվես, կու կեղվըվի:
ՀԱ 213 Ակն/ԱՀ IX, *190 Պլս*

Իրա հացը ուտում ա, ուրիշի վրեն խոսում:
ԳԱ 58 Վղպ/ԱՇ 27 Աշտ/ՓՇԱ 106 Շրկ/ԹՄԿ 104 Թֆլ

Թող իմ փորը կուշտ ըլի, թող ասեն՝ անոթի շուն:
ԱՇ 23 Աշտ/ՓՇԱ 104 Շրկ

Մարթի աչք դուս գա լավ ա, քանց անըմը:
ՎԱ 31 Վղպ/ՓՇԱ 115 Շրկ/ԺԱԲ 118 Ախց/ԵՀԳ 108 Եվդ/ԱՀ VII—VIII, *467 Ալշ/Բ 1899, 650 Խն/ՎՍ* I, *132 Վն/Մ 1885, 451 Ղլթ*

Անկանդ կարե, եռիդ ճգե:
ԱՀ IX, *180 Պլս/ՀԱ 215 Ակն*

Անկաջդ եռեդ քցի, տես ընչե՞ր կը լսես:
ԱՇ 5 Աշտ/ՓՇԱ 92 Շրկ

Փափոսցը տուն կը քանդի:
ԳԱ 22 Վղպ/ԹՄԿ 164 Թֆլ/ԱՀ IX, *191 Պլս/ԱԲ* II, *15 Ագլ*

Քսըր-փըսըրը (բամբասանք) *տուն կը քակե:*
ԺԵԱ 251 Հդկ

Բամբասողը ճղպրի (*ընկուզի*) տոպրակ ա, ինչքան տյուրյուր (*շարժել*) տաս՝ ձեն կը հանի:
ԲԱ 11 Ղրբ/ԳԹ 111 Սլմ

Խալխի սաս-կոսեն ո՞վ կումունջ կացնե:
ԹՄԿ 114 Թֆլ

Բամբասանք չէ, բանն ասանք է:
ՀՏՎ 3 Շրկ/ԺԱԲ 87 Ախց/Բ 1898, 133 Կրն/ԼՄ 1880, 12 Բլն/ԱՀԱ 4 Պլս/Բ 1899, 425 Կն/ՊՀԿ, 1655 Էվր/ԵՀԳ 98 Եվդ/ՀԱՎ 1893, 359

Խոսկի սուտը չի ըլնիլ, սխալը կըլնի:
ՊԺԲ 49 Աշտ/ՆՆ 501 Շրկ/Բ 1899, 696 Թվր

ԳԱՂՏՆԻՔ ԵՎ ԳԱՂՏՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Գիտեցածը ամեն մարդի չեն ասի:
ԱՇ 14 Աշտ/ԲԱ 12 Ղրբ

Ինչոր գիդենան, չին դուս տա:
ԹՄԿ 103 Թֆլ/ԹՄԿ 81 Թֆլ

Բարը վե կալ, տակը դիր:
ԺԵԱ 216 Ղզպ/ՊԺԲ 58 Աշտ/ՓՇԱ 126 Շրկ

Ձայնը տեղը, քարը վրան:
ՀԱՎ 1893, 358 Տրպ/Բ 1898, 472 Բղ

Սատանի անկանը խուլ:
ՀՏՎ 24 Շրկ/ԱՆ 77 Նխջ/ԵԱ 104 Խոյ/Բ 1900, 599 ԿՄ/ՎՍ I, 136 Վն

Տունը մերը, խոսքը մերը:
ԱՆ 9 Նխջ/ՆՆ 432 Շրկ/ԹՄԿ 161 Թֆլ

Աչքովդ տես, փեշովդ ծածկե:
ԱՆ 31 Նխջ

Պղինձը վեր ընկավ չը կոտրվեց, ձենը վեր էլավ:
ԺԵԱ 227 Վզպ/ՊԺԲ 56 Աշտ/ՓՇԱ 122 Շրկ/ԺԵԱ 36 Լռ/ՀԱՎ 1930, 361 Ղրբ/ԹՄԿ 149 Թֆլ

Թասն ընկավ, ձենն էլավ:
ՀՏՎ 9 Շրկ/ԱՀ VII—VIII, 463 Ալջ/ԼՄ 1880, 22 Բլն/ՎՍ I, 126 Վն

Ամանը վեր ընկավ կոտրվեց ոչ, ամա ձենը ամենքը իմացան:
ՄՀԹ 1859, 414 Լռ/ԹՄԿ 69 Թֆլ

Կուժը գլորվեց չը կոտրեց, բայց ձենը եկավ:
ՍԽ 25 Զգզ

Մզրախը (*նիզակ*) ջվալ չի մըտնի:
ՓՇԱ 116 Շրկ/ԺԵԱ 179 Բլն/ՀԺՀ VII, 96 Վզպ

Մզրախը ջվալի միջին չես պահի:
ԱՇ 50 Աշտ

Շուբին (տեզ) ջվալումը չի թախ կենա (թաքնվել):
ԹՄԿ 144 Թֆլ

Մախաթը ջվալը չի պարտկի:
ՆՆ 510 Շրկ

Գետինը ձենը տեղ կը հասցնի:
ԱՇ 14 Աշտ/ՓՇԱ 98 Շրկ

Գետինն անկաձ ունի:
Բ 1899, 478 Կն/Բ 1900, 564 ԿՄ

Պատն անկան ունի:
ԱՆ 31 Նխջ/ԵՀԳ 112 Եվդ/Ա 1889, Ա 48 ՀճՆ

Պատն էլ անկաձ ունի:
ԹՄԿ 149 Թֆլ/ՀԱՎ 1892, 24 Տրպ

Պատերը անկաձ օնեն, խաբար կը տանեն:
ԲԱ 35 Ղրբ

Չորս պատը չորս անկաձ ունի, մարդու խորհուրդը դուս կու տանի:
ԹՄԿ 148 Թֆլ

Թաքուն ցուլ եկողը (*բեղմնավորվել*), աշկարա (*ակնհայտ*) կը ծնի:
ԱՀ XI, 113 Բրչ/ԲԱ 22 Երվ/ԳԹ 118 Սլմ

Թաքուն բանը քառսուն օրվա բելլու (*հայտնի*) կանի:
ԺԵԱ 221 Վզպ

Ակռաքներեն դուրս ելած խոսքը շատ նա ծածուկ, քառսուն օր է:
ԼՄ 1880, 9 Բլն

Սատանի չարուխը (*տրեխ*) մեկ օր կը մաշի:
ՆՆ 525 Շրկ

ՓՈՐՁ, ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ: ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆ: ՄԵՐ-ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշխարհքս տես և ուս է:
ՊԺԲ 44 Աշտ/ԹՄԿ 73 Թֆլ/ՀԱ 268 Ակն/ԱՀ VI, 75 Բլն/ԱՒ 1894, 264 Ալջ/ԱԲ II, 13 Ագլ

Ինչ ցանովի՝ բուսնովի, ինչ տեսնովի՝ սովրովի:
ԱՇ 29 Աշտ/ԺԵԱ 296 Վզպ

Փորձված թանը լավ ա, քանց անփորձ մածունը:
ԺԵԱ 229 Վզպ/ԺԱԲ 82 Ախց/ՄԹ 45 Շրկ/Բ 1898, 378 Դրբ/Մ 1885, 424 Ղլթ

Փորձած թանը, մի՛ տա անփորձ մածնի:
ԳԱ 27 Վզպ/ԱՇԳ 73 Արբ

Քու փորձած թան, մի՛ տար տըրիշի անփորձ մածնով:
ԼՄ 1880, 59 Բլն/ԱՀ XIX, 96 Ալջ

Կեր փորձած թանը, մի՛ ուտի անփորձ մածունը:
ՀԺՀ VII, 82 Աստ

Փորձած սատանեն լավ է, քանց անփորձ հրեշտակը:
ՓՇԱ 125 Շրկ/ԹՄԿ 164 Թֆլ/ԿՇ 7 Ղրբ/ԵՀԳ 116 Եվդ

Չը փորձած ձիու ետևից մի անցնիլ:
ՓՇԱ 121 Շրկ/ԼՄ 1880, 49 Բլն/ՎՍ I, 135 Վն

Չը փորձած ձիու եղնեմեն մի՛ կանգնի:
ԹՄԿ 148 Թֆլ

Չը փորձած մարդից պարտք չանես:
ԲԱ 34 Ղրբ

Չփորձած մարդի սիրտդ բանաս ոչ:
ԲԱ 34 Ղրբ

Օվ քիչ է փորձի, քիչ էլ գիտե:
ԹՄԿ 170 Թֆլ

Փորձած ճարևանը, անփորձ բարեկամա լավ ա:
ԲԱ 41 Ղրբ

Շատ ապրողը շատ բան չի իմանա, շատ ման եկողը շատ բան կիմանա:
ՆՆ 517 Շրկ/ԹՄԿ 146 Թֆլ/ԿՇ 1 Ղրբ

Շատ ապրիլը բան չէ, շատ տեսնիլն է բան:
ԱՆ 61 Նխջ/ԺԱԲ 91 Ախց

Շատ ապրողը շատ բան կու տեսնե:
ԹՄԿ 145 Թֆլ/ԱՆ 48 Նխջ/Աչ IX, 189 Պլս

Մարթ քանի ապրի, շատ բան կու սորվի:
ԹՄԿ 136 Թֆլ

Հեքիմն *(բժիշկ)* են է, որ գըլուխն է էլի:
Աչ VI, 90 Բլն/Աչ VII—VIII, 471 Ալշ

Խալիս *(անխառն)* ոսկին բովըմը բելլու կանի *(հայտնի դառնալ)*:
ԱՇ 33 Աշտ/ՓՇԱ 102 Շրկ/ՀԱՎ 1892, 24 Տրպ

Հարևանի ոչխարը գելը տարավ, ճարևանն իրանին մուղաթ կացավ *(հետևեց)*:
ԱՇ 40 Աշտ/ՓՇԱ 111 Շրկ

Փորձածը նորից չեն փորձի:
Աչ XI, 117 Բրչ/ԳԹ 123 Սլմ

Փորձվածին մի՛ փորձիր:
ԱՆ 31 Նխջ

Ինչկլի մե մարթու ճիգ մե փուք աղ չուտիս, չիս ճանչնա:
ԹՄԿ 106 Թֆլ

Ուստեն *(վարպետ)* են է, որ գլուխըն է էկի:
ՉԲ 62 Չհմ

Սորված չը կայնի:
ԼՄ 1880, 53 Բլն

Սորվուկ ձեռ չկայնի:
ԺԵԱ 480 Բլն

Որ առվովը ջուր ա գնացել, էլ կէթա:
ԱՇ 61 Աշտ/ՊԺԲ 53/ՓՇԱ 94 Շրկ

Մին առու որ ջուր գա, հույս կա, որ մին էլ գա:
ՀԺՀ VII, 84 Աստ/Աչ XII, 101 Ալշ

Սովորին մի պակսացնի, անսովորին մի սովորցնի:
ՓՇԱ 123 Շրկ/ԱՇ 60 Աշտ/ԹՄԿ 155 Թֆլ/Աչ VI, 77 Բլն/ԱԼ 1894, 264 Ալշ/ՎՍ I, 136 Վն/ՀՊ 1865, 1235 Ղլթ/ԱԱ 115 Պշպ

Ոսկոր բերող շունը ոսկոր ալ կը տանի:
ԱՏ 1909, 244

Սորվուկն ու կատղուկը մեկ է:
Բ 1898, 809 Քղ

Սովոր գելն ուտե լավ է, քանց խամը *(անվարժ)*:
ԹՄԿ 153 Թֆլ/ԱՂ 14 Լռ

կուզ սովրավ ի թուզ:
Աչ VII—VIII, 468 Ալշ

Ոչ կռնակդ երկու լաթի սորվեցուր, ոչ փորդ երկու ճացի:
ԼՄ 1880, 48 Բլն

Սովորությունը բնություն կըլլա:
ԱՆ 31 Նխջ

Աշխարքը ոնց բռնես, ընենց էլ կէթա:
ԱՇ 2 Աշտ

Ծեծը գրախտիցն ա դուս եկել:
Աչ XI, 114 Բրչ/ՓՇԱ 108 Շրկ/ԺԱԲ 81 Ախց/ՎՍ II, 151 Վն

Տղան չը ծեծողը ծնկվին կը ծեծե:
ԺԱԲ 81 Ախց/ԱՇԳ 72 Արբ

ՈՒՏԵԼԻՔ-ԿԵՐԱԿՈՒՐ, ՀԵՂՈՒԿ-ԽՄԻՉՔ, ՀԱԳՈՒՍՏ-ՇՈՐ

Հացը՝ սուլթան, ջուրը՝ վազիր, մնացածը՝ գըզիր-մըզիր:
ԺԱԲ 113 Ախց/Մ 1885, 450 Ղլթ/ՀԱՎ 1892, 184 Տրպ

Հաց մարդաճան, ճաց մարդակորուս:
Աչ VI, 88 Բլն/Աչ XX, 108 Ալշ/ՎՍ I, 128 Վն

Շեքերը անուշ է, ամմա՝ ճացին տեղը չըբռներ:
ՀԱՎ 1892, 184 Տրպ/ԱԱ 123 Երվ

Տանը ճաց, մարդուն շոր:
ԺԵԱ 239 Կլպ

Հացի քարվան եկեր ա, թացին՝ չէ:
Աչ VII—VIII, 495 Ալշ

Պատեն ընկնողը չը մեռնի, ճացեն ընկնող կը մեռնի:
Աչ XX, 110 Ալշ

Հացիկ, ջրիկ—կյանք եփ ջանիկ:
ԵԱ 118 Խոջ

Էրկու ջուր, մի ճաց:
ԺԵԱ 294 Վղպ/ԱՀԱ 5 Պլս

Էրկու ջուրը մե հացիմ տեղ կը բռնե:
ԺԱԲ 92 Ախց/ԼՄ 1880, 18 Բլն

Երկու ջուրը մեկ հացի բան կանե:
ԱՆ 55 Նխջ

Ջուրն անուշ է, քանց նռան գինին:
ՓՇԱ 122 Շրկ/ԱՇ 7 Աշտ

Աշնան գինին, գարնան՝ ջուրը:
ԳԱ 61 Վղպ

Ջրի օգուտն էլ շատ ա, վնասն էլ:
ԲԱ 36 Ղրբ

Հաց դրած, բանն անիծած:
ՓՇԱ 112 Շրկ/Բ 1898, 133 Կրն/ԳԱ 12 Վղպ/Աչ IX, 187 Պլս/Աչ VI, 90 Բլն/ԺԵԱ 157 Վն/ԵՀԳ 106 Եվդ

Սուփրեն գցած, բանն անիծած:
ՊԺԲ 57 Աշտ/ԹՄԿ 152 Թֆլ

Անճախ *(անվարձ)* կեղնի, անճաշ չեղնի:
ՀՏՎ 2 Շրկ/Աչ XI, 112 Բրչ/Աչ VI, 75 Բլն/Աչ VII—VIII, 488 Ալշ

Աննախ կուլի (լինել) *աննաց չի ուլիր:*
ԺԵԱ 244 Ակն

Ուր կա հաց ու թան, սուտ է ամեն բան:
ԼՄ 1880, 48 Բլն

Թացան կացած տուն սով չի մտնիլ:
ԵԱ 118 Խոչ

Բրդուն մը թան, կաժե կով մի կթան:
ՀԺՀ VII, *89 Ալշ/ԺԵԱ 208 Բղ/ՎՍ* II, *149 Վն*

Ապուրն ապրանք, հացը պատրանք:
Բ 1900, 563 ԿՄ

Ապուրն ապրանք, սոխը պարծանք:
ԲՀ 403 Կրն

Ապուրն ապրանք է, ալ բանը՝ պարծանք:
ԺԱ I, *40*

Ապուր կեր՝ դուռը ել, փլավ կեր՝ լեռը ել:
ԺԱ I, *40*

Պաղ ապուր, շան կերակուր:
ՀԱՎ 1892, 24 Տրպ

Խավիծ խավլավիծ, պապեն ուտի՝ ընկնի ոտից:
ԳԱ 3 Վղպ/ՓՇԱ 107 Շրկ/ԼՄ 1880, 26 Բլն/ԺԵԱ 183 Վն

Հերիսեն՝ կտրե դսեն *(գրուց)*:
ՀՏՎ 15 Շրկ/ԱՀ VI, *88 Բլն*

Միսը հո միս ա, շորվեն աչքի լիս ա:
ԱՇ 47 Աշտ

Միսը խոմ միս ա, խաշուն աչքի լիս ա:
ՄՀԹ 1859, 414 Լո/ԹՄԿ 132 Թֆլ

Կերածդ ի վռոշ *(ջրապուր)*, կաֆետ *(գլուխ)* ի բոշ *(դատարկ)*:
ԱՂ 17 Վն

Փափեն *(խաշիլ)* ինչկլի *(մինչև)* բուգը, շիլափլավն ինչկլի դուռը:
ԹՄԿ 165 Թֆլ

Իշխան ձուկը՝ Սևանա ծովի ջրով:
ԱՂ 14 Նրզ

Գինի՝ էրմանն *(հայր)* դինի *(հավատ)*:
ԹՄԿ 85 Թֆլ/ՓՇԱ 98 Շրկ/ԳԱ 2 Վղպ

Գինին ծիրուց գավազան է:
ԹՄԿ 84 Թֆլ/ԳԱ 65 Վղպ

Գինի, խմե ու քնի:
ՓՇԱ 98 Շրկ/ԱՇ 14 Աշտ

Որտեղ գինի, էնտեղ քնի:
ԺԵԱ 171 Ալշ/ԺԵԱ 226 Վղպ/ԹՄԿ 158 Թֆլ/ՓՇԱ 105 Շրկ/ԿՇ 3 Ղրբ

Խմիչքին մեկը լավ է, երկուսն բավ է, իրեքն՝ ցավ է:
ԵԱ 100 Խոչ

Մի՛ խմեր քանի մ' հատիկ, որ չեղնիս խալոք ու խատիկ *(խայտառակ)*:
ՀԺՀ VII, *91 Ալշ/ԺԵԱ 188 Վն*

Գինու մի թասը դեղ, մնացածին՝ տեղ:
ՀԺՀ VII, *94 Վղպ*

Գինին անուշ-անուշ կը խմվի, լեղի-լեղի դուրս կելլե:
ՀԱՎ 1892, 382 Տրպ

Գինին մարդու չի մեռցնի, համա շան օրը կը քցի:
ԳԱ 3 Վղպ/ՀԺՀ VII, *78 Աստ*

Գինովը իր յա *(կամ)* հարը լացնե կու, յա մարը:
ՀԱՎ 1892, 382 Տրպ

Գինովին յա լացը կուգա, յա շ...:
Մ 1886, 45 Տրպ

Գինովին ձեռք մի զարնեք, ան ինքնիրեն վար կընկնի:
ՀԱՎ 1893, 358 Տրպ

Գինով մարդն ինքզինք ամենեն խելացի կը կարծե:
ՀԱՎ 1892, 382 Տրպ

Գինիին հարցուցին. — Ավրա՞ծդ շատ է, թե շինածդ: Ասաց. — Շինածս չի գիտեմ, ավրածս համրանք չունի:
ԱԱ 36

Գինի խմողը մեյ դան *(անգամ)* կը սարխոշնա *(հարբել)*, խմացընողը՝ հազար դան:
ՎՍ II, *136—137 Վն*

Նիսիա *(ապառիկ)* գինի խմողը էրկու հետ կը հարբի:
ՀԺՀ VII, *96 Վղպ/ՀՏՎ 27 Շրկ/ԺԵԱ 198 Տրպ*

Նիսիա գինին էրկու չեր (անգամ) *կու հարբեցնե. մեկ՝ խմելիս, մեկ էլ՝ փողը տալիս:*
ԹՄԿ 142 Թֆլ

Իծին գինի են տվել, գնացել գիլի հետ կռիվ է արել:
ԺԵԱ 211 Վղպ/ԱՇ 29 Աշտ

Խենթը գինովեն վախցեր է:
Բ 1900, 579 ԿՄ/ԱՀ IX, *185 Գլո*

Գժի հախից հարբածն ա գալիս:
ԱՂ 21 Լո

Հարբելու վերջը փոշմանություն *(զղջում)* ա:
ՄԹ 25 Շրկ

Խմելուս՝ հա՜յ-հա՜յ, հաշվումը՝ վա՜յ-վա՜յ:
ԺԵԱ 239 Կլպ/ԿՇ 3 Ղրբ

Գինի, րակի (օղի)*—հա՜յ-հա՜յ, հասապ, քիթապ* (հաշիվ)*—վա՜յ, վա՜յ:*
ԼՄ 1880, 15 Բլն

Գլոխը տաքցավ՝ ճեպը *(գրպան)* կը պաղի, ճեպն որ տաքցավ՝ գլոխը կը պաղի:
Բ 1898, 809 Բղ

Արաղ խմես՝ լավ բան չի, գինի խմես՝ խաղ կանչի:
ՄՀ 21 Լո/Բ 1900, 618 ԿՄ

Գինի ա՝ թան չի, ամեն մարդի բան չի:
ԲԱ 12 Ղրբ

Փունջը *(խմիչք)* մունջին պյուլպյուլ *(լեզվանի)* կանե:
ԱՆ 30 Նխջ

Ամեն ինչի մերը ձագ կը բերե, սրա *(խմիչքի)* ձագը մեր կը բերե:
ՓՇԱ 91 Շրկ

Արաղը՝ փուրումը կու տա վարաղը *(ոսկեզօծություն)*:
ԹՄԿ 74 Թֆլ

Ոտղին *(արաղ)* իծու փորն էլ լցնես՝ կոտոշները շաբաշ կը կանչեն:
Աէ VI, 97 *Բլն*

Մարդն ի ճալավ, էշն ի փալան:
*Բ 1898, 200 Կրն/ԺԱԲ 86 Ախց/ՆՆ 510 Շրկ/ԼՄ 1880, 38 Բլն/ՀԱ 210 Ակն/*Աէ VII—VIII, *462 Ալշ/ԱԱԳ 1855, 164 Պլս/ՀԱՎ 1891, 116 Տրպ/Բ 1899, 424 Կն*

Էշը փալանով, մարդը հալավով:
ԵՀԳ 102 Եվդ

Էշին փալան, մարդուն հալավ:
ՎՍ I, *125 Վն/ԹՄԿ 104 Թֆլ*

Շոր տուր՝ շնորհք տամ, հաց տուր՝ ռանգ *(գույն)* տամ:
ԱՇ 52 Աշտ/ԹՄԿ 146 Թֆլ

Շոր տու՝ շնորհքի գամ, հաց տու՝ ռանգի գամ:
Աէ XI, *115 Բրչ*

Շո́ր տու՝ շնորհքի գամ, հա́ց տու՝ խելքի գամ:
ՀԺՀ VII, *96 Վղպ*

Շոր տուր՝ շնորհքի գամ, հաց տուր՝ ուժի գամ:
ՆՆ 518 Շրկ

Շուր տո՛ւ՝ շնուրքի գամ, հաց տո́ւ՝ ուշկի գամ:
ԹՄԿ 146 Թֆլ

Խալավ *(հագուստ)* մարդուն քելք կը պիրի, կնիկ մարդուն խելք կը պիրի:
ՀԺՀ VII, *109 Վն*

Փարեն (փող) *մարդու խելք կը բերի, խալավ մարդու քելք կը բերի:*
ՎՍ II, *152 Վն*

Շորն ասաց.— Դու ինձ պահի բողչամիջին *(կապոցի մեջ)*, ես քեզ պահեմ մարդամիջին:
ԺԵԱ 226 Վղպ/ՀՏՎ 6 Շրկ/ԵԱ 12 Ալշ/ԱԲ II, *15 Ագլ/ՓՇԱ 100 Շրկ/ԺԵԱ 234 Լո/ԿՇ 2 Ղրբ/ԹՄԿ 89 Թֆլ/*Աէ VI, *83 Բլն/ՁԲ 60 Ձհմ*

Լաթը պահի պողչան, որ տանի քեզ պաղչան:
ԱՏ 1927, 144

Ծալած շորն ինքն իրան կու մաշվի:
ԹՄԿ 116 Թֆլ

Նորը մաշ, հինն արևաբաշխ:
*ԼՄ 1880, 44 Բլն/*Աէ VII—VIII, *491 Ալշ*

Մարդին մարդ շինողը շորն է:
ԱԺԲ 89 Քնք

Շորը շնորհքի համար է:
ՓՇԱ 119 Շրկ

Որքան կ'աղքատնաս, շախս *(շքեղ)* հագիր:
ԼՄ 1880, 48 Բլն

Մարգուս կարողությունը հագուստովք կու իմացվի:
ԹՄԿ 136 Թֆլ

Լենին հար կա, նեղին՝ հար չը կա:
*ԱՇ 33 Աշտ/ՓՇԱ 107 Շրկ/ԹՄԿ 111 Թֆլ/*Աէ IX, *184 Պլս/ՎՍ* II, *141 Վն*

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ, ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Սաղություն *(առողջություն)*՝ սուլթանություն:
ԳԱ 24 Վղպ/ԹՄԿ 153 Թֆլ

Սաղութիւն՝ սուլթանութիւն, մի աւեք կա աղքատութիւն:
ՓՇԱ 122 Շրկ

Սաղ ըլնեմ, Բաղդադ ըլնեմ:
ԳԱ 31 Վղպ/ԹՄԿ 154 Թֆլ

Մերը որ ուտի եղեղեն, տղան կըլի՝ խրեղեն:
ԳԹ 116 Սլմ/ԵԱ 113 Խոջ

Բանը ծնունդը չի, բանը սնունդըն ա:
ԳԱ 65 Վղպ/ՀԺՀ VII, *81 Աստ*

Հիվանդի աչքը դռանը կըլնի:
*ԳԱ 32 Վղպ/ԵԱ 115 Խոջ/*Աէ IX, *187 Պլս*

Հիվնդի անկը դուռը կուլի:
ԹՄԿ 122 Թֆլ

Հիվանդին անկածը չորս կըլլա:
ԱՆ 36 Նխջ

Հիվանդն էն ա, որ չամիչը օխտը տեղից ա կծում:
ԱՇ 39 Աշտ

Հիվանդին գեշն էն ա, որ անկողինը կը թողա, բարձին կը պառկի:
ԱԱ 95

Հիվանդը չէ հիվանդ, հիվնդի տերն է հիվանդ:
*ՀՏՎ 15 Շրկ/*Աէ VII—VIII, *495 Ալշ*

Լավ է հիվանդը, քան գհիվանդկալը:
ՀԱ 207 Ակն

Մարդի ինչտեղը ցավեց, հոգին էնտեղն ա:
*ՓՇԱ 115 Շրկ/ԱՇ 49 Աշտ/ԹՄԿ 139 Թֆլ/ԱՆ 40 Նխջ/ՀԱՎ 1892, 383 Տրպ/*Աէ IX, *188 Պլս/*Աէ VI, *93 Բլն*

Ցավը գուքա վազե-վազ, դուրս կը գնա՝ նազե-նազ:
ՄԹ 48 Շրկ

Ցավի մտնելը հեշտ ա, դուս գալը դժվար:
ՄԹ 45 Շրկ

Ցուրտը բաթմանով (5—10 կլգ չափ) *մտնում ա, մսխալով դուրս գալիս:*
ԲԱ 41 Ղրբ/ՈԻՋ 139 Ջթ

Հիվանդութիւնը սելով տուն կէհա, մսխլով՝ դուս գո՛ւքա:
ԹՄԿ 122 Թֆլ

Հիվանդութիւնը դմակ-դմակ կը մտնի, դանակ-դանակ դուս կը գա:
ՀԺՀ VII, *83 Աստ*

Հիվանդութիւնը գալուս խաբարդ չինի, գնալուս խաբարդ կ'ընի:
ՀԺՀ VII, *83 Աստ*

Ցավը իր գլուխը լուս կու գցե, թե վուր դուն վրետ չը դրիր:
ԹՄԿ 163 Թֆլ

Ցավը թեզ դուրս կը գա, թե որ չը ցանցընես:
ՓՇԱ 125 Շրկ

Օրը մթնանա, ցավը շատանա:
ԹՄԿ 170 Թֆլ

Ատամը կը հանե անդամը:
ՓՇԱ 95 Շրկ/ՎՄ I, 121 Վն/ԺԵԱ 210 Վգպ

Կուզե՛ս ատամի ցավեն ազատվիս, արմատը արեգակին ցույց տուր:
ԺԵԱ 202 Տրպ/ԳԱ 60 Վգպ

Բիչիկ ցավիկ, անուշ մահիկ:
ՀԱՎ 1891, 300 Տրպ

Բչուկ ցավիկ, թեզով մահիկ:
ԵՀԳ 116 Եվգ

Անճար ցավի դեղը գերեզմանն ա, անճար հիվանդի բժիշկը՝ մահը:
ԲԱ 9 Երվ

Երկար հիվանդությունը մահ կը բերե:
ԱԱ 47 Պշպ

Ճլերքը *(թոքախտ)* ջուրը վուր կու պղտորվի, էլ չի ապրի:
ԹՄԿ 131 Թֆլ

Տնքալը որ չլնի, հիվանդը հիվանդ չէ:
ՓՇԱ 125 Շրկ

Ցավն անգան ունի:
ԹՄԿ 163 Թֆլ

Հիվանդացա՝ չը մեռա, ուզյուլմիշ էղա՝ *(կրկնեցի)* մեռա:
ՀԺՀ VII, 82 Աստ

Ցավը ցավագարին կը բռնի:
ԱՀ XI, 116 Բրչ

Ցավին աղեկը չըլլար:
ԱՀԱ 14 Պլս

Ցուրտը տարած տեղը կրակին չեն անի:
ԱԺԲ 91 Քնք

Խռա *(հիվանդոտ)* ղսմին *(սատակ)* ուշ կը մեռնի:
ԵԱ 109 Խոչ

Դուրս ես տանում մրսում ա, տուն ես բերում՝ թ... ա:
ԱՂ 26 Մն

Մարդիս իշտահը ատամի տակին ա:
ԳԱ 5 Վգպ/ՓՇԱ 106 Շրկ/ԹՄԿ 101 Թֆլ/ՀԺՀ VII, 99 Ղրմ/ՈՒՁ 140 Ձթ

Գլուխդ պաղ պահե, ոտներդ տաք:
ՄԹ 5 Շրկ

Գլուխդ պաղ, փորդ թուլ, ոտքդ տաք պահեցիր, հեքիմ (բժիշկ) *էղար, գնացիր:*
ՀԱՎ 1892, 183 Տրպ

Եղ՝ փորի դեղ:
ԵԱ 114 Խոչ/ԳԹ 116 Ալմ

Ցրտից վախեցի, որ ցավ չը տեսնես:
ՄԹ 45 Շրկ

Երկու ձեռք՝ մեկ գլխու համար է:
ԵԱ 113 Խոչ

Ծանրի նստած տեղը աղույտ *(թունավոր)* կելնի:
ՎՄ II, 145 Վն

Մանր ռոռվին *(հղի)* ավելը տու, հետնեն երթա:
ԵԱ 109 Խոչ

Միրան մին կեր, խնձոր՝ երկու, գամբուլ՝ քանի փորդ տանի:
ԱՇ 35 Աշտ

Տղան ջուրը մեծնա կու, ձուկը՝ ծովը:
ՀԱՎ 1892, 183 Տրպ

Ափ մը ջուր, ափ մը լույս *(սառը ջուրը աչքերին օգուտ է)*:
ԱՆ 11 Նխջ

ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ: ԶԱՆԱԶԱՆ ՎԱՅՐԵՐ ԵՎ ՆՐԱՆՑ ԲՆԻԿՆԵՐԸ

Շունը շինականի պահապան ընկերն է:
ՎՄ II, 147 Վն

Լավ շունը գեղացու արքնեկն ի (գործակից):
ՎՄ II, 141 Վն

Լավ շունը տան պահապանն ի:
ՎՄ II, 141 Վն

Շան տիրասիրությունն ու հավատարմությունը գոված են:
ԲԱ 32 Ղրր

Շունը հավատարիմ ա, կատուն՝ գող:
ԲԱ 32 Ղրր

Կատուն կեղծավոր կըլնի:
ԳԱ 22 Վգպ

Ամեն մարդ առավոտյան ա լըվացվում, կատուն՝ իրիկունը:
ԲԱ 8 Ղրր

Լավ ձին անգին ա, վատը՝ պատին:
ԲԱ 20 Ղրր

Ձին ճանչըցիր քալվածքեն, իսկ աղջիկը՝ նայվածքեն:
ԱՆ 24 Նխջ

Աղեկ տղին մեկ խաբար, աղեկ ձիուն մեկ զանգու *(ապանդակ)*:
ԱՀ XII, 95 Ալշ

Էշը մնա — բզե, գնա. ձին մնա — թող, գնա:
ՄՀ 21 Լռ

Էշն անառակ ի, ջորին առանց քուռակ ի:
ՎՄ I, 125 Վն

Կինս կուտամ, ջորիս չիմ տա:
ԵԱ 103 Խոչ

Էծը ստանա կըլնի:
ԱՇ 21 Աշտ/ԹՄԿ 94 Թֆլ/ԱԱ 3 Պլս

Էծը սատանի հորողբոր տղեն է:
ՓՇԱ 102 Շրկ

Գարնան գառն ա գովական, աշնան՝ հավը:
ԱՇ 13 Աշտ/ՓՇԱ 97 Շրկ/ՎՄ II, 136 Վն/ԳԱ 58 Վգպ

Աշնան հավը եղոտ կ'ըլլա:
ՀԱՎ 1891, 301 Տրպ

Հավը թառեն ղոնաղը կը նամբե,
կովը նախրեն չի նամբե:
ՆՆ 505 Շրկ/ԱՀ VII—VIII, *495 Ալշ*

Բուղեն *(ցուլ)* նախրի կեսն ա:
ԳԱ 2 Վդպ

Եկավ սովը՝ դեմ ընկավ կովը:
ԱՂ 26 Լռ

Լավ եզն ու լավ մարդը գեղին
նամար ա:
ԵԱ 114 Խաչ

Եղվարդցին խոսքով ելավ, ցելը
(վարած արտ) ջուրը տարավ:
ԱՇ 18 Աշտ

Ծվստան՝ քյանձ Ոստան, Ոստան
բարձր ի քյանձ Ծվստան:
ՎՍ II, *143 Վն*

Շատախցի՝ շա՛տ խելացի:
ՇԿ 10 Շտխ

Ուրիշ տեղ՝ մեկ-մեկ ծուռ *(խենթ)*,
մշեցիք մեծ ու պզտիկ ծուռ:
ԺԵԱ 183 ՄՇ

Զ

ՀԱՎԱՏԱԼԻՔ ԵՎ ՍՆԱՀԱՎԱՏՔ

ՄՆԱՀԱՎԱՏՔ ԵՎ ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄ

Չար աչքը քարն էլ ճաքացնում ա:
ԲԱ 34 Ղրբ/ՀԱՎ 1892, 383 Տրպ/ՈՒՋ 142 Ջթ

Աչք զառույնեն *(աշխարհ)* ա կերել:
ԱՀ XIX, 97 Ալշ

Երկու աչքը մեկ գրողի բադալ *(համահավասար)* է:
ՓՇԱ 101 Տրկ

Երկու աչքը մեկ գրողի բան կանե:
ԱՆ 52 Նխջ/ՎՍ II, 139 Վն

Էրկու աչք մեկ գրող ա:
ԱԷ 1894, 200 Ալշ

Օխտը աչքը մեկ գրողի բադալ է:
ՆՆ 518 Տրկ

Սատանեն մեռլից փախ ա *(խուսափող)*:
ԱՇ 59 Աշտ/ՓՇԱ 122 Տրկ

Սատանան խառնած թնարեն կել-լե:
ԺՍԲ 92 Ախց

Էծը սատանի սանահերն ա:
ԱՇ 23 Աշտ

Էծը սատանա կելնի, սատանի մազ ունի:
ՎՍ 139 Վն

Էծու մազի մեջ սատանեն ի բոն գրե:
ՎՍ 139 Վն

Ուլ տեսած՝ սատանա տեսած, երկուսն էլ մի բան է:
ՓՇԱ 120 Տրկ

Երազում ու տեսնողը սատանի հրաստ կը գա (ճանդիպել):
ԱՇ 23 Աշտ

Ծննդկան անեծք մարդու չի մնա:
ՇԿ 8 Շտխ

Ծըծռնըկան անեծքն վեր մարդու չելնի:
ԳՎ 138 Վն

Ծիծեռնակը տանը շինութեն ի, ծիտը տանը ավերութեն ի:
ԺՆԱ 188 Վն

Ծըծռնըկան ավերս գնա Պաղտատ խարցու:
ԳՎ 137 Վն

Կատուն թաթիկներովը երեսը լը-վաց, գիտցիր որ թաթավ *(անձրև)* պիտի գա:
ՀԱՎ 1892, 183 Տրպ

Կատուն Քրիստոսի աղլուխն է:
ԹՄԿ 119 Թփլ

Օրը գնացած, խաթեն *(փորձանք)* մնացած:
ԺԵԱ 229 Վգպ/ԱԾ 53 Աշտ/ԹՄԿ 169 Թֆլ

Օրը կերթա, խաթեն չի երթա:
ՀՏՎ 31 Ծրկ/ԱՀ IX, 192 Պլո/ԵՀԳ 117 Եվդ

Օրը կեհա, օրվա շառը (պատուհաս) *չի գնա:*
ԹՄԿ 172 Թֆլ/ՊՎ 144 Վն/ԱՀ VII—VIII, 505 Ալչ/ԱՀ VI, 100 Բլն

Ով կիրակին կիրակմուտ չպախի՝ մըջ դժոխքի կրակին մաշի:
ԱԷ 1895, 162 Վն

Ով որ էվրե (ավերի) *էն կիրեկին, հեգին կէրի վառ կրակին:*
ՊՀԿ 1654 Էվր

Ով կիրակին փետ կը տաշե, հոգին դժոխքը կը մաշէ:
ԺԱԲ 87 Ախց

Ով որ կիրակի իրկունն ալյուր մաղա՝ ազիզ որդին հեռը թաղա:
ԵԱ 111 Խոջ

Ձախ ձեռով հաց ուտիլը՝ ջանին չի կպչի:
ԹՄԿ 129 Թֆլ

Ձախ ձեռով հաց չին ուտի, փորը չի կշտանա:
ԹՄԿ 129 Թֆլ

Գիշերվա սաբրը *(փռշտոց)* խեր ա:
ԹՄԿ 84 Թֆլ

Գիշիրը սուփրեն չին թափի տա:
ԹՄԿ 84 Թֆլ

Երազ կա օրն ա կատարվում, երազ էլ կա՝ տարին:
ԲԱ 14 Երվ

Երազն առաջնախոս ա:
ԱՂ 2 Կրվ

Ամանդ լպստի, որ կնիկդ սիրուն ըլնի:
ԳԱ 56 Վգպ

Ամանիդ տակը լպստի, որ նարսանքիդ բուք չանի:
ԳԱ 65 Վգպ

Ծրագի քինքն առնողը արքայություն չէրթա:
Բ 1898, 333 Դբք

Ղսմաթի *(հաջողություն, բախտ)*, ճամփեն կապիլ չեն:
ՊԺԲ 52 Աշտ

Էրեխի ղունգն ու մազը մե տարի չին կտրի:
ԹՄԿ 94 Թֆլ

Հանք *(հանելուկ)* մի՛ ըսե, թանկութեն կըլլի:
ԺԱԲ 91 Ախց

Կեսօրին կաթ բերողի երեսը մի տենա:
ԳԱ 24 Վգպ

Մանի տոնին, մանի Զատկին, մի՛ մանի Բարեկենդանին:
ԱՀ XI, 115 Բրն

Գըբացին խափող չի լինի:
ԱԾ 15 Աշտ

Ճվոտը դուս, մարտը նես:
ՄԹ 33 Ծրկ

Ձեռքդ կը կեռա *(քոր գալ)* խըսմեթ պիտի գա:
ԱՀԱ 10 Պլո

Ջուր լի՛ց թթուն, մարդ կուկյա տուն:
ՎՄ I, 136 Վն

Դարտակ կուժ եկավ առաջս՝ բանըս ձախ պըտի էրթա:
ԱԾ 18 Աշտ

Հին ճողլաթ *(խանձարուր)*, տան գեոլվեթ *(հարստություն)*:
Փ 1878, 289 Ախք

ԲԱԽՏ ԵՎ ՃԱԿԱՏԱԳԻՐ

Երեսին մի տնիկ անի, բախտին տնիկ արա:
ԱԾ 19 Աշտ/ԹՄԿ 94 Թֆլ

Բախտը իրան-իրան գուքա:
ԹՄԿ 82 Թֆլ

Թե բախտ է գրած, լագլագի (արագիլ) *ձիով գուքա:*
ԹՄԿ 100 Թֆլ

Խըսմեթ ըլա նը՝ Հինդեն կուգա, չըլա նը՝ ձեռքեդ կերթա:
ԱՆ 21 Նխջ

Դուն քուն, բախտըդ արթուն:
ԱՀԱ 5 Պլո/ԱՀԳ 73 Արբ/Բ 1898, 315 Քղ

Ինքը քուն, բախտն արթուն:
ԵՀԳ 104 Եվդ/ԺԵԱ 168 Ալչ

Մարթս քուն, բախտը զարթուն:
ԱՀ XI, 115 Բրն

Դուն քնուկ, գաթադ նախշուկ:
Բ 1898, 133 Կրն

Բախտ ունեցար՝ լեռ քարի վրա էթաս կը կանաչի:
ԱԾ 11 Աշտ/ԺԵԱ 256 Լռ

Տախտես էրթամ, բախտես գո՞ւ *(ուր)* էրթամ:
ՎՄ II, 150 Վն/ՄԵ 5 Մկ

Բախտից փախչող, թախտից փախչող:
ԱԾ 10 Աշտ

Բախտը լավը տամ ա *(տալիս է)* վատին, վատը՝ լավին:
ԲԱ 11 Ղրբ/ԱԾ 32 Աշտ/ԱՀ VII—VIII, 487 Ալչ/ՓԾԱ 107 Ծրկ/ԱՆ 64 Նխջ

Բախտը գեշին (ագեղ), *զարդ խոբոտին* (գեղեցիկ):
ՎՄ II, 135 Վն

Անբախտ մարդ ծովերն էլ էրթա կը ցամաքին:
ԱՀ XIX, 97 Ալչ

Ծովը կերթա, ծարավ կդառնա:
ՎՄ II, 132 Վն

Ջրի վրա գնացինք, ծարավ հետ էկանք:
ԹՄԿ 151 Թֆլ

Էն թալեհն (բախտ) *ունինք, որ վազող ջրին էրթանք՝ կը կտրի:*
ՆՆ 492 Ծրկ

Աղբյուրն էրթա, չուրը կը ցամքի:
Բ 1898, 701

Կարկուտը ծեծած տեղը կը ծեծե:
ՓՇԱ 109 Շրկ/Մհ 22 Լռ/ԳԱ 4 Վղպ

Մենք զողութան էլանք, լուսնկան առջի իրիկվընե ծագեցավ:
Աշ IX, 188 Պլս/ԱՆ 83 Նխջ/Աշ XII, 101 Ալշ/Եհգ 109 Եվգ/ԳԹ 110 Սլմ

Մենք նրագլիս ունենանք, իշի պոչն էլ լիս կը տա:
ԱՇ 48 Աշտ

Մենք որ ծախու ձեթ ունենանք, իշուն անկճները լուս կուտան:
ԺԱԲ 93 Ախց

Բախտին անիվը միշտ կը դառնա:
ԱշԱ 4 Պլս

Ամեկի ձին իր բախտի կորա (*համեմատ*) կը փախնի:
ԼՄ 1880 5 Բլն

Որին աստղն շիրին (*պայծառ*) ա, որին՝ քոր (*կույր*):
ԽԱ 109 Խոյ

Ում բախտը ծովեց, նրա ձին ախոռըմը էշ կը դառնա:
Աշ XI, 116 Բրչ

Բեբախտ (*անբախտ*) մարդու ձին շատ չփախնի:
Աշ VI, 78 Բլն

Անբախտին կատուն ա սիրըմ:
ԱՇ 1 Աշտ

Բախտ գա՝ փող գը մաղը, բախտ գա՝ ալուր կը շաղը:
ԱՂ 3 Սսն

Մարդի աչքը փուչ ըլնի, թաք բախտը կտրուկ ըլնի:
ԱՇ 47 Աշտ

Մարդուն թող բախտ էղնի, թող մեկ աչք չէղնի:
ԼՄ 1880, 42 Բլն

Քաչալ մարդը լավ բախտ կունենա:
ԳԱ 2 Վղպ

Շան բախտը ոտի տակին կըլինի:
ՀԺՀ VII, 96 Վղպ

Տելվեքը (*ունեցվածք*) էկած ժամանակը պիտի բռնիս:
ԱՆ 45 Շխջ

Դոլվաթ օր կա, խոտի խրցան տակն է:
ԺԵԱ 278 Բլն

Ճակատի գրածը չի ջնջվի:
ԱՂ 6 Ախց

Ինչոր գրած է, գրած է:
ԹՄԿ 102 Թփլ

Մորեն ծնվեցավ, գրվեցավ ճակտին:
ԺԱԲ 93 Ախց

Թե ճակատին գրված ա, էլ ճար ու ճամփա չկա:
ԱՇ 26 Աշտ

Գալուն՝ գուքա:
ԹՄԿ 85 Թփլ

Ըլլալուն՝ կըլլա:
ԱՆ 70 Նխջ

Թե կը գա աջալ (*օրհաս*)՝ չի տա մաջալ (*հնարավորություն*):
ԳԱ 31 Վղպ/ԹՄԿ 100 Թփլ

Ամեն մարդ իրա ղսմաթը (*բաժին*) կուտի:
ԺԵԱ 292 Վղպ/ԱՇ 4 Աշտ/ԺԱԲ 87 Ախց

Քոռ ճավքի բունը աստուծ կուշինե:
ԹՄԿ 166 Թփլ/ԽԱ 101 Խոյ/ԱՆ 41 Նխջ/Աշ XI, 117 Բրչ/ՄհԹ 1859, 414 Լռ/Բ 1898, 745 Զթ

Աստված որ տա, չի հարցնե ում տղեն ես:
ՓՇԱ 95 Շրկ/Աշ XII, 98 Ալշ/Աշ VI, 74 Բլն/ԺԵԱ 247 Հղկ/Մ 1885, 423 Ղլթ/Բ 1898, 413 Դրք

Աստոծ որ տա, աջ ու ձախին մտիկ չի տա:
ԱՇ 7 Աշտ/ՓՇԱ 95 Շրկ

Աստոծ որ տա, գիժ ու խելոք չի հարցնե:
ԱՇ 7 Աշտ/ՓՇԱ 95 Շրկ

Աստոծ որ տա, մի ակոսից էլ կը տա:
ԱՇ 3 Աշտ/ԼՄ 1880, 5 Բլն

Աստված որ մեկի տունը քանդի, առաջ խելքը կառնի:
ՓՇԱ 95 Շրկ/ՀԱՎ 1892, 24 Տրպ/ԹՄԿ 68 Թփլ/ԹՄԿ 71 Թփլ

Սուտն ու ղուրթը աստուծ գիտե:
ԹՄԿ 153 Թփլ/Աշ IX, 190 Պլս

Աստծու պըհած զառը գելը չի ուտի:
ՎԱ 3 Վղպ/ՓՇԱ 95 Շրկ/ԹՄԿ 68 Թփլ/ՍԽ 36 Զգգ/ԿՇ 1 Ղրր/Աշ VI, 74 Բլն/Աշ XII, 97 Ալշ/ԺԵԱ 230 Հթ/ՀԱՎ 1892, 24 Տրպ/ԺԵԱ 224 Ակն/Եհգ 98 Եվգ/ԶԲ 59 Զհմ

Մարդ մարդի երեսին կաշե (*նայել*), աստված սրտին:
ՓՇԱ 114 Շրկ/Աշ IX, 187 Պլս

*Աստված մարդու սրտին կաշե, ան կլորա (*նրա համեմատ*) կուտա:*
ԺԱԲ 79 Ախց

Մեկը մեկով, երկուսը աստուծով:
ԳԱ 56 Վղպ/ՀԺՀ VII, 84 Աստ/ԺԵԱ 168 Ալշ

Աստված դարտ տվեր, դարման լե տվեր է:
Աշ VI, 74 Բլն/Մ 212 Սլմ/ԺԵԱ 246 Ակն/ԹՄԿ 88 Թփլ/Աշ IX, 182 Պլս

Աստուձ վուր չէ տվի, խեչն ի՞նչ անե:
ԹՄԿ 68 Թփլ

Աստոձ խառաղ (*հյուսն*) չի՝ իրար քցող ա:
ԺԵԱ 218 Վղպ/ԱՇ 3 Աշտ/ԲԱ 10 Ղրր

Աչողե տերը, պսակե տերտերը:
ԱՆ 8 Նխջ/ՆՆ 531 Շրկ

Մընեբ անօրեն, կը կընաս էյնավորեն (*երկնավոր*):
Աշ IX, 188 Պլս/ԽԱ 109 Խոյ

Մարդն ի աստու խրձիկն ա, կըուզա՝ վրենի կը ծիծղա, կը քանդա՝ կը ծիծղա:
ՀՏՎ 19 Շրկ

Հախը (*իրավ*) նըհախին (*անիրավ*) աստված չը թողնի:
ՄԹ 24 Շրկ

Աստոծ ֆել (*խարդավանք*) չի գիտա:
ՀԺՀ VII, 76 Աստ

Աստված որ կամենա՝ կաղն ու կույր կը հարսնանա:
Մ 1886, 788 Բլն

Թե աստված չօգնե, վիզ ծռելը բոշ (*վուր*) բան է:
ՓՇԱ 104 Շրկ/ԱՇ 26 Աշտ

Աս ավուր հաց, վաղվան տեր՝ աստված:
ԱԵ 8 Մկ

Տուն շինողին, աղջիկ կարգողին՝ աստված հետը կըլլա:
ԱՀ IX, *190 Գլս*

Սատանի շինածը աստուծ կուքանդե:
ԹՄԿ 154 Թֆլ

Աստուծն էլ լավին է տանում:
ԹՄԿ 68 Թֆլ/ԱՀ IX, *181 Գլս/ԱԲ* II, *13 Ազլ*

Թաքավուրը հիռու է, աստուծ բանցը:
ԹՄԿ 99 Թֆլ

Ա՜խ աստված, վա՜խ աստված, որին կուտաս սելով փետ, որին չես տա ցախ, աստվա՜ծ:
ՓՇԱ 90 Շրկ/ԹՄԿ 68 Թֆլ

Ա՜խ աստված, որին կուտաս Նախչվան, որին չես տա չարխի (*տրեխ*) չվան:
ՓՇԱ 90 Շրկ/ՀԺՀ 93 VII, *Վգպ/ԺԱԲ 91 Ախց*

